Աստուածեան, պահապեան, խրճան վասն անօրինաց խրճանոյ։ Որպէս ԹԷ ասէր. կարծէին նոքա ԹԷ տեւելոց իցեն իբրեւ անմահք ի վերայ երկրի. բայց չարաչար մահ հուսաբ բարձան. եւ զայս յայտ առնէ բառիւս սպասէեան. զի սատակիլ (այս է որպէս ԹԷ գյատակիլ) ասի կամ գնացանել՝ որք ի մահուն կորնչին ի միջոյ խաւար, որպիսի են անբարեք. կամ գնացանել՝ որոց զկնի մահու յաջորդէ գատապարտութիւն ի յատակս դժոխոց. զի այսպէս պատահի ամբարշտաց, վասն այնորիկ ասէ՝ սատակեցան։

Որով երկու ինչ հետեւի մահու նոցա, այսինքն եւ պակասիլ յամենայն բարեաց, եւ մնանիլ ի կորուստ. սմին իբրեւ ասելոյ պահապան եւ խրճան. եւ այս՝ վասն անօրէնութեան իւրեանց։ Հայսպիսի ջնջումն նոցա հայելով մարգարէին՝ հանգէած երազոյ ցուցանէ զերջանիկ կարծեցեալ կեանս նոցա ասելով։

Իբր երկն զարթնելոյ տեսանողի։ Յերազն է երեւոյթ իբրեւ կամ գործողութիւն իրիք նկարեալ յերեւակայութիւն ի ժամ քնոյ. վասն որոյ չէ իբր կամ գործողութիւն, այլ երեւոյթ իբրեւ գործողութիւն յերեւակայմանէս. որպէս այն որ ի հայելւոջ ձեւանայ։ Հայսիսամ նմանեցուցանէ մարգարէն զյաջողութիւնս եւ զմեծութիւնս ամբարշտաց. զի որպէս որ յերազի տեսանիկ զինքն փարթամացեալ կամ զարգարեալ, կամ թագաւորեալ, եւ ընդ այն ուրախանայցէ, ի զարթնուլն ոչ տեսանէ զերն, այսինքն ոչ գտանէ զինքն այնպէս, ոյով եւ իմանայ՝ ԹԷ ի զուր ուրախացաւ, այսպէս լինէն ասէ եւ ամբարշտաց. զի ի գիշերի կենցաղոյս

ըմբռնեալ ՚ի քոյն անմտաճաւուձէ՝ տեսանէն զինչ քեռանս Ձոխացեալ և երջանկացեալ. և յորժամ զարթնու, այսինքն յորժամ մեռանին՝ և բանան զաչս ՚ի հանդերձեալն, ոչ գտանեն զինքեանս Ձոխացեալս և երջանկացեալս, այլ մերկացեալս յամենայնէ և թշուառացեալս. զի յատաջմէ էին իբրև չերազի, որպէս ասէ և յոբ. (ի. 8.) *իբրև երազ թառուցեալ, ,, ոչ գտցի ‖. զորմէ երկար խօսէ ևսայի. (իե. 7 — 9)։

Ա՛րդ է և ասել, եթէ քան զերազ անարդ է կեանք ամենայնի բան երից. նախ՝ Համեմատութիւն յատեանն նման բարեաց, առ որով կարի ինն անարդ է. երկրորդ՝ բազդատութիւն ժամանակաւորաց. զի բազում ինչ կարէ ունել մարդ չերազի քան յարթնութեանէ, և ինչ ինչ և կարէ առնել ՚ի նմին զոր ոչ կարէ ՚ի յարթնութենէ, զորօրինակ քայլել ՚ի վերայ ծովու, թռչիլ, եւն. երրորդ՝ Հայելով ՚ի չարն. իբրպէս ոչ լինի տեսականապէս կրել կամ առնել ինչ չար չերազի, որպէս լինի յարթնութենէ։

Վշտանել արժան է ասա, զի մարգարէն զմահ ասկսա բերշտաց փոխանակ քոյն կոչէլոյ՝ նմանութեամբ զարթնելոյ. ոչ զի է զարթնութիւն, այլ զի յայնժամ Հանգոյն զոյն զարթուցեալոց բանին այնք Հոգւոց նոցա, նա և զի ոչ և գոյ նոցա ՚ի քոյն լինել. այլ միշտ անքուն մնալ, և միշտ տեսեալ զինքեանս այնպիսի, որպիսի տեսին ՚ի մեռանիլն, այսինքն զուրկ յամենայն բարեաց, ոչ միայն չերկրաւորաց, այլև չերկնաւորաց. մինչ զի չունելոյին քնաւ յոյս ժառանգելոյ բարի ինչ՝ ոչ չերկրի՝ յորում ոչ և են, և ոչ չերկինս՝ յորում լինել ոչ կարացեն. զի որովհետև մերժեցին զայն, վասն այսորիկ և մերժեսցին անտի. և ևս որ վասն նոցա պատրաստեաց զայն՝ ոչ և ևս Հաճեսցի տեսանել զնոսա անդ, և ոչ իսկ զպատկերս նոցա. զորմէ խօսի մարգարէն ՚ի յաջորդ Համարն, ասելով.

ԺԷ. Տէր ՚ի դաղտ տամ զդատաստան նոցա անարգեսցեն. զի հասա բորբոքեցաւ ՚ի սրտ նմաս, և երեկմանեն նմ այլազգանեցան։

Պատկերն է նմանութիւն իրիք՝ (զորմէ տես ՚ի սաղ-

լԷ. 7). և զի ըստ Աթանասեանից երբեմն անուն նմա նուէնէ դնի փոխանակ անուան իրին, ասա և ըստ այսմ դնի անուն պատկեր, յասելն.

Տէր ի ժողովի տամ զպատկերս նորա (այսինքն զպատկերս ամենաբշտաց) անարգեսցեն. Պատկերքդ ամենաբշտաց երկու ինչ ասի խմանալ ասա. մի՝ զպատկեր անձանց նոցին. և ըստ այսմ փոխանակ ասելոյ՝ անարգեսցեն զնոսա ի քաղաքի քումմ, ասէ անարգեսցեն զպատկերս նոցա. որով կամի ասել, ոչ ընդունիցին զնոսա ի քաղաք քո. ուր քաղաքաւ խմացեալ լինի արբայութէ երկնից. զի անդ՝ զպատկերս և զարձանս արդեսց դնէ ած, իսկ զպատկերս ամենաբշտաց անարգեսցէ. և այս կարի իրաւամբք, զի որովհետև նոքա անարգեցին զպատկերն այ ի քաղաքի իւրեանց՝ այս ինքն յերկրի և յինքեանս, ած և անարգեսցէ զպատկերս նոցա ի քաղաքի իւրում յերկինս։

Լրկիրդ՝ պատկերաց տայ խմանալ զպատկերս երկրաւոր երկնականց՝ այսինքն աշխարհային մեծութէնց և իշխանութէնց, անցաւոր հեշտութէնց և զուարճութէնց, անտի փառաց և պատուոյ, զորս պատկերս կերպեն ամբարիշտք յերևակայութէն իւրեանց, կարծելով գտանել ի նոսա զերանական կեանս. բայց քանզի այս ամենայն են անարգ յոյժ, ած և անարգեսցէ զոսա յաւրբայութէն երկնից։ Ոչ յայս միտ փոխանակ ասելոյ անարգեսցես յաւրբայութէն քում զայսպիսի անտեսապատիր երջանկութէնս նոցա, ասէ անարգեսցես զպատկերս նոցա. որով կամի ցուցանել թէ զայսպիսի անարգ երջանկութէնս ոչ պահեսցէ ած յաւրբայութէն իւրում. զի անդ պատրաստակալ է զհեմարիտ երանութէն յաւիտենական, և ոչ զայսպիսի սուտ երջանկութէն անցաւոր։

Օ այս ասէ մարգարէն հայելով յայն՝ զոր ասաց ի վերոյ, * եղէն իբրև երազ զարթուցեալ ||. զի որպէս յերազի սէսպէս պատկերք ձևանան յերևակայութէն, այսինքն է պատկեր փարթամութէն, պատկեր իշխանութէն ||. իսկ ի զարթնուլն ոչինչ ինայ յայսպիսեսց անտի. այսպէս և ի մեռանիլ ամբարշտաց, յորս իբր պատկերք ձևանան անտի մեծութէնք, անտի իշխանութէնք, անտի հեշտութէնք և

բերկրութիւնք իբրև ձնհալութիւնք , ոչինչ տեսցեն յայնցանէ , զի ոչ տապային զնոսա ընդ իւրեանս ուր գնան , և ոչ զձնմաբիան գացեն անդ ուր միան ։

Ա՛յս բան այլազգ և կարէ մեկնիլ՝ առ ի ցոյց առեւտուրն՝ զոր ունի ամէն ընդգէմ ամաքրշտաց . յոր միտ կամի ասել . այնչափ առեւտրի են այլ ամաքրիշտք՝ մինչև ոչ միայն զանձինս նոցա , այլ և զպատկերս նոցա , և և զանուանուսն նոցին ոչ կամիլ ունել առ իւր. իբր զի ոչ կամի այլևս ծանաչել զնոսա ։

Լամբ՝ պատկերօք խմանայ զՀոգիս՝ որք են ասէ՝ ի պատկերս այլ . և զրէ այսպէս . պատկեր այլ ասի քառնամանս հոգի . * արդ յորժամ հնչիցեն (մեզաւորք) մարմնով , և զաբեհնուն հոգւով , և գան առ քեզ , դու անարգես զպատկերս նոցա՝ որք են հոգիք նոցա ։

Չարմարական մեկնութիւնք այս բան կարէ հայիլ և՝ ի սուտ պատկերս բանից հեթանոսաց՝ որք ըստ պատկերակերպելոյ իւրեանց վարդապետին , թէ յետ մահու հաւանելոց իցեն յայնպիսի կեանս՝ յորում իցեն լուսեղինքն հիւսուածովք մարմնով և որկորոյ ։ Լ՛ու զի այսպիսի պատկերակերպութիւնք են սուտ , ասէ անարգեսցէ զայս ի քաղաքի իւրում . այսինքն ցուցցէ՝ թէ ոչ գան այնպիսի գարշ հիւսուածիք ի քաղաքի անդ , այլ անձառելի բերկրութիւնք , զորս աչն ոչ եհաս , և ունկն ոչ լուաւ , և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ ։

Ո՛չ այսոսիկ խօսի մարգարէն առ ի քաջալերս տալ արդարոց . իբր զի գիտացեալ նոցա՝ թէ երջանկութիւնք ամաքրշտաց անոսիք են , և ոչինչ միայ ի նմանցանէ ի հանդերձեալսն , մի՛ զանկասցին այնմ . և որք գժգունեին և զայրագնեին՝ թէ ընդդէմ վայելեն նոքա ի բաւութիս աշխարհի , մի և այդրասցին , այլ մանաւանդ հայելով ի կատարած նոցա՝ երկիցեն յայն և միխիթարեսցին ասասցուք ։ Լ՛ու զի զայսը զայ ազնութիւն և զերկիւղն զիտրձ հեռս յիւրեանս մարգարէն , ամին իբր յարէ զկնի և ասէ ։

Ո՛չ հոտ բոբռոնեցան ի աչսն էմաւ . և երկիմանաւ էմ այլափոխեցան . Հրով խմացեալ լինին ատա նախ չհաւան

զարհանալոյ . յոր միտ կամի ասել . Թէպէտ և ՚ի տեսանել իմ գլխոյոցն Թէի ամբարշտաց՝ անհոյ ՚ի տարակոյս , Թէ ՚ի զուր արդարացուցի զիս , որով և պղտորեցան խորհուրդք իմ , և զայրացաւ սիրտ իմ . նոյնպէս և երկիւղունք իմ այսինքն յօժարմունք հոգւոյս խռովեցան և այլայլեցան յոյժ , բայց Իրըև ՚ի միտ առի զգատաստան քո , ՚ի խորհիլ իմ գյանկարծական կորուստ նոցա , և զանարգիլ նոցին ՚ի կատարած ՚ի կծկեցայ յիս (կամ սըմքեցայ յիս) և պատիւռեցայ ՚ի հոգիս , խոնարհեցայ յանձն իմ , և խոտեցայ ՚ի խորհուրդս իմ . զի յայտնի տեսի՝ Թէ խաբեալ եղէ յոչինչսիսի խորհրդոց .

Արկրորդ՝ երբ ընդ հակառակն՝ հրով իմացեալ լինի ոստ հուր բորբոքման սրտի առ հոգևորս , այսինքն առ ծառայեԹէն ՚ի , առ արհամարհուԹէն աշխարհի , առ ուղղուԹէն վարուց , առ առաքինական կեանս , առ ժառանգուԹի յաւիտենական կենաց , ՚ի . յոր միտ կամի ասել . ՚ի տեսանել իմում գկատարած ամբարշտաց , Թէ զիարդ հանդերձեալ է նոցա անարգել զաստ կերս նոցա ՚ի քաղաքի իւրում , զգաստացայ ՚ի բարձն , քանզի յայտնիսի տեսուԹէ վառեցաւ սիրտ իմ արհամարհել զամենայն վայելչուԹէն մնոտի կենցաղոյս , և ծառայել ՚ի սրտի մտօք , և կատարել միայն զՀաձոյս նորա , և ծառանդել զնա ՚ի յարքայուԹեան երկնից . և ՚ի բորբոքել սրտիս երկիւղածիւ իմ այլափառնեցան . այսինքն յօժարուԹիք հոգւոյս՝ որք վասն տապուսուԹէ խորհրդոցս Թմրեալ կային , և միրձ էին ՚ի չարն միտել՝ այլափոխեցան ՚ի բարին , և այնուհետև ոչ ևս հոգւոյի ինչ զանայուԹէ աչխարհիս , զմնոտի փառաց , և զանցաւոր մեծուԹեց , ՚ի . այլ արհամարհեցի զամենայն , և ոչինչ համարեցայ զարհամարհիլն յամենայնի . այս միայն էր փափաք իմ , լինել հանապազ ընդ ՚ի , և կալ ՚ի հաձոյս նորա . և զայս յայտ առնել յաջորդ բանիւն ասելով .

ժԸ . Ես արհամարհեալ եղէ , և ոչ գիտացի . որպէս գանասուն եղէ առաջի քո . և ես յամենայն ժամ ընդ քեզ եմ :

Այ՝ինչև ցաստ խօսեցաւ մարգարէն ՚ի բերանոյ առն

արդարոյ, բայց տկարութիւն զգածելոյ. իսկ աստի և անդր խօսի ի բերանոյ արդարոյ առանց այսպիսի զգածման մտածելոյ և իբր ի չափ կատարելութեան հասեալոյ։ Այլ զի չափ կատարելութեան առն արդարոյ յերթիս վիճակս մտածի. մի՝ յայնմ՝ որ ասի յորմէ. երկրորդ յայնմ՝ որ ասի առ որ. երրորդ յայնմ՝ որ ասի յորում։

Այն վիճակ որ ասի յորմէ, է արհամարհութիւն ամենայնի և յամենայնէ՝ իբր զի այր կատարեալ արհամարհէ զամենայն անցաւորս, և արհամարհի յանցաւորացս, և կայ ուրախ յայնմ արհամարհման. և այս կարէ հայիլ ի վիճակ մնքորդական ձանապարհի։

Այն վիճակ որ ասի առ որ՝ է անդորը և անսայթաք յառաջատութիւն առ բարին ի ձեռն մանուածոց խնամոյ մարիութեան ոմն, որով իբր ձեռամբ ածեալ լինի ի բարի խորհուրդս, ի բարի գործս, և այլն. և այս կարէ հայիլ ի վիճակն լուսաւորչական ձանապարհի։

Այն վիճակ որ ասի յորում՝ է միաւորութիւն ընդ նոյ, և այս է լրումն կատարելութեան. և սոյն այս հայի ի վիճակ միաւորչական ձանապարհի, որում զհետ գայ զմայլումն հոգւոյ, կամ իմնական ոգեխառնութիւն հեշտալից, մինչև զեղուլ այնմ երբեմն նաև ի մարմինն։ Ո այս ամենայն բովանդակ մարդարէն յեօթն բանս ի վերջ սաղմոսիս, բայց յետ և յառաջ դասեալ, և իբրև թէ ընդ միմեանս հիւսեալ. և նախ զնան առաջնոյն խօսելով ասէ.

Ես արհամարհեալ եղէ, և ոչ գիտացէ։ Կամի ասել, ասէ, սանեալ իմ թէ ունայն է մեծութիւն անցաւորացս, ունայն է փառաւորութիւն մարդկան, ունայն է զուարճութիւն աշխարհի, արհամարհեցի զամենայն. զնան այսորիկ և արհամարհեցայ յայնմանէ՝ որք հետամուտ կէին մեծութեանէ, փառաւորութեանէ, և զուարճութեան։

Այս արհամարհիլս թէպէտ և ծանր իմն է, բայց այսու ամենայնիւ յաւելու ասել մարգարէն՝ թէ յաւելամարհիլս իմ ոչ գիտացի։ Նոյն այս ոչ գիտելս երբեմն կարէ իմացեալ լինել՝ մի՝ ըստ ոչ իմանալոյ. որպէս թէ ասէր. ոչ իմացայ՝ թէ արհամարհեալ եղէ. և իբրև գիտացի՝ ոչինչ համարեցայ զայն. մա-

նաւանդ Թէ ուրախ եւս եղէ՛ւ ՚ի նմին. որովհետեւ ցանկալի էր ինձ՝ ոչ ունայն փառաբ պատուիլ, այլ արհամարհանաբ ապրիլ։

Յերկրորդ՝ իմացեալ լինի ըստ ոչ զգալոյ. որպէս Թէ ասէր. գիտելով իմ Թէ ոչինչ են արհամարհանաբ և փառաբ՝ յարհամարհելս իմ իբրև խուլ լինելով ոչ զգացի ինչ։

Յերրորդ՝ իմացեալ լինի ըստ վարկանելոյ այլոց. որպէս Թէ ասէր. արհամարհօղքն իմ կարծէին՝ Թէ ես ոչ գիտացի՝ քանի երջանիկ իցէ վայելչութիւն աշխարհիս. վասն այսորիկ արհամարհէին զանձն իմ, և համարէին զիս իբրև անբան. այլ այս չէ համարելի առ իս ծանր. բաւական է ինձ՝ զի անմեկնելի մնացից ՚ի քէն. վասն որոյ յարէ զնոսի և ասէ,

Որպէս գրեաւսն համաբերեցայ առաջի ⁂. (և ես յամենայն ձամ ընդ ձեզ եմ) ։ Այսի ասէ, արհամարհօղքն իմ համարեցան զիս իբրև անասուն, մանաւանդ Թէ և ես իսկ եղէ իբրև այնպիսի. իբր զի որպէս անասունն ոչ զգայ զնախատինս, ոչ խօսի ինչ ընդդէմ արհամարհողաց իւրոց, ոչ գիտէ լինի փառաց և պատուոյ, ոչ համարի ինչ զդեղեցկութիւնս չիրուաց ծոց կամ անկոց, զինդրդ և վարէն զինքն՝ գնազանդի, և ոչ ընդդէմ դառնայ. այնպէս եղէ ասէ և ես առաջի ⁂։ Այսով ոչ ցուցանէ՝ Թէ յայս ոչ համարեալ եղև իբրև անասուն, այլ Թէ առաջի այ կալով՝ համարէր զինքն արհամարհեալ իբրև զանասուն։

Այս ըստ այսմ բառիդ առաջի՝ յայտ առնէ նախ զիւերկայութիւն այ. որպէս Թէ ասէր. ՚ի ներկայութէ քո կալով արհամարհ երեւիմ, և իբրև անասուն համարեալ լինիմ, մանաւանդ Թէ իբրև ոչինչ. որպէս առնէր երանելին այն՝ որ կալով առաջի այ՝ ասէր. ⁂ ով եմ ես, և ով ես դու ՚ուր ։

Յերկրորդ՝ յայտ առնէ զբերութիւն հոգւոյն առ ՚ած. որպէս Թէ ասէր. ցանկալով իմ կաղ առաջի քո ըստ հաճոյս քո, և ժամանել առ քեզ՝ իբրև անասուն համբերեցայ ՚ի մարդկանէ. զի արհամարհէլ նոցա զիս՝ էր վարել զիս առ քեզ իբրև զանասուն։ Յերկրորդ՝ յայտ առնէ զչպատակութէն կամաց առ ՚ած. որպէս

Թէ ասէր. կամ յամենայնի պատրաստ առ ակնարկուԹ քո. և 'ի համարիլս իմ 'ի մարդկան իբրև անասուն, փափաքիմ զի այսպիսի եղէց և առ Հաձոյս կամից քոյ. իբր զի որպէս և Հաձեսցիս՝ դիցես զբեռնութ նախատանաց և արհամարհանաց՝ նեղուԹեաց և անձկուԹեաց 'ի վերայ իմ իբրև 'ի վերայ անասնոյ քո. շատ է ինձ այս՝ զի կացից և ունայնիչ միշտ ընդ քեզ՝ Ողորմիր յայտ առնել զխոնարհուԹիւն սրտի, որով առնդ համարիր զինքն յաչս այլ՝ իբրև զանասուն. յայս հայելով և նաբեկացուին՝ զսոյն զայս բան առնու իւր նպաստ, յասելն ('ի բանն. ծ). * զանկիշեան ,, խոնարհուԹիւն երջանկին դաւԹի ինձ նպաստ առ ,, եալ՝ ասել ընդ նմին. ես իբրև զանասուն համա ,, բեցայ, հերքեալ 'ի զգայուԹենէ ։ Ա՝նկիւն ասէ, զի խոնարհուԹիւն ոչ կշռի ընդ այլոց առաքինուԹեաց, այլ հիմն է նոցա. առանց որոյ չկորեն ինչ նոքա. ուս տի ասէ սաղթիս ընդ Հալի ('ի մէկն. ա. պետ. դ. 8). * հիմն և արմատ ամենայն բարուԹեանց խո ,, նարհուԹիւնն է. վասն զի զինչ և ասիցես յա ,, ռաքինուԹեցն, առանց սորա ոչ կարէ կալ յակաս ,, տանէ, այլ անկանի և եղծանի, և յոչնչուԹի դաո ,, նայ ։ Հինգերորդ յայտ առնէ զվայելչուին սիրոյն այ. որպես Թէ ասէր, ես արհամարհեալ եղէ և իբրև անասուն համարեցայ վասն վայելչոյ 'ի սէր քո և վասն սիրոյ քո, և պատրաստ եմ միշտ արհամարհեալ լինել, միայն Թէ ոչ դադարեցայց ընդ քեզ լինել, Հայապիսի միտս վառեալ էր և սրբուհին եղիսաբէԹ՝ որ եղև Թագուհի ունկարիոյ (այսինքն մանաստաց), զի վասն սիրելոյ գնծ առաւել մեծ փառք համարէր գբամահիլ իւր 'ի ծնողաց, և զանարգիլն 'ի ստրկաց, և ոտնակոխ լինել յադքսաց քան գովիլ և փառաւորիլ, մեծանալ և Հռչակաւոր, այս միայն էր փափաք իւր՝ զի ընդ այ էիցէ, և ըստ Հաձոյս նորա կացցէ. յոր միտ յարէ զինի մարգարէն, և ասէ.

Նա՛ ես յամենայն ձամ ընդ տէր եմ ։ Ա՝յս լինելս ընդ այ՝ բազմապատիկ մտածէ. մի՝ իբրև արարած ընդ արարչի՝ յամենայնի կախեալ կալով զինամն ։ Ա՝րդ՝ ընդ իբրև ծառայ ընդ տեառն՝ 'ի կատարել յամենայնի զՀաձոյս նորա ։ Ա՝րդ՝ իբրև որդի ընդ Հօր՝ միշտ

պատուելով զնա , և փայփայեալ լինելով ի նմանէ ։ Ողորդ՝ իբրև բարեկամ ընդ բարեկամի , սրտակաթ սիրով վարելով ընդ նմա իբրև ընդ իւրում ծայրագոյն սիրելոյդ , և ընտանեբար խօսակից լինելով ։ Վիճաբորդ՝ իբրև բնակող ընդ բնակողի , յորում բնակի ոճ , և նա յոճ բնակի (ա . յովհ . ե . 24 .) որպէս ջուր ի խորս ծովու ի սպունգ բնակի , և սպունգն ի ջուր ։ Վէճաբորդ՝ իբրև հարսն ընդ փեսայի՝ անձառելի ինն հոգևորական միաւորութեբ ։ Խօթնեբորդ՝ իբրև տիար ընդ հղոր օգնականի . իբրև հիւանդ ընդ ձարտար բժշկի . իբրև զղպարտեալ ընդ քաջ պատսպարողի , ։

Խրիմորդական և յարմարական մեկնութ՝ այս լինիլս ընդ այ յայտ առնել զիւ երբեք հեռանալն ի նմանէ , ոչ անկանելով ի հաւատոց , ոչ պակասելով ի յուսոյ , ոչ նուազելով ի սիրոյ , ։ Ձայս ամենայն Տէրն ասէր . * և ես յամենայն ժամ ընդ քեզ եմ ։ Ո այս բնաբան ողջոյն՝ ամենք ընդ հակառակն մեկնեն . իբր թէ սովոտ մեղադրել կամիցի զանձն , և ասէ . ի տարակուսիլ իմում՝ ի վերայ նախախնամութեբ քո՝ արհամարհեալ եղէ , այսինքն արհամարհ գոյ ի խորհուրդս իմ . որ է ասել . տես՝ զի ի յիմարական խորհուրդս յածիմ , և յայս տարակուսութեբն վասն այն անկայ , զի ոչ գիտացի զխորհուրդս քո . և ոչ գիտեելով յանդգնեցայ դառել թէ ընդ երբ այս այսպէս լինիցի , և այն այնպէս . որով և համարձակեցայ և ես չափել զօրինս քո . և ահա այսու ոչ գոյացառաջի քո իբրև իմնաուն կամ իբրև հաւատարիմ ծառայ , այլ իբրև անբան կամ իբրև անասուն ։ Կամ թէ ի խորհիլն զայս՝ ամենևին անհաս գոյ իբրև անասուն . և յայսմ ամենայնի ողորմութբիւն քո ոչ եթող զիս հեռանալ ի քէն , այլ օգնեաց ինձ միալ ընդ քեզ՝ և յանձն առնել զամենայն ի ձեռս քո . որովհետև յամենայնի արդար ես և ճշմարիտ , որպէս ուրեմն ընդիս որպէս և գիտես , զի ես ոչինչ գիտեմ ։ Արթն է յուսելուլ և զայլ միւս ևս մեկնութբիւն՝ հայեելով ի ժամանակն յայն , յորում ի մեզս գոլով դառնութբի՝ անգիտանայր . յոր միտ կամի ասել . ես արհամարհեալ եղէ , այսինքն արհամարհելի և վատթարագոյն

ինն եղէ՝ ի մեղանչել իմում. բայց անփոյթ լեալ ոչ դիտացի, և ոչ հոգ կալայ համարիլ թէ՝ ի մեղս իցեմ. վասն զի այն իմ գաւշելի մեղք աւրաւ գիս իբրև անբան անասուն առաջի քո. Թէպէտև գիտեի և՝ թէ ես յամենայն ժամ ընդ քեզ իցեմ. այսինքն՝ ի նէրկայութեան քո իցեմ։ Այս կարէ հայիլ և՝ ի ժամանակ ապաշխարութեան դաւթի. որպէս թէ եղեալ էր. Թէպէտ իբրև անասուն հեռացայ՝ ի քէն, այլ այժմ՝ ի զղջումն եկեալ՝ ընդ քեզ եմ, և յամենայն ժամ ընդ քեզ լինել փափաքիմ։

Այլ այսոքիկ յետին մեկնութիւք, որոց զմին մասն ինն յառաջ բերէ լմաբ՝՝, ըստ յաւելմանէն միայն առանձին. իսկ առաջինն այն զոր եդաք՝ երևի հարազատ՝ և ընդացից քանին համաձայն, քանզի այսպիսի օրինակ քանից հայի՝ ի կատարելութիւն վարուց. զորմէ խոստեցաք ըստ այլևայլ հնդամասնից։ Այլ զի այնոքիկ յաջողին՝ ի մարդն՝ ի հնորհացն ոյր, և յառաջադիմելոյ նորա՝ ի զօրութիւն՝ ի զօրութիւնն՝ որ հայի յերկրորդ վիճակ կատարելութեան, զայն և կամելով յայտ առնել մարգարէին յարէ զնմին, և ասէ։

ԺԶ. Վաղար զքոյ յետանէն իմէ. ՚ի խորհուրդս ո՛ առաջնորդեցեր ինձ. և ետուր ընկալեալ զիս։

Որպէս այլուր ասացեալ է մեր, ՚ի կամս մարդոյ կըրկնին զօրութիւն մտածի. մին ասի վերինն, և սա վարի ըստ առաջնորդութեան ուղիղ բանի. և միւսն ասի ստորինն, և սա վարի ըստ թերացութեան զգայական յօժարութեան. վերինն հայի յայն՝ որ է ըստ ինքեան բարի, իսկ ստորինն հայի յայն՝ որ է հանդէպ բնութեան՝ թէ բարի իցէ, և թէ չար։

Այս զայս կարօղ է ամենայնի ոք յամենայնի փոխել յանձն իւր. առ որ լինի դիւրին օրինակ կամք հիւանդացելոյ ուրուք. զի յորժամ մատուցանի նմա դեղ դառն, վերինն մանն կամաց հաձի ընդ այն՝ զի է բարի. իսկ ստորինն հեռանալով զգայութեամբ՝ ոչ հաձի. զի անախորժ սեպհական ինքեան. և ընդ հակառակն՝ ի մատուցանել հիւանդին ախորժական ինչ

կերակուր՝ վերին մանն ջնաւակար տեսանելոյ զայն՝ ոչ կամի, իսկ ստորինն անսալով զգայուճ՝ փափաքի 'ի նոյն, զի ախորժ տեսանէ ինքեան։

Այս 'ի հոգևորան յայտնի ևս տեսանի. երբ զի յորժամ առաջարկի ումեք գործ ինչ չար կամ առնի մեղաց, վերին մանն առաջնորդութիւքն ուղիղ բանի վարելով ոչ կամի զայն. իսկ ստորինն մանն առաջնորդութիւքն զգայութեանն գնալով յօժարի 'ի նոյն։ Եւ յայսմ առաջարկութիւնէ երեք վերին մանն անսասցէ ստորնոյն, և ըստ նմին կամիցի, կամիլն այն լինի մեղանչել։

Այս զօրութիւնք վերին և ստորին թէպէտ և իրօք ոչ զանազանին 'ի միմեանց՝ զի են մի և նոյն կամք, բայց մեք վանն բացատրելոյ զանազանութիւքն խօսիմք։ Եւ ըստ այսմ զանազանութիւնէ վերին մանն կամացն առ իրեր աջ ձեռն հոգւոյն. իսկ ստորինն իբրև ձախ. զի իբր 'ի բազումն 'ի ձախն բերի՝ այսինքն 'ի չարն. բայց քանզի այն սոսկ բերումն ստորնոյն ոչ է մեղք, այլ միայն յորդորումն 'ի մեղս, զայնմանէ ինչ ոչ կիշէ առ մարգարէն, այլ զվերնոյն միայն, զի այն է վտանգաւոր. և եթէ ոճ ոչ նպաստեացէ՝ սխալի, իբր զի անսալով ստորնոյն կործանի 'ի մեղս. և ահա յայս հայելով ասէ։

Վայելուչ ջոջդ յետ առնէ էմդ։ Այսինքն 'ի վարանիլ իմում 'ի տարակուսական խորհուրդս 'ի վերայ նախախնամութիւնք քո, և յօժարիլ ստորին մասին կամացս և յաւել՝ լաւ ևս է կատարել զհաճոյս զգայութիւնք՝ քան զկետ լինիլ ձնշման և սրբութիւնք, յորժամ մերձ էր վերին մանն կամացս կործանիլ՝ հասեր յօգնութիւնք, և կալար զայն՝ զի մի կործանեսցի, և պահեցեր 'ի հաւանութիւնէ. զի յօժարուէ ստորին մասին կամացս. որ է ասել, օգնեցեր ինձ՝ զի մի հաւանելով այնպիսի երկբայական խորհրդոց՝ կորեայց։ Եւ զայս արար ոճ ոչ միայն այնու՝ զի կալաւ զկամն և պահեաց, այլև այնու՝ զի եցոյց զձշմարտութիւնք խորհրդոց իւրոց լուսաւորելով զմիտս. և առ այս յարէ։

Վ՚ խորհուրդս ոյ առաջնորդեցեր ինձ։ Խորհուրդն է գաղտնութիւնն իրի, որ պէտս ունի յայտնելոյ. յոր միտ յորժամ տեսանեմք զի և 'ի յայտնի իրս գաղտնի ինչ

կայ, ասեմք, խորհուրդ կայ։ Վասն ի յայտնի նախա-
ճանաւնեն այլ բազում ինչ գաղտնի է մեզ, որում ոչ
կարէ հասանիլ ձիգն մարդկային մտաց. և յայս իսկ
ամանք ոչ տեսանելով զայն որ գաղտնի է, ուրացան
և զայն՝ որ յայտնի է. իբր զի ոչ հասանելով գաղտնի
խորհրդոց նախախնամութեն այլ, ուրացան և զնա-
խախնամութեն նորա, որ յայտնին է։ Նոսկ ոմանք ան-
կան յերկբայութեն. ի միմաց որոց ասաց մարգարէն
ի վերոյ զայն բան, թէ ահա յաջողեալ է մեղաւորաց,
և մեք ի զուր պահեմք զմեզ ի մեղաց. և յայս հայ-
ելով եղ զայն բան՝ թէ ոչ թողեր զիս սայթաքել
յայսպիսի մոլար մտածութեէս, այլ պահեցեր ի կոր-
ծանելոյ։ Այս եղեալ յաւելու թէ նաև զգաղտ-
նիս նախախնամութեէ քո՝ որ անհաս էր լինէն, և
զճշմարտութեէ գաղտնեացդ ցուցեր լինէ. և այս է
զոր ասէ. ի խորհուրդս քո առաջնորդեացեր ինձ։
Եւ ասէ՝ լուսաւորեցեր զմիտս իմ ի խորհուրդս քո,
այլ առաջնորդեցեր. առ ի ցուցանել նախ՝ թէ ոչ
միանգամայն եցոյց նմա զգաղտնիսն՝ այլ առ սակաւ
սակաւ իբր յարմարեցուցանելով զմիտսն. որպէս առ-
նէ նա՝ որ առաջնորդէ ումեք ի մթան՝ առ ի ընտե-
լացուցանել զաչսն։ Խրկրորդ՝ առ ի ցուցանել, թէ
դժուարահասանելի իրք էին, առ որ պիտոյ էր յա-
տուկ առաջնորդութեէ. զի առաջնորդելն ի դժուա-
րագնացսն լինի։ Խրրորդ՝ առ ի ցուցանել՝ թէ ա-
ռանց վտանգի եղև այն առաջնորդութեէ. զի թէ
ոճծ է որ առաջնորդէ՝ զինչ վտանգ կարէ լինել
յայնմ ի գնալ։ Ընդրորդ առ ի ցուցանել՝ թէ քաղց-
րութեէ և մանաւանդ խնամով առաջնորդեաց, որպէս
հայր՝ որ կալեալ զձեռանէ որդւոյն՝ առաջնորդեացէ
ի չքմել՝ յորժամ չիցէ կարօղ ինքնին գնալոյ։ Չին-
գերորդ՝ առ ի ցուցանել՝ թէ յայնպիսի խորհուրդս
առաջնորդեաց ոճծ ընդ որ ինքն հաձէր։
Ասէ թէ և աստ խորհրդով իմանալ և զիմաստութեէն
այ. յոր միտ կամի ասել. յամենայնի քոյին իմաստու-
թեէդ առաջնորդեացեր ինձ. և ոչ թողեր զիս առաջ-
նորդել մարդկային անտաւ խորհրդով։ Եւ զի յայս-
պիսի առաջնորդութեէ երևի հոգևորական ինն փառք,
ամէն իրի ասէ։

Ե՛ւ ֆառօտ ընկալար ըլլա։ Ընդունիլ՝ այ զոք փառօք՝ պէտք ես օրինակաւ կարէ իմացեալ լինիլ. մի՝ յորժամ ասծ փոխանակ արհամարհելոյ զմարդն՝ քաղցր դէմս ցուցանէ նմա, յայտնելով նմա զգաղտնիս խորհրդոց իւրոց. զի այս է փառօք ընդունիլ զնա. և այս քան լինի նոյն ընդ նախընթացին, որով կամի ասել. ՚ի տատանիլ մտաց իմոց զնախախնամութիւն քով, դու ար փոխանակ դարձուցանելոյ յինէն զերեսս քո՝ ցուցեր ինձ զխորհուրդս նախախնամութեանդ քո և զչնչմարտութենէ խորհրդոց քոց, ընդունելով զիս ՚ի ներքին սենեակ իմաստութենէ քոյ, որով և ընկալար զիս փառօք։

Ներկրորդ՝ յորժամ ասծ առնէ զոք իւր ՚ի ձեռն չնորհաց. և յայտ է թէ այս է մարդոյ փառք մեծ, և ընդունելութենէ փառօք։ Ներրորդ՝ յորժամ ասծ փայփայէ զոք հոգևորական բերկրութիւք, և ս և յուսով հանդերձելոց. և այս այնչափ մեծ փառք է հոգւոյն, առ որով ամենայն փառք աշխարհի համարեալ լինին իբրև մոխիր։ Չորրորդ՝ յորժամ ասծ այնպէս ընդունի զմարդն՝ մինչև բոլորովին լինել մարդոյ, և մարդոյս բոլորովին լինել ասյ. յորում բովանդակի այն քան՝ թէ ասծ ՚ի նմա բնակի, և նա յասծ. քան զոր չիք մեծագոյն փառք մարդոյ, զի այնպիսին գրեթէ ոչ ևս է մարդ, այլ իբրև ասծ ոմն. և զայսպիսեացդ կարէ ասել, թէ ասծք էք և համարիք ասյ։ Ներկաթ ՚ի հուրն հրանայ, և հուր երևի. օդն ՚ի լոյս՝ լոյս երևի. կաթիլ ոմն ջրոյ ՚ի տակառ գինւոյ՝ գինեանայ. ըստ այսմ և հոգին ՚ի միանալն ընդ ասյ՝ իմանալապէս լինի ասծայնանայ։

Յինչ երրորդ ըստ լսմբ". յորժամ ասծ հաղորդէ մարդոյ զփառս իւր, կամ առնէ զմարդն հաղորդ փառացդ յարքայութենէ, այն համարի ծայրագոյն ընդունելութենէ փառօք։ Բայց քան մարգալէին հայի յընդունելութենէն այն՝ որ լինի յաստի կեանս ըստ նախակարգելոյդ։ Եւ զի որ միանգամ այսպիսի օրինակաւ ընկալեալ լինի յոյ, և հաստանէ յայսպիսի գերազանց վիճակ, ոչինչ այլ համարեալ լինի նմա մեծ՝ ոչ յերկնաւորացս և ոչ իսկ յերկնաւորաց. որով և ժամանէ յերրորդ աստիճան կատարելութենէ, վասն որոյ ասէ։

Շ. ՈՐՔԱՆ ԻՄ ԲՆԱԻՆ ՉԵՐԿԻՆԱ. ԿԱՄ ՈՐ ԻՆՁ ՔԱՆԴԵՑԵՑ ՉԵՐԿԻՐ:

Երկինք ասելով իմանայ զայն՝ որ ի վեր է քան զհաստատութիւն, և կոչի երկինք երկնից. ուր կան պատրաստեալ վասն սքոց անձառ բարիք: Կամ երկիր ասելով իմանայ զերոլոր հողագունս. յորում բաց յերևելի արարածոց՝ կան և թերկրութիւնք մարմնոյ, և մեծութիւնք ստացուածոց, փառք, և իշխանութիւնք, և այլ ազգի ազգի բարիք յայլևայլ կարգի՝ որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ:

Ա. ՅՈՎՔԻԿ ԱՄԵՆԵՔԻՆ ԵԹԷ ՅԵՐԿԻՆՍ ԵՒ ԵԹԷ ՅԵՐԿՐԻ՝ զոլով ստեղծական էակք, եթէ Համեմատեսցին ընդ ստեղծողին, երևին լինել ստուերք. և եթէ Համեմատեսցին և ընդ ընդարձակութիւնք բաղձանաց մարդոյ, երևին անբաւականք. զի են էակք չափաւորք. իսկ բաղձանք մարդոյ առ անչափս և առ անբաւս ձգտելով՝ չափաւորօք ոչ բաւականանայ. (զոր մէկ տես՛ ի սաղ. ԺԷ. 15. և ս և՛ ի սաղ. ՃԻ. 1:)

Եւ արդ քանզի մարգարէն յայն ևեթ հայեր՝ զի ժառանգեսցէ զնոսա, ընկալեալ լինելով՝ ինամանէ փառօք, և ընդունելով զնա յինքն ամենայն կրօք, զոր ինչ արտաքոյ նորին ըմբռներ յերկինս և յերկրի՝ փոքր Համարեր, և ոչ իսկ յօժարեր բաղձալ՝ ինոսին, այլ յայն՝ յոր բերուր՝ ի ժառանգել. վասն որոյ ասէ:

Զ. ԶԻՆՉ ԿԱՅ ԵՍ ԲՆԱԻՆ ՉԵՐԿԻՆԱ, ԿԱՄ ՈՐ ԻՆՁ ԼԻՆԻ ԱՒ ԽՆԴՐԵՑԵՑ ՉԵՐԿԻՐ: Յայս բան նախդիրդ՝ է, որ զնի՝ ի վերայ զերանուանս՝ է ԻՆՔՆ, չորեքկին կարէ նկատել. մի՝ սոսկ իբր բայառականակերա. ըստ որոյ՝ է ԻՆՔՆ զնի իբր պարզ բայառական: Եւ ըստ այսմ կամի, ասել. զինչ զեղեցկապոյն, զինչ փառաւորապոյն, և զինչ պատուականապոյն կայցէ՝ ինձ զոր կարացէր գտանել յերկինս. զի որ ինչ կայ անդ՝ եթէ չէիցես դու ինքն՝ ոչ է այն իմ բնաւին, և ոչ ես՝ նորա: Եւ արդ՝ եթէ յերկինս չկայցէ իմ ինչ բնաւ այնպիսի, ապա զինչ և ս խնդրեցից՝ ի քէն յերկրի. այսինքն, զինչ զեղեցկապոյն և զինչ պատուականապոյն կարիցէ գտանիլ, զոր Համարձակեցայց խնդրել՝ ի քէն յերկ-

րե. կամ զինչ ինչ յերկրաւորաց աստի կայցէ, զոր ցանկացայց խնդրել ի քէն. զի եթէ երկնաւորք ոչ կարեն յագեցուցանել զիս, զիարդ ասյա երկրաւորքս. ուստի ոչ գնոսա, և ոչ զսոսա խնդրեմ. այլ զքեզ միայն. և համառօտիւ, ոչ ի քէն՝ այլ զքեզ խնդրեմ, զի որ ի քէն է՝ արգաբև բարի է, այլ ոչ է այն՝ որ ես դու. իսկ ես ոչ խնդրեմ զայն որ ոչ ես դու, այլ զայն՝ որ դու ինքն իցես։

Երկրորդ դնի իբր բաղդատական փոխանակ նախադրութեանս ից. որպէս թէ ասէր. քան զքեզ զինչ և ես խնդրեցից յերկրի. կամ այս գնի ըստ այնմ ոմոյ, որով ասի. * զուարթ ագին են աչք նորա ի գինւոյ ։ (ծնն. խե. 12.) փոխանակ ասելոյ քան զդինի. ըստ որում և յաշխարհաբառ լեզուն վարի այս ոճ, զորօրինակ. * ես քեզնէ պզտիկ եմ, քեզնէ մեծ եմ ,, տարիքով ։ ուր բացառական հոլովդ դնէին, կամ դնէին դնի ըստ բաղդատութեանս. իբր թէ ասէր, քան զքեզ. Երբ ըստ այսմ առաքելոյդ բանդ բացատրի այսպէս. զինչ բարի կայցէ ինձ յերկինս քան զքեզ, և զինչ ևս խնդրեցից յերկրի քան զքեզ։

Երրորդ դնի իբր կցորդական կամ միանշական փոխանակ նախադրութեանս ընդ. որպէս թէ ասէր, զինչ ևս այլ խնդրեցից ընդ քեզ. զի թէ զքեզ միայն ունիցեմ, զայլ ինչ ի միասին ընդ քեզ ոչ կամիմ ունել։

Չորրորդ դնի իբր զատական փոխանակ նախադրութեանս էաղ կամ պրեզ. որպէս թէ եդեալ էր. բաց ի քէն զինչ ևս խնդրեցից յերկրի. զի դու միայն ես այն՝ զոր խնդրեմ, և զոր ժառանգել ցանկամ. դու միայն կատարեալ յամենայնի, և դու միայն լիացուցիչ ամենայնի. զոր ինչ ունել կարեմ յերկինս և յերկրի՝ նոքիմքդ ոչ յագիմ, եթէ զքեզ չունիցիմ, այլ պասքիմ և նըուոտիմ. իսկ զքեզ ևեթ ունելով՝ յագիմ և լիացեալ բերկրիմ. և զայս յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով։

իւր. Ա ոտոնգեցաւ սէրդ իմ և մարդն իմ. ած սրտի իմոյ, բաժին իմ ած յաւիտեան։

Այսինքն իմացեալ լինի ատ նեղբերն յաժարութենէ կա-

մաց առ բարին, կամ նոյն իսկ կամքն շարժեալ ՚ի բարին. զի որպէս սիրան է սկիզբն ամենայն շարժմանց մարմնոյ, սոյնպէս և նեբբին յօժարութեի կամաց է սկիզբն ամենայն շարժմանց հոգւոյն։ Ի սա այսմ և մարմնով իմացեալ լինի սաս յօժարութիւն զգայութե՝ կամ նոյն իսկ մարմինն ըստ զգայական յօժարութե։

Ընդ որովհետև յօժարութե կամաց բերի ըստ ինքեան առ ամենայն բարի՝ նովին իսկ բերի և առ անհուն բարին, զի յայնմ միայն բովանդակին ամենայն բարիք, և ՚ի նմա միայն կարէ պարապակիլ կամքն. որպէս ակն պատուական յակնակապիճ մատանւոյն. և զի արտաքոյ ոչ էիք այնպիսի ինչ՝ որ իցէ անհուն բարի, կամ յորում իցեն ամենայն բարիք, յօժարութիւն կամացն յոր ինչ և բերիցի արտաքոյ ոչ՝ ոչ յագի։

Եւ այս բերումն կարէ լինել կրկնակի. մի՝ բնական նաբար՝ առանց ձանաչելոյ զբան անսահման բարւոյ, ըստ որում կամքն կուբօրէն յօժարի ՚ի բարին. երկրորդ՝ հանդերձ ձանաչմամբ անսահման բարւոյ, ըստ որում հոգին ըմբռնելով թէ գոյ մի միայն անսահման բարի, և է նա ինքն ած, ՚ի նա բերի։ Այս ըմբռնումն եթէ իցէ բնական պատձառաւ, տկար է. իսկ եթէ լինիցի մանաւանդ նպաստիւք շնորհացն ոչ, է զօրաւոր. զի միանգամայն շարժէ և զկամն ՚ի ստացումն այնր մի միայն անսահման բարւոյ։

Այսպ ՚ի բերիլ կամաց այսպիսի նեբգործական յօժարութիւք առ ած՝ եթէ ոչ ժառանգեացէ զնա, որ ինչ և բարի ընդ առաջ ելանիցէ նմա՝ ոչ գտանելով ՚ի նմին՝ զոր խնդրէ, կրկին օրինակաւ նուաղէ, մի՝ վասն ոչ առնլոյ ՚ի նոցունց զնաունդ, և մի և՛ս՝ վասն անձկութե կարօտանացն առ այն՝ զոր խնդրէ. և յայսմանէ նաև նոյն իսկ սիրտն և զգայական յօժարութիւնն որ ՚ի սիրտ, սկսանի հեծել (այսինքն տքալ), ընդ նմին և մարմինն սկսանի հալիլ և մաշիլ. (զայսցանէ տես և ՚ի սաղ. խա. 1. և 2. և ՚ի սաղ. ԺՀ. 15։)

Յայսմիսի կերպ ըմբռնեաւ մարդարէին ասէ։ Ողջեցայ սէրդ իմ և մարմին իմ։ Ի սա կրկին նուաղման սրտի բացատրի այս բան. ըստ առաջնոյն մտածի

վան պակասելոյ. յոր միտ կամի ասել. յոր ինչ և յօժարեցաւ սիրտ իմ և մարմին իմ, ոչ գտանելով ի նոսին զնուազդ իւր և զհանգիստ (զի ոչ էին նոքին մնուցիչ յաժարութեես, և ոչ կեդրոն ծանրութեան նոքին), սկսաւ նուաղել և պակասել։ Այսու երկրորդ դին մնածի վասն տարփանաց սիրոյն. իբր զի ի տեսանել սրտի՝ թէ ոչ ժառանգէ զսիրեցեալն՝ բմբռնի ի տարփանս, և հանապազ հառաչելով սկսանի նուաղել և հալել. յայս միտ իմանալ լսմբ". զայս բան. ընդ նմին և գրիգոր վարդապետ ի հրահանգսն. (էջես. 481)։ Այս երկուց մեկնութեեց ևս դիտումն մարգարէին ի մի և ի նոյն հայի՝ այսինքն ի գտանել զնծ և ի ժառանգել զնս. քանզի զայն միայն գիտէը իւր բարի և լնացուցիչ տարփանաց սրտի. զոր և յայտ առնէ յաղօրդ բանիւն ասելով.

Ես սրտ իմ, էածէն իմ ած յաւիտեան։ Այս եզանակ խօսից՝ յասելն, ած սրտի իմոյ՝ ցուցանէ նախ՝ թէ ած միայն է վերջին վախճան շարժման սրտի մարդոյ իբր ծայրագոյն բաժին նորա, զի յայն միայն բերի սիրտ մարդոյ՝ թէ կամիցի, և թէ ոչ. և յայն միայն ուղղին ընթացք կենաց մարդոյ իբր առ վախճան. և զոր ինչ կամի՝ յայնմանէ շարժեալ կամի, և կառնաւորի. զի որպէս ասի. * ի գործողութեեն մարդոյ ,, վերջին վախճանն լինի կանոն միջոցաց առ այն ,, վախճան ։ Այլ թէպէտ մարդեկ յանգիստս տատանեալ՝ յայլ ընտրեալ միջոցաց յաժարին, բայց գնա կան յաժարութեի նոցա՝ առ վերջին վախճան իւր միայն բերի, այլ ի ստացման նորին փոխանակ զուղղին ընտրելոյ՝ զթիւրն ընտրէ։ Այայց և յընտրութեն անդ տեսանէ՝ թէ զոր դիտէ՝ ոչ է բաժին սրտի իւրոյ. զի բաժինն այն է անհնուն բարին միայն՝ այսինքն ած. ըստ որում և ասէ. ած սրտի իմոյ, բաժին իմ ած յաւիտեան։

Ցուցանէ երկրորդ՝ թէ ած միայն է երանութեի մարդոյ, կամ երանացուցիչ հոգւոյ. և թէ նոսիւ միայն՝ որ իբրև է միայն՝ երանանայ։ Ած ոչ իւիք երանանայ, այլ իւրև միայն. և զի պատկեր ոյ է մարդ, նա ևս ոչ իւիք երանանայ՝ եթէ ոչ այնու՝ որով երանանայ ած։ Այս յայսմ մասին մեծ ինչ տեսանի ի մարդն.

քանզի կամ ՝ած զի այն վախճան և այն երանութիւն՝ զոր ինքն ունի՝ մեր և իցէ. իբր զի կամի՝ զի և մերս նոյն վախճան լինիցի, և նոյն երանութիւն. որպէս թէ հաւասար ինչ իցէմք. որովհետև մերս ոչ է փոքր քան զնորայն. զի որ իւր է՝ մեր է. և ինքն սրտի մերոյ և բաժին մեր յաւիտեան։

Յուցանէ երրորդ՝ թէ ՝ած է լեացուսիչ ընդարձակութիւն սրտի մարդոյ. զի զորօրինակ նմանուիշ ինն խոսելով՝ լոյսն. ասի ասաց, և Տայնն՝ ականջաց, ևն. այսպէս և ՝ած՝ որ է լուսին անսահմանն բարւոյ՝ ասի լինել սրտի. և թէպէտ ըստ էակութեան համեմատելով՝ անարգ ինն է սիրտ մարդոյ և ոչինչ. և ըստ այսմ ոչ է մարթ ասել, ՝ած սրտի իմոյ, բայց ըստ ձկտման յօժարութեանն համեմատելով՝ որովհետև այն բերի առ անսահմանն՝ ՀՀմարտիւ ասի ՝ած սրտի մերոյ։

Ո՛ւ քեզ օրինակ զկետ բոլորակին՝ որ ըստ երկրաչափից՝ թէպէտ և է անբաժանելի, բայց արձակէ յիւրմէ զանհուն գիծս. և զի շրջանակ բոլորակին պարագրէ զայն ամենայն գիծս, այն շրջանակ ասի կետին. ոչ ի այնչափ փոքր է և չնչին՝ որպէս կէտն, այլ զի զամենայն գիծս արձակեալս ՚ի կետէ անտի եզերէ և պարագրէ։

Այս նմանութեամբ պակասի յայսմ, զի գիծ շրջանակին՝ բոլորն ըստ բոլորին ևեթ պարագրէ, և ոչ բոլորն ըստ մասին. իսկ ՝ած բոլորն ըստ բոլորին և բոլորն ըստ մասին. այսինքն ըստ ամենայն ձկտանց սրտի. և կամ այսպէս ասացից. իւրաքանչիւր կէտ շրջանակին զիւրաքանչիւր գիծ կէտին եզերէ, և ոչ բոլոր շրջանակն զիւրաքանչիւր գիծ. ուստի կարէ ասել թէ այս մասն շրջանակի է այսր գծի. և ոչ թէ բոլոր շրջանակն. իսկ ՝ած ՚ի ժառանգիչն ոչ է այսպէս, այլ է բոլորն իւրաքանչիւր գծի յօժարութեամբ սրտի։ Այսպէս և բոլոր ՝ած է բոլոր սրտի, և բոլորն է իւրաքանչիւր ձկտանց յօժարութեամբ նորին։ Այդ զի սուրբ բոլոր ՝ած լինի բոլոր մարդոյ՝ իբր բոլորական բաժին նորա, վասն այնորիկ բաժին ևս կոչէ զնա ասելով. ՝ած սրտի իմոյ՝ բաժին իմ ՝ած յաւիտեան. որոյ լիագոյն կատարումն լինի ՚ի ժառանգելն զնա յարքայութիւնն։ յորում այնպէս միանայ հոգին ընդ նմա,

մինչև լինել նման նմա. որպէս յորժամ երկաթ զո-
լոր միանայ ընդ հրոյ՝ լինի նման հրոյ՝ զրեթէ նոյն
ընդ նմա։

Օ սոյն զայս բան դնէ մարգարէն և՛ի սաղ. ԺԵ. 5.
և՛ի սաղ. ԺՀ. 58։ Նայեց առանց յաւելլոյ զբառդ
յաւիտեան. իսկ աստ զսոյն և յաւելլով՝ չորս ինչ տայ
իմանալ. մի՝ թէ լինելն այ տիրապէս և իսկապէս բա-
ժին մարդոյ՝ և ժառանգիլ նորա՛ի մարդոյ յաւիտեան։
Երկրորդ՝ թէ այն ժառանգութիւն է անձանձրանալի,
զի յաւիտեան է ժառանգելի։ Երրորդ՝ թէ՛ի ժա-
ռանգել մարդոյ զնա՛ի նոյն յափշտակի և՛ի նմին
յափշտակութեանէ միայ յաւիտեան, և ոչ կարէ յետս
նահանջիլ՛ի յարելոյ՛ի նա. քանզի այն է կեդրոն
ծանրութեանէ նորա՝ այսինքն յօժարութեանէ սրտի նորին։
Չորրորդ՝ թէ մարդս եթէ յաւիտեանս յաւիտենից
որոներ ինչ արտաքոյ այ առ՛ի յագիլ նովաւ, ոչ էր
հնար գտանել. զի չիք արտաքոյ նորա այնպիսի ինչ՝
որով կարիցէ յագիլ բաղձանք մարդոյ։

Յոգևորապէս այս բան՛ի մէջ բերէ զհոգևորական
ժառանգութիւն ներկայութեանէն այ. որով հոգի մարդոյ
իմանալապէս միանայ ընդ այ, և լինի այ. զի ըստ ա-
սելոյ մեր՛ի վերոյ, երկաթ միանայ ընդ մագնիսի՝
յորժամ մերձի՛ի նա. որով և մագնիսն լինի երկա-
թոյ, և երկաթն մագնիսի. սոյնպէս իմա և զհոգւոյ։
Այսպիսի հոգի յած կեայ, և ած՛ի նմա. և խօսիլ
նորա ընդ այ՝ է իմանալի ինն տուրևառութիւն ընչոյ
նորա, ՛ի տալն անդ զնոսան, և յառնուլն զղօրութիւն
՛ի նմանէ։ Այրտ այսպիսեացս բարբառի զարմանալիս.
երբեմն գոչէ. * սիրեցին իմ ինձ և ես նմա ‖. (երգ.
Ը. 16.) երբեմն հնչէ. * սիրեցից զքեզ ո՛ր զօրու-
,, թիւն իմ ‖. (սաղ. ԺԷ. 1.) երբեմն խանդաղատի.
* ոչ իմ կամք, այլ քոյդ լիցի ‖. (ղուկ. ԻԲ. 42.)
և այլևս սոցին նման համառօտ սլացմունք բանից։
Այս բերումն սրտի հայելով գրիգոր նարեկայի.
(՛ի մեկն. երգ. գլ. Ը. 7.) գրէ այսպէս. * Այրն
,, որ առ ած՝ այնչափ զօրութիւն և մեծարանաց ար-
,, ժանի է, որով և գաւիթ պարծի. սիրեցի զքեզ
,, ո՛ր զօրութիւն իմ. և թէ նուաղեաց սիրտ իմ և
,, մնարմին իմ, ած սրտի իմոյ, բաժին իմ ած՝ յաւի-

,, տեառն. այսինքն Թէ դու ես իմ բաժին. և յոր-
,, ժամ գ.բեղ յիշեմ՝ նուագէ սիրտ իմ։ Այլ Թէ
,, սիրտ իմ ցնծասցէ առ ՚ած կենդանի։ Այլ բա-
,, զում բանս այսպիսի աղաւաղանս գմայլական սխ-
,, րոյն ՚ոյ ջեռեալ՝ զսորայս գտանես, զոր ոչ բաւեմ
,, Թուել ։

ԱյԹէ կամիս և դու այսպիսի կենաց բերկրիլ՝ քանա՛
յերթիս կատարիլ. առաջինն է՝ զգուշանալ ՚ի մեղաց և
հեռի կալ յառաՔից նորին. երկրորդն է առնել զա-
Քինսյինչ՝ կալով առաջի ՚ոյ. (ա. կոր. Ժ. 31.)
երրորդն է ոչ պակասիլ ՚ի յիշելոյ զ՚ած. որով և նմա.
նիս երանեալ հոգւոց. զորոց ասէ յովհաննէս. (՚ի
յայտ. իբ. 4.) Թէ * տեսանէին զերթեալս նորա, և
,, անուն նորա գրեալ էր ՚ի ձակատս նոցա ։ այսինքն
Թէ յիշատակ նորա ՚ի միտս նոցա էր գրեալ։ Այս-
պիսեաց կեանք ոչ է յերկրի, այլ յերկինս, այսինքն
Թէ ոչ է յարեալ յերկրաւորս, այլ յ՚ած. որք և ա-
սեն իսկ. * մեր առաքինութիՔն յերկինս է ։ (փիլ. Ճ.
20. և իբ. կոր. Ճ. 18)։ Այ՚ած ինն է արդարև այս, և
երանութի՛ն վերոյ երկրի. մի՛ ինն ես և դու յայտ,
զի ընդ ամենաՔածին կենցաղիս յամենայնի, եԹէ ՚ի
պարտիզի և եԹէ ՚ի սեղանի, եԹէ ՚ի փողոցի և ե.
Թէ ՚ի կրպակի ։

Ա՚սացի ՚ի վերոյ՝ Համառօտ սլացմունք բանից. զի եր.
կար բանիս Ճանրանաս, Համառօտիս դիւրանաս. և
դէն և ս՚ի համառօտ բանն ոչ գտանէ միջոց խոփս
նեղոյ ։ Համառօտ բանից օրինակ են վերոյգրեալքդ,
և սոյն այս բան՝ զոր ասէ. * ՚ած սրտի իմոյ՝ բաժին
,, իմ ՚ած յաւիտեան ։

Այ՚ած խոսրով (՚ի մէն. Ժամագրբ. երես. 54.) ՚ի
խօսիլն ՚ի վերայ այսը սաղմոսի՝ զանազան բանս բե.
րէ, և գրէ այսպէս. * Այ՚ երկրէ ինչ խնդրէ (աղօ.
,, Թիցս բան) և ոչ յերկինէ. այլ զի միայն նորա փա-
,, ռաքանուէն հրեշտակակրօն վարուք արժանաւորես
,, ցուք. քանզի որպէս ասացի, այս պատիւս (փառս
,, աորելոյ զ՚ած) քան զամենայն պատիւ գերազանց
,, է, և քան զերկինից և արքայուէն. որոմ պատուի
,, մեծն դաւիԹ առնչացեալ կաԹոդիկն բազձանօք ա.
,, ակ ց՚ած. զինչ կայ իմ գնաւ յերկինս, կամ ՚ի

,, քէն զինչ ևս խնդրեցից յերկրի։ Լաւ արդ ասա
,, ալ երանելի մարգարէ, զի չունիս պէտք իրաց ինչ
,, յերկինս և յերկրի, ապա զինչ է՝ որ քեզ փափա-
,, քելին է։ Նուաղեաց ասէ սիրտ իմ և մարմին իմ,
,, Աստուած սիրտ զոգւոյն անուանէ, և զոգւոյ և զ-
,, մարմնոյ ջերմին փափաքն առ ած յայտ առնէ. որ-
,, պէս թէ նուաղիլ ի սաստիկ ցանկութենէն. քանզի
,, որպէս կարօտութեն հացի և ջրոյ նուաղէ զմար-
,, մինն, այսպէս ասէ և իմ կարօտութիս առ քեզ
,, նուաղէ զիմ հոգի և զմարմին. զոր և յայլում
,, սաղմոսի ծարաւ իակ կոչէ. ծարաւի է ասէ առ
,, քեզ հոգի իմ՝ քանիպատիկ ևս և մարմին իմ. և
,, դարձեալ՝ որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց,
,, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ ած. և որպէս
,, անդ ասաց՝ նուաղեաց սիրտ իմ, զնոյն օրինակ ասէ
,, և յայլում սաղմոսի. անձն իմ որպէս երկիր ծա-
,, րաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ. զի նուա-
,, ղեաց յինէն հոգի իմ. զի որպէս ծարաւին արագե-
,, ցուցանէ զվերձակայն՝ թէ արագեցէ ջուր տալ.
,, ապա թէ ոչ՝ նուաղեալ ոգիս չհանդարտի, այլ փու-
,, թով սպառի. նոյնպէս և մարգարէս պաղքեալ ած-
,, ային ծարաւոյն՝ զած աղաչէ, և զհոգի նուաղեալ
,, ասէ. և պաղատի, մի՛ դարձուցաներ զերեսս քո
,, յինէն, նմանիցիմ այնոցիկ՝ որք իջանէն ի գուբ.
,, այսինքն եթէ ծարաւոյս վաղվաղակի զմօացուսին
,, չառնես, և զերեսդ դարձուցանես՝ մեռեալոց նմա-
,, նիմ, որ իջանէն ի գուբ. վասն այսորիկ որպէս
,, աստ վաղվաղակի լսել հայցէ նուաղեցելուսին, նոյն-
,, պէս և անդ յասէն. նուաղեաց սիրտ իմ և մար-
,, մին իմ, ած սրտի իմոյ. գու ես ասէ կեանք հոգ-
,, ւոյս իմոյ. և առանց քո ոչ ունիմ կեանս. յաղագս
,, որոյ և խանդաղատի և փարի զած. բաժին իմ ա-
,, ած յաւիտեան, ոչ սակաւ ժամանակս, այլ
,, մշտնջենաւոր բաժին իմ ես։

Այս բերուսին փափաքանաց սրտի մարգարէին նկա-
րագրելը զփափաք որդւոց մարդկան առ որդին ած, ի
միանալ ընդ նմա և ի ժառանգել զնա. զինչ կայ մեր
բնաւ յերկինս ասելով, կամ ի քէն զինչ ևս ունիմք
խնդրել յերկրի. զքեզ խնդրեմք, ի քեզ հայիմք,

և զքև փարիլ ցանկամք. ՚ի ում մեզ ո՛վ որդի ՚ոյ, ՚ի, և ա՛ռ զմեզ առ քեզ. միացո՛ զքեզ ընդ մեզ, և զմեզ ընդ քեզ։ Օ՛յս փափաքումն ոչ անտես արար որդին ՚ոյ, եկն, և լցոյց. և ձշմարտապէս միաւորեցաւ ընդ բնութեես մերում, և եղև իբրև զմեզ. * զգեցաւ ինքն զմեզ, և զգեցոյց զինքն մեզ ‖. ըստ որում գրէ սարգիս շնորհալի (՚ի մեկն. ՚ա. պետ. ՃԳ. 22. Ձառ. ՃԸ. յորդ։)

՚Ի խօսիլ մարգարէին զայսոսիկ՝ լռելեայն ինն յայտ առնէ և զպժգալ իւր ընդ այնոսիկ՝ որք անփոյթքն են ՚ի գտանել զնա, կամ գաղջ են ՚ի սէր նորա, կամ զբաղեալ յոյժ յիրս արտաքինս և ունայնս. և առաւել և՛ս ընդ ամենայնիս, որք կամովին հեռանան ՚ի նմանէ, և ապստամբին ՚ի հրամանաց նորա, զորոց զԹշուառական վիճակն նկարագրելով՝ ասէ։

ԻԲ. Ա՛ հաւասիկ ոչ հեռի արարին զանձինս իւրեանց ՚է չէն, կորիցեն. ապահեացես զամենեսեան՝որ պոր-ձամբ եղեն ՚ի չէն։

Ա՛արդ է յերկուս ազգս բաժանել զամբարիշտս. մի՝ յայնոսիկ՝ որք զհետ գնալով ախտից իւրեանց, և մեծութեց աշխարհի, և իշխանութեց՝ հեռանան յՈ՛ր, և մի և՛ս յայնոսիկ՝ որք չարութե՛ն ընդդէմ ելանեն հրամանացն ՈՒ՛յ։ Օ՛ առաքինոցն ասէ։

Ա՛հաւասիկ ոչ հեռի արարին զանձինս իւրեանց ՚է չէն, կորիցեն։ Ա՛յսինքն՝նորա որք փոխանակ մերձենալոյ առ քեզ սրբութե՛ն սրտի՝ հեռացան ՚ի քէն և յարեցան ՚ի աստեղծականն բարիս, ՚ի փառս, ՚ի մեծութե՛ս և ՚ի հեշտութե՛ս, կորիցեն, և այս՝ կրկին կորստեամբ. մի՝ զեռ ՚ի մարմնի գոլով, յորում՝ կորնչիլն է անկանիլ ՚ի շնորհաց, անկանիլ ՚ի բարեկամութե՛ն ՈՒ՛յ, անկանիլ ՚ի հոգևորական բարձրութե՛ է, լինել գերի սատանայի, ծառայ սխտից և ժողովարան տխրութե՛ց և խռովուե՛ց. երբեմն և՛ս էնթակայ չարաչար պատժոց և պատուհասից ըստ այլևայլ պատահարաց։ Այրկրորդ՝ յետ ելանելոյ ՚ի մարմնոյ. յորում կորնչիլն է մտանիլ ՚ի դատապարտութե՛ն յաւիտենական՝ զրկեալ լինելով Յ՛ՈՒՅ՝ ցորչափ յա՛ծ է յա՛ծ։

Ա՛յս ամենայն կորուստ հասանելոց է ասէ նորա վասն

այսորիկ. զի հեռի արարին զանձինս յմէնջ. քանզի որպէս ի հեռանալ մարմնոյ ի հոգւոյ՝ կորնչի ապականութիւնք, և ի խափտիլ շինուածոյն ի հիմանէ՝ կործանի և աւերի, և յելանել ձկան ի ծովէ և ի ցամաք՝ մեռանի, սոյնպէս և ի հեռանալ մարդկան յայն մեղաց կորնչին պէսպէս օրինակաւ, ըստ ասելոյ մեր այժմ՝ ի՞նչ օրոյ ասէ բարսեղ. (ի մեկն. մարկ. գլ. ժ. ի յորդ.) * որք հեռացուցին մեղաց զանձինս ,, իբրեանց ի քէն՝ կորիցեն յաւիտեան. զի որ յայն ,, հեռանայ՝ որպէս ոչխարն ի հովուէն, այլ ինչ, ,, քան թէ մոլորեալ կորնչելոց է։ Լսեսի ապա մարգարէն և վասն չար ամբարշտաց ասելով։

Աապիեսոյես պահնէսոյես՝ որ ապրեալ եղեն ի չէն։ Լ՚ալեսամբք են յայն նոքա՝ որք չարութէն ոչ կամին անսալ հրամանի նորա. և որովհետև սաստիկ է անօրէնութէն սոցա քան այլոց, վասն այսորիկ սաստկագոյնս խօսի զսոցանէ. ոչ ասէ լոկ՝ կորիցեն, այլ թէ սաստկագոյնս ջնաս, այսինքն չարաչար ի կորուստ մատնեսցես, սաստկագոյնս մերժելով զնոսա և դատապարտելով ի մէնն յաւիտենական։

Օ այսոսիկ զնէ ասա մարգարէն իբրև զիմքանկեալ ինչ բան, առ ի առաւել ևս հաստատել զայն՝ թէ չէ հնար մարդոյ գտանել հանգիստ արտաքոյ այ, այլ վիշտ. և եթէ հեռացեալ իցէ ի նմանէ՝ կորուստ. ապա եթէ ապստամբ ևս գտցէ, չարաչար դատապարտ. թէ. և զայսոսիկ այսպէս առաքն դնելով՝ հեռեւեցուցանէ, թէ ուրեմն որպէս չար է հեռանալ յայ, նոյնպէս բարի է մերձենալ առ նմա. վասն որոյ ասէ։

ԻՀ. Ինչ ղերչենալ առ ած բարի է. և դնել առ ՏԷՐ զյոյս իմ։

ԻՀ. Պատիլ զանձնային օրհնութիւնս տո, ի բերանս դռների ուխտէն։

Օ այսոսիկ յառաջ բերեալ մեծն խոսրով. (ի մեկն. ժամագրբ. երես ՏՏ.) գրէ այսպէս. մարգարէն * ա ,, սացեալ զհեռացեալսն յայ զսատակումն և զկո ,, րուստ՝ ասէ և զոր ինչ իւր բարին է. ոչ զարքայ-

,, ութին, և ոչ որ անդր բարկքն են՝ ընտրե, այլ
,, զառ ՚ած մերձիլն և զյուսայն ՚ի նա և զօրհնելն
,, զնա, այսպէս ասելով. ինձ մերձենալ առ ՚ած բարի
,, է, և դնել առ ՚ած զյոյս իմ, և պատմել զամենայն
,, օրհնութիւս նորա. նախ առաց Թէ չկայ իմ խնդիր
,, կամ ցանկութիւն տրոց ոչ յերկինս և ոչ յերկրի.
,, բայց առ քեզ ցանկութիւնս նուաղէ զիմ սիրտս. և
,, դու ես իմ սրտին բաղձանքն. և ասա ասէ, ինձ
,, առ քեզ մերձ լինելն բարի է. ապա աւարտ զայն
,, դնէ՝ զօրհնելն զնա ամենայնիւ ||։

Լ՚ԶԴ ԵՐԲԱԿԻ ԼԻՆԻՍ ՄԱՐԴՈՑ յաստի կենաս մերձենալ առ ՚ած. մի՝ յորժամ հեռացեալ գոլով ՚ի նմանէ դառնայ առ նա, որպէս լինի յապաշխարօղս։ Լ՚ԿԻՐՈՐԴ՝ յորժամ ունակաբար կայ ՚ի բարեկամութենն ՚ոյ. իբր զի ՚ի ձեռն ունակական հաւատոյ, յուսոյ, և սիրոյ կապեալ կայ ընդ ՚ոյ, Թէ և ներգործութիւք ոչ խորհեսցի զնմանէ, և ներգործութիւք ոչ ելուզղչ զորորդ սիրոյ առ նա. որպիսի է յանմեղ մանկունս, և ՚ի բարեպաշտ անձինս՝ որք են ՚ի շնորհս և ՚ի բարեկամութենն ՚ոյ։ և ա և ՚ի ժամ պարապելոյ նոցա յաշխատութիւն իրս, նաև ՚ի ժամանակի՝ յորում ՚ի քուն լինին։ Լ՚ԵՐՐՈՐԴ՝ յորժամ ներգործութիւք դիմէ մարդ առ ՚ած հաւատով, կամ յուսով, կամ սիրով. հաւատով՝ իբրև առ ամենապայծառ ճշմարտութի. յուսով՝ իբրև առ ամենահաւատարիմ օգնական և պարգեւն իւր և կենաց. սիրով՝ իբրև առ ամենալի ծայրագոյն բարի, նաև իբրև առ ամենացանկալի ժառանգութի. արդ որպէս երևի յընթացից սաղմոսիս, աստ մերձենալն ըստ երրորդին դնի, յասելն ։

Ինձ մերձենալ առ ՚ած բարի է։ Որպէս Թէ ասէր. Թէպէտ և այլք բարի հաւարիմն ինքեանց յարել ՚ի մեծութի՛ն, ՚ի փառս և ՚ի հեշտութի՛ն. բայց ես ոչ կարեմ այսպէս համարիլ. քանզի ինձ բարի այն է, զի մերձեցայց առ ՚ած։ Լ՚ԵՒ զայս իրաւամբ ասէ. զի ո. րովհետև ՚ած է իբրև կեդրոն սրտի մարդոյ, որպէս ՚ի բնի բարի է ծանուցեալ մերձենալ ՚ի կեդրոն իւրեանց, այնպէս և բարի է մարդոյ մերձենալ առ ՚ած ըստ նախագրելոցդ։ Լ՚ԵՒ ըստ որում գրէ վանական վարդապետ (՚ի մեկն. յոր. գլ. իզ.) որպէս բնաւո-

բանէս բարի է ցրտացելոյն մերձենալ ի հուր առ ի ջեռանիլ, և խաւարեալոյն ի լոյս առ ի լուսաւորիլ, և մեռելոյն ի կեանս առ ի կենդանանալ, այնպէս բարի է մարդոյ մերձենալ առ Ած։

Ա.ՀԼ գիտել արժան է՝ զի իւրաքանչիւր էակի բարին է նախ այն, զի լինիցի այնպիսի, որպիսի պարտ գոլ ըստ Ճանաչմանն այ. երկրորդ՝ զի գործեսցէ զայնպիսիս՝ զորպիսիս կամի Ած. երրորդ՝ զի ժամանեսցէ չայն՝ առ որ կարգեալ է այ։ Ա.Ե ըստ այսմ բարին մարդոյ է՝ նախ լինել կատարեալ ի գոն ըստ պատկերի այ. երկրորդ՝ ի գործելն ըստ Հաճոյս այ, և երրորդ՝ ի Տասանելն ի վայելուչն այ. և զի մերձենալով առ Ած այս ամենայն լինի մարդոյ, այնւ իսկ ասէ. Ինձ ի բոյնել առ Ած է. ըստ որում սովին բարի լինի մարդոյ ի գոն, բարի լինի ի գործելն, բարի լինի և ի կեալն կամ ի Հանգչելն։

Ա.յս մերձենալս առ Ած գործականանալ առեալ՝ չայնժամ լինի, յորժամ ըստ նշանակելոյ մեր ի վերոյ՝ ներգործութիւն գործէ մարդ զՀաճոյն այ, և ուղղէ զամենայն զգայութիւնս իւր ի ծառայութիւն այ. որով ոչ միայն ինքեան լինի բարի, այլև զգայութեցդ իւրոց. զի սրբեալ զնոսա ի մնոտեաց՝ ազնուացուցանէ, ծառայեցուցանելով զնոսա ամենաքաւի Թագաւորի. և զորս իբրև չածս պաշտէր՝ ի ծառայութիւն այ մերձեցուցանելով՝ գրեթէ Ածայեացուցանէ։

Իբր որպէս ասէ Նաբեհացին (ի մեկն. երգ. է. 6.) կրկնակի մարթի է Ածացուցանել զզգայս, մի՝ ծառայելով նոցա իբր չածոց. և մի և՝ ծառայեցուցանելով զնոսա այ. * Ա.յս է ասէ ստուգապէս գեղեցկու,, թի մարդոյ, որ զամենայն զգայութիւնս այ ծառայե,, ցուցանէ, և Ածացուցանէ զնոսա, չիմն մերձենա,, լով՝ Ածային գործոցն Հաղորդեալ։ և իրաւամբ ասէ այսպիսիս, ինձ մերձենալ առ Ած բարի է։

Ա.յս բարւոյն կարէ մտածել և ըստ ազատելոյ ի չարէ և ի վանգէ, ի մեղաց և յախտից։ Չորոյ օրինակ կրկին տեառատես մերձենալով առ յԱզատեցաւ յախտից իւրոց (մարկ. է. 29.) և եթէ նա ի քղանցս Հանդերձից նորա մերձենալով բժշկեցաւ, զինչ ապա լինիցի այնմ, որ մերձենայ ի նոյն ինքն ի քր. մանա-

ամեղ ի հաղորդիլն նմա ի խորհրդեան։ Այլ որ զաւ-
մանալին է՝ նա ի քանցից սրբի, իսկ բաղումք կինքն
ի քո մերձենալով ոչ սրբին, և ոմանք փոխանակ
սրբելոյ՝ անօրինին, և պղծին. որով և դատապար-
տութեանն լինին պարտաւոր։ Այնպէս ոչ բաւէս սրբուլ
մերձիլ և սրբիլ, նախ դու ինքն խոստովանութեամբ
սրբեա զքեզ. և բարի յուսով մերձեցիր առ փրկիչ
քո։ Այս զայսմ յուսոյ խօսելով մարգարէին՝ յարէ
զկնի, և ասէ.

Այ- դնել առ ինր ըսյս էմ։ Օ այս բան դնէ իբրև
նախատ առ այն ամենայն, զորս առաց յայսմ սաղմո-
սի, մանաւանդ հայելով ի նախակարգեալ հատուածն
այսր համարոյ։ Վասնզի մարգարէն ի խօսիլն զայս
ամենայն՝ հայեր և ի տկարութեն մարդկայինս բնու-
թե, որ իբրև զտերև կարէ շարժիլ ի բարւոյն, և ունկա-
նել յիւր սերոյն. և այսմ չիք այլ ինչ հնար կամ
դեղ մարդոյ՝ բայց եթէ զայս իւր դնել ոչ կինքն՝
այլ յաստ, զի այնու մարթի հաստատիլ ինա. վասն
որոյ զսոյն զայս ևս բարի կուելով՝ ասէ. ինձ բարի է
դնել զայս իմ առ ինր. զի այսու կարեմ դատանել
զբարին զայս ևս՝ որ է մերձենալ առ ինաե, և ինալ
յինաե։

Այսրեմ է ևս ասել, թէ զայս դնէ ի քաջալերութե-
սրտի. իբր զի յետ ասելոյ՝ ինձ մերձենալ առ ինաե
բարի է, տեսեալ թէ ոչ ժառանգէ զնա դէմ յան-
դիման, զայսն առաջի դնէ. բարի է ինձ ասել յոյս
սալ այժմ, թէ ունիմ տեղամբ ժամանել ի ժառան-
գութե ինն, և այսու յուսով ինալ հատատուն ի քա-
րին, և ուրախ ի տառապանս. և ոչ ևս ամենի կրել
յիսիք. * զի ոչ ոք յուսացաւ յինաե և յամեցի եղէ։
(սիրաք. ը. 11)։ Այս քանզի յայսպիսի յուսոյ բղխէ
ի սրտի օրհնութե առ ինաե իբր զգոլացումն հրոյ,
զայն ևս առաջի դնէ ասելով։

Ի- պատել զամենայն օրհնութիւնս ես, ի գրոնս գոպել
սիոնի։ Այսինքն թէ մերձենալով առ ինաե՝ ապատ
գտեալ յամենայն զաղտանաց՝ օրհնեցից զնա, պատ-
մելով զմեծութե նորա և զգործս նորին. և այս՝
ոչ միայն ի սրտի, այլև ի գրունս գոպեր սիոնի.
որով ըստ նախագրելին խնդացեալ լինի՝ հրապարակաւ

պատմէլն. զի պատմել ինչ՝ ի դրունս, զորոյ յայտ առնէ, մանաւանդ պատմէլն ի դրունս մեծի քաղաքէ. որպիսի էր դուռն դատեր սիոնի, որ այն ինքն է երուսաղէմ մայրաքաղաք եբրայեցւոց։

Խաբեայսակէս, դրամբ իմացեալ լինի ատ բերանն, որ է դուռն բանի ծնելոյ ի սիոնէ՝ այսինքն ի մտաց։

Ալաբանօրէն նշանակի տաճար շինեալ յանուն այ, զի տաճարն է դուռն դատեր սիոնի, այսինքն դուռն որ եկեղեցւոյ՝ որ է դուստր վերին սիոնի։

Վերածաբար իմացեալ լինի մեռան երկնից, որ է դուռն արքայութեան. ուր ունիմք ցնծալից պատմել զօրհնութիւնս այ յաւիտեան։

ՍԱՂՄՈՍ ՀԱ։

Պաղատանք ժողովրդեանն իսրայէլի առ աՀ, և ողբական բանք ի վերայ անչքանալոյ տաճարին, և աւերելոյ երուսաղէմի ի Թշնամեաց, առաջի առնելով զմեծամեծ գործս՝ զորս եցոյց աՀ առ նախնիս նոցա։


Խոստովանէ յաւէտ։

1 Ընդէր մերժեցեր աՀ յաւէտ. բարկացաւ սրտմտութիւն քո ի վերայ խաշին արօտի քո։ 2 Հիշեայ ժողովրդոց քո, զոր սպասաւոր ի սկզբանէ. փրկեցեր գվէմս ժառանգութեան քո։ 3 Լեառն սիոնի այս՝ ուր բնակեցեր դու ի նմա. համբոյր ընծայ քո ի վերայ ամբարտաւանութեանց նոցա խոպան։ 4 Որ ինչ անիրաւեցաւ ընդարան ի սրբութեան քում. պարծեցան ածելիք քո ի վերայ բարեխնդութեանց խորանաց։ 5 Հռչին ընծանս իւրեանց ի նշանս. և ընկալան զի ճանաչան ընկալ ի վերուստ։ 6 Որպէս յանտառի՝ փայտատօր հոգոցելոյն զսրերսն նորա, ի գործն փայտատօր և մրճավէ հոգեծանեցին զնա։ 7 Արկեցին ի դուռ ըղբուրնի քո յերկրի. պղծեցին վրիժառն անուան

տո։ 8 Լսացին ի սէրս իրեանց ապիր նոցա ի գիսին, եւ
ի[illegible]ս լուեցուսցուս պանիսն պօս այ յերկրէն։ 9 Լլշան հե
ինել ոչ պեսաւ, եւ ոչ ես փոսել մարգարէ. եւ պիեչ ինչ սո ոչ
ձանաչէիցէ։ 10 Ովնչ յերկր ած՝ նախասե ըլնսին, բարե-
ցոցանէ հոգասաւորէրն պանան սոսբ տո։ 11 Ովնքէ դար-
յոցանես պչեան տո, եւ պրչ տո ի գիշ ծոցոյ տոմնի խոպա։
12 Լնձ ըսգասաւ գէր յասաչ տան պյասխսեան. որ սրսրեր
պիրիսուն ի գիշ երկիր։ 13 Լոս հասպարեցեր պրոսուն տով
պձով. զոս խորսուեցեր պէլսով վէլշոյց ի վերայ ևսուց։
14 Լոս էլբեցեր պէլսով վէլշոյն, եւ եսաս պես կերա-
ֆոս պրջան գնդիոց։ 15 Լոս բղխեցոյցեր պաղբիսրս եւ
պվոսիս. զոս յամաեցոյցեր պէեաս սասուիս։ 16 Ովս ե
սիս, եւ տո ե փղձեր. պլոյս եւ պրբեւ զոս հասպարեցեր. ե
զոս հասպարեցեր պանիսն սահմանս երկրի. պեարան եւ պա-
տան զոս սաեղծեր։ 17 Ովյս յաւղ լինցի տեղ՝ ի ինչսին
նախասաց պիր. ծողովսրդ անպամ բարկացոյց պանան սբ
տո։ 18 Ովրչ մասներ գասանաց պանչն՝ որ խոսփովսն սասի սա
տեղ. եւ պանչիսն գնանիոց զոց ի մասնաւոր խոպա։ 19 Ձայնի
յոսխա տո. պի լցան գասիր սփղելոց յերկրէն անիրաւութեամբ։
20 Ովրչ գարչյն գնանին սասչելոյ. այլ ապտան եւ գնանի
օրհնեսցէն պանան սոսբ տո։ 21 Ովրբ ած, եւ գասխս պրա-
գասպան տո. յիշեամ պնախասիս՝ որ յանցսամին զորհնասուսդ։
22 Ովրչ մոասնաւոր չյոյն պաղաչսնէին զոց. ամբարտաւանութեան
սրելոյ զոց վերասոյ հանապազ։

ՎԱՐՈՒԳ

Խմաստութէ յաստ։



Ի ՍԿԶԲՆԱՒՈՐ ՄԻՈՒԹԻՒՆ ՅԻՒՆ-
լեալ լինի և բառս գասին. և գրի այս-
պէս. * խմաստութէի յաստի սաղմոս 'ի
,, դաւիթ ‖. և յայլ երկուս ձեռագիրս փոխանակ
խմաստութէ դնի սաղմոս, և յաւելեալ լինի նաև
բառս կոպաթ յասելն. * 'ի կատարած սաղմոս յա-
,, ստի ‖. բայց յայլ ամենայն սաղմոսս մեր, որպէս
և յերբ". և յայլ թարգմանութեան ըստ վերոգրելոյդ
դնի, այսինքն է խմաստութէ յաստ. (զորմէ տես 'ի նե-
րսած. գլ. ԽԴ)։

Ընդ երբ". փոխանակ խմաստութէ գրի Մովսէս, որ նշա-
նակէ խմաստնացուցիչ. և զի սաղմոսք խմաստնացու-
ցիչ բանք են, վասն որոյ բազումք 'ի նոցանէ կոչեցան
խմաստութէ. որպէս և սաղմոս այս. յորում փայլէ
նաև խրթնութէի գեղապանծ ոճոյ։

Այս սաղմոս յայսմի աւուրըս քաղաքին
երուսաղէմի և եղջուրն տաճարին. յոյր սակս բա-
զումք հաստատեն, թէ այս սաղմոս ոչ է գաւթի,
այլ ասափայ սաղմոսերգուի ուրուն. քազումք և
որք ընդդէն՝ թէ իցէ գաւթի՝ հաստատեն թէ նա
մարգարէական հոգւով տեսեալ զաւերումն զայն՝
նախագուշակութէ խօսեցաւ զայս։

Ա.յլ թէ որ աւերումն իցէ, վէ՛ճ է 'ի մէկնիչս։ Ա՛նա-
զումք համարին լինել զայն՝ որ եղև 'ի ժամանակս
Նաբուգոդոնոսորայ։ Ա.յլք դնեն թէ իցէ այն՝ որ
հայի 'ի ժամանակս անտիոքայ եպիփանու առ մակա-
բայեցւովք։ Ա՛մանք և դնեն թէ իցէ այն՝ որ եղև 'ի
վերջոյ 'ի ժամանակս տիտոսի. որպէս դնէ և վար-
դան։ Ա՛ան և, որք ասեն, թէ այս սաղմոս հայի 'ի
ժամանակս հեղեայ քահանայի՝ յորժամ գերեցաւ
տապանակն ՚ձեն. (ըստ որում աւանդի ա՛. Թագ. Է։)

Ողբերգին այսօրինակ կարծիք ունին դիւրեանց պատ-
ճառս հակառակս միմեանց, բայց չորեցունց եւս տը-
կարք և անզօրք։ Վասն որոյ և մեք չունիմք ի մին
յարել հաստատուն, այլ ի հասարակի առաջի դնեմք
զգանն. և եթէ ուրեք հարկ լինի՝ վերածեմք առ այս
կամ առ այն. որպէս տեսցի յարաջիկայդ։

ՐՈՒՆ

ՈՐ. Ընդէր դերծեցեր ձեր էապատ. բարեացս սրտմտութեանդ
ի վերայ խաչին արօսի։

ՄԱՆՈՒԹԻՒՆ

Ձեր երբակի մերժէ զոք. մի՝ առ ժամանակ մի՝ ի բաց
թողուլ ի մանաւանդ խնամոց իւրոց. երկրորդ՝ ամ-
փոփելով ի նմանէ զչնորհս իւր. երրորդ՝ ոչ եւս ձա-
նալելով զնա իւր յատուկեան. և այս է մերժել իս-
պառն։ Այդ թէպէտ ի ժամանակի անդ՝ յոր հայի
բան տաղտնիս՝ որպիսի եղև ժամանակն գերութեանն,
և ժամանակն հալածանաց անտիրոջայ, ոճ ըստ ա-
ռաքելոյն միայն մերժեալ էր զժողովուրդն իսրայէլի,
բայց այնչափ եղեն վիշտք և հալածանք նոցա, մինչեւ
երեւիլ՝ թէ ոճ ոչ եւս ձանձալեր զնոսա լինել իւր ժո-
ղովուրդ կամ իւր խաչն. սակն իրի դնէ խոպատ մեր-
ժել, և զարմանալով ասէ ի բերանոյ ժողովրդե-
ւանն։

Ընդէր դերծեցեր ձեր էապատ։ Այսինքն թէ, զի՛ է զի
զոր ընտրեցեր քեզ ժողովուրդ՝ թողեր ի ձեռաց,
մինչեւ ոչ եւս իբրեւ զբոյդ խնամել, այլ իբրեւ զօտար
արհամարհել. միթէ յատուկեան մերժեցեր զմեզ
որ։ Ոչ զի այս էր գործ բարկութեան նոյ, հարցա-
նէ կրկին՝ թէ ընդէրը էցէ այն բարկութիւն ասե-
լով։

Բարկացաւ (այսինքն ընդէրը բարկացաւ) սրտմտութեանդ իւ
ի վերայ խաչին արօսի։ Կատարէ բերանաւ՝ հայելով ի
լերանս մեր՝ գնի ըստ սուտգաւառութեանն՝ փոխանակ
բարկ երեւելոյ, այսինքն փոխանակ սաստկանալոյ,

ըստ որոյ կասի ասել. ընդհէր զայրացաւ և սատկա-
ցաւ վրէժխնդրութիւն քո 'ի վերայ ժողովրդեան քո,
զոր իբրև զխաղն կամ իբրև զծառ արօտի քո քաղց-
րութիւնք և բազմապատիկ խնամիվ հովուէիր: Այլ յա-
ւելուլով զառաջ արօտ ⁘՝ սովին կամի ցուցանել ոչ
միայն զլինել նոցա խաղն, այլև ամենևին և բարի խաղն.
որովհետև յայնպիսի արօտի Նաւակէին՝ որ էր այդ.
քանզի ոչխարք ըստ պատուականութեան արօտին լինին
պատուական. ապա եթէ այնպիսի իցէ արօտն՝ որ
ասիցի լինել այդ, զնրպիսի պատուականութեան ունիցին
որք ենն 'ի նմա:

Այլ զայս յայն սակս դնէ մարգարէն՝ զի 'ի գուէ
շարժեսցէ զնա. որպես թէ ասէր. որովհետև այս-
պիսի պատուական խաղն է ժողովուրդ քո, զիարդ
այսպիսի բարկութիւն մերժեցեր զնոսա:

Նայց կշռել ևս արժան է՝ զի զդեբանումնդ ⁘՝ ոչ
դնէ մարգարէն 'ի վերայ խաղին, այլ 'ի վերայ արօ-
տին. զի որովհետև անօրինեալ համարի զխաղն՝ որոյ
վասն մերժեցաւ, ոչ ևս համարձակի ասել զնմանէ
լինել խաղն այդ, այլ արօտին այդ. զի որպէս ասէ
գէորգ վարդապետ (՝ի մեկն. եսայ.) յանօրինել ժո-
ղովրդեան և՝ի բարկանալ այդ՝ի վերայ նորա՝ ոչ ձա-
նաչէ զնա իւր, այլ՝ այլոյ. ըստ այսմ զոր ասաց առ
մովսէս, անօրինեցաւ ժողովուրդ քո, քոյ ասէ և ոչ
իմ. բայց յետոյ նա ինքն մովսէս միջնորդ լեալ՝ ասաց
լինել այդ, յասելն. ընդհէր ՚ձր բարկանաս ժողովր-
դեան քումմ: Լ՚ստ սմին յարէ մարգարէն զկնի ա-
սելոյ:

Զ. Յիշեա՛ զժողովուրդ ⁘, զոր սպասաւոր՝ի սիրեցեալ.
երկիցեր զվիճակ ծառանգութեանդ ⁘:

Զկնէրն այդ ոչ է ըստ մերումն զմտաւածեալն՝ի միտս
բերել, այլ զգործ միջողոց առ արտաքս ցուցանել.
որով նշանակի նորով իմն օրինակաւ այդ առնելն այդ՝
փրկելով, կամ պաշտպանելով, կամ միսիթարելով,
եւ. և այս Հայի տիրապէս յայնոսիկ առ որս անագան
նի այցելութիւն այդ, որպէս թէ մոռացեալ էր զնոսա
ամ. և զի յայսպիսի վիճակի տեսանիւր ժողովրդին
իսրայէլացւոց, սմին իբրև ասէ.

1 Տ՚ոսովնա եղիցուք առ Տէր Աստ, խոսովնա եղիցուք և հարցասցուք պանուն Աստ։ 2 Պատմեցէ զամբ նայն ապանչելիս իւ. յորժամ ժամ առիցե՚ս ուղիղ դատեցայց։ 3 Ա՚ղեցան երկիր և ամենայն բնակիչք նորա. ես հաստատեցի զսիւնս նորա։ 4 Ը՚սացի անօրինաց, թէ Ի անօրինէք. և ընդ ուրայ, թէ Ի բարձրացուցանէք զեղջիւրս ձեր։ 5 Ա՚Ի համ բառնայք Ի բարձունս զեղջիւրս ձեր. և Ի խօսիք պոյ անիրաւութիւն։ 6 Ո՚չ ուր յարևելից՝ և ուր յարևմտից, և ուր յանապատ լերանց. այլ Աստ դատաւոր է։ 7 Ո՚այս խոնարհ առնէ, և զայն բարձրացուցանէ. բաժակ Ի ձեռին Տն գինի լի անապակ արբեալ. և խոնարհեցոյց յայսմանէ յայս։ 8 Ա՚մենայն մրուռ նորա ուր ապառեսցի. և արբցեն զնա ամենայն ընդաւորք երկրի։ 9 Ա՚ռ ինձացայց յաւիտեան. սաղմս ասացից Աստ յաղովբայ։ 10 Ո՚ամենայն եղկիւրս մեղաւորաց փշրեսցեն. և բարձր եղիցի եղջիւր արդարոյ։

ՍԱՂՄՈՍ ԴԻՐ.

Ի կապաքաճ. Ջ ապականեր. սաղմոս օրհնութեանց յաւաք։

ԱՅՍ ՍԱՂՄՈՍԻՍ ՅԵՐԻՒ ՁՆ-
ռագիրս մեր դնի հանդերձ բառիւս դա-
վիթ յասէն. * ի կատարած. մի ապա-
,, կաներ. սաղմոս ի դաւիթ ։ յոմանս ոչ դնի բառդ
Ջ ապականեր. յոմանս յաւելեալ լինի ասել. * երգ ք
,, առ. ասորեստանեայս ։ յոմանս այլով կարգաւ դնին
բառքդ սաղմոս և օրհնութեան յասէն. * ընդ օրհնութեան
,, սաղմոս յաւաք ։ և ի վարդանայն դնի * ի կատա-
,, րած. մի ապականեր. ընդ օրհնութենն. սաղմոս
յաւաք. երգ առ. ասորեստանեայս ։ Այլ քանզի
յընտիր ձեռագիրս մեր և ի լամբ". ըստ նախակար-
գելոյդ դնի՝ համաձայն երք". և եօթ". զայն պարտ
է համարիլ ուղիղ։

Իսկ թէ առ. ինչ կարգեալ իցէ այս սաղմոս, և ինչ
առթիւ յօրինեալ, այլևայլ են կարծիք։ Իմանք հա-
մարին թէ զայս ասաց դաւիթ ի ժամանակի անդ՝
յորժամ եհաս կոտորած մսխու ի ժողովուրդ իւր
յաղագս նորա զնածն և յասել. * Այս մեղայ՝ սոքա
,, զինչ արարին ։ (ը. թագ. իդ. 17.) և յայս սակս
ասեն դնի ի վերնագրիդ՝ մի ապականեր (զդոսա).
այս կարծիք աւանդի և ի մեկնաբ". քաղդեացւոց։
Այլք ասեն՝ թէ զայս ասաց դաւիթ հայելով ի դիպ-
ուածն յայն՝ յորում եմուտ ինքն հանդերձ աբեսաեաւ
առ սաւուղ. և ի կամիլ աբեսաեայ հարկանել զսա-
ւուղ՝ ասաց նմա դաւիթ. մի սպանաներ զդա ։ և
վասն այսորիկ դնի ասեն ի վերնագրիդ, մի ապա-
կաներ։

Չաւանականն կարծիք է ասել՝ թէ զայս ասաց դաւիթ
հայելով՝ ոչ ի մասնաւոր ինչ դիպուած, այլ միայն ի
գործս ամենակարողութենն այ, և ի գործ վերին դ-
րուէ նորա ընդդէմ ամբարտաւանից. և աւանդեաց

զսոյն ասափայ երգել այնու եղանակաւ, որպիսեաւ երգեաւ լիներ մի ասպականեր երգն, այսինքն երգն այն՝ որոյ սկիզբն էր մի ասպականեր. (զորմէ տես՝ ի սաղ. ծե. և՝ ի ներքոյ. գլ. ժ)։

Վասնի անյաղթ հայելով՝ի բառդ ասաք՝ գրե՝ի յա-
,, ռաջաբանութեն սաղմոսաց այսպէս. * ՚ի վերայ հե-
,, սաղմոսին ունի ասափայ անունն. քայց ոչ նորա է
,, ասացեալ՝ թէ հալեցաւ երկիր և ամենայն քնա-
,, կիչք նորա (՚ի համարն. ֆ.) այլ դաւիթ բառնաւ
,, լով զանապարշտութեն ազգին յուդայ՝ իբրու թագաւ
,, որեաւ էր՚ի վերայ նոցա . . . Ո՚յդուիկ և զայլ
,, ասափայդ ծանիցես դաւթի լեալ, և ոչ ասափայ՚։
Այսու ևս բազումք՝ որք զայս սաղմոս տան այլոյ ու-
մեմն ասափայ, և ասեն, թէ նա ասաց զայս՚ի ժա-
մանակս գերութեն բաբելացւոց, կամ՚ի ժամա-
նակս եզեկիայ՚ի գալ սենեքերիմայ. քայց այս կար-
ծիք չունի ինչ հաւանական հաստատութեն. այլ միայն
յարմարական ինչ պատշաճողութեն. ուստի թագեալ
մեր զայս և զայլ սոյնպիսի կարծիս՚ի հասարակի
ունիմք մեհենէ զսոյն՝ իբրև զձայն գոհաբանութեն՚ի
բերանոյ մարգարէին և՚ի բերանոյ իւրաքանչիւր ար-
դարոյ. և իբրև ազգաբարութեն առ ազգս մարդկան՝
կեալ բան արդարութեն, և հեռի լինել յամբարշ-
տութեն, մանաւանդ յամբարտաւանութեն, հայելով
՚ի սպառնալիս արդար դատողութեն այ, որ սաստկա-
նայ առ ամբարտաւանս։

Բ. Ն.

ա. Ասպուան եղիցուք առ տէր ամէն, խոսպուան եղիցուք
և կարգացուք պանուն նը տո։

ՄԵՆՈՒԹԻՒՆ

Խոստովան լինելոյն կրկնակի առեալ լինի. մի՝ փո-
խանակ պատմելոյ ուրուք զնմարտութիւն զոյն ինչ՝ զոր
արարեալ իցէ ինքն, կամ զոր տեսեալ իցէ, և կամ
զոր ճանաչէ. երկրորդ՝ փոխանակ պատմելոյ զոյն ինչ՝

զոր արարեալ էիցէ ինքեան այլ ոք, մանաւանդ եթէ էիցէ բան երախտեաց. և այս կարէ լինել թէ՛ առ նոյն երախտաւորն և թէ առ այլս։ Զայս միտ դնել առ խոստովանութեն յասելն ։

Խոստովան եղէցուք առ Տէր աՀ, խոստովան եղէցուք և կարդացուք զանուն Ի։ Լ՚սխինքն է, ոչ ուրացուք զաբերաբուեցիս քո՝ զոր ցուցեր և զոր ցուցանելոց ես. այլ խոստովան եղիցուք առ քեզ, այսինքն ձա նալելով զայնս՝ տարածեսցուք զնոսին առաջի քո՝ ա սելով, զու արարեր զայս ամենայն. և զոյն զայս զարձեալ խոստովանեսցուք և առ այլս՝ մեծապանծ հռչակելով։

Լ՚այս կրկնութիւն խոստովան լինելոյ կարէ վերածիլ և ի սաստկութեի նշանակութեե բանին. իբր դի սովորու թեի է մարգարեիս կրկնել զնոյն բառ վասն սաստկա ցուցանելոյ զեղանակ խօսիցն. որպէս թէ եգեալ եր. խոստովան եղիցուք յամենայնի, և ոչ դադա բեսցուք ՚ի խոստովան լինելոյ առ ՚ի փառաւորել զքեզ ։

Յամենք զխոստովան լինելն առնուն աստ փոխանակ պատմելոյ զմեզ. յայս կարծիս է և վարդան. բայց հասարակաց կարծիք է իմանալ փոխանակ գոհանա լոյ. որոյ զհետ գայ պատուել զանունն Ա՚յ. ըստ ո բում և ասէ իսկ մարգարէն ։

Եւ կարդացուք զանուն Ա՚ստուծոյ աՀ։ Լ՚սխինքն ՚ի բերան առ նելով զանուն քո՝ գովեսցուք զայն, և ՚ինոյն պար ծեսցուք, և նովաւ զօրասցուք։ Իսկ թէ զինչ ունէր խոստովանիլ յայտ առնէ ասելով ։

Ձ. Պատմեցէ զամենայն սքանչելիս քո. յորժամ ճամ առէ՝ ես ուղիղ դատիցայց ։

Ւատադ սքանչելի բազմապատիկ օրինակաւ կարէ ա ռեալ լինել. որպէս ասացեալ է մեր այլուր. իսկ աստ առեալ լինի փոխանակ մեծամեծ գործոցն Ա՚յ. յայս միտ ասէ ։

Պատմեցէ զամենայն սքանչելիս քո։ Լ՚սխինքն զոր ինչ գործեցեր ՚ի մեզ ՚ի սկզբանէ՝ յորմէ հետէ ընտրեցեր զմեզ քեզ ժողովուրդ սեփական, պատմեցից և յայս նի հռչակեցից զամենայն. և ՚ի բերան առեալ խօսե-

ցայց զայնմանէ՝ ոչ միայն ՚ի միջի մերում, այլև առ այլս, հրատարակելով զնոսն և ՚ի գիրս, Թէ այսպէս և այսպէս արար ընդ մեզ Աստ. Ո՞այս եդեալ՝ խօսի ասա ՚ի դիմաց նոյ, և ասէ.

Յորժամ ձամ առէ՛ես ուղիղ դասեցայց. Ա՛յս բան ի՛ իբրև պատասխանի ինչ նմա առ այն ամենայն՝ զոր խօսեցաւ մարգարէն ՚ի նախընթաց սաղմոսն. մանաւանդ առ այն բան զոր ասաց. * արի՛ Աստ, և դատեա՛ զդատաստանս քո ՚ի ՚ես. որում տայ պատասխանի, * յորժամ ժամ առիցե՛ս ուղիղ դատեցայց ՚ի.

Ա՛յս եղանակ խօսից ոչ ցուցանէ Թէ Աստ նորոգ առնըլոյց էցե իւր ժամ առ ՚ի դատել. այլ Թէ ինքն գուլով նոր ամենայն ժամու և ժամանակի՝ սահմանեալ ևս է որոշ ժամ վասն իւրաքանչիւր մարդոյ՝ դատել զնա. ուստի և յառնուալ նորա զայն ժամ ՚ի ձեռն՝ ասի ժամ առնուլ ՚ի դատել. և յայս միտ ասէ. յորժամ ժամ առիցե՛ս, ուղիղ դատեցայց. այսինքն յորժամ եկեսցէ ժամն այն՝ զոր սահմանեալ է իմ, ՚ի նմին ժամու դատեցայց. և զի զոր սահմանեալն է Աստ առնել յայնմ ժամու՝ այն է ուղիղ, սմին իրի ասէ, ուղիղ դատել. որպէս Թէ եդեալ էր. այնպէս դատեցայց՝ միանշև նոքա ևս ոք դատին, վկայեսցեն՝ Թէ ուղիղ է դատաստանս իմ ՚ի տան զվարձս արդարոց, և զպատիժս մեղաւորաց.

Յայս բան յայտնի երևի Թէ յամենայնեսեան ոչ երբեմն զդատաստան իւր առ ամբարիշտս՝ ոչ է վասն այսորիկ՝ զի նոքա ոչ պարտաւորին դատաստանի, այլ վասն այսորիկ՝ զի Աստ սպասէ գարձի նոցա մինչև ՚ի սահմանեալ ժամանակն. զի մինչև ցայն ժամ որ չսի ինչ ժամանակ կայ՝ ըստ մեզ խօսելով գրե Թէ չէ առեալ նոյ ՚ի ձեռս իւր զայն, այլ տուեալ է ՚ի ձեռս մեղաւորին՝ զի ՚ի կիր առնուցու յապաշխարութե. Թէ. ըստ այսմ (յայտ. ՚Ը. 21.) * եւտուս նոցա ժամ, մանակ ապաշխարել ՚ի. Իսկ ՚ի լռանալ այնր՝ առնուցու Աստ զայն ՚ի ձեռս իւր, մանաւանդ զվերջին ժամն՝ զոր եդեալ էր իբրև չափ և սահման, և յայս ժամ դատեսցէ ուղիղ, այսինքն ուղղութե և արդարութեամբ.

Ա՛յլ սակայն որչափ քաղցր եղև Աստ յերկայնամտեցն,

այնչափ և սաստիկ լինիցի ՚ի դատելն. զի զորօրինակ
դետ յորդահոս եթէ արգելցի, և ջուր նորա դիզեալ
ինասցէ, յորժամ բառնի արգելն՝ սաստկութիւք յորդէ,
սոյնպէս և դատաստանն ՚ի՝։

Իսկ թէ սահմանեալ իցէ ՚ած ժամ դատաստանի,
յանհամար տեղիս ՚ըզ գրոց ասացդի, եթէ՝ ըստ աս-
տի կենաց, և եթէ՝ ըստ հանդերձելոյն. ըստ աստի
կենաց՝ յայտնի ասի (՚ի գիրս. Ծնն. ԺԸ. 16.) վասն
քանանացւոց՝ թէ * չէ էր լցեալ չափ (ժամանակի)
՚ի չարեաց նոցա։ և ամենևին մարգարէ յայլ իւիք նման
նազանութեաւն խօսելով զդատաստկեայ ասէ. * ՚ի վերայ
՚ի երից անօրէնութեց դատաստկեայ, և՚ի վերայ չորից
՚ի ոչ դարձայց ՚ի նմանէ ։ (ամենև. Ա. 3)։

Իսկ վասն հանդերձելոյ մեծի դատաստանին ՚ի բա-
զում տեղիս աւետարանին ասացեալ, յասելՀՏն մերոյ
(յովհ. Ե. 28.) * եկեսցէ ժամանակ՝ յորում ամե-
՚ի նէքին՝ ոքք ՚ի գերեզմանս կայցեն՝ լուիցեն ձայնի
նորա ։։ Լուսաւորչին դատաստանի նկարագրե
(՚ի մատ. իե. 31.) առ որ հայելով յովհաննու՝ ասէ.
(՚ի յայտնութեն. ԺԸ. 7.) * Լրկեբուք ՚ի յմ, և տուք
փառս նմա. զի եկն ժամ դատաստանի նորա։ ՚Ի
սոսին ակնարկէ և բանն այն՝ զոր ասաց պօղոս առ
աթենացիս (գործ. ՀՀ. 30). * զժամանակս անգի-
տութեն անտես արարեալ ՚ի, արդ զայս պատուի-
ըն ՚ի մարդկան՝ ամենայն ուրեք ապաշխարել. քանզի
սահմանեաց զօր, յորում պարտ է դատել զաշ-
խարհս արդարութեաւ ։։

Ամբրոնացին զայս բան վերածէ ՚ի դէմս սաղմոսա-
նուացին կամ ՚ի դէմս իւրաքանչիւր մարդոյ. և
գրէ այսպէս. * ժամ առնուլ զայս կարծեմ՝ թէ
յորժամ ՚ի ՚ամ ՚ամի միաքն յաշխարհական զբաղմանց,
և յորժամ ուղիղ դատաստան առնու ազատել
զնիւքն, (յայնժամ) ոչ այլ ինչ է նմա ախորժա-
կան քան զբո սբանչելիսն պատմել, և զնոյն խոս-
տովանելն գոհաբանել. իսկ ապա թէ ոչ առնու
զայս ժամանակ, և անիրաւի ՚ի դատաստանին քար-
շեալ զգայարանօքն յաշխարհս, ոչ կարէ զայս առ-
նել։

Նոյնպէս և վարդան ՚ի դէմս իսրայէլի առնելով զայս,

ասէ. * երբ յերուսաղէմ՝ հասից զերծեալ ի նեղու-
,, թէ՞ գերութեան՝ արգարադատ եղեց, զոր դու ա-
,, սացեր, դատաստան արդար դատեցարուք ։

Դաւիթ անյաղթ ի նախերգանս սաղմոսաց վերածէ ի գէմս դաւթի. և գրէ այսպէս. դաւիթ մարգարէ յետ թագաւորելոյն ի վերայ յուդայ. * թևաւո-
,, կէր թագաւորել և ի վերայ իսրայէլի. յայնժամ
,, զայդ նուագեաց ասելով, թէ յորժամ առից ժա-
,, մանակ, և զիսրայէլ՝ ուղիղ դատեցայց ։

Ասացց այս մեկնութիւնք ոչ ղնին ըստ ձառին, այլ ըստ յարմարութեան, քանզի ըստ նկարագրին առեալ՝ այս բան հայի ի դատէն ՚ոյ, զորոյ և զահեղութիւնն կա-
մելով յայտ առնել մարգարէին՝ յարել զինի և ասէ.

Ե. Ա՚աղեցաւ երկիր՝ և ահեցաւ երկիր նորա. ես հաս-
տատեցի զսիւնս նորա ։

Ա՚աշխէն յայտ առնէ զղակասիլ իրին կենդանեան ըստ զօրաւոր մնասանցն արտաքոյ. բայց երբեմն և ի ներ-
քոյ. և երբեմն ըստ արտաքնոյն և ըստ ներքնոյն միանգամայն. և քանզի զայս գործէ նաև կիրք մար-
դոյ ի սատականալն. որպիսի է ահագին երկիւղ, ան-
տանելի ամօթ, դառնագին տրտմութիւն, ցաւ, որք միանգամ յայսպիսի կիրս ըմբռնին՝ ասին մաշիլ, կամ հալիլ. Յայսմանէ փոխաբերութեամբ ինն մաշիլ ասի զնոցանէ՝ որք պակասին ի զօրութենէ, կամ ի բանից ։
Յայս միտ խօսի ասա մարգարէն յասելն ։

Ա՚աղեցաւ երկիր և ահեցաւ նորա ։ Ա՚այս բան կա-
րէ ասացեալ լինել, երբ ի դէմս ՚ոյ և կամ երբ ի դիմաց արդարոյ, յոր դէմն և ասացէ առաջի դնի հայելով յայն՝ զոր ասաց. * յորժամ ժամ առից, ես
,, ուղիղ դատեցայց ։ երբ զի ի դատէն ՚ոյ ուղղու-
թեամբ և արդարութեամբ՝ երկիր ամենայն՝ այսինքն մարդիկ
որք բնակին յերկրի՝ հալեն և մաշին ։

Ա՚այս մաշիլ եթէ առցի ըստ դատապարտութեան, յայտ առնէ զպատժիլ մեղաւորաց ի հանդերձեալն, կամ նաև յաշխարհի աստ ։ Իսկ եթէ առցի ըստ կրից, մնաւանդ ըստ երկիւղի, յայտ առնէ զսոսկալ և զզարհուրիլ ամենեցուն, և այս վասն երից. Ի՚ վասն սահեղութեան դատողին. երկրորդ՝ վասն տեսանելոյ

թէ այլազգ է դատաստանն այ, և այլազգ դատաս-
տան մարդկան. երբորդ՝ վանն փոփոխելոյ իրաց յայլ,
ինն անկարծելի վիճակ։ Այլ զի մի յաղագս ասելոյ՝
մաշեցաւ երկիրը, կարծեսցի՝ թէ նաև հաստատուէ՛թե
երկրի ասպականելոց իցէ, յարէ զկնի, և ասէ։

Այս հաւաքեցէ ըղհնոս նորա։ Սիւնք երկրի ըստ նկա-
րագրելին առեալ՝ ասին այն մասունք կամ այն իրք,
յորս հաստատեալ կայ երկիրը, և կամ սնդագոյն
մասունք՛ի խորս երկրի, և կամ մագնիսական և ձգո-
ղական զօրութի՛ք, յորս հաստատուն կան տկար մա-
սունք նորա. կամ գարձեալ սիւնք երկրի ասին նոյն
իսկ հաստատութի՛ք և սնդութի՛ք երկրի։ Այլ ըստ
այսմ փոխանակ ասելոյ, ես հաստատեցի զայն աւա-
նայն որով կայ երկիրը, կամ ես արարի զ երկիրս
ունասցէ հաստատուն՝ ասէ, ես հաստատեցի զսիւնս
նորա։

Այլ դիտումն բանին է ցուցանել նախ՝ թէ՛ի ձեռին
այդ է հաստատութի՛ն երկրի և ամենայն ինչ։ Այրերորդ՝
թէ՛ի դատել նորա՝ ամենեքեան Տալին և մաշին.
իսկ՛ի խնամել նորա նորոգին, և հաստատին. որպէս
և տեսանեմք իսկ եթէ՛ի մին, և եթէ՛ի միւսն. իբր
զի՛ի դատել նորա կամ՛ի խնդրել զվրէժ՛ի քաղա-
քէ կամ յազգէ՛ մաշին պակասելով՛ի բարեաց՝ զորս
ունէին, իսկ՛ի խնամել նորա կամ՛ի դնել նորա՛ի
նոսա՝ հաստատին՛ի լաւ անդր, կամ յայն ինչ՝ որ է
նոցա սիւն հաստատութի՛ն։

Վարձեալ՝ սեամբք երկրի մարթի է խնամել և զայնս՝
զորս խնամեամք սեամբք երկնից. զի երկոքինս ա՛ի
նոյն ակնարկէն. և նախ որպէս հայելով յերկինս՝
երկիրս ասի սիւնք երկնից սոյնպէս և հայելով յեր-
կիր՝ երկինք ասի սիւնք երկրի. վասն զի որպէս ընդ
հայիլ մեր ընդ հորիզոնն՝ տեսանեմք զերկինս յեգեալ
յերկիր իբր՛ի սիւն, սոյնպէս ընդ հայիլ մեր ընդ նոյն
հորիզոն՝ երկիրս երևի մեզ հաստատեալ յերկինս իբր
՛ի սիւնս։ Այերկրորդ՝ որպէս արև և լուսին սիւնք ասին
երկնից. ըստ որում մեկնի վանական վարդապետ (՛ի
յոբ. իէ.) յասելն. * սիւնք երկնից թռուեան, (այս-
,, ինքն) աբեգային և լուսին (՛ի պահել նոցա) զսահ-
,, մանեալ ժամանակս ընթացից ըստ հրամանի ա-

,, բարչին, որ է սիւն և նեցուկ յարատևութիւն նո-
,, ցա ։ այնպէս ասին և սիւնք երկրի, լինելով և
նմա նեցուկ հաստատութիւն և յարատևութիւն։ Իբրև որպէս այլաբանութիւնքն իմն հրեշտակք՝ սիւնք երկնից ասին ըստ որում գրէ նա ինքն վանական վարդապետ (՚ի յոբ. ԺԸ.) յաւելն. * սիւնք երկնից (այսինքն) ,, հրեշտակք սաստիին ՚ի յահէ նորա ։ այնպէս ա-
սին և սիւնք երկրի ՚ի պահպանել նոցա զերկիրն և զորս են յերկրի։

Ասացի ՚ի վերոյ՝ ըստ նկարագրին. զի ըստ փոխաբե-
րական մտաց՝ սիւնք երկրի են արդարք կամ արք հաստատեալք, որոց վասն կայ աշխարհ. որք և ՚ի մա-
շիլ ամպարշտաց՝ ինան հաստատուն. որպէս եղև ՚ի ժամանակս ջրհեղեղի. զի ՚ի գատել՝ այ զընակիցս երկրի՝ գտան նոյ և որդիք նորա իբրև սիւնք հաստատուն։ Այնպէս և ՚ի լըմնի ժամանակաց ՚ի հալիլ և ՚ի մաշիլ հրէից ՚ի հաստատութիւնէ օրինաց, հաստատեցան առաքեալք և յաջորդք նոցա իբրև սիւնք երկրի, այսինքն եկեղեցւոյ։

Ամբրոնացին բարոյապէս մեկնեալ ասէ՝ Թէ սեամբք իմանայ աստ մարգարէն զերեսին կարողութիւնն, այսինքն զբանականն, զցանկականն, և զցասմնականն, որք են ասէ իբրև սիւնք երկրի՝ այսինքն մարմնոյ. յորժամ ասէ բանականն հաստատի խոհականութիւնք, ցասմնականն արիութիւնք, և ցանկականն ողջախոհութիւնք, երկիր մարմնոյ և զգայութեց մաշի ՚ի հեշտալից յօժարութիւնէ մեռցաց. զի որպէս ըստ պօղոսի ՚ի տակ բանալ մարմնոյ՝ զօրանայ հոգի, և ՚ի զօրանալ մարմնոյ տկարանայ հոգի, սոյնպէս և ՚ի հաստատել կա-
րողութեանց հոգւոյն՝ մաշի մարմինն և յետս կայ ՚ի չարէ։

Այսօրհնաբար ՚ի մաշիլ բնակաց երկրի ՚ի բարի վա-
րուց, և յապականիլ նոցա իսպառ ՚ի մէջս և ՚ի չարիս՝ եկեալ որդին այ նորոգեաց զնոսա. և հաստատեաց զնոր խորհուրդս եկեղեցւոյ իբրև զսիւնս ՚ի փրկութիւն հոգւոց նոցա. զի անկործան ինասցեն. և ՚ի կործանիլն կանգնեսցին, և զգուշասցին, զի մի և ևս անօ-
բինեսցին. առ որս և յորդոր լինի ասելով։

ԺԷ. Ասայէ անօրինաց, ըն ի անօրինէ. և ղեւտացոյ, ըն ի բարչէցացոյանէ ղեղկէրս Տեր։

Օ այս բան 'ի դէմն իւր առեալ երանաշնորհ նարեկացին ('ի բանն կԺ.) խոնարհութիւն մեծաւ գոչէ առ Ած. * ասացեր անօրինիս՝ թէ մի՛ անօրինիր, և ,, ես 'ի նոյն չարիսն պնդեցայ, (ասացեր դարձեալ) ,, մեղաւորիս՝ թէ մի՛ ամբառնար եղջիւր 'ի բարձունս, ,, և ես զընդդէմն գործեցի։

Ընդ երրակի խօսի Ած ընդ ամբարիշտս. մի՛ 'ի ձեռն պատգամաց իւրոց. երկրորդ՝ 'ի ձեռն խղճի մտաց. և երրորդ՝ 'ի ձեռն խրատողաց, ոյք և իցեն, և և 'ի ձեռն բարի օրինակաց. Թո՛ղ զորս յայտնէ 'ի ձեռն տեսութեանն արարածոց։ Ըստ ըստ երիցդ և երևի խօսիլ Այ ընդ նոսա յաւելն։

Ասայէ անօրինաց, ըն ի անօրինէ։ Յայնքան բազում անգամ յորդոր եղէ առ անօրէնս բերանով ծառայից իմոց, և նեղբին ազդարարութիւն, մի՛ և ես անօրինիլ, մի՛ ինձ յանօրէնութիւն, և մի՛ և ես գործել զայն՝ զոր գործէին անօրէնութիւն. ապա թէ ոչ՝ հասանէ ձեզ դատաստան արդար։ Նոքա տեսեալ՝ թէ յամ դատաստան իւրեանց, ոչինչ ղգաստացան, այլ յաւէտ և ես չարացան, և բարձրացուցին զեղջիւրս իւրեանց. ընդդէմ որոց ասէ։

Եղ ղեւտացոյ, ըն ի բարչէցացոյանէ ղեղկէրս Տեր։ Եղջերօք իմացեալ լինի աստ յանդգնութիւն և արհամարհութիւն մեղաւորաց, կամ պարծանք և ջատագովութիւն նոցա. և ըստ այսմ բարձրացուցանել մեղաւորաց զեղջիւրս իւրեանց է յանդգնութիւն և արհամարհութիւն գործել զչարն, կամ պարծիլ 'ի նոյն՝ որպէս թէ արարեալ իցեն մեծ ինչ. և կամ թէ ջատագովել զոր գործեցինն. որովք հանգոյն անասնոյ գրեթէ իբր եղջերօք խեթիկեն զօրինս, և և զօրինսնասպահս։

Ընդ սոսին իմանին և իշխանք անօրինք՝ որք իւրեանց իշխանութիւք իբր եղջերօք հարկանեն և պատառեն զայլս՝ առանց խնայելոյ, և առանց դարմանելոյ ըզպատառուածսն. առ որոյ զգուշութիւն հրամայեաց Ած սամուէլի՝ իւղով ընուլ զեղջիւրն՝ այսինքն բարեխառ-

նել զիշխանութիւն (ա. Թագ. ժԳ. ւ.) Օ սոյն զայս յօրինակ առեալ Ծործորեցւոյն (՚ի մէկն. մատ. գլ. է.) ասէ. * լից զերկիրդ քո իւղով. այսինքն ընդ ,, խեղդիլ իշխանութիւնդ խառնեա՛ և զողորմութիւնն ,, իւղ. զի մի պատառօղ միայն լինիցիս, այլև սփո- ,, փող լսա առաքելոյ. սատեա՛, մինիմարեա՛ ։ Յա- հելեալ ասա մարգարէին զյորդորանս իւր ՚ի գի- մաց ՚ոյ՝ ասէ.

Ը. Ա՛ Ի համբառնայ ՚ի բաբելոնա պղծչիւքս յեր. և Ա՛ խօսի զայ անիրաւութիւն։

Լսայս և երևի զնոյն նշանակել զոր ասաց ՚ի նախընթաց համարն, և Թուի լինել իբր կրկնուցին նորա, բայց այն հայերէ ՚ի յանդգնութեի ամբարշտացն ՚ի գոր- ծելն ընդդէմ այլոց զբարիս, և ՚ի պարծիլն առաջի մարդկան. իսկ այս հայի ՚ի հպարտութեւն նոցա ՚ի խորհիլն զամբարտաւանսն առաջի ՚ոյ, և ՚ի հայհոյելն զնա. վասն որոյ յաւելու և զառաջ ՚ի բաբելոնա՝ յա- սելն։

Ա՛ Ի համբառնայ ՚ի բաբելոնա պղծչիւքս յեր։ Լսայինքն մի հպարտանայք առաջի ՚ոյ, և մի յանդգնիք խորհիլ խորհուրդս ամբարտաւանութեի՚ի բարձունս ընդդէմ ՚ոյ. և մի այնչափ առաւելուք ՚ի չարիս, մինչև հայ- հոյել և զնճշ. և զոյս յայտնի ևս բացատրէ ա- սելով։

Ե՛ Ա՛ Ի խօսի զայ անիրաւութի։ Լսայինքն մի խօսիք լը- բանս անիրաւս ընդդէմ ՚ոյ, Օ՚ոյս ասէ հայհոյելով ՚ի չարութի մեղաւորաց, որք ՚ի խրատիչն յ՚ոյ զուսա ունիլ զինքեանս՝ դառնանան. և ՚ի լսելն Թէ ՚ոճ հանե դէրձեալ է դատել զնոսա և պատուհասել՝ զայրա- նան, և հայհոյեն ևս՝ ասելով. զի՞ կայ ՚ոյ և մեր, վասն էր ոչ Թողու զմեզ կեալ ըստ հաճոյս անձանց մերոց. ընդէր է այդ դատաստան. գիՆ կամի պա- տուհասել զմեզ ։։ և երբեմն մերժեն ևս զսեպհու- Թեի և զդատաստանն ՚ոյ ասելով, չէք այսպիսի ինչ։ Կայց խօսին, անիրաւին, և մոլորին. խօսին, զի այսու ինքեանց դիպասեն. անիրաւին, զի ընդդէմ ելա- նեն ինքնիշխան տէրութեն ՚ոյ. մոլորին՝ զի ուրանա- լով զնախախնամութեի՚ն ՚ոյ և զդատաստան նորա՝ ոչ

կաբէն զերծանիլ մտօք. և զայս յայտ առնէ ի յա-
ջորդ համարն ասելով.

Ջ. Օ ի ով յաբեղէից՝ և ով յաբեմտից, և ով յանապատ
լերանց. այլ ած գոսաւոր է.

Ի համառաձնալ ամբարշտաց զերկնաւոր իւրեանց՝ ըստ
որում ասաց ի վերոյ, նոքին իակ տապազրեն յանձանց
զերկիւղն ՚ոյ, և զամենի մարդկային. որով և այնչափ
վատահանան ի չարիս՝ մինչև ոչ ուստեք ակն ունիլ
նոցա կրել զդատաստան. և եթէ կասկածեսցին և ս
կրել, կարծեն անմիտս զերծանիլ. իբր զի եթէ հա-
մարեսցին յայս ինչ իրաց կրել, հնարին այլով իւիք
խափանել. եթէ տեսցեն վտանգիլ՝ի միջի, ՚ի միւս
ձեռն արկանեն. և այսպէս խորհելով՝ համարին
զինքեանս զերծ գոլ յայնմ ամենայնէ, յորմէ այլք
կասկածին, թէ գուցէ ած ատի կամ անտի պատա-
հասեսցէ զինքեանս: Զայսպիսի չիմար վստահութեն
սոցա հայելով մարգարէին ասէ.

Օ ի ով յաբեղէից՝ և ով յաբեմտից, և ով յանապատ լե-
րանց. այլ ած գոսաւոր է: Կամի ասէ՝ ի զուր է վստա-
հանալ ամբարշտաց՝ թէ ունիցին զերծ գտանիլ ի գա-
տաստանաց, յայս կամ յայն ապաւինեալ. զի ած ի
գտանէն և ի պատուհասէն ոչ յարևելից գտանէ, և
ոչ յարևմտից. ոչ յանապատէ, և ոչ ի ծովէ. այլ
գոլով գատաւոր անկախ յամենայնէ՝ ամենայն ուս-
տեք գտանէ.

Կամ գաբձեալ՝ որ ի նոյն գլխի, ած ոչ եթէ
յարևելից գտանելով՝ թողլ սայ նոցա ապաւինիլ յա-
րևմուտս, և ոչ ևս թէ յարևմտից գտանելով՝ նեղել
նոցա փախչիլ յարևելս, ։ այլ յամենայնի և յա-
մենայն տեղիս որպէս և կամի՝ գտանէ, և յամենայնի
հզօր է գատաստան նորա. ուստի ոչինչ է վստա-
հութիւն մեզաւորաց. զի չիք նոցա հնար զերծանելոյ
ի գատաստանացն ՚ոյ. իբր զի ուր և իցեն, եթէ յա-
րևելս և եթէ յարևմուտս, ունկին իւրեանց գատա-
ւոր զած, և հանդերձեալ են ըմպել զբաժակ բար-
կութեանն նորա. զորմէ խօսի ի յաջորդ համարն: Զայս
միտ մեկնէ և լամբ". և տարածէ զաման առ դևս՝ ի
գատել նոցա չոյ.

Ա. Լսեցէք և այլ մեկնիլ այս բան՝ հայելով յայն, Թէ՝ ի զուր է ամբարշտաց յայս կամ յայն ապաւինելով՝ յաձախել՝ ի չարիս. զի՝ ի դատել՝ այ զնոսա՝ ոչ ուստեք լիցի նոցա նպաստ ազատութեանէ, ոչ յարևելից և ոչ յարևմտից. ոչ յանապատէ լերանց, և ոչ՝ ի ծովէ։

Ի որ հրդեաբար, ոչ լիցի յայնժամ ուստեք՝ ի դատաստանի օգնութիւն փրկութիւն ոչ յարեգակնէ արդարութիւն, և ոչ՝ ի մթին ողորմութիւն, ոչ՝ ի սբց և ոչ՝ ի հրեշտակաց. զի արեգակն քո խաւարեսցի առնմա, և լուսինն այսինքն՝ որ կոյսն՝ ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք այսինքն սբք Թօթափեսցին՝ ի բարեխօսելոյ. և զօրութիքք երկնից՝ այսինքն հրեշտակք շարժեսցին ընդդէմ նոցա՝ ի վարել զնոսա՝ ի դժոխս. (մատ. իդ. 29։)

Ա արթ է յայլ ինն միտս տարածել ընդհանրապէս զայս բան. իբր Թէ ասէր, ոչինչ կարէ ընդդէմ ելանել դատաստանացն այ, ոչ յարևելից, և ոչ յաթևմտից, ոչ յանապատէ լերանց և ոչ՝ ի հարաւոյ. զի նա ինքնիշխան՝ որ է յամենայնի, և դատաւոր արդար. զորինչ և կամի՝ առնէ. զիարդ և կամի դատէ։

Ա. ստանօր յանապատէ լերանց ասելով՝ իմանայ ըզկողմն հիւսիսոյ՝ զի լերինք անապատի՝ զոր յիշէ, անկանին՝ ի հիւսիսակողմն պաղեստինոյ, որպէս ծովն՝ ի հարաւոյ. ուստի փոխանակ ասելոյ և ոչ՝ ի լերանց հիւսիսոյ, ասէ՝ յանապատէ լերանց. ուր բառս անպարտ որ դնի՝ ի բացառական հոլովն՝ իմանալի է իբր յատկացուցիչ՝ ի սեռականն՝ որպէս Թէ ասէր. և ոչ՝ ի լերանց անապատի։

Ի սկ բառս այլ՝ զօրութիքն տայ կրկնել զնախընթաց բառան. որպէս Թէ ասէր, այլ յամենայնի և յամենայն տեղիս՝ եթէ՛ յարևելս և եթէ՛ յարևմուտս, եթէ՛ ի լերինս և եթէ՝ ի ծովս՝ անծ է դատաւոր արդար, և դատէ զամենայն ուղղութիքն, և անկախ իշխանութիքն, որպէս և կամի. զոր և մանաւանդ՝ ի յետագայ համարսդ ասելով։

Ղ. Այս խնդիրն առնէ, և պատի բարբառոցանէ. բա-
ձախ ի յեղյուն ոտն փինի լի անապատ արիւալ. և խո-
նարհեցոյց յայսմանէ յայս։

Լ՚այս բանք հային ի գործ դատաստանին ոյ՝ զոր յու-
ցանէ մեզաւորաց յաչխարհի ատտ երբեակ ձանապարհ
հաւ. մի՝ ի յաջողել նոցա. երկրորդ՝ ի նուաձնել
զնոսա պէսպէս իրօք, բայց խնայելով. երրորդ՝ ի յա-
բաչալ պատուհասելն զնոսա առանց խնայելոյ. ի սո-
սին հայի առաջնիկայ բանդ. և նախ վասն առաջնոյն
և երկրորդին խօսելով ասէ։

Այս խնդիրն առնէ, և պատի բարբառոցանէ. Լ՚այս
բան եթէ ի վերայ մեղ միայնոյ խմնացի՝ մեկնի այս-
պէս, ածՙ որ ձեր է ամենայնի և գատաւոր արդար՝
զմի և զնոյն անձն երբեմն խնարհ առնէ, և երբեմն
բարձրացուցանէ. որպէս արար ընՙ յոբ. երբեմն և-
հաւ, և երբեմն փառաւորեաց. որպէս արար և ընդ
մանասէ. զի նուաձեցոյց և բարձրացոյց. որպէս և
զիւրայլեացիս զորս տառապեցոյց գերութիՙ, և սփո-
փեաց ազատութիՙ։ Այս կամ դարձեալ զմի և զնոյն
երբեմն ի բարձրութիՙ խնարհեցուցանէ, և երբեմն
ի խնարհութիՙ բարձրացուցանէ։

Կամ եթէ խմացի ի վերՙ այլևայլ անձանց մեկնի այս-
պէս. տեսանեմք զի ածՙ երբեմն զայս ոք խնարհ առնէ՝
այսինքն ի ձախողութիս և ի վիշտս մատնէ առ ի
նուաձել, կամ առ ի զգաստացուցանել, կամ առ ի
նեղբսապէս ևս խնարհեցուցանել, կամ առ ի առա-
քինիս գործել։ Այս երբեմն զայն ոք բարձրացուցա-
նէ, այսինքն ի յաջողութիս կամ ի բարեբախտութիս
վերածէ, կամ ի գերագոյն վիճակ ատիճանսն։ Այս
ի հասարակի խօսելով սովին ցուցանի թէ ածՙ զիարդ
և կամի՝ զայս ոք խնարհեցուցանել և զայն ոք բարձ-
րացուցանել. զայս ինչ ընդունիլ գառնայ, և զայն
հաստատել, եւն։

Բարոյապէս առեալ, բարձրացուցանէ ածՙ զխոնարհս
և խնարհեցուցանէ զհպարտս ըստ աւետարանին։
Պարձեալ ըստ որում գրէ բարսեղ վարդապետ (ի
մեկն. մարկ. ժՃ.) * յորժամ տեսանէ ածՙ զոք սիրօղ
,, ընչից, և թերի և պակաս ի հաւատս որ կինքն՝

,, տայ նմա Հարստութիւն և ստացուածս ընչից. զի
,, այնու Հաստատեսցէ զնա ՚ի Հաւատս և ՚ի սէր՝ որ
,, յինքն. իսկ զոր տեսանէ կատարեալ ՚ի Հաւատս՝
,, և ՚ի սէրն՝ որ յինքն՝ Թոյլ տայ նմա ինալ ՚ի յաղ-
,, քատութիւն և ՚ի կարօտութիւն ։

Լաւ պարզապէս՝ առ ամենարիւս Հայելով, զոմանս
՚ի նոցանէ խոնարհեցուցանէ՝ ասէ, և զոմանս բարձ-
բացուցանէ. և այնու դիտէ՝ զի այս ոք նուաստելովն
զատարեացի ՚ի չարեաց, և այն ոք յաջողութիւն գտա-
նելով՝ ծանիցէ զտուօղն, և գարձցի առնա ։ Իսկ ե-
թէ սոքիմքն ոչ զգաստասցին, Հեղու ՚ի վերայ նոցա
զմեծ բարկութիւն իւր՝ զոր յիշեցաք ՚ի վերոյ ըստ եր-
բորդ օրինակի պատմելոյն. և զայս նմանութիւն բա-
ժակի ՚ի միջ բերէ մարգարէն յասելն ։

Եաթակ ՚ի յեռին ան գինի էի անապակ պղինձ։ Ի ստանօր
բառդ եաթակ և գինի՝ կարեն առնել լինիլ կամ երբեմն
մի, և կամ երբեմն այլևայլ։ երբեմն մի առնել նշանա-
կէն զարկութիւն ան, և զվերծխնդիր արդարութիւն
նորին. որպէս և տեսանել և յայլ գիրս (Եսայեայ.
ծիս. 17 — 22. ողբ. ի. 21։ Յովել. իե. 31. առ
բակ. ե. 16. յայտ. ժե. 10.) և յայլ բազում տե-
ղիս. մանաւանդ յերեմիա (իե. 15.) ուր ընդարձակ
կուտէ զնի այս բան՝ յասելն. * Ի յայսկես ասէ ցիս
,, ձեր ան իսրայէլի. ան զաւժակ գինւոյս անապա-
,, կիս այսորիկ ՚ի ձեռաց իմոց. և արբուսցես զդա
,, ամենայն ազգաց ։ այլովքն Հանդերձ ։

Իսկ պատճառ նմանեցուցանելոյ զարկութիւն ոմ բա-
ժակի կամ գինւոյ՝ ոչ ըստ այնմ ինչ է, զի արբումն
գինւոյ ուրախ առնէ, կամ զօրացուցանէ, այլ ըստ
այնմ, զի խանգարէ կամ տրտմեցուցանէ և ուշակո-
րոյս կացուցանէ ՚ի խելացոյ. վասն զի որ սաստիկ ըմ-
պէ անապակ գինի բաժակաւ, կորուսանի զդատումն
մտաց, և զվարումն անձնիշխանութիւն. մինչև ոչ և
իմանալ ինչ, և ոչ իսկ կարել հաւաքել զինքն,
կամ պաշտպանել կամ Հնարս գտանել զերծանելոյ։
Այնպէս պատահի նմանութիւն իմն և այնմ որ պատա-
հի բարկութիւնն այ, զի կորուսանէ զայն զիւր սեփա-
կան գտումն. իբր զի ոչ ինայ ՚ի նմա այն Հանա-
չումն՝ զոր ունէր, զի փոխի յայլ. վասն զի ՚ի կար-

ձեզնէ երջանկանալ՝ թշուառանայ · և՝ ի դնելն՝ ի մահ յայս ինչ Հասանել՝ անկասի յայլ։ Այլ զարձեալ ոչ կարէ խուսափել կամ պաշտպանել զանձն իւր՝ ի բարկութէ անտի· մի ոչ գոյ՝ ի նմա ոչ զօրութէն ընդդէմ դառնալոյ, և ոչ բան ինչ ջատագով լինելոյ։

Այս բաժակ գինւոյ բարկութեան այդ ունի զայլևայլ յատկութիս· մի՝ զի է ամբողջ կամ անթերի· և յայս սակս գինէ կ՝ Երկրորդ՝ զի է զուտ, այսինքն անմիսն յողորմութէ, և վասն այնորիկ ասէ ածապաւ։ Զօրրորդ՝ զի է աննահանջելի· այն իրի ասէ՝ ի յեհան ած, որով նշանակի՝ թէ ած ձեռամբ իւրով՝ այս ինքն ամենակարող զօրութէ իւրով ամբարշտաց զբաժակ բարկութէ իւրոյ։ Զօրրորդ՝ զի է սաստկացեալ· որոյ վասն ասէ պիէ՝ այսինքն խառնութէ սաստիկ և զօրաւոր իրաց բաղադրեալ· որպէս սովորութէն էր՝ ի պատերազմին և յայլ տեղիս արկանել՝ ի գինի զզօրաւորն իրս· ուստի և այսոր օրէն նակեալ լինի ասա բարկութէնն այդ՝ ի սաստկանալն վրէժխնդրութէ արդարութէն։

Ա՝արթ է և ասել, թէ որովհետև այս բարկութէ այդ՝ որ յիշի ասա՝ մեծի ի զատ ասի կենաց, բառիւդ պիէ՝ կամ խառնէ՝ ցուցանի բարեխառնել նորին յողորմութէնն այդ։

Ամենք զբառդ պիէ՝ առնուն ասա փոխանակ պատրաստեալ գոլոյ· և ամենք խմանն փոխանակ հեգեալ գոլոյ՝ ի վերայ ամբարշտաց· և այլք խմանն փոխանակ մերալից լինելոյ· բայց քանզի յերբ՝" և յայլս դնի խառնեալ, պատշաճագոյն և թուի մեկնել ըստ նախակարգեալ բացատրութէդ։

Թէ բաժակաւ և գինեաւ խմացեալ լիցին այլևայլ իրք, բաժակաւ նշանակի այն ինչ, ի ձեռն որոյ մարդասիրէ ած զդինի բարկութէ իւրոյ, այսինքն զպատիժ· յոր միտ երեմիա մարգարէ կոչէ զբաբիլոն (այսինքն զհագատարն բաբելացւոց զիաբուզոդոնոսոր) բաժակ· յասելն· * բաժակ ոսկի բաբիլոն՝ ի ձեռն ,, աբին ահն· որ արբուցանէ զամենայն երկիրն՝ ի գինւոյ ,, իւրմէ ։ (երեմ. ծա· 7)։

Այլ ոմանք բաժակաւ ասն խմանցն զի և իցէ բարկութէն նորա՝ կամ զինչ և իցէ նեղուէ՝ զոր տայ ած

ուժեք. իսկ անապակ գինեաւ իմմանան զասատակցեալ բարկութիւն նորին՝ ի պատուհասանէն զամբարիշտս յանխնայ։ Եւ սակայն հաւանականագոյն երևի այն՝ զոր եդաք ի վերոյ. նա զի և կարգ բանին զնոյն յայտ առնէ։

Կարգ այս բարկութեան ոչ թէպետ և կարէ վերածիլ նաև ի պատիժ հանդերձեալ կենաց, բայց ի կարգ բանին հայելով՝ վերածի ի աստուածգոյն պատիժս՝ զորս երբեմն տայ ոճ ամբարշտաց յատուկ կերպս ի պատուհասանէն զնոսա յանխնայ։ Եւ զի յուցցէ մեզ գարձեալ՝ թէ ի տալ ոչ այսմ կամ այնմ զայսպիսի պատիժ՝ ոչ պակասի բաժակ բարկութեանն նորա առ ի տալ և այլոց՝ յորժ գինեն, և ասէ։

Եւ- Խմեսջիք եղեալ յայսմանէ յոյս։ Կամ՝ Խմիցին թէ ոճ մեծ կեա մատուսակելոց այսմ ուժեք զաժակ բարկութ իւրոյ, և կեա արբուցանելոց նմա զգինին՝ որ ի նմա այսինքն զպատիժն, և ասա յայսմանէ ոչ զգինին, այլ զբաժակն, և մատոյց յայս՝ այսինքն յայլ միւս. և նմա և ս արբոյց զպատիժն։

Ուր փոխանակ ասելոյ, մատուսակեաց կամ մատոյց, ասէ խոնարհեցոյց. որով ցուցանէ՝ թէ իբրև ձեռամբ ոնձելով զաժակն՝ եդ ի բերան սորա կամ նորա. և զի արբուսցէ նմա զգինին որ ի մէջն՝ խոնարհեցոյց կամ կորացոյց և կամ թեքեցոյց զբերան բաժակին ի բերան ըմպողին. որպէս առնեն ամենեքեան նոքա որք ձեռամբ իւրեանց արբուցանեն այլոց զգինի բաժակաւ. զի առանց խոնարհեցուցանելոյ զբերան բաժակին ի բերան ըմպողին չէ հնար գիւրաւ արբուցանել։

Ոչ այսպիսի եղանակ բանից ի մէջ բերելով մարգարէին կամի ցուցանել, թէ ոճ ի դառնէն՝ կամայ և ակամայ արբուցանէ ամբարշտաց զաժակ բարկութեան իւրոյ, եթէ կամիցին և եթէ ոչ։

Այս բան կարէ մեկնիլ նաև ըստ պէսպէս գործոց բարկութեանն այլ իբր զի ոճ ի խնդրելն զվրէժ յամբարշտաց՝ խոնարհեցուցանէ զնոսա յայսմանէ յայս, այսինքն ի պատժոյ յայսմանէ յայլ պատիժ, կամ ի թշուառ վիճակէ յայսմանէ յայլ թշուառ վիճակ։ Եւ կամ դարձեալ՝ ըստ լսմբրոնացւոյն ի թշուա-

Ա ԼՔ Ղ ԱՐ · ՀԴ · ՝ ՝ ՝

ձեռն. և արբցեն զնա անդ. և որչափ արբցեն անտի, անսպառ մնասցէ այն յաւիտեանս յաւիտենից։

Ա.յս բան և նախընթաց սորա եթէ վերածիցի առ հրէայս գերեալս ի բաբելոն, և առ բաբելացիս, բաժակաւ նշանակի նեղութիւն գերութենն՝ զոր արբոյց ած հրէից. իսկ մրրուվ նշանակի պատիժն այն՝ զոր արբոյց բաբելացւոց. նոցայն սպառեցաւ, զի տևեաց եօթանասուն ամ. իսկ բաբելացւոցն մնաց իբր անսպառ։

Ստորհրդաբար՝ զբաժակ բարկութեն զոր հեղլոց էր ած ի վերայ աղգի մարդկան, արբոյց որդւոյ իւրում՝ լի և անսպակ. և՝ի նմանէ խոնարհեցոյց յառաքեալսն և յաշակերտսն, ի վկայս և՝ի խոստովանօղս. իսկ զմրուր նորա արբոյց հրէից և անհաւան եղելոց, և ամենեցունն նոցա՝ որք ոչ կամեցան հաղորդ գտանիլ բաժակի որդւոյն այ։ Այսոսիկ եդեալ մարգարէին գոհութիւն մատչի առ ած, և ասէ։

Թ. Ա՛ն ընծայայդ յաւիտեան. սաղմոս ասացէ այ յակոբայ։

Ի տեսանել արդարոյ զպատժիլ մեղաւորաց, և՝ի հայիլ նորա յանձն իւր՝ զերծ մնացեալ յայնպիսի անցից, ծագի ի հոգի նորա նախ ուրախութիւն, և ապա ընդհակառակութիւն առ ած. որպէս պատահեաց և սաղմոսերգուին. որոյ վասն ցնծալից աղաղակէ ասելով։

Ա՛ն ընծայայդ յաւիտեան. սաղմոս ասացէ այ յակովբայ։ Որպէս թէ ասէր. մեղաւորք ընդդէմ դառնալով հաձոյին այ՝ արբցեն զբաժակ բարկութեան նորա, և դառնասցին. իսկ ես աջոյն այ ազատեալ յայնպիսի թշուառութենէ՝ ցնծացայց և ուրախ եղեց յաւիտեան, այսինքն մինչև՝ի կատարած կենաց իմոց, և՝ի հանդերձեալն յաւիտեանս յաւիտենից։ Այս և ցորչափ կեամ յաշխարհի աստ, սաղմոս ասացից այ իմոյ՝ գոհանալով զնմանէ։

Ա ամբրոնացին փոքր ի այլազգ մեկնէ զայս բան՝ ասելով՝ի դիմաց արդարոյ. * Ես որ արբի զդինին ,, զայն՝ թէ տրտմութիւն կերրցես զերկիր, և եմ՝ի նոյն ,, սուգ այժմ, յայնժամ ցնծամ՝ի փառան անձառս։

Վարդան ՚ի դէմն գերելոյ ՚ի բաբելովիա վերադէձ զայս բան և ասէ. *յերանացի գառաստանն ոչ գայոթ յե,, չէ. զի վասն նմա եղև նոցա գարձն ։ Այս ամենայն յառաջ բերեալ մարգարէին, գլխատարէ զանն իւր, և ասէ՝

Յ. Ա. Ամենայն եղկելոցս ղեղուրայ էլբեայնես. Ե բոլոր եղկելի եղկելոց արդարոյ՝

Ի համարն 4. և 5. խրատական եղ զբանն ասելով ցմեղաւորս ՚ի դիմաց ոչ, մի բարձրացուցանիցք զեղջիւրս ձեր. իսկ աստ սպառնական դնի զնոյն ՚ի դէմս իւրոց. և խօսելով առ ՚ած՝ ասէ՝

Ամենայն եղկելոցս ղեղուրայ էլբեայնես ։ Լսելիքն զամենայն զօրութեամբ և զպարծանս մեղաւորաց ունայնացուսցես. որով կամի ցուցանել, թէ ած ոչ միայն զբարձրութեամբ եղջերաց մեղաւորացն խոնարհեցուցէ, այլև զնոյն զեղջիւրսն փշրեսցէ, որ է ասէ. նկուն արասցէ զմեղաւորս ըստ ամենայնի, և խոպան նուաստ ձեսցէ զնոսա. փոխանակ զի կամէցան նոքա բարձրացուցանել զեղջիւրս իւրեանց ընդդէմ ամենակալին ։ Լ. քանզի ընդ հակառակն այսր խոնարհեցուցանեն արդարք զեղջիւրս իւրեանց, վասն այսորիկ և ած ինքնին բարձրացուցէ զնոսին, և առ այս յաբէ՝

Ե բոլոր եղկելի եղկելոց արդարոյ ։ Լ. ղջիւր ՚ն և իցէ արդարոյ է զօրութեամբ նորա, կամ վաստակ գործոց նորա, կամ առաքինութեամբ նորին. և զի զայսոսիկ վաբէ նա խոնարհուէ՝ տալով զամենայնն ոչ, վասն որոյ և ած առնէ զի բարձր եղիցի, այսինքն փառաւորեսցի աստ և ՚ի հանդերձեալն ։

Վարդան մեղաւորօք խմանայ աստ զեզովմայեցիս, և զմնվաբացիս և զիղշատացիս, որք հակառակ էլին խրատ լայելոցդ ՚ի դառնալ նոցա ՚ի գերութենէ բաբելացւոց, և զեղջիւրս ոտն, խորտակեաց ած. որով և բարձրացաւ եղջիւր զօրաբարելի ։ Լ. ռաբթասցի և եղջիւր նոն մերոյ, այսինքն է նոր խոյն ՚ի փշրել նորա նոմաւ զեղջիւրս Թ. հնամեաց իւրոց, և ՚ի բարձրացուցանել զեղջիւր հաւատարիմ ծառայից իւրոց յաւիտեան ։

ՍԱՂՄՈՍ ՀԱ.

Բանք գոհութեանց առ Աճ վասն յայտնի լինելոյ նորա յերուսաղէմ և յիսրայէլ. ևս և շնորհակալութիւն վասն խորտակելոյ նորա զթշնամիան. միանգամայն և յայտարարութիւն գատաւորի ահեղ լինելոյն Այ և ինքնակիչիան Աեր. դարձեալ և յորդոր առ մարդիկ՝ կամ տարեալոյ զուխտն եգեալ տեառն Այ։

Ի կատարած. ընդ օրհնութիւնս. սաղմոս յասափ. երգ առ ասորեսպանեայս։

1 Յայտնի է ի հրեաստանի Աճ, և յիսրայէլ մեծ է անուն նորա։ 2 Եղև խաղաղութիւն տեղի նորա. և բնակութիւն նորա սիովն։ 3 Ընդ խորտակեաց որ զպատերազմն աղեղան, զվէմն զսուր և զճակատամարտ։ 4 Լուսաւոր ես դու սքանչելապէս լերանցն յաւիտենից. խառնեցան ամենեքեան որ անմիտ են սրտիւ. ննջեցին զքունս իւրեանց՝ և ինչ ոչ գտին։ 5 Ի հնոյն սրտ՝ ի ճիչս ձիոցն իւրեանց. ի սասպէ քումմէ Աճ յակոբայ ննջեցին, և ոչ հնձեալ էին ի յիս։ 6 Դուն ահաւոր ես՝ և ո՞վ կարէ կալ առաջի քո. որպէս երեքեցար դուն յերկինից, յայտնի եղև բարկութիւն քո։ 7 Լսելիք երկիս եա առնեցեր ընդ յառնելն այ ի դատաստան. ընդ ազատեցուցանել զամենայն հեզս երկրի։ 8 Սրտմտութիւն մարդկան խոստովան առնին առ քեզ. և ծածկելոյ խնամատարութեամբ օրհնեսցեն զքեզ։ 9 Ա՛խտս տիւ՝ և կատարեցէ՛ք ձոն Այ Աերոյ, ամենեքեան որ շուրջ եք զնովաս։ 10 Ա՛ստուցէ՛ք պատարագս ահաւորին. ո՛ դադար զնոփս իշխանաց, ահաւոր է նա քան զամենայն թագաւորս երկրի։

ՎԼԵՐՆԱԳԻՐ

Ի խափարճ. ընդ օրինաւորեանս. սաղմոս յոսափ. երգ առ ասորեստանեայս։



ՎԱՅԵԼԱԳՈՒՅ ՍՂՄՈՍԻՍ ՅԵՐԿՐՈՐԴԻՆ

ըսայականն գրի այսպէս. Լսեայեալ վէնիէնոմն ինձ զմոա լի ասաք ղէտ. այս է *'ի կատա ,, բան նուագարանաւ սաղմոս յասափ երգ ‖. ուր փո խանակ բառիս ընդ օրինաւորեանս՝ եդեալ է պինկինօթ այսինքն նուագարանաւ՝ զորմէ տես 'ի ներբած՛. գԼ-ւոս. Ժ։

Լսակ 'ի մէջս որչափ սաղմոսս ունիմք, այնչափ տար բերութիւնս գտանիմք 'ի վերնագրիդ. յերկուս ձեռա գիրս և 'ի վարդանայն տեսանիմք յաւելեալ և զառաս ի ապահներ։ Յերկուս ևս յաւելեալ զառադ դասին. յերկուս յայլ՝ սոսկ գաւթի. յայլս փոխոխեալ զկարգ իւրաքանչիւր բառից։

Ո՛չ նախ առաջին բառդ մի ասպահաներ՝ է աւելորդ. զի ոչ գտանի այդ ոչ յայլ թարգմանութիւնս, և ոչ յընտիր ձեռագիրս մեր։ Այմանապէս և բառդ դա. ւին։ Նոյ զի զոր եդաք աստ բուստ սակաւ ձեռագրաց՝ համաձայն գտաք թարգմանութիւնք եօթանասնից և լատինացւոց, ամէն իրի զայն առաւել ուղիղ պարտ է համարիլ։

Լսակ վասն բառիդ առ ասորեստանեայս՝ գիտելի է, զի այդ ոչ գտանի յերբայականն. որպէս և առաջ, և ոչ իսկ 'ի քանի մի հին օրինակս եօթանասնից, և ոչ 'ի վերջիններն. յոմանս ևս եզակի գնի, այս. ինքն առ ասորեստանեայն. որպէս և յերկուս ձեռա. գիրս մեր։

Ո՛չ թէ ուստի յաւելեալ եղև այդ 'ի թարգմանուե անդ եօթանասնից, և անտի յայլս՝ ոչ է յայտ։ Այդ. պէս չէ յայտ, թէ կինչ միտս յաւելեալ էին այդ բառս։ Պիտէն ոմանք ցուցանել այսու՝ թէ 'ի ժամա.

նակս եզեկիայ Թագաւորի ՚ի խորտակել այլ զբազս ստորեստանեայց՝ զոր առաքեալ էր սեննեքերիմ արքայ (Ջ. Թագ. ԺԹ. 35. և Եսայ. ԼԶ. 36.) ասասփ անուն ոմն ասաց զսոյն զայս ՚ի ընորհակալութիւն առ նա։

Նոյնպէս այլք ասեն՝ Թէ զայս սաղմոս ասաց դաւիթ վասն այլևայլ յաղթուածց՝ զորս արար ընդդէմ Թշնամեաց իւրոց, և աւանդեաց զսոյն դասուն ասափոյ՝ երգել ՚ի տաճարի. և յետ ժամանակաց յորժամ եհաս նա զաստորեստանեայսն, եզեկիա արքայ առեալ զսոյն՝ երգեաց ՚ի գոհութիւն առ նա. և վասն այնր ասի ՚ի վերնագրիդ. երգ առ ասորեստանեայս, ոչ զի ՚ի պատճառս նոցա ասացաւ, այլ զի ՚ի նուաճիլ նոցա՝ ՚ի նոյն յարմարեցաւ. որպէս և այժմ իսկ այլևայլ սաղմոսք ասին յեզեզեցիս ըստ յարմարելոյ իրացն։ Այս յետին կարծիք երևի հաւանական և ընդունելի։

Այլ քանզի այն յաղթուիք զորս արար նա ընդդէմ Թշնամեացն դաւթի, և ընդդէմ ասորեստանեայց, էին օրինակ յաղթութեանցն քոի ընդդէմ սատանայի, բազում ոաբբիք հրէից, և բազում՝ ոբ հարք զբան այսր սաղմոսի վերածեն ՚ի դէմս քոի իբրև մարգարէական գուշակութեի յաղթութեաց նորա։ Ոմանք և բարոյական մեկնուիք վերածեն ՚ի դէմս իւրաքանչիւր արդարոյ ըստ այլևայլ յաղթութեաց ընդդէմ երևելի և աներևոյթ Թշնամեաց։ Այսմ ամենայնի մեք ՚ի հասարակի ունիմք մեկնել զայս սաղմոս. յորմէ իւրաքանչիւրոք կարէ մասնաւորել զնոյն յայս և յայն։

Ը Ա Ն

ա. Յայնմ է ի հրէաստանի աճ, և չիտայել ինձ է ա-
նուն նորա։

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Յայտ է յաճախունէ գրոց՝ թէ զիարդ ընտրեաց Աստ
իւր ժողովուրդ զորդիան իսրայէլի, և զինչ արար նո-
ցա. որպէս եցոյց նոցա զձանապարհս իւր, և օրհն
օրինակաւ էած և զետեղեցոյց զնոսա յերկիրն աւե-
տեաց՝ ի պադեստին. որ յանուն նոցա, և մանաւանդ
Թագաւորական ցեղին յուդայ՝ կոչեցաւ հրէաստան,
իմն յուդայաստան՝ (եհովատեան). ուր և անսպա-
կաս արար ի նոսա զմարգարէս՝ որք խօսէին ի դէ-
մաց ոյ՝ որ ինչ ձշմարտութիւն էր, և որ ինչ արդարու-
թիւն. Եւ դարձեալ՝ բազում իրօք եցոյց նոցա՝ թէ
անուն իւր կոչեցեալ է ի վերայ նոցա, և ինքն է
պաշտպան և օգնական նոցա։ Եւ ասի և յերկրի անդ՝
ուր բնակեցան նոքա, յայտնի էր Աստ, և անուն նորա
փառաւորեալ լինէր ի մէջ նոցա։ Յայսոսիկ հայե-
լով ասէ։

Յայտնի է ի հրէաստանի աճ, և չիտայել ինձ է անուն նո-
ցա։ Ասէ. Թէպէտ և յամենայն տեղիս է Աստ,
և ամենայն ուրեք յայտնէ զինքն ի ձեռն արարածոց,
բայց ոչ այնպէս՝ որպէս՝ի հրէաստանի. զի անդ յայտ-
նի ցուցանի ի ձեռն պէսպէս իրաց, այսինքն ի ձեռն
յայտնի պատգամաց իւրոց, ի ձեռն ձշմարիտ պաշ-
տամանց, ի ձեռն մեծամեծ սքանչելեաց, և՝ի ձեռն
հաւատարիմ ծառայից իւրոց։ Այլպէս Թէպէտ և
յամենայն ազգս փառաւորեալ էր անունն ոյ, բայց
ոչ որպէս ի մէջ իսրայէլի. վասն զի յայլ ազգս ա-
նունն ոյ իւրք իւրք արտաւորութիւն և պակասու-
փառաւորիւր. իսկ ի մէջ իսրայէլի ըստ ամենայնի
մեծ ցուցանիւր և ահաւոր։

Եւ այս ձշմարտի երիւք համեմատութիւք. մի՝ համե-
մատութիւն յայտնութեանցն ոյ. վասն զի որպէս սաս-

ցաք, ՚ած ինքնին յայտնեցաւ իսրայէլի, և սքանչելի եբևեցոյց նոցա զանուն իւր, և զաղգի աղգի խորհուրդս գաղտնիս, և զՀաճոյս իւր զկատարեալս եցոյց նոցա օրպիսի ոչ եղև այլուա՛ աղգի, յոր միտ առ մարգարէս այլուր։ * ոչ այսպէս արար ամենայն ,, ազգաց ՚որ, և զդատաստանս իւր ոչ յայտնեաց ,, նոցա ՚։ (սաղ. ՀԽԷ. 10.) որոյ վասն և քարուք երանէիր զիսրայէլ ասելով։ * երանի է մեզ իսրայէլ ,, զի Հաճոյքն ՚ոյ՝ ծանօթ մեր են ՚։ (բար. Ը. 4)։ Այրկրորդ՝ Համեմատութիւն տեղւոյ ընդ տեղւոյ, և ազգի ընդ ազգի, քանզի ըստ տեղւոյ խօսելով՝ առաւել յայտնի էր Աշխարհն ՚ած ՚ի Հրէաստանի՝ քան յայլ ամենայն տեղիս։ այնպէս և ըստ ազգի խօսելով՝ առաւել մեծ էր անուանն ՚ոյ ՚ի մէջ իսրայէլի քան ՚ի մէջ այլոց ազգաց։ Այս սակայն ըստ անձանց մնաց ծեալ կայնի և արտաքոյ իսրայէլի քազա՛ս անձինք՝ յորս յայտնի էր ՚ած, և մեծ էր ՚ի նոսա անուն ՚ոյ. օրպիսի էր երանելին յոբ և յորէքքին բարեկամքն նոքա, ընդ որս և ընտանիք և ազգականք նոցին։

Այրրորդ՝ Համեմատութիւն ժամանակի ընդ ժամանակ։ Էր ի ցորչափ ժամանակ կային ՚ի Հրէաստանի մարգարէքն և Աշխարհիս օրէնք՝ և ցորքան ժամանակ պաշտէր իսրայէլ զած, և ցորվայր ունէր Թլփատութիւն սրտի, Աշխարհս յայտնի էր ՚ի նոսա ած և անուն նորա մեծ ՚ի մէջ նոցա։ Այլ յորմէ հետէ մերժեցին նոքա զՀոգի մարգարէից զդուշակեալն ՚ի նոցունց զորդին ՚ոյ, և ոչ կամեցան առնուլ՝ զանուն նորա յինքեանս, և լինել ժողովուրդ նորին, ոչ ևս էր յայտնի ՚ի նոսա. ուստի և ոչ Աշխարհիս ասել, ԹԷ ՚ի Հրէաստանի անդ այսինքն ՚ի պաղեստին յայտնի իցէ ած, և ոչ ևս ԹԷ յիսրայէլ մեծ իցէ անուն նորա. այլ ՚ի հոգևորն Հրէաստանի՝ այսինքն յեկեղեցւոջ՝ յորում են ոգիք իսրայէլի ըստ հոգւոյ՝ Թլփատեալք Թլփատութիւն սրտի. քանզի ըստ գրելոյ առաքելոյն (հռոմ. Բ. 29.) * ոչ եթէ որ յայտնի հրէայն է, ,, և ոչ որ յայտնի մարմնով Թլփատութիւն. այլ որ ՚ի ,, ծածուկ հրէայն է, և Թլփատութիւն սրտի հոգւով ,, և ոչ գրով ՚։ մանաւանդ զի որպէս նա ինքն ասէ, (՚ի գլ. Թ. 6.) * ոչ ամենեքին որ յիսրայէլէն են,

,, Նոքա իսրայէլացիք իցեն ։ Ասեմ տիրապէս խոսելով միայն յԱղեղեցւոյն քան յայտնի է ամէն, և յուղղափառ քրիստոնեայս մեծ է անուն նորա ։

Զայսմանէ եղև գարձեալ ի հրէաստանի ձորն ձորնց յաւուրք խաչելութեանն ի ձեռն զանազան պանդխտից, և մեծ եղև անուն նորա ի յառնել նորա ի գերեզմանէ. բայց ոչ տեսին կուրացեալքն լիսրայէլի, և ոչ իմդրեցին զանուն նորա. վասն որոյ և այս բան՝ որ վասն նոցա ասացաւ՝ դարձաւ առ այնոսիկ՝ որք ծանեան զնա, և արժանի եղեն կրել սրբութեանն զանուն նորա ։

Ըստ որում՝ որովհետև հրէաստան թարգմանի խոստովանութիւն, և իսրայէլ թարգմանի ածատես, նա ինքն ածէ յայտնի լինի և անուն նորա մեծ երևի յայնոսիկ՝ որք խոստովանին զնա, և անարատ վարուց պարապելով՝ հոգւով տեսանեն զնա, և լինելով տեղի խաղաղութեան՝ բնակիցս ցանեն զնա յինքեանս իբրև յերուսաղէմի աստ ընորհօք և ի հանդերձեալն փառաւք ։

Ըստ որում՝ որովհետև մերձաւոր պատճառ առաւել յայտնի լինելոյն այ ի հրէաստանի քան յայլ տեղիս, և մեծ լինելոյ անուան նորա յիսրայէլի քան յայլս՝ էր բնակիլ նորա խաղաղութիւն ի մէջ նոցա. զայն և այս դնէ առաջի, ցուցանել թէ ուր բնակէր, և ուստի սայր յայտնի լինել զինքն. վասն որոյ ասէ ։

ՃԻ. Վասն խաղաղութեան տեղւոյ նորա. և բնակութեան նորա սիոնի ։

Տեղի սահմանել այ թէպէտ ոչ լինի, զի նա է յամենայնի էութիւն, տեսչութիւն, և ներկայութիւն, և պարագրէ զամենայն ըստ ամենայնի, և ինմանի է ամենայն և նովաւ, բայց այսու ամենայնիւ երբեմն և այսպէս է ասել, թէ աստ է կամ անդ. մի՝ ըստ մասն. նաւորս ինն գործոցութեանէ, որպէս ի հրաշագործէնն՝ ասի անդ լինել ուր հրաշագործն։ Նմանապէս ըստ յատուկ ինն ընտանութեանէ՝ որպէս ի վարիչն ընդ ծառայս իւր բարեկամութիւն ի ձեռն շնորհաց՝ ասի լինել ի նոսա։ Նմանապէս ըստ յանդիման լինելոյ ի ձեռն իրիք. որպէս ի ձեռն տասպանակի ասիւք լի-

նել յերուսաղէմ՝ կամ ոչ այլոյ միտ խօսի աստ մոռ-
գարէն ասելով։

Ձդէ խաղաղութիւն փեղէ նորա. և բնակութիւն նորա սիոնի։
Վասնսիօր բառս խաղաղութիւն ըստ նկարագրին դնի
փոխանակ երուսաղէմի. զի որովհետև սաղէմ կամ
երուսաղէմ խաղաղութիւն թարգմանի՝ փոխանակ դնե-
լոյ երուսաղէմ, թարգմանիչք յունաց և լատինաց
և այլոց ազգաց եդեալ են խաղաղութիւն։ Ուստի և
՚ի մերս փոխանակ ասելոյ՝ երուսաղէմ եղև տեղի նո-
րա, դնի խաղաղութիւն, յասէն. եղև խաղաղութիւն
տեղի նորա. որպէս թէ եդեալ էր. նա որ յամենայն
է, ունի իւր յաւուրկ տեղի յերուսաղէմ իբրև յիւ-
րում թագաւորութիւն, և բնակի ՚ի սիոն իբր յիւրում
քաղաքի. իսկ այս լինելս և բնակիլս՝ որպէս ասացաք,
էր ՚ի ձեռն տապանակին, որով յանդիման լինէր
ներկայութիւն նորա. յոր միտ նոյն լինէր՝ թէ ասէր
ըստ երբ՞. * խորան նորա է յերուսաղէմ, և բնա-
կութիւն նորա ՚ի սիոն ‖։

Հոգևորապէս՝ ուր է խաղաղութիւն և զգաստութիւն,
անդ է տեղի այ և բնակութիւն նորա անդորը, մանա-
ւանդ յարդարս, յորս տիրէ խաղաղութիւն ՚ի կամս
իբր յերուսաղէմ, և զգաստութիւնն ՚ի միտս՝ իբր ՚ի
սիոն՝ որ թարգմանի տեսութիւն կամ զգաստութիւն.
վասն որոյ և հոգիք արդարոց ասին լինել և են իսկ
տեղի այ և բնակութիւն նորա ՚ի ձեռն տապանակին,
որով նշանակի կատարելութիւն վարուց։ Այսպ վե-
րածի և յիմանալին սիոն. ուր է խաղաղութիւն ան-
սահման, և աթոռ բնակութիւն տեառն։

Զայս եդեալ մարգարէին՝ առաջի առնէ այժմ թէ
զինչ ՚ած բնակելով յերուսաղէմ՝ ՚ի ձեռն տապանա-
կին՝ յուցանէ անտի զօգնութիւն և զպաշտպանութիւն
իւր առ ազգն ընտրեալ՝ ՚ի խնամել զնոսա և ՚ի վե-
նել զթշնամիս նոցա. վասն որոյ ասէ։

ը. Եւ նոր խորհեցաւ որ ղջերուն աղեղան ղնեն, ղսոսր
և դճակատարդ։

Որպէս այլուր ասացաք, ՚ի պատերազմի կրկին զինք
՚ի գործ ածին, մին պաշտպանիչ անձին՝ որպիսի է
վահանն, զորմէն ըե. և միւսն վանիչ. և այս կամ ՚ի

մեռուստ և կամ՝ ի հեռուստ. ի մեռուստ է սուրն, նիզակն և՜ն. ի հեռուստ է աղեղն, պարսատիկն, և՜ն. և յայտ է թէ ի տկարանալ այսպիսի զինուց թշնամեացն՝ տկարանայ և մարտ նոցա. և զի բա-զում անգամ զսոյն արար ասե թշնամին իսրայէլ ի մէջ հրէաստանի, վասն այնորիկ ասէ։

Ընդ խոբակեաց որ զղօրուն աղեղն զգեն, ետուր և զՃա-դաման։ Ընդ ասելով իմանայ զհրէաստան, ուր է-ցոյց ած զպաշտպանութիւն իւր առ իսրայէլ ընդդէմ թշնամեաց նոցա, ինքնին իսկ վանելով զնոսա. որ պէս յայտ է ի գիրս յեսուայ, և Թագաւորաց, ի մէջ որոց զարմանալի եղև այն՝ որ պատահեցաւ զա-րայն սենեքերիմայ. զի ի կամել նոցա պատերազ-միլ ընդ իսրայէլի, եւ ի գիշերի հրեշտակ մի, և եհար ի նոցանէ հարիւր ուԹսուն և հինգ հազար. (Ի. Թագ. ԺԹ. 35. և եսայ. լէ. 36։) Այս զի սոյն այս և այլ սմին նմանք եղեն առանց պատերազմելոյ ընդ նոսա որդւոցն իսրայէլի, սմին իբրև միայն մի տայ զայսոսիկ յասելն. խորտակեաց որ զղօրութիւն աղե-ղան նոցա ևն։

Որով ոչ կամի ասել՝ Թէ զնոյն զաղեղունն և զզէնսն խորտակեաց. այլ Թէ սատակելով զնոսա՝ անպիտան կացոյց զղօրութիւն աղեղան նոցա, զորս պատրաստէին արձակել ի վերայ իսրայէլի ի հեռուստ. նոյնպէս և զսուսերս նոցա՝ որովք կամէին հարկանել զնոսա ի մեռուստ. և և զզէնս նոցա այսինքն զվահանս և զզրահս նոցա, որովք պաշտպանէին զանձինս. և զայս առնելով դադարեցոյց զձակատամարտ նոցա, այսինքն զառաջիկայ մարտ նոցին։

Հոգևորապէս նշանակի սոված խորտակէլն այ զԹըշ-նամիս եկեղեցւոյ և զթշնամիս իւրաքանչիւր արդա-րոյ, և անպիտանացուցանել զամենայն հնարս նոցա. որպէս մեկնէ լամբ"։ Ասկ Թէ զիարդ գործէ զայս, յայտ առնէ այլով իմն բանիս, յասելն։

Ի. Ասասպատ ես դու սրանչելապէս լերանցն յաւիտենից. խոնարհչացն աներեւոյթ որ անփոփ են սրբութ. ննջեցին պտղոյս խաբանց՝ և ինէ ոչ փոխ։

Ե. Վհատին սրտ՝ ի վերծուրէ ցեղոյ խաբեանց. ի սասպէ տոմարէ ած յաւիտեան ննջեցին. և այլ հնծեալ էին ի ցէս։

Լուսատու լինէիր այ երջանիկ իմացեալ լինիր. մի՝ ըստ չատուկ առմանն. և զայս առնէ ած ի ներքուստ լուսաւորելով զիմաս մարդոյ՝ չայտնութիւ պէսպէս ի բաց. որպէս արար մարգարէից, հաղորդելով նոցա զչոյս նախագիտութիւն իւրոյ, նոյնպէս և այլոց ձրոյ, երբեմն և հասարակ մարդկան, չայտնելով նոցա ի խորհուրդս նոցին զգալոնիս իւր, կամ զգալոնիս իրաց, կամ զբարիս և զուղիղն ևն։ Եւ չայս միտ առեալ լինի տիրապէս լուսատու լինէիր այ։

Երկրորդ՝ ըստ փոխաբերութիւն, ըստ որոյ նշանակի՝ տալ այ զլոյսգիւս իւր իբրև զլոյս՝ սփռելով զնոյն առ այնս, զորս կամի բարձրացուցանել իբրև զլերինս, եթէ ի բնական կարգի, և եթէ ի գերբնական կարգի։

Երրորդ ըստ նմանութիւն անդրագարձութիւն լուսոյ՝ իբր զի որպէս լոյսն ցոլացեալ ի վերայ լերին՝ անդրադառնայ չայլս, այսպէսն և լոյսն ածայինն, կամ զորութիւնն այ, կամ կատարելութիւն ինչ տուեալ ումիք չայ՝ անդրադառնայ երբեմն չայլս, այսինքն ներգործել չայլս՝ թէ և ոչ ներգործեսցէ չայն՝ որում տուեալ լինի։ Եւ ըստ այսմ չէտին առմանն և ըստ սմին նմանութիւն խօսի աստ մարգարէն՝ չասելն։

Ասասպատ ես դու սրանչելապէս լերանցն յաւիտենից։ Եբանիքդ չաւիտենից ըստ փոխաբերական մտաց իմանալ լինին նախ՝ երկոտասան ցեղքն իսրայէլի. երկրորդ՝ մարգարէք նոցա. և երրորդ՝ մեծամեծք նոցին. սոցա լուսատու լինէր ած աքանչելապէս. իբր զի զայնպիսի ինչ զօրութիւն հաղորդէր սոցա, կամ զայնպիսի օգնութիւն ցուցանէր առ սոսա՝ որ ազգէր և չայլս, և պատճառէր ի թշնամին զզարմացումն և զսարսափումն. որպէս ի չնորհել այ զաքանչելի

զօրութեն մուխսի, յեսուայ, ևն, կամ յօդնել նա
բա գատաւորաց նոցին՝ սամխոնի, յեփթայեայ, ևն,
այն զօրութեն որ հաղորդեալ լինէր նոցա. ազգէր և
յայլս, և և իբրև թէ ցոլանայր ի թշնամին և
խռովէր զնոսա. վասն որոյ և յարէ իսկ թէ խռովես-

ցին ամենեքին ևն։

Այնպէս և ի հնորհել այ զգան գուշակութէն ի ծա
ռայս կամ ի մարգարէս՝ նեղգործութէն այնր գուշա
կութէն ազգէր և յայլս։ Ա՛ռ քեզ օրինակ զայն՝ որ
պատմի ի գիրս (Ի. Թագ. ե. 5. 6.) թէ ի պաշա
րել զօրացն սենեքերիմայ զերուսաղէմ, և յառա
քել ռափսակայ զպատգամն խիստս ընդդէմ իսրայէ
լի, հաղորդեաց ած զգան կամ զզօրութէն գուշակու
թէն՝ եապէսպ մարգարէին՝ որ էր մի ի լերանցն իս
րայէլի. և նա եկեալ առ եզեկիէլ եզոյց նմա՝ թէ
ած խռովելոց է զզօրս սենեքերիմայ, և խայտառա
կելոց է զնա ինքն՝ զսենեքերիմ. և ի նմին գիշերի
նեղգործութէն այսր գուշակութէն ազգեաց ի նոսա.
ուստի և ձչմարտապէս հետեւեցաւ խռովիլ նոցա և
կորնչիլ. որպէս և ասէ իսկ, խռովեսցին ամենեքին
ևն։ Ա՛յս թուի լինել հարազատ մեկնութէն այսր

բանի, մանաւանդ ըստ մերում թարգմանութէն։
Պարզագոյն և ո՛ւրեմն այս բան՝ եթէ նևութապէս,
կամ զգալապէս առեալ լեզին ասա լերինքն, իբր զի
ած ի խորտակել զթշնամիս իսրայէլի ի մէջ հրեաս
տանի, զզօրութէն իւր գրեթէ իջուցանէր ի լերինս
նոցա. և նոքիմբք վանէր զթշնամիս նոցին. և զի
զայս առնէր յայտնապէս, վասն այնորիկ փոխանակ
ասելոյ առաքեցեր զզօրութէն քո, ասէ լուսաւոր ես
դու սքանչելապէս լերանցն յաւիտենից։ Այսպէս
պէս ասել ասա ցուցանէ թէ այնպիսի օրինակաւ առ-

նէր ած զայս՝ մինչև սքանչանալ մեզ և այլոց։
Ւսկ զլերինն կոչէ յաւիտենից ի վասն երից. մի՝
զի ի յաւիտենից՝ այսինքն ի սկզբան էղեն. երկ-
րորդ՝ զի կան հաստատուն յինքեանս. և երրորդ՝ զի
ունին ծառ մինչև ի կատարած աշխարհի։ Այնպէս
և զազգն իսրայէլի և զմարգարէս լերինք յաւիտե-
նից կոչէ ի վասն երից. մի՝ զի ի սկզբանէ ընտրեալ
էին. երկրորդ՝ զի էին ժողովուրդք այ. որով և ներ-

կայացուցանէին զեկեղեցին նորա. արդ եկեղեցին նմանի լերին, և տեւէ միշտ. երբորդ՝ զի քանիք մարգարէից ՚ի ձայնոց էին միշտ հաստատուն՝ ոչ յայն զոր ասացին, այլ յայն յոր ասացին. զի էին գուշակուիք այնպիսի իրաց՝ որք ՚ի ձայնոց էին յաւիտեան։

Հոգևորապես այս բանիք ըստ որում յիշէ և բարեզ (՚ի մեկն. մարկ. գլ. Ժ.) ցուցանեն լուսաւորել ՚ի աքանչելապէս զՀրեշտակս, մանաւանդ զծառայս Իւր, որք նմանին լերանց բարձրացելոց՝ հաղորդ գոլով յաւիտենական կենաց. և Թէպէտ ՚ուժ առնեն զանձն լինի լուսաւոր, զի լուսաւոր առնէ զանձնայն մարդ՝ որ գայ յաշխարհ, բայց այսպիսեաց լուսաւոր լինի սկզբնապար, և աքանչելապէս. զի զորօրինակ յելանել արեգական նախ լերինք լուսաւորին, և ՚ի մտանել նորա՝ նոքա միանգ ՚ի վերջոյ լուսաւորեալք, սոյնպէս լինի և ՚ի մեծամեծ ծառայս ՚ի, որք բարձրացեալ են յերկրաւորաց. զի ՚ի ծագել ՚ի զայս Իւր, նոքա նախ լուսաւորին, և յամփոփելն յայլոց՝ նոքա միանգ լուսաւորեալք, իսկ այլք ըստ կարգի։ Այլ Թէ ՚ի լուսաւորիլ սոցա՝ զինչ պատահիցէ չարաց կամ անմտաց՝ յայսո առնէ ասելով։

Ասէ՝ ոչ ոք ածէ լոյս՝ և արկանէ ՚ի ներքս ՚ի տունս՝ զի ոչ ծածկեսցէ զայն, այլ ՚ի վերայ մատուցանէ զայն, զի ամենեքին տեսցեն զլոյսն։ Ասէ՝ ոչ ոք ածէ լոյս՝ և արկանէ ՚ի ներքս ՚ի տունս՝ զի ոչ ծածկեսցէ զայն, այլ ՚ի վերայ մատուցանէ զայն, զի ամենեքին տեսցեն զլոյսն։ Այսինքն՝ ոչ ոք ՚ի ծածկ

հաւ՝ կամ մեռանիլն. յոր միտ կամի ասել. Թէհնամիք մեր՝ որք էին ի մեծութենէ ձեռաց իւրեանց՝ այսինքն ի փարթամութենէ, ի զօրութենէ, յիշխանութենէ, եւ, որովք Հոխանային ի վերայ մեր, և կամէին կորուսանել զմեզ, ոչինչ կարացին առնել, այլ ըմբռնեցան ի քուն մահու, այս է՝ մեռան, և ինչին ի գժոխս, և ինչ ոչ գտին անդ ի մեծութենէ անտի զոր ունէին յաշխարհի աստ՝ ոչ զձի, և ոչ զծառայ։ Իսկ Թէ ուստի եհաս նոցա այս ննջումնս մահու՝ յայտ առնէ ասելով՝

Ի սասոպ հասմի ձի յակոբայ ննջեցին. և այժ հեծեծել էին ի յիւ։ Այսինքն Թէ այս սատակումն նոցա ոչ եղև հասարակ կարգաւ և բնական ձանապարհաւ, այլ ի բարկութենէ քումմէ. զի ի բարկանալ քո ի վերայ նոցա և ի սպառնալ քո առ նոսա, եհաս ի նոսա մահ, որով և սատակեցան. և որք փառաւորեալքն էին ի նոսա և երեւելագոյնք Հոխանայինք՝ և կարծէին դինքեանս իբր անմահս. նոքա և ի նոյն քուն մտնեն ըմբռնեցան, և եղեն յոչինչ. որպէս մեկնէ և վանական վարդապետ. (ի մեկն. յոբ. ։)

Այս բանք պատշաճագոյն և յարմարին ասոր ըստ նեայց, որք ի պաշարելն զերուսաղէմ ի սատակ անձի ոչ և յառաքելոց նորա ի նոսա զՀրեշտակ իւր՝ առհասարակ ըմբռնեցան գիշերի ի քուն մահու. և որք պարծէին և ասէին ցՀրեայս, Թէ առաւել են երեսիւքը մեր քան զորս կալիցէք տալ գուք Հեծեալս, ի սատեղ ձին՝ սատակեցան, և ի պարծանս նոց անտի իբրեւ ոչ անցեալացան. և զոր ինդրէին՝ ոչ գտին, այն է երուսաղէմ. և արդարև եղեւ ի սատեղ պետրոսի սատակեցան անանիա և սափիրա, և կորեան, քանի եւս ի սատեղ ոչ յակոբայ։

Այլ աստ գիտելի է՝ զի կրկնակի Հնար է տեսանել զայս բան. մի՝ յարեւելս զվերջին հատուած չորրորդ համարոյն յատաջին հատուած հինգերորդ համարոյ, որպէս և եղաք. երկրորդ՝ առանց յարեւելս ընդ մի մեանս, այլ առանձինն մեկնելով, բայց նովին մեկնութեամբ. իբր զի որք անմիաբն են սրտիւք, և որք են որք մեծամեծք և փարթամք՝ սատակեցան առհասա-

բան՝ ի սատանէն այդ չտկարաց. նոյն պատահեցաւ և նոցա որք Ձախանայինն երիվարօք, և ամենեքին ուշանային ձեռն լնել ոչ ինչ գոյն՝ ի հանդերձեալսն, բայց եթէ զկեանն թշուառութեն գատապարտութեն։ Ալլա՛ բանօրէն՝ ի լուսաւորել քոյ զառաքեալսն և զՀետևօղս իւր՝ խոստացան և խաւարեցան հրէայք՝ անմիտքն սրտիւք, և ննջեցին՝ ի յիմարութեն իւրեանց. և ոչ զարթնուն մինչև ցայսօր ժամանակի։

Արտրապէս, այս բանք չային՝ ի կենաս անմիտ մարդկան, որք գանձին անձանց մեծութեն բազում. և հեծելք՝ ի հեշտութիս և յերկրաւոր զօրութիս, փափկանան, և՝ ի նոյն Ձախանալով արհամարհէն զայսպիսիկ՝ որք ոչինչ համարին զայսպիսիս. սոքա յաստի կենաս գրեթէ կան ննջելք յիւրեանց մեծութեն և՝ ի մարմնոյ հեշտութեն. և իբրև յերազի՝ ի գիշերի կենցաղոյս Ձախանան և փափկանան. բայց յորժամ զարթնուն՝ ի մահուան, ոչ գացեն ինչ՝ ի ձեռն. զի երազ է. ըստ որում ասէ և Եսայի. (ԻԹ. 8.) «Այս հայելով սաղմոսին՝ զթագաւորութեն իւր երգեցող նմանեցուցանեմ, և՝ ի գոյ այսր ասէ (՝ի գիրս ժողովոյն. գլ. ա. 12.) * «Ես ժողովոյդ եղէ թագաւոր, որ իսրայելի յերուսաղէմ»։ ոչ ասէ, եմ, զի երազ համարէր։

Վարեւ կացին (՝ի բանն. Ե.) զայս ննջելս առնուս փոխանակ մնալոյ՝ ի մեղս և ոչ երբէք զարթնելոյ. ուստի ողբալով ինն գրէ զանձնէ և ասէ. * «Ոչ երբէք զարթեայ՝ ի ներհմանէ քնոյն մահացուի, որ՝ ի կորուսան տպատւորեալ կարապետէ»։

Ի՛արեւգ զննջելն առնուս փոխանակ հեշտանալոյ. (՝ի մեկն. մարկ. Ժէ.) և գրէ այսպէս. * «Ննջել զհեշտանալն ասէ. այլ և զանգործութեին. զի որպէս «նա՝ որ՝ի քունն է մարմնով՝ չկարէ ինչ գործել. նա՝ «թէ և յերազի թուիցի գործել՝ ընդ վայր է, այս«պէս և նա՝ որ ընդ քնով մեղացն անկեալ է՝ չկա«րէ ինչ հոգևոր բարիք գործել. նա՝ թէ և կարծէ «գործել՝ ընդվայր է, որպէս գերազ գիշերոյ. զի «քնոյն գործ երազն է. սոյնպէս և որ՝ ի մեղան է՝ «իւր բարիքն իբրև երազ է, սուտ և ունայն»։

Ա՛ահ այսպիսեացս ասի միանգամայն արձնութեի և

ննջումն. արթնութիւն զի ի մեռանիլ նոցա իբր ի քնոյ զարթուցեալ սեռականն թէ ունայն էր այն առ մնայն յոր յուսացան. և էր իբրև տեսիլ երազոյ. ննջումն, զի ոչ ևս ունին՝ զոր ունէինն, այլ կան իբրև. գնացօղս՝ ոչ կարելով վայելել ինչ յայնցանէ։ Ի.առաքինին պատահի նոցա ի լիմաքութիւն նոցին. իսկ երկրորդն ի բարկութիւն ոչ. յոր միտ յարէ՝ թէ ի տաստե քումէ ննջեցին։

Ի.յայիսիքօս օրինակին ի յիմար կուսանս, որք ոչ պատրաստեցին զնուշ յամանս իւրեանց՝ առ ի վառիլ և լուսաւորիլ. իսկ որք պատրաստեցին՝ նմանին խնամուտն կուսանացն, որք ի լուսատու լինել քնի՝ ունին վառեալ զլապտերս իւրեանց յիւղոյ անտի՝ զոր տարան։ Ալ ասի որոյ որչափ երանելի համարին սոքա, այնչափ երկնելի միանդամ նոքա. և ոչ ևս գոյ յոյս ողջմտութիւն գտանելոյ ի նոսկ. այլ պատահումն բաց. կութիւն նորա անհետելիւ։

մարդկան, և այլ ևս սոցին նմանք. յորս իբրև լրումն
ամենայնի փայլէ այն սքանչելի գործ նորա զի ելն
յաշխարհ, և փրկեաց զամենեսին, լեալ նոցա ինքնին
Ճանապարհ՝ այսինքն Ճանապարհացոյց՝ կիմ առաջնորդ
ի կեանն յաւիտենից: Յայս ամ հայելոյ ասէ:
[illegible] ՚ի սրբուածէ են Ճանապարհդ տո: Այսինքն՝ այն առե-
նայն Ճանապարհք քո՝ (ի վերոյ յիշատակեալք) են
ի սրբութիւն, այսինքն թէ ա՛ծ են. իսկ այս սրբութիւն
ոչ եթէ սոսկ բացասաբար մտածէ, այլ դրականա-
պէս. բացասաբար ա՛ծ ասի այն, որ ազատ է յամենայն
արատոյ և յոչ և իցէ պակասուէ: Իսկ դրականապէս
ա՛ծ ասի այն, որ ունի յինքեան զկատարելութիւն ան-
մահն պակասութիւնէ, կիմ բարձօղ արատոյ և պակասու-
թենէ: Այսոքիւ սրբուածք ա՛ծ են ասէ Ճանապարհք քո.
ոլոմ զկնէտ գայ՝ թէ յորս ոչ գոյ սրբութիւն, ՚ի նո-
սին ոչ գոյ և Ճանապարհ ոյք:

Լամբ" զսրբութիւնն վերածէ աստ առ հոգիս՝ յորս

բնակիլ ուծ. լբր զի Ճանապարհք այլ են առ հոգիս
աբս. կիճ ուծ Ճանապարհ առնել գալ և բնակիլ յայն-
պիսի հոգիս՝ որք են աբ. զի ինքն գոլով աբ՝ ի աբս
եւեթ բնակիլ. և յայս իսկ պատուիրէ՝ աբ լինիլ յա-
սելն. * աբ լինիջիք, զի աբ եմ ես առր ուծ ձեր ‖.
(ղեւտ. ԺԹ. 44:)

Ամանք սրբութիւն իմանան աստ զերկինս երկնից, ուր
են սքանչելի Ճանապարհք այլ. իսկ այլք սրբութիւն ի-
մանան աստ զկուսան ուն, ուր երեւէին Ճանապարհք
այլ: Նայց առաջին մեկնութիւնն է հարազատ, և հա-
մաձայն մտաց բանին. քանզի աստանօր դիտումն մար-
գարէին ոչ այն է՝ զի ցուցցէ, թէ ուր են Ճանապարհք
այլ, այլ թէ զկուսր են. և զայս յայտնէ սրբութիւնն.
որով կաղի ցուցանել՝ թէ որպէս աբ է ուծ յինքեան,
նոյնպէս և Ճանապարհք նորա աբ են. խօսելով ապա
և զմեծութիւնն այլ ասէ:

Ոչ է ուծ զձ՝ որպէս կծ զձր: Ասէ ուծ ոչ ըստ
չափու, այլ ըստ անչափութիւնէ պէսպէս կատարելութիւնէ,
այսինքն ըստ անչափութիւնէ իմաստութեանէ, ըստ անչափութիւնէ
զօրութիւնէ, ըստ անչափութիւնէ ամենակարութիւնէ, ըստ ան-
չափութիւնէ տեւողութեանէ, ևն. և զկնի միայն ուծն խորհելի
է մեծ յամենայն անչափութիւնէ՝ վասն այսորիկ ցնծալ
լով և պարծելով ասէ. մի է ուծ մեծ, ոչ զուծ մեր:
Ընդէր և ես, զկայեցն աստ ուծ մեծ, և այլուր ուծ
ահաւոր, քաղցր, բարի, գթած, ևն. սոքիմբք ոչ ե-
թէ զկսկն ի մէջ բերեմք զնոյ, այլ զճիրս՝ զոր յարա-
տած ըմբռնեմք՝ զնոյն նմին առաւելապէս ընծայեմք,
և զատուեր իսկութեանէ նորին նկարեմք: Ասէ բար-
ուք ասէ սարգիս շնորհալի (ի մեկն. ք. պետ. ճ.
18. Ճառ. ճ. յորդ.) խօսելով առ ուծ. * որքան ինչ
„ միանգամ ասեմք զբէն (տէր), որ շուրջ զբև է ա-
„ սեմք, և ոչ զընութիւնդ Ճառեմք ‖:

Կրնաւել արժան է աստ՝ զի ոչ ասէ մարգարէն, ոյլ
ասէ ուծ մեծ, այլ թէ ոյլ է. զի ուծք հեթանոսաց
էին ոչինչ, նոյնպէս և թագաւորք երկրի՝ թէպէտ և
ասացեալ լինէին մեծ՝ բայց չէին մեծ. զի ամենեքին
նոքա յամի իրս փոքր և անարգ էին. և եթէ երևիւր
ինչ ի նոսա մեծութիւն, այն կամ սուտ էր, և կամ ի մե-
ծէն ուծ էր. և եթէ գործէին ինչ մեծ, այն ևս էր

’ի մեծէն ՅԱՅ. զի նորա է միայն գործել զմեծամեծս՝
յոր և ակնարկէ յաջորդ բանն զոր ասէ։

Զո՞ւ էս ԱԾ, որ առնես զսքանչելիս։ Կամի ասել. այս միայն բաւական է յայտ առնել, թէ դու ես ԱՇ Ճշմարիտ և մի միայն մեծ, զի գործես զսքանչելիս, կի՛ զայնպիսի գործս՝ որք են սքանչելի առ ամենայն արարածս. և զայն՝ առանց օգնականութե՛ այլոյ. իսկ այլք եթէ արասցեն՝ քեւ առնեն. և չիք արարած՝ որ կարիցէ առնել զայնպիսիս առանց քոյ կամաց. իսկ թէ ո՛րք էին երևեալն սքանչելիքն՝ զորս արար ԱՇ, զոմանս ’ի բազմաց ’ի մէջ բերէ մարգարէն, մանաւանդ յայնց գործոց՝ զորս եցոյց առ ԺողովուրդՀ իւր։

վասն որոյ ասէ։

ԺԷ. (՝)ո՞ւք ծոլովրդեան չո՞մ պէօրու՛ք չո. ֆրէէնէք չո. եաչի՛ա՛ չո՛վ պէծոլովո՛ւրդա չո, պէրդեան յաչովէայ՝ և յովսեփո՛։

Ո՞ օրուն՛ն այ կրկնակի մտածէ. մի՝ յինքեան չ՛ած, և ի ամենակարողութի՛ն նէր. երկրորդ՝ ’ի գործս իւր, ը որում գործք ամենակարողութե՛ն այ՝ կոչի ը ձարտասանից զօրութի՛ն այ։ (՝)ուի թէ աստ ը երկուցդ ը այդոցիկ և աս առնու մարգարէն յասելն։

(՝)ո՞ւք ծոլովրդեան չո՞մ պէօրու՛ք չո։ (՝)Այսինքն, ’ի կամիլդ փրկել զԺողովուրդս քո ’ի ծառայութէ՛ եգիպտոսի՝ ցուցեր նոցա զամենակարողութի՛ն քո՝ գործելով ’ի նոսա զսքանչելիս։ (՝)Այս ցոյցք զօրութեանն այ, որ առ ԺողովուրդՀն իսրայէլի եղև ’ի փրկութէ՛, առ եգիպտացիս եղև ’ի կորուստ. զի թէպէտ և եգիպտացիք և տեսին յայնժամ զզօրութի՛ն այ, մինչև խոստովանիլ և ասել. մատն այ է այս. և թէ ԱԾ պատերազմի վասն իսրայէլի, բայց զայս տեսին կորնչելով. իսկ ԺողովուրդՔ ան տեսին փրկելով. և զայսմ փրկութէ՛ խօսելով ասէ։

ԺԷ. (՝)ո՞ւք ծոլովրդեան չո՞մ պէօրու՛ք չո, պէրդեան յաչովէայ՝ և յովսեփո՛։ (՝)Այսինքն՝ ազատեցեր զԺողովուրդս քո ’ի գերութէ՛ անտի եգիպտացւոց և ’ի ձեռաց փարաւոնի՝ ոչ բազիւա՛ օտարի, այլ բազիւա՛ քով՝ այսինքն ամենակարօղ զօրութէ՛ քով. (զորմէ բազում ինչ խօսի մի մատեան ՅԵ. օրինաց. Ե. 15. և որ գիտէ։)

Ո ժողովուրդ ան կոչէ մարգարէն որդիս յակովբայ և յովսեփ. իսկ այս որոշումն՝ թէպէտ երևի լինել իբր աւետարդ, զի որդիք յովսեփու ևս էին յորդիս յակոբայ, բայց ըստ ընտրութեան՝ զոր արար յակոբ, է ուղիղ. զի որպէս աւանդի՝ ի գիրս (ծնն. խը. 5.) յակոբ նահապետ՝ ի մեռանիլն իւր զերկուս որդիսն յովսեփու՝ զեփրեմ և զմանասէ էառ իւր՝ ոչ իբրև զթոռունս, այլ իբրև զորդիս՝ հանգոյն ռուբենի, յուդայի և ն. ուստի երկոքին նոքա եփրեմ և մանասէ կացուցին զերկուս որոշ ցեղս, ոչ և այլ որդիք յակոբայ զիւրեանց ցեղսն. և եղեն ցեղք որդւոցն յակոբայ երեքտասան, մեռաւանքն անմիջապէս յորդւոց յակոբայ, և երկուքն անմիջապէս յերկուց թոռանց նորա, այսինքն յեփրեմայ և՝ ի մանասէէ. և զի ցեղն զևեթայ որոշեցաւ լինիլ այ, որպէս թէ ելանել՝ ի թոռոց այլոց, ճնացին երկոտասան ցեղք, որոց տասն կոչէին որդիք յակոբայ, և երկուքն որդիք յովսեփայ՝ սերեալք յեփրեմէ և՝ ի մանասէէ: Սմին իրի և սաղմոսերգուն որոշ դնէ զնոսա ընդ որդիսն յակոբայ:

Ո այլ պատճառ տան ոմանք այսմ որոշման ասելով՝ թէ որովհետև որդիքն յովսեփայ յեգիպտոս ծնան, և անդ մնան, զնոսա ևս որոշ յիշէ մարգարէն, զի մի կարծեսցի՝ թէ յելանել որդւոցն յակոբայ յեգիպտոսէ, նոքին ճնացին անդ՝ իբրև յիւրեանց հայրենիս:

Ա յլաբանօրէն, եցոյց ասծ զզօրութիւն իւր առ համբերսն ազգ մարդկան, որք ըստ որում էին արարածք նորա բանաւորք՝ կարէին ասել ժողովուրդք նորա, և այս ցոյց զօրութեն այ եղև՝ ի փրկելն զնոսա բազկաւ իւրով. ըստ որում և ասաց քերանաւ եսայեայ (կփ. 5.) *փրկեաց զնոսա բազուկ իմ: Նոյնպէս բազկաւն այ թէպէտ և ըստ նկարագրին նշանակի ամենակարօղութիւն նորա, բայց ըստ փոխաբերութիւն իմացեալ լինի որդին՝ որ ճնանի, և կամ գործեալ իմացեալ լինի իսկականն բազուկ ասծոյն, զոր առաջեաց՝ ի խաչին:

Ա յլ կոչէն զազգ մարդկան որդիս յակոբայ և յովսեփ՝ հայի՝ ի զանազանութիւն հրէից և հեթանոսաց. զի հեթանոսք՝ որք հանգոյն յովսեփայ մերժեալ էին յերեսաց իւրեանց այսինքն՝ ի հրէից, ՝ի ձեռն փըր-

կուԹԷ որդւոյն ՚ոյ միացան ըստ նոսա. և յանապժան գտանիցի՝ ինքեանք գտան ընտիր, և եղեն սեփհական ժողովուրդ։

Պարոյապէս ըստ գրեալ լամբ՚՚ ած ցուցանէ զգօրուԹիւն նմանոյ իւրոց առ առաքինիս՝ որք իբրև զյակովբ խաբեալով զմարմինս ժուժկալուԹիբ, և իբրև զյովսէփ յաղԹեալով ցանկուԹիբ, և ստանալով զողջախոհուն՝ հատանեն փրկուԹեան։

Ստանօր ՚ի ձեռագիրս մեր և յայլ օրինակս գտեք բառդ ՚ՅանգԷսա. ըստ որում հանդիստ տայ աստ մարգարէն բանից իւրոց. և սկսանի պատմել՝ Թէ ՚ի փրկեըն ՚ոյ զԺողովուրդ իւր՝ զինչ գործեցան ՚ի կարմիր ծովուն եւն. և նախ ասէ։

ԺԷ. Տէսէն զՀԷզ ջուր աճ, պէսէն զՀԷզ ջուր՝ և էզհէան. և խորխորատեցան ՚ի ՅայնԷ ջուրց էապէմայ։ Իբրև զգգայնոց խօսի զջուրց՝ բարառնուԹիւն ձևուոյ, առ ՚ի ցուցանել՝ զմեծուԹիւն ամենակարողուԹենն ՚ոյ, իբր Թէ այնչափ ահեղ լինիլ՝ մինչև անգգայ ջուրց ևս տեսանել երևեցուցանել զայն ահեղուԹիւն. վասն որոյ ասէ։

Տէսէն զՀԷզ ջուր աճ, պէսէն զՀԷզ ջուր՝ և էզհէան։ Ո.յսինքն՝ յանցուցանել քո զորդիան իսրայէլի ընդ ջուրս կարմիր ծովու՝ տեսին զՀԷզ ջուրք ծովուն, և երկեան. իսկ այս տեսանելս էր երևեցուցանել ջուրց զՆնաբանդիլ իւրեանց ակնարկուԹիւն ՚ոյ, որ սեամբ ամպոյ ցուցանէր զնեըկայուԹիւն իւր. նոյնպէս և երկնչելն այն՝ հայէր ՚ի պատառիլ ջուրցն յերկուս, և ՚ի տալ տեղի ժողովրդեան, յոր միտ այս բան քացատրի այսպէս. ՚ի հրամայել քո՝ ջուրք կարմիր ծովուն բաժանեցան. և տեսանելով զմեծուն քո տապնապեցան և իբրև Թէ քարացան. յորմէ և խորք ծովուն բացեալ երևեցան. վասն որոյ յարէ զկնի։

Խ՚ խորխորատեցան ՚ի ՅայնԷ ջուրց էապէմայ։ Ո.յսինքն ՚ի պատառիլ բազմուԹեան ջուրց կարմիր ծովուն՝ նաև նեըքին ջուրք՝ որք էին ՚ի խորս, բացան, և յատակք նոցա երևեցան. զայս բանիլս և երևիլս կոչէ խորխորատիլ՝ այսինքն ՚ի սաստիկ երկիւղէ տապնապիլ. որով ցուցանի՝ Թէ այն խոր ջուրք, և յատակք նոցա խո-

րինք՝ յայլ ինն հերպարան փոխեցան. եւ զի լայծ մարմինք ջուրց՝ պարսպացան, և որք էին յատակք խո-
րին ջուրց, դարձան՝ ի ցամաք երկիր:

Եւ այս ասէ եղև՝ ի ձայնէ ջուրց բազմաց. այսինքն՝ ի ձայնէ պատառման ջուրց ծովուն, զի այն պատառումն ջուրց ոչ եղև անձայն, այլ ձայնիւ. որպէս լինի և յայլ պատառմունս ջուրց: Եւ կամ թերևս զայս ասէ վասն ձայնի տեղատարափ անձրևաց, զոր առնէք ձայ-
նիւ որոտալոյ հոսեցին յայնժամ յերկնից շուրջ զնո-
քօք: Եւ կամ գուցէ այս հայի յայն՝ որ եղև յանցանել եգիպտացւոց ընդ նոյն ծով՝ ի պնդել նց զկնի խարայե-
լացւոցն. յորում ձայնիւ մեծաւ դարձաւ ջուրն և ծածկեաց զնոսա. մանաւանդ զի յայնմ պահու ձայն եւտուն և երկինք հանդերձ անձրևօք, զորմէ խօսի՝ ի յաջորդ համարն ասելով:

ԺԵ. Զայն եղաւն ամպ. Հանկէ և նեթս չո գնան՝ ի հայ-
նէ որոտալոյ չո յանուն:

Ի պատմել մովսէսի զանցս որդւոցն խարայելի ընդ ծովն կարմիր՝ ոչ լիշէ ձայն տալ ամպոց, և որոտալ, և ն. բայց աւանդեն եբրայեցիք՝ թէ այսպիսի ինչ բազում եղեն յայնժամ, և թէ մովսէս յայս միտ ասաց յերկս իւր. (եւկց. ԺԵ. 8.) * Հոդմով սրտմտութեանդ քո բա-
,, ժանեցան ջուրք ևն ||. զոր լբբրև թէ մինչեւ զի ամպոց եղեն զայն ասէ՝ ցուցանել թէ հզօրացան՝ ասէ:

Զայն եղաւն ամպ: Այսինքն յետ անցուցանելոյ քո զորդիան խարայէլ ընդ յատակս կարմիր ծովուն՝ ի պնդել զնետ նոցա փարատանէ և զօրաց նորա՝ ձայն եւտուն ամպք, այսինքն ահեղս որոտացին, և յորոտալն անդ եւտուն անձրև. և անկան կայծակունք. զորս կո-
չէ նետս իւր յասելն:

Հանկէ և նեթս չո գնան: Ուր բառդ չանկէ՝ թէ-
պէտ և լբբր պատճառական դնի, բայց ոչ ցուցանէ զպատճառ եղելոցն, այլ զեղեալն. որպէս թէ ասէր, ամպք որոտացին և անձրևեցին հանդերձ կայծա-
կամբք, որք լբբրև զնետս գնան՝ ի մէջ ամպոց: Նոյն յաւելուլն զբառդ չո՝ ցուցանէ թէ այն և այլ կայծա-
կունք լբբրև նետք են՝ զորս արձակէ ած յերկինս, եր-
բեմն առ՝ ի զգաստութեն մարդկան, և երբեմն առ՝ ի

հարկանել. կիմաւ՝ ի պատուհասել նէն. (զորմէ տե՛ս և՝ ի սաղ. ԺԷ. 15. և Ձխոփ. 6։) Օայս եդեալ՝ կրկնէ զձայն որոտալոյ երկնից նմանութիւնք լինի, և ասէ։

Ի ձայնէ որոտալոյ ջուրց բազումաց։ Ձայնքն այն ձայն զոր եւտուն ամպք, էր՝ ի ձայնէ որոտման իբրև յանուէ կիմ հանգոյն ձայնի անուոյ, կիմ թէ կայծակունք գնային ձայնիւ որոտման անուոյ։ Ուր բառդ անէ՝ կարէ նշանակել նախ զամպս՝ յորս իբր յանուէ լինի որոտումն՝ ի հրամանէն ՚ոյ։ Երկրորդ՝ կարէ նշանակել զերս՝ որ բոլորակութիք իբրով նմանի անուոյ, և յորոտալ երկնից՝ ձայն լինի ՚ի նմին իբրև յանուէ։ Երրորդ՝ կարէ նշանակել զեթերս երկնից՝ յորում իբր յանուէ լինի որոտալ։ Չորրորդ՝ կարէ նշանակել և զանիւս կառացն փարաւոնի, զորս կապեաց ձայն որոտալոյն ՚ոյ։ Կայց պարզագոյնս և մարթ է ասել, թէ այս նմանաբանութիւն ցուցանէ միայն զորոտալ երկնից այնպիսի լինն օրինակաւ որպէս թէ ձայն որոտալոյ անուէ էր. ըստ որում ՚ի ձեռագիրս լինչ յուշղշանան հոլովին զնի յասելն. * ձայն որոտալոյ ‖ և այլն։ Ցնաւէ թէ յայսպիսի բանից կեղծեալ եղև առասպելն այն թէ ահ կառաւք չորից յերկինս. որով լինին ձայնք որոտման ՚ի պտոյտքելոյ անուոցն, և փայլատակունք արձակին յընթացից նոցին. զոր այլք առասպելեն ՚ի վերայ եղևայ մարգարէի։

Ալաբանօրէն այսոքիկ բանք, զորս եղ մարգարէն յերկոսին համարս՝ հայէն ՚ի դարձ ազգի մարդկան. և ըստ այմ՚ի ձեռն ջուրց նշանակին ժողովուրդք. ըստ այնմ (յայտ. ԺԷ. 15.) * ջուրքն զորս տեսեր՝ ,, ժողովուրդք են և բազմութիք և ազգք և լեզուք ‖։ Այլ տեսին զայծ ՚ի մարմնի, և երկեան ՚ի բանից նորա։ Այլ խոկք իմաստութե՛ աչխարհիս զարմացան և խռովեցան ՚ի ձայնէ ջուրց բազմաց՝ այսինքն ՚ի խոստովանութէ զոր եւտուն ժողովուրդք, կիմ ՚ի ձայնէ ամպոց, այսինքն ՚ի կանխասացութէ մարգարէից, որք ըստ պէտրոսեայ վարդապետի (՚ի մեկն. եսայ.) հանգոյն ամպոց * ՚ի վերուստ առնուին զանձրև վար- ,, դապետութէն և անձրևէին ՚ի ժողովուրդն ‖. կիմ ՚ի քարոզութէ առաքելոց և յաջորդաց նոյ՝ որք իբրև

զամպս ձայն եառուն և անձրևեցին յաշխարհ ամենայն.
և գործք նոցա և սքանչելիք նոցին իբրև նեռք այ
հարին զսիրտս բազմաց։

Եւ այս ամենայն յաջողեցաւ ՚ի ձայնէ որոտալոյ հոգ-
ւոյն սրբոյ ՚ի բերան աւետարանչաց՝ որք եղեն իբրև ա-
նուք կառացն այլ, այսինքն յայտնիչք կամաց նորա. ըս
որում եառնս եղեկիէլ (ա. 5 — 20։) Ա՛արձ է ա-
նուօք իմանալ աստ և զարդարս, որք իբրև զանիւս
միով իւիք մասամբ շօշափելով զերկիր յորոտալն այ՝
անցանեն և արագեն ընթանալ ՚ի վեր ՚ի յերկինս։
Բարոյապէս՝ ջուրքդ նշանակին պէսպէս նեղութիւնք,
որպէս ասացաք այլուր, կիճ ըս լամք" օտար խորհուրդք
նեղացուցիչք. այսպիսի ջուրց տեսեալ զայ խնամն ՚ի
վերայ արդարոյն՝ երկուցեալ նուաճին։ Այսպէս և
բանական մանն՝ որ է իբրև խորք հոգւոյն, ըս որում
անդ ժողովին պէսպէս խորհուրդք, թէպէտ և ՚ի յա-
ճախելոյ այնպիսի ջուրց խռովի, բայց դիւրաւ հան-
դարտի, յորժամ ամպք օգնականուքն այ ձայն տան ՚ի
նա. և իբր նեռք հարկանեն զխռովարար խորհուրդս
նորա, և իբրև ձայն որոտալոյ անուն ցրուեն զնոսա։
Լ՛ամք" անուամբ իմանայ զհրեշտակս այ կիճ զբրովբէս
վանն դիւրաշարժ լինելոյ յիմացուսն. ուստի և իբրև
անիւ երևեցան առ քոբար գետոյ. * սոքա ասէ որ-
„ տան ՚ի մեզ զջօղ գիտութիւնն այ և զփայլակն ձա-
„ ռագայթիւք. զի (ապզուսն նոցա) որպէս զջուր զո-
„ վացուցանէ, և ոչ զփայլատակունս լուսաւորէ ‖։
Ա՛արդան անուօք իմանայ նաև զերկուս կատակս, և
կանուօք զխաչն. յոր լծեցան առաքեալքն և մարգա-
րէք. և նեռութիւք քարոզութիւնն և փայլատակամբք նշա-
նաց և արուեստից զարմացուցին զտիեզերս. մինչև
խռովիլ և դողալ երկրի. ուստի յարէ զկնի մարգա-
րէն և ասէ։

ԺԷ. Լ՛երնեցան փայլատակունք ոս պէսպէսից. խռովեցաւ
և դողաց երկիր։

փայլատակունք են յանկարծական փայլմունք պատ-
ճառեալք ընդ երկինքք ՚ի քարոզութենէ վառելի նիւ-
թոց յամպս ծրարելոց, որք եթէ խտացեալ իցեն՝ ՚ի
բոլբոջիլն անդ ձայնեն, և ձայն ձայնմանն յամպս

անցանելով հնչէ և պատճառէ զորոտումն. և եթէ յայն ստացեալ նիւթս կայցէ ինչ տևողական, ՚ի ձայնմանէ անտի արձակի ՚ի դուրս իբրև զհրացան, կիսիբրև զնետ, և այն կոչի կայծակն կիսշանթ, որոյ բազումք են ներգործութիւնք և անհատանելիք։ Այս ամենայն եցոյց ած յանցուցանելն զժողովուրդ իւր ընծայիս կարմիր. ընդ որում եդ ՚ի վերայ. Ահա և՚ ի լերինն սինայ. (ընդ որում եդ ՚ի սաղ. կէ. 8. 9.) և զի ՚ի սոսա երևելի են աչաց փայլատակունք. վ՚ս այսորիկ զնոցանէ խօսելով ասա։

Ձրնշեցան փայլատակունք ՚ս պէղէրայ. խռովեցաւ և դողաց երկիր։ Այս բանք եթէ ՚ի հատարակի մեկնեսցին, յայտ առնեն՝ թէ յերևիլ փայլատականց խռովին բնակիչք երկրի, և ՚ի յարձակիլ կայծականց ՚ի փայլատականց անտի՝ սարսին և դողան։ Իսկ եթէ ՚ի մասնաւորի մեկնեսցին՝ յայնժամ բառդ փայլատակունք՝ կրկնակի առեալ լինի. ոմն՝ փոխանակ բնական փայլատականց. և ընդ այսմ բառդ պէղէրայ՝ ոչ դնի փոխանակ համօրէն աշխարհի, այլ փոխանակ միոյ կողմանն. բայց քանզի ՚ի փայլիլ փայլատականց ընդ ոմն կողմն աշխարհի՝ ասի երևիլ ընդ տիեզերս, վ՚ս այսորիկ տիեզերացն դնէ. և սոքիմբք կամի ասել, թէ յանցուցանել ած զժողովուրդն իսրայէլի՝ փայլատակունք երկնից արձակեցան ՚ի վերայ Թշնամեաց նոցա այնպիսի ահեղ փայլմամբ, մինչև խռովիլ և դողալ ամենեցուն՝ որք բնակեալ էին առ սահմանօք նոցա։

Երկրորդ՝ բառդ փայլատակունք՝ առեալ լինի փոխաբերութեամբ փոխանակ ահեղ համբաւոյ դործոցն ած, զորս եցոյց առ իսրայէլ յանցուցանելն զնոսա ընդ ծոմին կարմիր. զի համբաւք այնր սքանչելեաց իբրև փայլատակունք երևեալ առ ամենեսին՝ որք բնակեալ էին յերկրի՝ խռովեցուցին զնոսա, և ՚ի դողման Թողին. որպէս և վկայեաց ռահաբ (յեսուայ. բ. 9.—11.) յաւետ. * Գնկատ ած ՚ի վերայ մեր. և զի հաշեցան ամենեքեան՝ որ բնակեալ էին յերկրիս յայսմիկ յերեսաց ձերոց. քանզի լուաք՝ թէ ցամաքեցոյց ած զծովն կարմիր յերեսաց ձերոց՝ յելանելն ձեր յԵգիպտոս. և զոր ինչ արարիք ընդ երկուս Թագաւորս ամովրհացւոց։ Այսմանէ ած և՚ ի սաղ. ղէ. 4։

Ա.յլաբանօրէն փայլատակամբք նշանակին աստ նախ քարոզութիքք առաքելոց և աշակերտաց. զի աւետմունք նոյ իջուն լուսապայծառ փայլատակունք երևեցան ընդ տիեզերս ամենայն. վասն զի ընդ ամենայն երկիր եւ բարբառ նոյ. որով և խռովեցան զարմացմամբ ամենեքեան որք բնակեալ էին յերկրի. և դողումն կալաւ զնոսա, մինչև թողուլ նոցա զգարշութիւն սուտ կռօնից իւրեանց, և յանձն առնուլ զճշմարտութիւնն ածպաշտութեան: Այրկրորդ՝ նշանակին համբաւք և վկայութիքք երկրպագելի յարութեն քոյ, որք իբրև փայլատակունք յարձակեցան ի վեր հրէից, և յայտնի ցուցին զճշմարտութիւն յարութեն նորա. և որպէս ի սկզբան յանցանել խորհելի ընդ ծովն՝ փայլատակունք խռովեցուցին զիշնամիս նոցա, սոյնպէս և յանցանել ամն մերոյ յարութիքն ընդ ծով աշխարհիս՝ համբաւք յարութեն նորա խռովեցուցին ոչ զիշնամիս հրէից՝ այլ զնոսին իսկ զհրէայն. և սարսեցուցին զնոսա, և թողին զնոսին մինչև ցայսօր ի դողման սրտի, և ի տանման մտաց:

Բ.արոյապէս՝ փայլատակամբք նշանակին աստ ածայինն եռեքին փայլմունք երկնային լուսաւորութեանց ծառեալք ի հոգիս իբրև ի տիեզերս, յորմէ և սասանի երկիր, այսինքն մարմինն, կի ըստ լամբ" երկրաւոր խորհուրդս. և յետս կայ ի դիմելոյ ի ջուրն: Այս բան կրկնէ մարգարէն և ի սաղ. ղէ. 4. ի խօսիլն զփայլատականց, որք եղեն ի լերինն սինայ՝ ի ցոյց ահեղութեն նոյ ի դառել նորա զերկիր. իսկ աստ ի մէջ բերէ զսոյն՝ հայելով ի ժամանակն յայն՝ յորում անցոյց զիսրայէլացիս ընդ ծովն կարմիր. ուստի յետ դնելոց զայս՝ զանցուցանելոյն ևս խօսի առաքեալ եմն և ասէ:

անդ Ճանապարհաւ այլ ինչ խմանայը, և աստ այլ ինչ. իբր զի անդ ակնարկէր ի գործ նախախնամութեան ՚ոյ, և կամէր ցուցանել՝ թէ յամենայնի սրբուլեալ և արդարութեան կատարի այն. իսկ աստ ակնարկէ յառաջորդութեան ՚ոյ, և կամի նկարագրել՝ թէ զհարդ անցոյց ՚ած զորդիսն իսրայէլի ընդ միջ կարմիր ծովուն Ճանապարհ առնելով նոցա. վասն որոյ ասէ՝

Ի ծովէ- էն Ճանապարհ ։ Ի.յսմինչն Ճանապարհը քո՝ ընդ որս առաջնորդեցեր որդւոցն իսրայէլի յելանել նոցա յԵգիպտոսէ՝ զարմանալի երևեցան. զի եղեն ի ծովու. և այն ի բազմութենէ ջուրց. վասն որոյ յաւելու և ասէ՝

Ա- շաւիղ ։ ի ջուրս բազում ։ Ի.յսմինչն այն շաւիղք քո՝ ընդ որս անցեր զնոսա, եղեն ի վերայ ջուրց բազմաց. որ է ասել, բազեր շաւիղ ի միջ ջուրց բազմաց. և որ զարմանալին է՝ ցուցանել յաջորդ բանիւն ասելով՝

Ա- հետ ։ ոչ երևին ։ Ի.յսմինչն՝ այնպիսի աքանչելի իմն օրինակաւ անցեր զԵգիպտոսդ ի միջ ջուրց, զի յետ անցելոյ քո զնոսա՝ ոչ ևս միայ հետք ինչ առի տեսանելոյ՝ թէ ընդ այս ջուր անցեալ էիցեն մարդիկ. զի յայտ է թէ՝ ի միանալ ջուրց վերստին՝ ոչ ևս երևի հետք անցիցն ։

Ի.յս բանք համառօտիւ ևս առաջի դնին այսպէս. յառաջորդել քո որդւոցն իսրայէլի՝ պատառեցեր զծովն կարմիր. և ի յատակի նորա արարեր Ճանապարհ, և այն այնպիսի՝ ըստ որում ըստ Ճանապարհ անցին նոքա. և յետոյ ի գալ ջուրց առ միմեանս, և ի միանալ նոցա՝ ոչ ևս երևեցան հետք անցից ի ջուրս ։

Ի.ւանդեղ բառըմբ՝ թէ յետ անցից իսրայէլի ընդ ծովն կարմիր՝ և ի սնդիլ զկնի նոցա փարաւոնի՝ յանցանել ժամանակաց տակաւին երևելին հետք կառացն եգիպտացւոց յատին ծովուն. իսկ հետք անցից ինչ որովհետև ծածկեցան ի ջուրց ծովուն՝ ոչ երևեցան. ուստի ոչ միայն ի վերայ ջուրց ոչ երևէին հետք նոցա, այլև ոչ ի խորս ջուրցն ։

Օ այս հետս, նոյնպէս և զշաւիղս և զՃանապարհս դնէ մարգարէն լինիլ ՚ոյ, յասելն ՚ած. ոչ զի իւրոց գնացից էին, այլ զի ինքն եթաց զայն Ճանապարհ, և

ինքն առաքնորդեաց. իսկ թէ ի ձեռն որից, յայտ առնէ՝ ասելով՝

Ա՛ստուածորդեցեալ որպէս խաչին ժողովրդեան տ՛ի յետն մովսէս և մարգարէիւ։ Ա՛յսինքն առեր ի ձեռին զմովսէս և զամենայն առաքնորդեցեր ժողովրդեան քումմ, որպէս հոմիւ որ առաքնորդէ խաչին. որով Յայտ առնէ նոսին՝ թէ զարմանալի եղև այս առաքնորդութիւն. զի խաչինք ոչ ի ծովու, այլ ի ցամաքի առաքնորդին. իսկ ածառաքնորդեր ժողովրդեան իւրում ոչ միայն ի ցամաքի՝ այլ և ի ծովու իբր ի ցամաքի։ Չայտ առնէ երկրորդ՝ թէ դիւրութեամբ և քաղցրութիւ եղև առաքնորդութին ևս, նաև խնամով և զթով եղև. զբնական առաքնորդելոյ նորա, ոչ օրէնս է լինել առաքնորդութիւ հովուի։

Ա՛ստանօր զերկոսին ի միասին դասեցին զմովսէս և զՀարոն՝ ոչ ցուցանել զհաւասարութիւն նոցա, այլ զգործակցութիւն միոյն ընդ միւսոյն, այսինքն ահարոնի ընդ մովսէսի. քանզի յայտ է թէ ամենայն իրօք առաւել էր մովսէս քան զհարոն, և ա քահանայութեամբ. մինչև ածանել նմա զնա ինքն զհարոն ի քահանայապետութիւ ժողովրդեան։

Ա՛յլաբանօրէն սոքիմիք ցուցանի ձանապարհ առնել որդւոյն ասլ ընդ ծով աշխարհի, և ցուցանել նորա ի ջուրս բազումս, այսինքն ի բազում ժողովուրդս ըզշուխիոս արքայութիւ. բայց քանզի գալ նորա յաշխարհ և անցանել ընդ այն՝ եղև անհետ. սմին իրի ասաց, և հետք քո ոչ երևին. յոր միտ ասի ի յաբականի. * անցեր ի ծով կենդանւոյ անհետ ։ իսկ այս անհետ անցեալս նշանակէ նախ զկուսութիւ կուսին և զանխախտ ծնանիլն. որովհետև անխախտ կուսութեամբ անցեալ ընդ ամենամաքուր որովայն ածամոր՝ եմուտ յաշխարհս, և հետք անցից նորա յորովայն կուսին ոչ երևեցան։ Երկրորդ նշանակէ զանհետացեալն և զանակ անցանելոյ և մտանելոյ նորա յաշխարհս. ոչ բովհետև այն մտաք նորա անհաս է ամենևին մտաց մարդկան և անքննելի, և ա և հրեշտակաց, և առաւել ևս զիւաց, որք ոչ կարացին իմանալ թէ ո՞ իցէ. Ո՞ այս յայտ առնէ և ասէին. ի ծովու և ի ջուրս. ։ որում և եսայի ասէ. * որ արար զձանապարհ ։

,, Ծով, և 'ի ջուրս սաստիկս զշաւիղս ։ (Եսայ. խ՟. 16.) Յորոյ վերայ գրէ և նաբեկացին 'ի Ճառն մ՟ճ՟. այսպէս. * 'ի Ծովու էին Ճանապարհք նր, և շաւիղք ,, նորա 'ի ջուրս. որ զանհետանելն Ճառ առակի ։ Լերկորդ՝ նշանակէ զանշշունչ կենցաղել նր յերկրի. զի ոչ փառաք և ոչ կառաք, այլ հեղուկք և խոնարհու-

թիւ վարեցաւ իբրև ոչ ունող իրիք ։

Լսակ Թէ յետ մտանելոյ նորա յաշխարհս, և յետ ելանելոյ նորա աստ, զիարդ և 'ի ձեռն որոյ առաքեաց-դեաց Հոդովրդեանն՝ զոր ինքեան սեփականեաց, յայտ առնէ մարգարէն 'ի մէջ բերելով զառաքեալ-դուԹիւն զայն՝ որ եղև 'ի ձեռն մովսէսի և Ահարոնի. որովք ըս աւանդելոյ ոմանց քաղցր ինչ կարեն նշանակիլ. մի՝ դասք առաքելոց և աշակերտաց. երկրորդ՝ ըս լամբ" հին և նոր կտակարանք. երրորդ՝ օրինք և մարգարէք. չորրորդ՝ խորհուրդք եկեղեցւոյ. զի 'ի ձեռն մովսէսի՝ որ նշանակէ գտեալ 'ի ջուր՝ նշանակի խորհուրդ մկրտուԹիե, ըս նմին և խորհուրդ գրոշմի։ Լսակ 'ի ձեռն ահարոնի՝ որ նշանակէ ուսուցանող կիւ-ղեաւն, խորհուրդ քահանայուե, ըս նմին և խորհուրդ խոստովանուԹե և հաղորդուԹեան ևն։ Լայց այս մեկնուԹիք յարմարուԹեամբ ևեթ դնին. իսկ յիրն հայեցեալ՝ սոքիմքք նշանակի առաջնորդելն քան 'ի փրկուԹիե պէսպէս իրօք ։

Լարդեապէս ըս գրելոյ լամբ" * յորժամ Ծով մտաց ,, մեր պատսպի 'ի գիւտական հեղեղաց, Ճանապարհ ,, առնէ նա 'ի սմա... և մուտ լինի այ 'ի մեզ ընդ ,, շաւիղս ջանազան բարի խորհրդոցն, և միայ անհետ. ,, զի 'ի հասանելն միայ անհաս, և յիմանալն անՃառ ։ Լյս 'ի բնակիլ նորա 'ի մեզ յանդորրու՝ առաքնորդե բոլոր մարդոյս 'ի ձեռն մովսէսի և ահարոնի, այսինքն 'ի ձեռն մտաց և կամաց, և ուղղե զամենայն զգնացս մեր 'ի կեանս յաւիտենից ։

ՍԱՂՄՈՍ ՀԱ.

Պատմաբանական յայտարարութիւնք գործոցն նոյ, զորս եցոյց առ Ժողովրդի իւր՝ յելանելոյս նոցա յԵգիպտոսէ մինչև ի ժամանակս գաւթի եթէ ի խնամին և եթէ ի պատժել. և և ցոյցք բազմադիմի ապերախտութեանց որդւոցն իսրայէլի, ի մէջ բերեալ ի վերջոյ զընտրութիւն ցեղին յուդայ քան զայլոց ցեղից, մանաւանդ քան զեփրեմի։

Յանգուցեալ յասէ։

1 Եւ ասեցաւ առ ծաղովրդիւ յօրէնս իմ. խոնարհեցուցէք զունկն ձեր ի բանս բերանոյ իմոյ։ 2 Բացից առակս զբերան իմ, խօսեցայց զառաջս ի սկզբանէ։ 3 Որչափ լուաք՝ և ծանեաք զայս, և հարքն մեր պատմեցին մեզ։ 4 Ընդ ինքեանս չծածկեցաք նոցա յազգ յազգ, պատմել զգործոսն եան, զպերծութիւն և զսքանչելիսն նորա՝ զոր արար։ 5 Յարուցանել ականջ ի վկայութիւն իւր առ յակոբ, և օրէնս եդ ի վերայ իսրայէլի։ 6 Որչափ պատուիրեաց հարցն մերոց, ցուցանել զայս որդւոց իւրեանց։ զի ծանիցեն յազգ յազգ։ 7 Որպէս զի յուսասցին ի Տէր, չթերթիցեն զգործս Աստուծոյ, և պատուիրանացն զայս որդւոց իւրեանց։ զի դիցեն առ աՀ զյոյս իւրեանց, և ոչ մոռասցին զգործս այ։ 8 Ոչ պատուիրեաց նորա խնդրելով խնդրեսցեն. և ոչ եղիցին որպէս և հարք իւրեանց։ 9 Ազգ լար և դառնասոյզ. ազգ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր, և ոչ հաստատեաց առ աՀ զհոգի իւր։ 10 Որդիք եփրեմի լուսկիք և պերճկիք, յաւուր պատերազմի հաստատ փարչասցին։ 11 Ոչ կացին նորա ուխտի այնմ. և քան իրաւանց նորա ոչ կամեցան գնալ։ 12 Մոռացան զբանս նորա, և զսքանչելիսն՝ զոր եցոյց նոցա։ 13 ԶաՀուն հարց նոցա զոր արար զսքանչելիս իւր, յերկրին եգիպտացոց՝ ի դաշտի տանեաց։ 14 Հրէջ զնէր և անցոյց զնոսա. կացոյց զնոսա ընդ ամպ զցերեկ։ 15 Պատռեաց զվէմս ի տիւ։

առաւ. և պահնայն փչեցաւ ի լոյս հրոյ։ 16 Եւ հերձեալ պղինձ յա-
նապատի, և եւս ըմպելով նոցա որպես ի խորոչ ջրոյ։ 17 Եւ հան
պղնձեայն ի վէմն. և հոսեալ որպես գետոյ պղնձեայն։ 18 Եա-
նայն յաւելուն ի ղեղանիլ և ասս. և բարկացաւցին զբարկութիւնն
յանկարծ։ 19 Վասնզի զայծ ի սերոյ խորհեցան, ի խնդրել
զերկիւղալոյ անյոյս խորհուրդ։ 20 Զրնկնելոցն զայ և ասացին.
Վրէն կարո՞ղ ընդ այծ պատրաստել սեղան յանապատի։ 21 Վասն-
զի հարկանէր զվէմն և հոսէին ջուրք, և վտակ խաղային ի
նմանէ։ 22 Եա՞ղջ հաց ևս կարասցէ տալ նա ժող. կամ պատ-
րաստասցէ սեղան ծաղովրդեան իւրոյ։ 23 Վասն այսորիկ
լուաս զայս ասր, և յոյժ սաստեցաւ. հուր բորբոքեցաւ ի յակովբ,
և բարկութիւն եւս ի վերայ իսրայէլ։ 24 Զի ոչ հաւատացին
յայծ, և ոչ յուսացան ի փրկութիւն նր։ 25 Ընդառաջ եւ ամպով
ի վերուստ, և դրդռանս երկնից եբաց. և տեղաց ի նոսա
մանանայ ի կերակուր։ 26 Զհաց երկնից եւ տուաւ նոցա, մարդ
հրեշտակաց կերակուր մարդկի. և ինչպէ՞ նոսա կերակուր ի լեռ-
նի։ 27 Եհան զնոսա հարաւոյ, և աջ զորութիւնէ իւրով զնե-
սեսս։ 28 Զեղեաց ի նոսա ևս որպես զնոյն. որպես զաւազ
ծովու պղտեաս նոսա։ 29 Եւրէ ի մէջ բանակի նոցա,
և շուրջ վրանօք նոցա։ 30 Կերան և յագեցան յոյժ. զգան
կուրութիւն նոցա եւս նոցա. ոչ ինչ կարօտ եղեն ի ցանկութիւն իւ-
րեանց։ 31 Մինչդեռ կերակուրն ի բերանս իւրեանց էին,
բարկութիւն յայ եկ ի վերայ նոցա։ 32 Սպան զքաջսն ի ն-
ցանէ. և զընտիր ընտրեալսն յերկրէն սպասիեաց։ 33 Զայսո-
սիսկայի մեղան և ասս. և ոչ հաւատացին ասանկելոցն նոսա։
34 Վասնզի յանապատ ասաւ զնոսա. և ամ նոցա փու-
թասէս անցին։ 35 Զերթալ սպանեալսն զնոսա, խնդրէին զնա.
դառնային և առաւօտ առնէին աս աջ։ 36 Զկնդկին՝ չի աջ
օգնական էր նոցա. աջ բարձրեալ երկիր էր նոցա։ 37 Սիրե-
ցին զնա բերանօք իւրեանց, և լեզուօք իւրեանց սպեղեն նմա.
և սիրտ նոցա ոչ էին ուղիղ ընդ նմա, և ոչ հաւատացին
ուխտի նորա։ 38 Եայլ նա ինքն գխնդ էր, ստեր զմեղս նոցա՝
և ոչ սպանիներ։ 39 Զաճախել դարձոյցանել զբարկութիւնն
իւր. և ոչ բորբոքեաց զամենայն սրմտութիւն իւր։ 40 Զկնդկին-
ըն մարդիս են նոտա. հոգի որ երթայ՝ այլ ոչ ևս դառնայ։
41 Վրանէր անփառ դառնացուցին զնա յանապատի. և բար-
կացուցին զբարձրեալն յանկրէն։ 42 Զոչխարն՝ և փրկեցին
զնա. և զերն իսրայէլ զայրացուցին։ 43 Եոչ յիշեցին զձեռն
նորա. յաւուր յորում փրկեաց զնոսա ի չեռաց նեղչաց նոցա։

44 Եղեալ արար ընդ նա՝ և պարտեսար իւր յերկրին եգիպտա-
ցոց, և ի գաղթին պայման։ 45 Արձոյց յարին զգեցա-
նոյս. և զանձրև նոցա, զի մի արբցեն։ 46 Ետես ի
նոսա շանաճանճ՝ և եհեր զնոսա, և գորդեր ապականեաց զնո-
սա։ 47 Տո ծանիոյ զպտուղ նոցա, և զվաստակս նոցա մար-
եաց։ 48 Տիար կարկտի զայգիս նոցա, և զընկենուս նոցա ե-
զեամբ։ 49 Ետես ի կարկտոտ զանասունս նոցա. և
զպտղատեսիս նոցա հրոյ դատեցաւ։ 50 Ետես ի նոսա
զբարկութիւն բարկութեան իւրոյ, զբարկութիւն զբարկութիւնն և
զնեղութիւն։ 51 Ետես ի նոսա զանձնան՝ ի յետն հրեշ-
տակէ էարն. զբնեցոյց ի նոսա զբարկութիւն բարկութեան իւրոյ։
52 Եւ առնեայեաց ի տահուանէ զանձինս նոցա. և զանասունս
նոցա ի տահ մատնեաց։ 53 Տիար զամենայն անդրանիկն եգիպ-
տացոց, զսկիզբն ամենայն վաստակոց նոցա ի յարիս փամայ։
54 Տարցան զոր որպէս խաշին ժողովրդեան իւրոյ. և եհան
զնոս որպէս հօտ յանապատ։ 55 Ետես յոյսս, և
և ոչ երկեան, և զթշնամիս նոցա ծով ծածկեաց։ 56 Տիան
զնոսա ի լեառն սրբութեան իւրոյ, լեառն այն՝ զոր ստացեալ էր
աջոյ նորա։ 57 Եւ երծեաց յերեսաց նոցա զհեթանոսս. վիճա-
կեցոյց ի նոսա զվիճակ ժառանգութեան իւրոյ, և բնակեցոյց ի
յարիս նոցա զազգն իսրայէլ։ 58 Եւ նոքա՝ փառասցուցին
զԱստուած բարձրեալն, և զվկայութիւնս նորա ոչ պահեցին։ 59 Եւ
յետս խոտորեցան որպէս և հարք իւրեանց, դարձան՝ և եղեն
որպէս զաղեղն ի նենգ։ 60 Եւ բարկացուցին զնա ի բա-
գինս իւրեանց. և զխանդս իւրեանց նախանձ արկին նմա։
61 Եւ ետես աստ, և արհամարհեաց զնոսա. և անարգեաց յոյժ
զիսրայէլ։ 62 Եւ երծեաց յիւրմէ զհօրանն ի սելովմ. հօրանն,
զոր բնակեցոյց ի մէջ մարդկան։ 63 Եւ ետուեաց ի գերութիւն
զզօրութիւնն նոցա. և զգեղ նոցա ի ձեռս թշնամեաց նոցա։
64 Եւ սրոփել ի սուր զքահանայսն իւր. և զքահանայս իւր
անպէս արար։ 65 Եւ զերիտասարդս նոցա եհեր հուր, և վասն
կուսանաց նոցա ոչ ոք սգացաւ։ 66 Եւ քահանայք նոցա սպիան
ի սուր. և զայրիս նոցա ոչ ոք լայր։ 67 Եւ արթնեաց
որպէս ի քնոյ տէր, որպէս հզօր ի մարտի զգինեաւ։ 68 Եւ հար
զթշնամիս իւր, նախատինս յաւիտենից արար զնոսա։
69 Եւ երծեաց զհօրանն յովսեփեա, և զազգն եփրեմ ոչ
ընտրեաց։ 70 Եւ ընտրեաց զազգն յուդա. զլեառն
սիովն, զոր և սիրեաց։ 71 Եւ շինեաց որպէս միեղջերուց սրբու-
թիւն նորա. յերկրի հաստատեաց զնա յաւիտեան։ 72 Եւ ընտրեաց

պատճէնն ծառայ է՛ր, և ընդհատ պիտ ի հօրէ խաչանց. ի վերջին ծնելոցն ընդհատ պիտ։ 73 Հովհաննէս յայտնէր ծառայ էր, և գլխոյսել ծառանգութիւնէ էր։ 74 Լուծեալ պիտ ի մահապարտէն սրտի էրոյ, յանդիմանէ չեռայ էրոյ առաքելոցդեր նորա։

ՎԱՐՈՒԹԻՒՆ

Խոսքունէ յասած։



Ի ՍԿԶԲԱՆԱՆ ԻՆՁ ՄԵՐ Ի ՁՈՐՍ ձեռագիրս և ի վարդանայն յաւելեալ լինի ի վերնագրիդ և բառս ի խաչաբաժ. և յերիս ձեռագիրս բառդ ի գտան։ Եմէ այս բառք յաւելորդս դնին, զի ոչ գտանին՝ ոչ յԱրնտիր ձեռագիրս մեր, և ոչ ի լամբ՝ յԱրնտիր օրինակս ոչ յերբ՝, և ոչ յայլ Թարգմանութիւս. այլ յամենայնի դնի ըստ նախակարգելոյդ խմաստուն յասած։

Ոչ այս վերնագիր, որպէս և զնմանիս սորա բազումք բազում օրինակաւ մեկնին, և նախ՝ վասն բառիս ասած գրեն ոմանք Թէ վասն զի զայս սաղմոս ասաց ասած, վասն այսորիկ նմա ընծայի. բայց այլք հաւանականագոյնս դնեն, Թէ զայս ասաց դաւիԹ, և յանձն արար ասոփայ, կամ դաւու նորա՝ երգել ըստ պատշաճի (տես ի սաղ. խԹ.)։ Չաւելու վարդան Թէ զայս ասաց դաւիԹ ի ժամն տաղաւարահարաց յահակնէս ամենայն իսրայէլի, առ իւր ունելով զասածս։ Իսկ վասն բառիս խմաստունէ՝ բազում բանք ասանդին ի մատենագրաց. յոմանց՝ Թէ այս սաղմոս տուաւ ասոփայ եղանակել ըստ խմաստուէ իւրում, կամ մեկնել զիմաստ բանից սորա առ ժողովուրդն։ Չոմանց՝ Թէ այս սաղմոս երգեալ լինէր այնու աստիճանաւ՝ որ ասիւբ խմաստութիՆ, կամ այնու եղանակաւ՝ որով նուագեալ լինէին երգք կռնեցեալք խմաստուէ։ Չոմանց և ասի՝ Թէ որովհետև յայս սաղմոս փակի խմաս-

տուեալ է, վասն այսորիկ և ինքն իմաստութիւն կոչի· (տե՛ս ՚ի սաղ· ըլ· ՚ի ներքոյ· գլ· Ժ·)

Լսակ Թէ զինչ իմաստութիւն է այն՝ ծանիր· զի այս սաղմոս ըստ Հնոյն մնացեալ՝ առաջի դնի իբր յորդորութիւն ինչ իմաստութեան· իբր զի ժողովուրդք ոմն ՚ի միտ առեալ այսու զարհուրելոյն այս առ իսրայէլ և զապերախտութեան իսրայէլի առ նա (որպ վասն և պատժեցան) զդաստայնին· Լսակ ըստ խորհրդոյն մտածեալ՝ իմաստ սաղմոսիս է իբր ստուերագրութիւն այնր ամենայնի՝ զոր արար օրդին այ ՚ի հանել և ՚ի փրկել զորդիս մարդկան ՚ի գերութենէ սատանայի, ծայելով ՚ի ցեղէն յուդայ և ՚ի տանէ դաւթի· Լսչ զի տիրապէս զայս դիտէ մարգարէն ՚ի սաղմոսի ասա՝ զգանս սորա առանս անուանէ ՚ի համարն 2· Լսան և այլ պէսպէս կարծիք, բայց աւելորդ և անպիտան· վասն որոյ թողեալ զնոսին մնաիցուք ՚ի նիւթեն·

Լսդր յայս սաղմոս մարգարէն նախ զնի զյառաջաբանութիւն ինչ ՚ի համարն· 1· մինչև ՚ի -- 4· և ապա խօսի Թէ զիարդ կամեցաւ ած՝ զի իսրայէլացիք առանց դէպացեն որգւոց յորդիս զպատուիրանս իւր, ՚ի համարն· 5· — 7· և զինի այսորիկ սկսանի խօսել զապերախտութենէ իսրայէլացւոց· 8· -- 12· և ապա զսքանչելեացն այ· 12· -- 16· և դարձեալ զապերախտութէ ազգին 17· -- 24· և յետոյ միւսանգամ զսքանչելեացն 25· -- 30· և զինի զպատժոց, և դարձեալ զապերախտութենէ ազգին 31· -- 37· և յետոյ զգթութենէն այ 38· -- 40· և զինի դարձեալ զյարութէ ազգին 41· -- 43· և յետոյ զպատժելոյն այ՝ զերկիրսն եգիպտացիս 44· -- 53· և ապա զառաջնորդելոյն այ 54· -- 57· և զինի դարձեալ զապերախտութէ ազգին 58· -- 60· և ապա դարձեալ զպատժելոյն այ զազգն 61· -- 66· յետոյ զպատժելոյն նոր զերկնաւին ազգին· 67· և 68· և հուսկ յետոյ զընտրութէ ցեղին յուդայ և քաղաքին երկի· 69· -- 74·

Լսյ քանզի այս ամենայն քանք պատմականք են և բացայայտ առնդիր ՚ի գիրս հնոյց և թուոց, ևն, անտեղի երևիլ երկարել զմեկնութէն սոցա· ապա թէ ոչ՝ պարտ էր մեկնել զամենայն պատմութէն զր գրոց, սկսեալ ՚ի գրոյն ծննդոց մինչև ՚ի ժամանակս դաւ-

Թէ՝ Լաւ սակայն կամելով անթեղըն կացուցանել զաշխատութիւն մեր՝ ջանասցուք հաստուցանել և զայն՝ զոր պահանջէ կարգ բանին։

ՐՈՂ

ՈՒ. Ա՛յսչափ՝ ծաղուածքդ չօքէնս էմ. խանարհեցուսցէ՛ զանձին չէզ ի բանս բէրանով էմ։

Ը. Բայց առաքա՛ զբերան էմ. խօսեցայց զառա՛ւս ի սիրեանս։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Երկոքեան այս բանք պարունակին ի չորեսին համարս խը. սաղմոսին։ Լաւ զոր ասա առ ժողովուրդ իւր խօսի մարգարէն ասելով, Նայեցարո՛ւք, անդ առ ամենայն ազգս երկրի և առ ամենայն մարդիկ խօսի յաւետին լուսաբա՛ւս։ Լաւ զոր ասա՝ խանարհեցուսցէ՛ զանձին չէզ ի բանս բէրանով էմ, անդ ասէ, խանարհեցուցէ յաւաքա՛ն զանձին էմ։ Այնին նման խօսի և զանազան բեբանոյն։ բայց այլով կարգաւ։ զորմէ տեսս անդ։ Լարդ քանզի կամէր մարգարէն ի սաղմոսի ասա առաջի դնել զորս միանգամ արար ած առ ժողովուրդն իսրայէլի, ի սկզբան անդ ուշ առնել նոցա նայիլ զգուշութիւ՛ն յայն՝ զոր ունի խօսիլ, որպէս զի ՚ի ասելոյ մեր այժմ՝ ի վերոյ՝ բարւոք ի միտ առեալ զայն՝ զոյ ասացեալն յանձինս, և զոհասցին զնոյ։ վասն որոյ նախ առաջաբանեալ ինն ասէ։

Ա՛յսչափ՝ ծաղուածքդ չօքէնս էմ։ Լաւա նայիլ յորժամ առ ած ասի՝ նշանակէ հաձիլ, գթալ, օգնել, պաշտպանել, ևն։ Իսկ յորժամ առ մարդիկ ասի, եթէ ՚ի սրտաքնոյն իցէ՝ նշանակէ մարմնաւոր աչօք հայիլ։ իսկ եթէ ՚ի ներքնոյն իցէ, նշանակէ ուշ դնել մտօք և իմանալ։ Այսս միտ դնի աստ նայիլն, որպէս թէ ասէր։ ով ժողովուրդք խրսայէլի նայեցարո՛ւք աչօք մտաց ձերոց, կիմ ուշ դիք զինչ ունիմ խօսիլ առ ձեզ. և եթէ ՚ի միտ առջիք զբանս իմ, այն իմ բանք լինին

ցին ձեզ ուղղել վարուց ձերոց իբրև զօրէնս ուղիղս. ամին իրի ոչ ասէ՝ նայեցարուք ի բանս իմ, այլ յօրինս իմ։ Նա զի առ այս պահանջի ունկնդրութիւն, յաւելու ասել։

Աստանաբհեցուցէ զանին յեր ի բանս երերանոյ իմոյ։ Որպէս վասն նայելոյ ասացաք, սոյնպէս է ասել և վասն խոնարհեցուցանելոյ զունկն. զի յորժամ առ Աստ ասի՝ նշանակէ լսել քաղցրութիւն և ողորմութիւն. իսկ յորժամ առ մարդիկ ասի՝ նշանակէ լսել հնազանդութիւն և հպատակութիւն, կիսն անսալով. յոր միտ ասաց Տէրն. * որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ ։ (Մատ. ԺԳ. 43.) և ըստ այսմ կամի ասել, լուարուք և հնազանդեցարուք այնմ՝ զոր ասեմ ձեզ՝ ոչ օտար բանիւք, այլ բանիւք երերանոյ իմոյ։

Յարոյսապէս, այս բան առաջի դնի իբր յորդոր ընդունելութեան Աստուածային բանից կիսն քարոզութեանց ոչ միայն ի լսել, այլև ի կատարել զլուեալսն. զի յայս հայի խոնարհեցուցումն ունկան ի բանս. ապա թէ ոք միայն լսիցէ և ոչ արասցէ՝ զինչ օգտիցի անտի. * Լին ,, նիջիք (ասէ առաքեալն) առնօղք բանին, և մի ,, լսօղ միայն համարեսջիք զանձինս ։ (Յակ. Ա. 22.) * զի ոչ եթէ որք լսօղք օրինացն արդարացեալ են առ ,, աստի Աստ. այլ առնօղք օրինացն արդարասցին ։ (Հռ. Բ. 13։)

Լյն որք բերկրին ի լսել զբանն Աստ՝ եթէ իցէ սեթևեթեալ ոմիւ. ընդ այն միայն զուարճանան, և յառնելն ոչ մերձենան։ Ետաքրքիր անձն անդորը լսէ զպերճախօսութիւն բանից քարոզչին իբրև զքնարի, դողէ և ոչ առնէ. զի դադարեցաւ ձայն քնարին. և յայնժամ քարոզիչն համարեալ լինի առ նա իբրև զքաղցրաձայն նուագօղ. որպիսի եղև եղեկիէլ մարգարէ առ իսրայէլ. ուստի ասաց առ նա Աստ. * և դու Լին ,, նիցիս նոցա իբրև զձայն երգոց քաղցրաբարբառ ,, յօրինելոյ. լուիցեն զբանս քո, և ոչ արասցեն ։ (Եզեկ. ԼԳ. 32։)

Ամանք յօժարութիւք գնան յեկեղեցին ի լսել զքարոզս. և բանք քարոզչին իբրև յարդ թափին ի վերայ նոցա. և նոքա յերանելն յեկեղեցւոյ՝ յեկեղեցւոջ անդ թօթափեն զայնս իբրև զփոշիս. մի յեկեղեցւոջ՝ այլ ի

վերայ գործոց քոց թօթափեա, զի ուղղասցին։ Ամենք առեալ տանին իւրեանս՝ ղորս լուան. բայց տանին իբրև մաղով, և՝ ի ձանապարհի հոսեն։ Ամենք իբրև զձրագ տանին մինչև՝ ի տուն, և նովին իբրև թէ լուսաւորեն ղայլս՝ ի պատմէն առ նոսա, և յասել ևս, վայ մէզ, զայս ինչ և զայն ինչ խօսեցաւ քարոզիչն. այլ չիմացանեն յետոյ զձրագն։ Վասն իմն է քարոզութիւն որ՝ ի գնալն լայնի. եւփրատ ընդ տիգրիս խառնի, և քարոզութիւնն՝ ի գործ։ Ոչ ուր գետոյ հասեալ յերկր ծովու՝ եթէ ոչ հեղցի՝ ի ծով՝ պատառէ ղշրջակայ վայրս, այնպէս և քարոզութիւն մերձեալ՝ ի գործ՝ եթէ ոչ հեղցի՝ ի նոյն՝ միասի լսողին, և պատառէ զնա՝ ի չարիս։

Յհանն ՚ի որպէս ասէ առաքեալն ազգաւ է և հատուց. (երբ. ԺԳ. 12։) Այս զարմանք է՝ զի ոչ ազգէ՝ ի քեզ. սահաւ ջուր զաղ հալէ. իսկ բազմութիւն բանիցն ՚ի քեզ ոչ ներգործէ, կաթիլ ջրոյ յաձախեալ մաշէ և ծակէ զքար. ջուր յաձախ հեղեալ՝ ի վերայ ադամղի հանդերձի մաքրէ. ՚ի քեզ արդեօք զինչ գործեցէ. Վնասուտ գաւթի հալածէր զևն՝ ի սաուղոյ. փողվք քահանայից անկանէր երիքով. ձայնիւ մխրճէսի պատառէր երկիր. իսկ զինչ ՚ի քեզ ազդիցէ այսքան քարոզուն. ոչինչ. ոչ ախտ հալածէ, ոչ չար կամքդ կործանի, և ոչ երկրասիրութիւդ պատառի։ Ահա՛ ի ձեռ թերևս, զի ծախես զջուր, և կամ ջուրը իցես՝ զի չիմացանես զնուր։

Պատճառ այսորիկ այն է, զի ոչ խոնարհեցուցանես զունկն քո. այսինքն թէ ոչ ընդունիս ՚ի քեզ ՚ի ներքս զբան քարոզութիւն. որպէս թուղթ իւղով օծեալ ոչ ընդունի զջուր։ Վերին է բանն այդ, թաղելի է ՚ի խորս՝ զի բուսցի. գանձ է, դնելի է ՚ի ներքս ՚ի հոգին՝ զի պահեսցի. կերակուր է, պարտ է ուտել և ոչ սոսկ լսել. գեղ է՝ ոչ է դնելի չսկածիս, այլ առնելի է ՚ի ներքս՝ զի օգտեսցէ։ Ջահ է գեղեցիկ, զեռեղելի է ՚ի սափորի՝ այսինքն ՚ի սրտի, զի չայջողեսցի չայրքումբին։ (գատ. է. 16։) Այս է քարոզութիւն. ՚ի կալ երկուց առ նմա՝ մին չահի, և միւսն ինչ ոչ օգտի. զի մին է իբր թափանցիկ՝ որ լինչն ՚ի ներքս ընդունի զլոյսն. և միւսն դիմահար, որ արտաքուստ

միայն լուսաւորի, և ՚ի բաց դարձուցանէ զլոյն յիւրմէ։ Լինի կամիս ընդունիլ ՚ի ներքս զբանն, մնալ և դալ ՚ի ներքս ՚ի բանն. եթէ Թեթևամիտ իցես, ինա՛ ՚ի վէր ջուրց իբրև զլարդ, և ոչ կարես իմանալ ՚ի վայր ՚ի գիւտ բարւոյն. եթէ կամիս որսալ զձուկն, ՚ի խորս գտանես. Լինի կամիս բանիւ բժշկել ՚ի հիւանդութիւն հոգւոյդ՝ ոչ կարես հասանել ՚ի նոյն՝ արտաքուստ հայելով ՚ի բանն, այլ պարտիս իմանալ ՚ի խորս. Եբեսուն և ութ ամ հայեր անդամալոյծն յերեսս ջուրց պրօբատիկէ աւազանին, և ոչ բժշկեր. իսկ որք իջանէին ՚ի նոյն՝ բժշկէին (յովհ. Ե. 5.)

Օ հուսկն ասացից, եթէ կամիս շահիլ յածախին բանին Թէ ՚ի քարոզութեան իցէ, և Թէ յրնթերցման, առ և արկ զոյն ՚ի բերան հոգւոյդ, և ծաւքեա՛. զի աղնիւ ուտելին ՚ի ծաւքիլն համեղանայ. և ՚ի համեղանալն յարի սիրտ քո ՚ի նա, և ՚ի յարիլ սրտիդ հետեւի կամքդ. Լինի ոչ ծաւեսցես՝ ոչ միայն ոչ համեղանայ, այլ և գուցէ ախտեսցէ անմարս մնալով, և պարտաւորեալ զքեզ. Նաւունք որք ոչ որոձան՝ ոչ են նը. եթէ լաւ բանին ոչ որոձայ՝ ոչ համարի նը, և ոչ սրբի յախտից։

Ո՛ւ դարձեալ զայն և զկը իբրև հայելի յանդիման հոգւոյդ, և հայեաց ՚ի նա. տեսցես յայնժամ ՚ի քեզ զաղտեղութիւն. և ստիպեսցիս մնքրել զքեզ. զի յիմար է՝ որ տեսեալ զաղտ յերեսս իւր՝ ոչ սրբիցէ զնա. զի Թէ յայլս ոչ կամիմք տեսանել զաղտս, քանի՛ և ՚ի մեզ. Ա՛յլ ՚ի հայելի՝ ա՛ւշ զկը, իբրև յայն՝ որ իցէ օբՀնր կենաց. ըստ որոյ ասէ. * Նայեցարուք յօրհնս ,, իմ ՚՚. ա՛յ ասէ՝ Նայեցարուք, այլ Նայեցարուք, որ ՚ի մէջ բերէ և զվնասութիւն մտաց, միանգամայն և զբարեհոտութիւն ՚ի նոյն. ըստ որոյ ասաց. * խոնաբհեա ,, ցուցէք զուենկն ձեր ՚ի բանս բերանոյ իմոյ ՚՚. զոր իբրև զառակս առաջի կամի բերանով իւրով, յասելն։

Բ՛անայ առակս ղբերան իմ. խօսեցայց զառակս ՚ի սկզբանէ. Լ՛սանկն է բան համառօտ՝ պարունակող ճշմարիտ իմաստից. և այս՝ կամ յայտնի, որպէս ՚ի բարոյական առակս. յոր միտ սկզբունք բարի վարուց, և բանք զՀռակաւքք՝ առակք կոչին, և կամ գաղտնութիւնք ինչ՝

ըստ երից · մի՝ ըստ յարմարութեանն նմանութեան · որպէս այն բան · * ծառ բարի պտուղ բարի առնէ ‖ · (մատ. է · 17 ·) Յե թէ * չիրագ մարթիոյ ակն է ‖ · (մատ. ղ · 22 ·) Երկիրդ՝ ըստ յարմարութեանն պատմելն կամ գործոց · որպէս այն բան · * գառաւոր մի էր ի քաղաքի ուրեմն ան ‖ · զուկ · ժը · 2 ·) Երկրորդ՝ ըստ յարմարութեանն համեմատութեան · որպէս այն բան · * ի կերըլ եւ կերակուր , եւ ի հղօրէ եւ քաղցր ‖ · (գատ · ժէ · 14 ·) Այսպէս եւ այլ ամենայն առեղծուածք , այսինքն հանելուկք (կամ սիլիմձէք) առակք կոչին : Այսր միտ երբեմն եւ բանք ոտանաւորք չափով առակ ցեալք՝ առակք անուանին :

Ըստ այսմ զանազանութեան ի սմին բանի՝ ի միում հատուածի բառս առակ՝ դնի , ըստ յայտնի լինելոյ իմաստից , եւս եւ ըստ խօսելոյ զանս ոտանաւոր չափով · ըստ որոյ յերբ՝ դնի ձայն · որ զնոյն նշանակէ , այսինքն է առակ կամ օրինակ : Կամ յերկրորդութեան հատուածի դնի ըստ յարմարութեանն պատմելն , եւ ըստ յարմարութեանն համեմատութեան · ըստ որոյ յերբ՝ դնի խէոօն · այսինքն առեղծուածք (այն է սիլիմձէք) · որպէս ե եւ յայլ Թարգմանութեան : Այսպ միտ իմացեալ զբառդ առակ՝ ասէ :

Բառիդ առակս ղբերան եմ · խօսեցայց զառակս ի սկզբանէ : Կանալ զբերան առակաւ՝ նշանակէ բերանով խօսիլ զառակս , բայց ի միջ բերէ եւ զլուսնեն սրտի ի խօսելն , որպէս Թէ այնչափ լցեալ իցէ սիրտն առակօք՝ մինչեւ ի բանալ բերանոյ՝ զեղանիլ այնոցիկ ի դուրս · եւ զի լցեալ էր սիրտ մարգարէին այսպիսեաւ, վասն այսորիկ ասէ , բացիցց առակաւ զբերան իմ , այսինքն Թէ առակաւ խօսեցայց , եւ ի խօսելս իմ յաւելից եւ զայլ եւս առակս ծածկեալս ի սկզբանէ : Այս առակք , որպէս խոստանայ բանալ զբերան իւր , յինքեանս մնածեալք՝ են բանք յայտնիք եւ անտեսելիք · բայց ըստ խորհրդոյն մնածեալք , են գաղտնիք եւ ծածկեալք, զի են բանք նշանակիչք խորին խորհրդոց , որոց Թէպետ եւ ի մանուածոյն իեղեամուտ լինիլ չէմք ձեռնհաս , բայց ի հասարակի հնար է մեզ հասու լինել , ի միտ առեալ՝ Թէ այն բանք զորս խօսի աստ մարգարէն , հային ի գաղտնի խորհուրդս՝ զորս

յայտնեաց բերանով, և կատարեաց գործով որպէս
,, ի վախճան ժամանակաց ։

Այժմ իբրև և աւետարանիչն (մատ. ԺԳ. 35.) զայս
բան սաղմոսերգուին առնու ի դէմս քոյ, ցուցեալ
թէ զոր ասացն մարգարէին, լցաւ ի քո· վասն որոյ
ասէ * զի լցի ասացեալն ի մարգարէին ևն ։ որով
ոչ ցուցանէ, թէ զայս բան ասաց սաղմոսերգուն ի
դիմաց քոյ, այլ վասն քոյ. և զոր նա ասաց ի դիմաց
իւրոց՝ օրինակ գործով քոյ, ի քո կատարեցաւ, որպէս
յատել աւետարանչին (յովհ. ԺԹ. 36.) * այս եղև
,, զի լցի գիրն, եթէ՝ ոսկր նորա մի փշրեսցի ։, ոչ
ցուցանէ՝ թէ այն բան (ելից. ԺԲ. 46.) ասացաւ վա-
ռակերացն քոյ, այլ վա ռակերաց զատկական գառնին,
որ էր օրինակ քոյ. յորում և կատարեցաւ ասացեանն
այն՝ այսպէսն թէ ոսկր նորա մի բեկանիցի. և հայե-
լով ի բան կատարմանն ասի թէ վասն քոյ գրեցաւ.
յոր միտ մեկնեալ իգնատիոս վարդապետ (ի ղուկ.
ը. 4.) ասէ՝ թէ քո * սկսանի խօսիլ ը նոսա առա-
,, կաւ. վասն զի և այս գրեալ էր վասն նորա. բացից
,, առակաւ զբերան իմ. խօսեցայց զինամատեաիւն
,, զծածկեալն ի սկզբանէ ։

Այլ զոր մարգարէն յերկրորդումն հատուածի ասաց,
խօսեցայց, աւետարանիչն մատթէոս դնէ՝ բղխեցից.
որով նշանակի զեղումն առակաց. և յայս իսկ ասէ,
* բացեալ զբերան իւր՝ ուսուցանէր զնոսա ։ (մատ.
,, ե. 2.) Կատական էր ասէ, ուսուցանէր. բայց յա-
ւելու և զայնալ բերանոյն. առ՝ ի ցուցանել զառա-
տութէն լիուն զեղման բանիցն, զորս յիւրմէ բղխէր.
Հատաքն լեզուաւ մարգարէից խօսէր, իսկ ի գալ
իւր՝ բերանով իւրով, և այն միշտ, զի ոչ ևս փակեալ
եղև բերան նորա, մինչև լցոյց զսիեզերս։ Այլք քա-
նային զբերանս՝ երանելով զմեծութիւն և զիմաս. իսկ
աւրն երաց՝ երանելով զաղբատս։ Այլք քարոզիչն,
և գործովք ոչ ցուցանէին. իսկ աւելն գործովք իւ-
րովք հաստատէր և յորդորէր. հանգոյն արծուոյ՝ որ
զթռչիլ իւր առաջի առնէ ձագուց իւրոց՝ առ՝ ի յօ-
ժարիլ և նոցա ի թռչիլս. ուստի և յասէլ ցորդիսն
զբեզեզեայ, * կարիջ ըմնիլ զբաժակն ։, յաւել ա-
ռաջի դնել և զառնել իւր յասելն, * զոր ես ըմնիլ

,, լոց եմ ։ (մատ . ի . 22 ։) Ա՛ւելք յուսուցանել՝ իբրև սպասաւորք խօսէին . իսկ տէրն իբր ինքնիշխան Թագաւոր . վասն որոյ և ասէ աւետարանիչն . Թէ նստաւ , և այնպէս ուսուցանէր , ի նշան ինքնիշխան տէրութեան ։ Ել խօսէր իբրև զմարգարէ , այլ իբրև ածմարգարէից . ուստի և զամենայն ծածկութեն բանից նոցա ի յայտ բերէր , և ոտոզելով զառակս նոցին՝ բղխեցուցանէր առ ամենեսեան , և զովացուցանէր զտիեզերս ։ Ել հրամայէր իբրև պաշտօնեայ ի դիմաց այլոց , որպէս առնէին մարգարէք յասել՝ Տէր . այսպէս ասէ տէր . այլ իբրև ամենատէր յասէն . * այլ ես ա
,, սեմ ձեզ ։ (մատ . է . 22 . 28 . 32 . 34 . 39 . 44 ։)
Ուր ասէ ծործորելին . * Այդ անուն ի դէպ անուն՝ ի դէպ տանուանցն է , և ի իշխանութեն իւն յայտնէ . զի ծանուցանի Թէ
,, ոչ ոք յառաջնոցն այսպիսի օրինակաւ բարբառէ
,, ցաւ , այլ Թէ այսպէս ասէ տէր , և Թէ բան տէն
,, եղև առ իս . վ՛ս զի նոքա զտէրունեան պատմէին ,
,, և առ ծառայսիցս խօսէին . իսկ սա զՏայրենեան
,, և առ ծառայն վարդապետ իշխանաբար , և ասէ՝
,, Թէ ես ասեմ ձեզ . ոչ Թէ առաջինն ասացեալքն
,, ոչ էր կատարեալ . վասն այսորիկ ես զկատարեալն
,, և զօգտակարն բարբառիմ ։

Ընդ այն է աստ քննել և զայն՝ զի զոր մարգարէն առակս ասաց , աւետարանիչն կոչէ ծածկեալս , այսինքն զայնպիսի բանս՝ յորս կային գաղտնի խորհուրդք ծածկեալք ի սկզբանէ աշխարհի . զի Թէպէտ և այն խորհուրդ բազմաք ասացեալ եղեն , և ի բազում իրս օրինակեալ ի ստեղծմանէ անտի աշխարհի մինչև ի գալ նմին մերոյ , բայց ծածկութիւն իւն գաղեալ էին , զի սակաւուց ընտրեալ լինէր յայնմանէ նոցին . յայս հայելով պօղոսի ասէր (եփես . գ . 9 .) Թէ տնտեսութեն այսոցիկ խորհրդոց ծածկեալ էր յամենայն յաւիտեանց ։

Այս խորհուրդք կրինակի ասին ծածկեալք . մի՝ ըստ նշանակելոյն , այսինքն ըստ այնց՝ որք նշանակեալ լինէին , և մի և՝ ըստ նշանակողին՝ այսինքն ըստ այնց՝ որք նշանակէին զնոսին ։ Ըստ այնց որք նշանակեալ լինէին՝ կատարեցան ի քր , զոր և տեսին առաքեալք , և աւանդեցին մեզ . և յայս միտ ասաց պօղոս զայն

զոր եգաք ՚ի վերոյ (եփես. ՟ը. 9.) տուաւ ինձ
ընդհակառակ այս * լուսաւոր առնել զամենեսին Թէ զինչ
,, է տնտեսութիւն խորհրդոյն որ ծածկեալն էր յամե-
,, նայն յաւիտեանից ՚ի։

Իսկ ըստ այնց որք նշանակօղն էին՝ ոմանք էին բանք՝
որք գուշակէին զայսօրիկ խորհուրդս , որպիսի եղեն
բանք ագամայ յասելն . * սա ... յառնէ իւրմէ առաւ .
,, վասն այսորիկ Թողցէ այր հն ՚ի։ (ծնն. ՟բ. 23.)
սոյնպէս և այլ բանք ասացեալք ՚ի նահապետսդ և ՚ի
մարգարէից ։ Իսկ ոմանք էին արարք օրինականք , որ-
պիսի էին ծէսք և արարողութիւնք և պաշտամունք հին
օրինացդ ։ Իսկ ոմանք էին գործք եղեալք ՚ի մէջ նոցին .
որպիսի եղեն ելք նոցա յԵգիպտոսէ , հանապատին գո-
գութիւն նոցա ՚ը անապատ , մանք նոցա ՚ը յորդանան
գետն , որք նշանակէին զագգի ազգի խորհուրդս . և
վասն այսպիսի նշանակութեանց նոցին՝ պատմիչք այնց
իրաց կարէին կոչել առակք . որպէս և կոչեացն իսկ
աստ մարգարէն և խոստացաւ առաքել գնոսա ։
Ա յլ զի մի երևեսցի՝ Թէ յիւրմէ խօսի՝ զորս առակս
անուանէ , ցուցանէ նախ Թէ ուստի խօսի . ըստ որոյ
ասէ ։

՟ը. Որպէս լուաւ և ծանեաւ զայս . և հաբէն ՚ի ձեր պարծե-
ցին մեզ ։

՟ը. Ա յլինել ծածկեցեալ յորժամ նոցա յաչի յայլ, պարծել
զօրինութիւնն ան . զսրբութիւնն և զչանչելիս նորա , զոր
արար ։

Որ ինչ միանգամ գործեցան ՚ի ստեղծմանէ անտի աշ-
խարհի մինչև ՚ի մերձիլ որդւոյն խորհելի յանցս յոր-
դանանու՝ գրեաց մովսէս , Թէպէտև ոչ զամ, այլ
յորս պարունակեալ լինէին խորհուրդք ։ Այսոյիսև և
որք յետ այնր գործեցան մինչև ՚ի ժամանակս գաւթի՝
գրեցին այլք . և այն գրուածք նոցա եթէ մովսէսին
և եթէ այլոց՝ վկայեալ ժողովրդեան հաստատեցան ,
և հաստատութիւն իմն ունոյց յորդիս . քանզի զորս
գրեաց մովսէս՝ ժողովուրդքն այնր ժամանակի վկայ-
ութիւն իւրեանց հաստատեցին վնասն . զի առաջի նոցա
ընթերցեալ . սոյնպէս և ասելի և վասն այլոց ։ Իսկ

քանզի ՚ի սոցունց առնուս աստ մարդարէն, և ի սոսկ ՚ի ձէ ոտանաւոր չափս. վասն որոյ ասէ։

Որդեա՛ լուա՛ և ծանեա՛ ինչս. և կարօտ մի պապակիր ինդ։ Կամի ասել. զոր խոստացայ ասել ձեզ, ասացից այնպէս՝ որպէս լուաք ՚ի հարց մերոց, և որպէս տեսաք ՚ի գիրս մարգարէից. քանզի հարք մեր պատմէին մեզ զայնս՝ աւանդելով ՚ի գիրս, նաև ՚ի բանս։ Ուստանօր բառդ որպէս՝ ոչ ցուցանէ զորպիսութի՛ ոՁոյն, այլ զորպիսութի՛ նիւթոյն. զի այսու ոչ կամի ցուցանել, թէ այսու ոՁիւ ունի պատմել որով ոՁիւ պատմէին նախնիքն, այլ թէ՝ զոյն ունի պատմել, զոր լուաւ ՚ի նախնեաց. ՚ի որում ՚ի նախնեաց անտի էՁ որդւոց յորդիս այն պատմութի՛ անթերի. և զայս յայտ առնէ ՚ի յաջորդ համարն ասելով։

Ալէ՛լ ծածկեցաս յորդւոց նոցա յաչէ յոյլ։ Ուսկիրքն որ ինչ միանգամ գործեցաւ ՚ի մէջ իսրայէլացւոց, ոչ միայ ծածկեալ յորդւոց նոցա. զի նոքա պատմին որդւոց իւրեանց, և նոքա այլոց՝ որք յաջորդեցոյ էին նոցին։ Իսկ բառդ ալէ՛ այլ՝ ոչ ցուցանէ զամար ազգս, այլ զորդիս որդւոց. զի որպէս որդիք առաջնոցն էին ազգ՝ այլ ՚ի նոցանէ, նոյնպէս և որդիք որդւոց նոցա էին ազգ՝ այլ ՚ի նոցունց։ Իսկ թէ զի՞նչ էր այն՝ զոր ասէին, չայտ առնէ ասելով։

Պապակիր զբնութեա՛ն ես. ղպորութի՛ և ղտնչելիս էս՝ ըստ աբ։ Ուսկիրքն թէ ոչ պակասեցան հարք մեր՝ պատմել մեզ թէ քանի մեծ եղեն զօրութի՛ք և գործք զոր արար ած առ իսրայէլ։ Այլ բառիս զբորութի՛ն՝ նշանակին մեծամեծ գործք այ՝ որք կատարէին ըստ կարգի, նոյնպէս և գործք նշանակին այն մեծամեծ գործք նոքա որք կատարէին արտաքոյ կարգի. իսկ օրհնութի՛ք նշանակին այն քանք, զորս մատուցանէին այ վասն այնպիսի գործոց նորա. զայս ամենայն ասէ պատմեցին մեզ հարքն մեր։

Ապաթէ է աստ զայդ պապակի՛ առնուլ ՚ի դէմս որդւոց. յոր միտ առնու լսո՛". որպէս թէ եգեալ էր. աւանդեցին մեզ որդւոցս հարքն մեր՝ զի պատմեսցուք զզօրութի՛ս և զգործս նոցա։ զայս ամենայն քանք ասին և ՚ի դիմաց եկեղեցւոյ առ

որդիս իւր՝ նայիլ յօրինս իւր ի նոր՝ զոր ընկալաւ ի
քէն· և ունկն դնել բանից և վկայութեց իւրոց, և
մի վարդապետութե՛ն օտարաց· զի ինքեան տուեալ է
մեծիւել զառակս ՚ձայնին պատգամաց, ոչ ըստ հաճոյս
առանձելով՝ այլ ըստ լսելոյ ի հարց անտի, այսինքն
յառաքելոց, և յորդւոց նոցա։

Յարմարական մեծութե՛ն մեզ ևս պատկանի ասել
զայս, հայելով յսա՚ձային օրհնուխս, զորս կատարեաք
ի կարգս պաշտամանց եկեղեցւոյ· զի զորս ինքեանք
և յինքեանց կատարէին առաջին հարք մեր՝ յետագայք նոցա գրեալք ասացեալսին մեզ· յոր միտ ասէ
Ընդհանրին ի Հանդրակտին (Լեւս 47·) * յառաջա
,, գոյն ի ժամանակս առաքելոցն, մինչդեռ նոր ծագ
,, կեաց գարունն հաւատոյ, ամենեքեան ըն ևին հոգ
,, ւով տրվ. և ընդհօք հոգւոյն յինքեանց մտայ խօ
,, սին զանս աղօթից ըստ ժամուն պիտոյից, զպա
,, տարագ են խորհրդածութե՛ն և զամենայն կատարո
,, զապետութե՛ց· եսկ ի ժամանակս յետինս ... տե
,, սեալ հոգւոյ ակամբ որ և հոգեկիր վարդապետաք
,, եկեղեցւոյ, և այնր ազգաւ գրով ասացեալին զա
,, մենայն զկնի եկողացս ։ Լուր զայսոսիկ չարեսցին
համարս առաջի եղեալ մարգարէին երբեմն զկնդիսա
բանութիւն ինչ՝ սկսանի պատմել զոր խոստացաւն, և
զայն ըստ լսելոյ իւրոյ· և նախ ասէ։

Ե. Ասացեաց ՚ձկայսրնին էր առ յակոբ. և օրէնս
եդ ի վերայ իսրայէլ։

Ը. Որպէս դանգամ պատուիրեաց հարցն վերոյ· գոյացանել
զայս որդոյս իսրէանց· զի ծանիցեն յոպ՚ չայլ·
Հայելով ի կարգ բանին պարտ էր ի սկզբանէ անտի
առնուլ զպատմութի՛ն, և ի հասանելն ի ժամանակ
դրանե՛ օրինաց՝ ի նմին վայրի յիշել զայս բան· բայց
զայլ ևս գերազանց կարգ պահելով մարգարէին՝ յա
ռաջ գասէ զսոյն և ասէ։

Ը. Ասացեաց ՚ձկայսրնի՛ էր առ յակոբ. և օրէնս եդ ի
վերայ իսրայէլ։ Ո կայուքք նշանակին ասա այն պատ
գամք, յորս վկայեաց ՚ձա՛ թէ զայս ինչ կամիմ, և ոչ
զայն· որպիսի են տաճարաձեայ պատուիրանք· և ի

տալ՝ այ զայսպիսի պատուիրանս առ յակոբ՝ այսինքն առ ազգն յակոբայ՝ հաստատեաց զայն մնալ՝ անխախտ մինչև ի կատարած աշխարհի. զի այն պատուիրանք յամենայնի և միշտ տևեն, քանզի են բնականք։

Յակ օրինաք խմացեալ լինին աստ խորհուրդք և դասատանական բանք օրինաց՝ զորս եդ ած ոչ ի վերայ ամենայն ազգաց՝ այլ միայն ի վէր իսրայէլի առ ժամանակ մի՝ մինչև հասցէ լրումն նոցա ի քո։ Այսրէհ և ասէ՝ թէ աստանօր բառքդ վայօրինեսն և օրինէ զնոսա նշանակեն, այսինքն զպատուիրանս՝ զորս ետ ած յորդիսն իսրայէլի. և ի վախձան աւուրց եկեալ լցոյց և հաստատեաց որդին այ. զի ոչ եկն ի լուծանել զայնս, այլ ի լնուլ. ոչ մարմին լնուլ զստուերս. և պատուիրեաց և աշակերտաց իւրոց ցուցանել զայն որդւոց յորդիս. ուստի յաւէտ զկնի և ասէ։

Որպէս դնեցիք պատուիրեաց հարցն մերոց, ցուցանել զայս որդւոց էրբեանց. զի ծանիցեն յաւէտ յայլ։ Այսինքն զորս միանգամ պատուիրեաց ած հարցն մերոց եթէ ինքնին և եթէ ի ձեռն մովսէսի և և եթէ ի ձեռն առաքելոց՝ զայն ամենայն հրամայեաց ցուցանել որդւոց իւրեանց. զի նոքա և ի միտ առնուցուն, և պատուհասցեն յետագայից, այսինքն թէ առնուն իւրեանց, զորս կոչէ ազգ այլ. զի ոչ էին ազգք այնը ժամանակի՝ յորում էին հարք նոցա, այլ ազգք ապագայ ժամանակի, ըստ որոյ այլ կոչէ զնոսա. որպէս և որդիք նոցին ազգք այլոյ ժամանակի. զորոց խօսի ի յաջորդ համարն ասելով։

է. Որդիք որ ծնանին՝ յարիցեն և պատմեսցեն զայս որդւոց էրբեանց. զի դիցեն առ ած յոյս էրբեանց. և մի ոտնասցեն զգործս ած։

Այս բան է իբր կրկնումն նախընթացին, յաւելուլով և զպատճառ այնր յաւելն։

Որդիք որ ծնանին՝ յարիցեն և պատմեսցեն զայս որդւոց էրբեանց և այլն։ Կամի ասել. ի պատմել հարց որդւոց իւրեանց զօրինաս այ՝ որդիք նոցա և պատմեսցեն որդւոց իւրեանց՝ որք ծնանելով ի նոցանէ՝ յարիցեն ի տեղի նոցա՝ այսինքն յաջորդ լինցին նմ. և ինքեանք և պատմեսցեն որդւոց իւրեանց։ Յակ թէ ընդէր

ձամն ՝ն ծ , և ձամ զՀՆԷ զ իսէ՝ զի պատմեսցին օրէնք
իւր որդւոց յորդիս՝ տայ զպատճառն ասելով՝

Ո ՚ի գիշեր առ ՝ն ծ ղայս խոսեաց . և ՚ի մոռացին զգործս
ՀՆ՝ ՚ձամ ասէ . ՚ի պատմել իսրայէլացւոց որդւոց յոր-
դիս զօրինս ՀՆ՝ և զգործս նորա՝ ոչ ևս լինի նոցա
մոռանալ զայնս՝ ոչ ինքեանց և ոչ որդւոց նոցա , այլ
առաջի աչաց ունելով գնասին՝ զայս իւրեանց գնել
յայն՝ որ ետ զօրինսն , և ՚ի յիշել զեթե անօսաց , կի՛
՚ի հմայութիւնս յիմարականս . և հանապազ զՀՆԷ լի-
նել կատարելոյ զնոյն օրինսն . և առ այս յարէ ՝

ՇԸ. Ո պատուիրանս նորա խնդրելով խնդրեսջեն . և ՚ի ե-
ղիցին՝ օրէնս և հարց խոսեանց ,

խնդրել զպատուիրանս կրկին մտօք կարի խմայեաւ
լինիլ . մի՝ ՚ի գտանել կի՛ ՚ի գիտել . և մի և ս ՚ի պա-
հել ՚ի պատանսը թէպէտ և ՇԸ երկրորդի գնի . բայց
ՇԸ երկուց և հնար է իմմանալ , յասելն ,

Ո պատուիրանս նորա խնդրելով խնդրեսջեն . և ՚ի և այլն ,
՚ի յսինքն լսելով որդւոցն իսրայէլի ՚ի հարց իւրեանց
զպատուիրանս ՀՆ՝ յորդորեսցին քննել զնոսին . և
զՀՆԷ լեզին կատարել զայն ամենայն՝ որք պարտեն
կին ՚ի նոսին . որպիսի եղեն եղելիա արքայ և յովսիա .
(ՇԸ . ՃԱՑ . ԼՀ . 3 ։) Ասէր զօրուՇԸ իմն կամ չայտ առ-
նել մարգարէն , Թէ զեան այսր պատճառի նաև ես
կամիմ պատմել ձեզ զգործս ՀՆ՝ , զի և դուք պատմես
ջինք զնոյն որդւոց ձերոց . ոմն զի և նոքա խնդրեսցին
զպատուիրանս ՀՆ՝ . և նոքիմքք որք հինն են՝ խնդրես-
ցեն գտանել զնոսին . և մի նմանեսցին հարց իւրեանց՝
այսինքն նահանի ժողովրդեանն իսրայէլի , որք Թէ-
պէտ և աչօք տեսին զգործսն էլիայի ՀՆ՝ , և զտուչսն Ծ
օրինաց նէր , բայց կի՛ ոչ պահէցին զայնս , և կի՛ ակա-
մայ քննադատեալ ՚ի պատժոց՝ ստիպեցան պահել .
ոչ զի այն օրինք չէին բարի , այլ զի ինքեանք եղեն
չարք . վասն որոյ յարէ զՀՆի , և ասէ ՝

ՇԸ . Ո ղէ լար ի դառնացոյ . ազի որ ոչ ուղեցոյ ղերթ
էոր . և ոչ հասոպեցոյ առ ՝ն զնոքէ էոր ՝

Ո ՚ստ ակամն մարգարէն նկարագրել զորպիսութիւն
ՇարուՇԸ ազգին իսրայէլի . և առ աստկացուցանել

լոյ զայն՝ առաջի մնառացանէ՛ի յաջորդ բանին զմեծամեծ երախտիսն այդ, և և զպատիժս. և ցուցանէ՝ Թէ սրբոյ ինչ արար ՚ած առ նոսա, և նոքա սրբոյ չար գտան ՚ի նոսա: Այս զայս յայն սակս յառաջ բերէ մարգարէն, զի այսու խնամանասցին որդիքն նոցա, և զգուշասցին ոչ ևս գնալ ըստ գնացից նոցին. վասն որոյ և յանխնայ դատապետեալ զնոսա ասէ:

Ի՝ նախընթաց համարն կոչեաց մարգարէն զձա՝ որ դի մարդոյ. իսկ ասա կուէ զնա այր, և զարձեալ ևս որդի մարդոյ, երկոքին ևս՝ի նոյն անձն կային, այսինքն՝ի քս. զի խոսի ասա զնմանէ՝ ըստ որում էր այր, կի՛ ըստ որում էր մարդ. և քանզի ըստ որում էր այր կի՛ մարդ այնու էր որդի մարդոյ. վասն որոյ ասէ։

Ա՝նէնէ յեան ես՝ ի վերոյ ասեն, ազ ես՝ ի վերոյ որդոյ մարդոյ։ Զէեան ոչ կամ աչ նորա լուրեքին ասի լինել՝ի վերոյ որդւոյ մարդոյ, այսինքն՝ի վերոյ քն. մի՝ ըս կատարման խորհրդոյն, իբր զի ձեռն ամենակալի, կամ աչ նորա, այսինքն ամենակարողութի՛ նորա կա՛ տարեաց զայս խորհուրդ. այս է, ասաւ՝ զի սը էր որդի ոչ՝ էզև որդի մարդոյ կամ այր. քանզի՝ի յղա՛ նումն անդ՝ զօրութի՛ հոր բարձրելոյ այսինքն ամենա՛ կարողութի՛ն որ և է հասարակ երից անձանց՝ հովա՛ նի եզև կուսին. ըս որում սքանչելի ինն եզանակաւ գործեաց յօրովայնի նորա գյղելի որդւոյն. ըս այսմ մտածելով խնդրէ մարգարէն՝ զի կատարմամբ այսր խորհրդոյ գործման տանիցի ած ազգի մարդկան իբրև ասպանձեալ այգւոյ։

Ա՝րկրորդ՝ ըստ գեբագոյն նախախնամութե՛, ըս որում

ձեռն ՚ի յամենայնի և յամենայն վայրկենի ՚ի վերայ նորա էր. ուր պարտ է զգուշանալ, զի այսու ոչ իմացեալ լինի՝ թէ նա իբրև սոսկ մարդ հասարակ նա, խախտմունքեր նախախնամեալ լինէր ՚ի նմա. այլ թէ նա՝ որ էր ած և մարդ՝ նախախնամեալ լինէր իբրև մարդ. Եւ զդի քանզի այն նախախնամեալ կարգեալ լինէր ՚ի փրկութիւն ազգի մարդկան, ՚ի խնդրել մարգաթէին զայն՝ նովին խնդրէր և զայս. Երրորդ՝ ըստ յարուցանելոյ ՚ի մեռելոց. յոր միտ այս բան դնի իբրև գուշակութիւն յարութեանն քոյ. և ըստ այսմ ասէմք զայս առն տաղտնի ՚ի մեսեդիս յարութիւն Հոգւոյն.

Ողորմի՝ ըստ հաճելոյ ըստ ազատութիւն, և ըստ պաշտպանելն, և ընդ առաջնորդութիւն՝ զոր ցուցանելոյ էր քոյ. և յայս միտ կամի ասել. Հաճեացիս ձեռն ՚ի գործ առնել առ ՚ի ազատել քոխ զազգ մարդկան, և պաշտպանել զնոսա, և առաջնորդել յերկիրն բարի՝ այսինքն յերկինս. քանզի յայս կարգեալ էր զնա՝ յոր միտ յարէ զկնի, և ասէ.

Օ Հր զրջոյնէր ըն ՚ի ինդ. Յայնքան հաստատեցեր զնա ինքն զորդին զօրութեամբ քով լինիլ առաջնորդ փրկութեանդ այգւոյն՝ զոր անկեցեր, և ընդ ատաւոր նոցա խարյէլ՝ զոր ընտրեցեր. Ոսկ թէ ընդէր զնացուցանել զնէ՝ ծանիր, զի որովհետև այս գործ զոր արար քո՝ էր մեծ յոյժ, որով վանեալ էգնէ զօրութեանն սատանայի, և խորտակեցաւ բանտանքեն մահու, մարդկօրէն խօսելով՝ պատշաճ երևէր զնէ զօրացուցանել, որով նշանակի աստ՝ զօրաւոր առնել յոյսն՝ կամ ամենազօր և ամենայաղթ հաստել, կամ իշխան և ընդատաւոր կացուցանել զՀոգւոյ զօրութիւն.

Ամէն՚ աղով խնդանոյ աստ գնախախնամեալսն զօրութեանն ՚ի, և որդւով մարդոյ ըստ յարմարական մեկնութեանն խնդանոյ զորդիս մարդկան՝ ըստ որում են յերկեցուցին քոխ. և զրէ այսպէս. * Նայեաց յորդիս ,, մարդկան զորս ՚ի քէզ զօրացուցեր... ՚ի բարբառս ,, քո զօրացան Հարք մեր (առաքեալք և հետեւողք ,, նոցա), և արհապէս մարտուցեալ թշնամւոյն յաղ- ,, թեցին. իսկ մեք որդիք նոցին տիարացաք. սակս ,, որոյ այրեցաք և աւարեցաք. զի քնչէցաւ Հայրենի

,, բաբելաբդութեն. արդ Հայեաց ի ձեռատունկս.
,, և եղիցի դարձեալ ձեռն քո ի վերայ առն, աջ քո
,, ի վերայ որդւոյ մարդոյ. այսինքն նոսիանմանա-
,, թեղ զօրութեն ի վերայ երկրաւորս եկեղեցւոյ.
,, և զտկարացեալքս յառաջին զօրութենէն դարձեալ
,, զօրացուացես մշտեալ ընդդէմ թշնամեացն ի քեզ
,, խրախուսելոյն ||։

Այս սմին խմանալ և մեծին խոսրով. զի ի մեկնելն զնա ժամագրեին՝ ուր ասի * պարսպեալ պահեցից ||, ևն. գրէ այսպէս. * եղիցի ձեռն (պաշտպանութեն) ,, քո ի վերայ առն (արդարոյ). աջ քո ի վերայ որդ-
,, ւոյ մարդոյ. այս է զոր բան աղօթիցս խնդրէ պա-
,, րսպել և պահպանութեն ||։

Այսպս Հայելով և գրէիս որ նաբէ կացի ի բան գովես-տից կուսին (ի ղլ.) առ նա ինչն առ կոյսն մերձե-ցուցանէ զսոյն. և խոսելով առ նա ասէ. * առ որ ի ,, լուսին աւարտման մարգարէական կտակն հաստա-
,, նելոյ՝ այն զոր ասէ՝ եղիցի ի վերայ առն ձեռն քո
,, և աջ քո ի վերայ որդւոյ ի քեզ իրախուսելոյ։
,, Աջ և կարողութեն և բազուկն Հօր միաժինն ի
,, քեզ Հանգուցեալ, և զանհնայն որդիս մարդկան
,, վկայս և երկրպագուս իւր զօրացուցեալ ||. կամի ասել. միաժին Հօր՝ որ է աջ և կարողութեն և բա-զուկ Հօր՝ էին առ քեզ և Հանգեաւ ի քեզ, և ծնա-նելով ի քէն եղև իշխող ի վերայ որդւոց մարդկան՝ այնու զի փրկեաց և զօրացոյց զնոսա լինել իւր վը-կայս և երկրպագուս. և այսու լցեալ եղև մարգա-բանութենն այն Թէ եղիցի ձեռն քո ի վերայ առն, ևն. որում կամի հետևեցուցանել նաբեկացին, Թէ քե եղև այսպիսի պարգև որդւոց մարդկան։ Այս-միտս առնուն և այլք բազումք զայս բան։

Ա արգան յայլ իմն միտս տարածէ, և ասէ՝ Թէ տովին խնդրէ մարգարէն զի ձեռն ոյ լիցի ի վերայ դաւ-Թի ըստ խոստանալոյ իւրոյ, Թէ ձեռն իմ ընկալցի զնա. և աջ նորա լինիցի ի վերայ զօրաբաղէլի, զոր-մէ ասաց ՅՈՎ, կալայ զաջոյ ձեռանէ նորա։ Վկար-ձեալ գրէ՝ Թէ ձեռն ոյ եղև ի վերայ առաջինն ա-դամոյ, ըստ որում ձեռամբ իւրով արար զնա. իսկ աջ նորա ի վերայ երկրորդին ադամայ ի լուսին ա-

մեռանիմ ։ Այլ թէ ի կատարիլ այսր գինւոյ բարի լե-
նէր մարդոյ , զայնմանէ խոսի մարգարէն ի յաջըդ
Համարն , ասելով ։

Ժ՚. Ալ Եւս ՚ի բաղեայ եղէցուս մեր ՚ի օձն . կեղծաւորեցո-
դաս զինք . և զնեռան ոտ ոչ եդին ։

Այս էր ահա վախճան , կամ դիտաւորութիւն ընթա-
ցից սաղմոսիս , այսինքն և ազատելով մարդկան ՚ի
գերութիւն ՚ի ձեռն որդւոյ մարդոյ մերձենալ առ նոսա
և ինալ ընդ նմա առանց մեկնելոյ ՚ի նմանէ . ՚ի սոյն
ակնարկելով մարգարէին՝ ասէ ։

Ալ Եւս ՚ի բաղեայ եղէցուս մեր ՚ի օձն ։ Կամի ասել . Հան-
միտգամ զմեզ ՚ի թշնաւառութիւն աստի , և մերձեցո
զմեզ առ քեզ . և մեք խոստանամք՝ զի ոչ ևս խոտո-
րեսցուք ՚ի պատուիրանաց քոց , և ոչ իւիք հեռասա-
ցուք ՚ի քէն . և որպէս թէ ազատութիւն որդւոյ քո տեւէ
միշտ , մեր հպատակութիւն ևս տեւեսցէ միշտ . իբր նոյն
ինքեանցուք ՚ի հաճոյս քո . և այնուհետեւ դու միայն լի-
ցիս կեղծողիչ մեր . և առ այս յարէ ։

Կեղծողեաց դոս զնէք . և զնեռան ոտ զեր եդիցուս ։
Այսինքն յետ ազատելոյ քոյ զմեզ ՚ի թշնաւառութենէ
մերմէ՝ յոմ վտանգս մեր դու միայն լիցիս պաշտպան
մեր առ ՚ի կեղծցանել զմեզ . զի ոչ ևս ապատխոսցուք
առ այլ ոք , այլ միայն առ քեզ , և զանուն քո միայն
յօդնութիւն կարդասցուք մեզ ։

Չայս բան բայդ ոչ ՚ի բաղեայ լինել՝ ցուցանի և զանբա-
ժանելի միաւորիլն մեր ընդ որդւոյն այլ . զի ՚ի միաւո-
րիլ մարդկային բնութենէ անբաժանելի ընդ բնութեան
որդւոյն այլ իրապէս , մեք ևս համարիմք միաւորեալ
ընդ նմա բարեյաջող . որպէս և ամէն ունիմք՝ ընդ որպէս
յարեաւ նա կենդանի , նոյնպէս և զմեզ կեղծացոյ
յարուցիչ իրրև զիւր մարմին ։ Օ այս ամենայն եդեալ
մարգարէին , թէ սահմանելով ազգն զնոճ կատարել զոր
միանգամ խնդրեաց յայտնի սաղմոսի . ամէն իբր յարե-
՚ի վերջոյ , և ասէ ։

Ժ՚. Ալ Եւս ՚ի բաղեայ եղէցուս մեր ՚ի օձն . կեղծաւորեցո-
դաս զինք . և զնեռան ոտ ոչ եդին ։

Օ այս բան ՚ի վերջոյ եւս եդ երկեցս և լսելիցս . խոկ
մեռանիմ ։ Այլ թէ ի կատարիլ այսր գինւոյ բարի լե-
նէր մարդոյ , զայնմանէ խոսի մարգարէն ՚ի յաջըդ
Համարն , ասելով ։

այսպիսի յաձախ կրկնուժիւն յայտ առնէ թէ նպատակ իւր այն է զոր կրկնէ, և զոր կրկնելով խնդրէ. նա և զի սաստկութիւնն փափաքանացն ոչ թոյլ տայր միանդամ առաջի դնելով վերջ տալ բանիցն, այլ բազում անգամ կրկնել. յայս սակս հնդապատակէ և ասէ՝

Ա՛ՀԱ ԶՕՐՈՒԵԷՑ ԴԱՒԻԹ ԱՂԵՒ. ԵՐՒԵՑՒ ԱՂԵՐԵՍ ՏՈ՛Է ՌԵՒ Ի ՀԵՑՅՈՒՏ։ Ա՛յսինքն, դու որ առենազօրդ ես, քոյով զօրութեդ ազատեա զմեզ, ցուցանելով՝ ի մեզ զքաղցր դէմս քո, զի կենդանասցուք ընտրհօք աստ. և կեցցուք ի հանդերձեալ կեանս փառօք յաւիտեան։

ՍԱՂՄՈՍ. Զ։

Յորդոր խրախուսանաց առ ժողովուրդս՝ ցնծութիւն ծրնդել զնծ ի տօնս տարեկանաց, ի մէջ բերելով ի բերանոյ ոմն զանցս եւլեցն յեգիպտոսէ. որոյ ի վկայութիւն եդան այն տօնք. առաջի դնելով միանգամայն և զառատաբախտութիւնն որդւոցն իսրայէլի մինչև բարձի Թողն առել ոմն զնացանէ։

ՎԱ՛Յ ՀԱՊԱՐԱՇ. վասն հնչմանացն. սաղմոս յաւաք. հինգերորդ շաբաթուան։

1 (ՆՃԱՑԵ՛Ք առ ԱՅՃ, օգնականք ե մեր. աղաղակեցե՛ք առ ԱՅՃ յակովբայ։ 2 Ա՛ռէ՛ք սաղմոս, և տո՛ւ օրհնութիւն. սաղմո՛ս ասացէ՛ք նմա ի ձայն ցաղցրութիւն։ 3 (Ի)ո՛ղ հարէ՛ք ի գլուխս ամսոյ. յաւուր նշանաւորի տաղնաւորի մերոյ։ 4 Վրա-նանն ե այս իսրայէլի, և իրաւունք են ՅԱՅ յակովբայ։ 5 Ի հայութիւն յովսեփո՝ սոյն եդ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ։ 6 ի բաց արար ի բեռանէ ուսոյ նորա. և ձեռա նորա յորմէ՛ ի ընդ ծառայէր։ 7 ի նեղութեանդ կարդացեր առիր՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ ի գաղտնութեանէ մրրկին, և փորձեցի զքեզ ի վէրայ Ջուրցն հակառակութեանն։ 8 Լո՛ր ժողովուրդ իմ՝ և վկայեմ քեզ, և իսրայէլ՝ ընդ լուելոս ինձ։ 9 Մի՛ իցէ ոք ի քեզ աստուածն ա-

աստուածդ աստիճանդ. և մի երկիր պագանիցես դու աստուածոյ օտարի: 10 [և] զի եմ տէր աստուած քո՝ որ հանի զքեզ յերկրէն եգիպտացւոց. բաց զքեզ զերծ առնել չէ: 11 [Խոշտանգեսցէ] եմ ուխտ լուսոյ յաւիտենից, և երկայնել չիս ինչ ուխտ նայեցս: 12 [Խաղայ] ընդէր պնուսա երկար կեալ ցհետս հայոյ սրտից երկրի. զի գնասցին նուագս բաց հասա անյանդ երեսից: 13 [Ո]չ ըն ձեռ ընդ ընկերի ստել հասա անյանդ երեսից, հաս երկայնել պճանապարհս եմ գնասցեալ էր: 14 [Ելոյս պրկիլ խոնարհ արարեալ էր եմ պրկիլ ինչ, յ երկիր նեղչիսց նեղ արկեալ էր պյեսն եմ: 15 [Ո]չ նչ ստեղծին նոմա, և երկիցին ձեռագործքն նոցա յայշխարհի: 16 [Երեսիցեսց պնուսա յ պարարտութիւն ցրկինս, և յ վերս երկրի յոտս նոսա:

ԱՂՕՐԿՈՒԹԻՒՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ:

Խաղ վն հնձանաց մարթ է ասել, թէ այդ դնի յորհնեալ շուծն եզանակի, իբր թէ այս սաղմոս երդելի է այնու եզանակաւ, որով եզանակին երգք յաւուրս հնձանաց, այսինքն յաւուրս կճոց՝ ի հնձանահարուճ խաղողոյ:

Յաւուր վերնոյ երկրորդի

Հատուածդ՝ հինգերորդ շաբաթու՝ ոչ դնի՝ ի տապազրեալ սաղմոս, և ոչ՝ ի լամբ", և ոչ իակ՝ ի սաղմոս եբրայեցւոց և քաղդէացւոց, այս և ոչ՝ ի հասարակ օրինակս յունաց և լատինացւոց: Այլ սակայն տեսանեմք զայդ գրեթէ յամենայն ձեռագիրս մեր, և այս և՝ ի հին սաղմոս մինչ լատինացւոց, և՝ ի սաղմոն հռովմէական, և՝ ի քանի մի նախնի մեկնիչս, և՝ ի վարդանայն:

Իսկ պատճառ յաւելլոյ զայդ՝ այն է, զի զայս սաղմոս յաւուր հինգշաբաթու երգէին և երգեն ցարդ եբրայեցիք: Ուստի յաւելուն՝ թէ այս սաղմոս յայնմ ամի էր ասացեալ, յորում գլուխ տարեկան տօնից պատահեցաւ յաւուր հինգշաբաթու:

Իսկ վն հնձանաց մարթ է ասել, թէ այդ դնի յորհնեալ շուծն եզանակի, իբր թէ այս սաղմոս երդելի է այնու եզանակաւ, որով եզանակին երգք յաւուրս հնձանաց, այսինքն յաւուրս կճոց՝ ի հնձանահարուճ խաղողոյ:

Հնար է և սակ թէ այսու նշանակի տեսակ մի նուա-
գարանաց ։ Լ. զայսմանէ տես ի նեռան . գլ . Ծ .
և ի սաղ . ՃԵրբ" ոչ դնի բառս սաղմոս , այլ միայն
* ի կատարած վասն հնձանաց յատուկ ։

Իսկ թէ երբ իցէ սասցեալ այս սաղմոս , և առ ինչ ,
այլև այլ կարծիք են . ոմանք ասեն՝ թէ զայս յօրի-
նեաց սաակ ամն յետ ազատելոյ ի գերութենէն բաբե-
լացւոց իբրև շնորհակալուի առ Աստուած ։ Ոմանք և թէ
զայս ասաց դաւիթ ի վերաբերելն զտապանակ նո-
յեանսադէմ. կիմ ՃՀ վարդանայ , յորժամ տապանակն
էր ի տեղի հնձանացն երուսաղէմ ։

Բայց հաւանական կարծիք է այն՝ զոր հաստատեն
այլք՝ թէ զայս ասաց դաւիթ վասն տանից , այսինքն
վասն երգելոյ զևւտացւոց զայն ի սկիզբն ամսոց և ի
դուխս տանից տաւրոյ , շնորհակալութեան մատուցանե-
լով առ Աստ յաղագս բարերարութեանց նորին , յիշելով
միանգամայն և զապերախտութեն որդւոցն իսրայէլի ։

ԲՆԴՆ

ա. Ցնծացէք առ Աստ , օգնական է մեր . աղաղակեցէք առ
Աստ յակոբեայ ։

բ. Առէք սաղմոս և տուէք օրհնութիւն . սաղմոս ասացէք
նմա ի յայն հաղորդութենէ ։

ՄԵՆՈՒԹԻՆ

Բառս ցնծալ՝ հայելով յերբ" դնի աստ փոխանակ
ցնծութեան օրհնելոյ զնա , կիմ փոխանակ ցնծալից եր-
գելոյ զերգս սաղմոսաց առ նա . իսկ այս ցնծութեն
պատճառի յերկուց . մի՝ ի ճանաչմանէ կատարելու-
թեացն ոյ . իբր զի ի ճանաչել մարդոյ՝ թէ քանի մեծ
է նա , քանի բարի է , քանի քաղցր է , քանի իմաս-
տուն է , քանի գեղեցիկ է , քանի հզօր է նա , յարի
ի նա սիրով երբեմն յիւր ծայրագոյն բարի՝ և երբեմն ի
մի միայն իւր ցանկալի ժառանգութեն . յորմէ ծնանի
ի հոգին բերկրութեն մեծ , և յայսմ բերկրութենէ զե-

ղու. արտաքս ցնծալից օրհնութիւն, որ է ցնծութիւն սրտի օրհնել զնա։

Յերկրորդ՝ պատճառ այս ի ձանապհանէ բարեբարութեանցն այ. իբր զի ի ձանապհել մարդոյ՝ թէ քանի մեծամեծ բարիս արար ինքեան նա՝ ուրախանայ ընդ այս, և յայնմանէ ցնծութիւն բերի առ նա՝ դոհանալ զնմանէ։ Յաջինն հայի յնա՝ զի է բարի։ Երկրորդն հայի յնա՝ զի է բարերար։ Յայսսկիսի օրհնութիւն և դոհութիւն յորդորելով մարգարէին զժողովուրդն այ, մնուաւանդ զղևաացիս՝ ասէ։

Ցնծացէ՛ս առ ա՛ծ, օփնական է մեր։ Կամի ասել. դուք ով ժողովուրդք ընտրեալք և պատուեալք՝ որք ձանապհէք զնա յամենայնի ամենակալ և ամենաբարի, և ս գիտէք զնս լինել օգնական մեր յամենայնի և բարերար, օրհնեցի՛ք զնս ցնծութիւն և ուրախութիւն. և մատուցի՛ք նմա գոհաբանութիւն յամենայն սրտէ։ Յե թէպէտ կարէր մարգարէն փոխանակ ասելոյ ցնծացի՛ք՝ դնել օրհնեցի՛ք, որպէս դնի այլուր, բայց հայեցեալ յընդունելութիւն օրհնութենն՝ դնի ցնծացի՛ք. որով խրախուսել կատարել զայս օրհնուի զուարճութիւն և լիութիւն սրտի, առ ի հաձոյ լինելոյ այ. որովհետև * զուարթ զուարթասաս սիրէ նա ։ (՞ր. կորն. ի. 7.) յոր միա ասէր և սիրաբ. (ՀՀ. 11.) * յամենայն տուրս քո զուարթացո զերեսս քո, և ,, ցնծութիւն սրբեա՛ զտասանորդս քո ։ Յորդ ևթէ սոսկ տուրք զուարթութիւն ընծայեալք սիրելի են նմա, քանի և օրհնութիւնք ցնծութիւն մատուցեալք առ նա։ Յսակ յայսմանէ ցուցանի ընդ հակառակն՝ թէ քանի անհաձոյ իցէ նմա օրհնութիւն գաղջութիւն մատուցեալ առ նա, մնուաւանդ ի բերանոյ այնոցիկ՝ որք պարտական են օրհնել զնա։ Յսպսիսեաց օրհնութիւն և ոչ նոցա թուի հաձոյ յորոց մատուցանի, զիարդ ապա այնմ՝ որում մատուցանի։

Լսմբ" զցնծալն առնու ասա պարզապէս փոխանակ ուրախանալոյ. զայն որոյ ասէ. հրամայիմք այսու՝ ուրախս լինել * ոչ յանձինս, այլ յնա՛ծ ։ և ի նա զօրաշնալ և քաջալերիլ, գիաելով զնս մեզ օգնական։

Յստանօր ի յաւելուլ մարգարէին զբառդ օգնական՝ ցուցանէ թէ պատճառ յորդորելոյ նորա զժողովուրդն

յորհնութիւն՝ ի օգնական լինելոյն. և այս թէ պէտ չնմարիտ է, բայց երկրորդաբար մտածելով. որպէս թէ եդեալ էր. մաստուցէք օրհնութիւն առաջ. նախ զի նա միայն է արժանի օրհնութեան. երկրորդ՝ զի և մեք պարտական եմք օրհնելոյ՝ որովհետև յա մենայնի օգնական է մեր և վերադարձու՝ ի նեղութիւն։ Ա.յժ առ ազդու առնելոյ մարդարէին զզօրեալ այսր օրհնութիւն՝ յաւելու և զաղաղակելն ասելով։

Ա.ղաղակեցէ՛ք առ աջ յոհան։ Ա.յսինքն մեծաձայն բարբառով և բարձրագոչ աղաղակաւ երգեցէ՛ք զօրհնութիւնս առ աջ։ Ա.յս աղաղակ ոչ է վասն լսելի առնելոյ այլ զօրհնութիւնն, այլ վասն յայտնի առնելոյ լսողաց զմեծութիւնն այլ և շարժելոյ զսիրտս նոցա. ևս և վասն յուցանելոյ առ աջ զմեծութիւնն ցնծութեան սրտի երգեցողաց։

Իսկ զնա կոչել աջ յակոբայ, է վասն որոշելոյ զնա ի սուտ աջոց, յուցանելով թէ այն աջ միայն էր չնմարիտ՝ զոր պատրեին սուտ յակոբայ. իսկ զորս պաշտեին հեթանոսք՝ սուտ էին. և որ ինչ երգք մատուցեալ լինէին առ նոսա, անարգք էին և սիրտ. որպէս և յայժմուս իսկ տեսանեմք։ Ա.րդ քանզի ի յորդորել մարգարէին և յասել, աղաղակեցէ՛ք առ աջ՝ ոչ եղոյց որոշակի՝ թէ զինչ էր այն աղաղակ, այժմ և զնոյն որոշէ, և յուցանէ լինել սաղմոս և օրհնութիւն. վասն որոյ ասէ։

Ա.ջակեցէ՛ք սաղմոս, և փա՛ռս օրհնութի՛ւն. սաղմոս ասացէ՛ն նմա՝ ի յայն տաղաչրո՛ւն։ Սաղմոսն է երգ հոգևոր՝ որ կարէ ըստ այլևայլ նիւթոյ յօրինիլ, և նմանապարանաւ՝ այսինքն բախողական նուագարանաւ երգիլ. մի՝ իբրև փառաբանութեան. երկրորդ՝ իբրև ընդունակալութեան. երրորդ՝ իբրև խնդրուած՝ զոմանէ լոյս զաւրէ. հինգերորդ՝ իբրև յորդոր ևն։ Իսկ օրհնութիւնն ի երգ բաթելանելոյ զնա։ Ա.րդ յորդորէ մարգարէն՝ ոչ միայն սաղմոս ասել, այլև օրհնութիւն յաւելուլ. վասն որոյ ասէ։

Ա.ջակեցէ՛ք սաղմոս և փա՛ռս օրհնութի՛ւն։ Ա.յսինքն երգեցէ՛ք առ աջ զերգս սաղմոսաց, և առաւել ևս զերգս օրհնութեան. վասն սաղմոս ասելոյն գնէ առ՝ի. իսկ վասն օրհնութի՛ւն ասէ փա՛ռս։ Այս թէպէտ այսոքիկ ըստ նա-

բազբին զնոյն նշանակեն, բայց բարձրասլիս մտածեալ՝ վասն երից դնին. մի՝ վասն գերազանցելոյ միոյն քան զմիւսն. եթէ զի սրովէ՛տաւ օրհնութիւնն կարգի միայն՝ ի փառաբանութիւն ՅՍ. իսկ սաղմոսն ըստ նախագրեալ բանիցդ կարէ կարգիլ և ի չնորհակալութիւն երախտեաց՝ որ յօգուտ մեր հայի, վասն օրհնութիւնն գնէ տուէք զպսն ՅՍ. իսկ վասն սաղմոսին՝ առ՛ք.

Այրկորգ վասն բարւոք զգածելոյ մեր ի հոգևոր երգս. եթէ զի առեալ ի մեզ զբանս սաղմոսաց, նմ վիմիք լեցուք զգածելոք, և զայնս տացուք ՅՍ ցնծութիւ՛ եթէ երգև օրհնութիւ՛. օւստի ասի առնուլ զսաղմոս և տալ զօրհնութիւ՛.

Այրկորգ՝ վասն պատրաստական լինելոյ սաղմոսաց. եթէ զի սաղմոսք ոչ եթէ նորոգ յօրինին ի մէնջ, այլ ոչք յօրինեալք էն ի մարգարէից՝ առեալ լինին ի մէնջ. սակայն օրհնութիւ՛ք կամ բանք օրհնութեաց ի սրտի իւրաքանչիւր մարդոյ կարէն ելանել և առեալ լինել ՅՍ. վ՛ս որոյ ասէ առ՛ք սաղմոս, և տո՛ւք օրհնութիւ՛. որոյ ոչ առիկիմք նորանոր օրհնութիւ՛ս յօրինել, այլ ՚ս առեալ մեր այժմ առնուս զսաղմոս մերգարէից, և մատուցանել զայնս նորոգ առ՛ս առ ՅՍ եթէ երգև օրհնութիւն. Այմ առնուլ զսաղմոս ի հնոյն եթէ յարմարոյ. և տալ ի նորոգ զօրհնութիւ՛ եթէ զպտուղ. Այ՛սոցի՝ ըստ նախագրելն զնոյն նշանակել. զի առնուն զսաղմոս՝ և սաղմոսել. նոյնպէս և տալ զօրհնութիւ՛ և օրհնել. ուսոի երկոքին բառգ ևս առնուլ և փա՛ զնոյն զօրութիւն ունին ի յարիլն ի բառս սաղմոս և օրհնութիւ՛. Այ՛լ թէ սրպէս պարտ էր երգել զսոսին՝ յայս առնել յաջորգ բանիւն ասե՛լով՝

Սաղմոս ասացէ՛ք նմա ի ձայն հաղորդութիւ՛. Օ՛ր ասացն՝ առ՛ք սաղմոս և տո՛ւք օրհնութիւ՛, զնոյն յայտնի բանիւս սաղմոս ասէ. և յաւելու զնդանակ ասելոյն լինել ի ձայն քաղցրութիւ՛. Իսկ այս քաղցրութիւ՛ ըստ երից իմացեալ լինի. մի՝ ըստ բնական ձայնի. որով կամ ասել, թէ որ սաղմոսք ի տաճարի՛ պարտի ուղիղ յարմարութիւ՛ ձայնի ի սաղմոսել. ոչ զի լսողք զգածեսցին ի հոգևորս, ի սէր աթաքչին, ի բերկրութիւն հոգւոյ, ի փափաք յաւիտենական կենաց,

յարհամարհանքի երկրաւորաց, յատելութեան մեղաց, յասպաստութեան, ի գթասիրութեան, եւն. զի յայս իսկ հնարեցան եղանակք հոգեւոր երգոց ի տաճարի։

Այրերորդ՝ ըստ արհեստի, իբր զի սաղմոսք եւ այլ ն եւ իցեն հոգեւոր երգք արհեստիւ են նուագելի, եւ ներդաշնակութիւք ձայնից երգելի. ապա թէ ոչ՝ խառնաձայն իմն հնչելով՝ տարակացուցանեն զլսելիս, եւ գաղջացուցանեն զղիս։ Այլոյ այս արհեստ ոչ է լինելի ի համամատուէ բնութենէն միայն. իբր թէ իցէ միայն համաձայնութեան սիդղոսային, այլեւ ի համամատութեան ախորժման հոգւոյն. իբր զի ունիցի եւ համաձայնութեան ընդ ներքինն ախորժակս. մինչեւ որ լսիցէ զայն՝ զգաեցցի յինքեան. եւ ոչ թէ սոսկ բմբռնեսցէ դիամիմատութեան երևելոցն ձայնին, ապա թէ ոչ՝ անպատուէ լինի. եւ լսողն ոչ յաջողակի յայն՝ որ երգի, այլ յայն՝ որով երգի. այսինքն թէ ոչ յափըշտակի առ ածային բանն որ երգեալ լինի, եւ ոչ առ ածն, այլ առ եղանակն՝ որով երգեալ լինի այն։

Այրերորդ՝ ըստ գործեաց նուագարանաց, իբր զի սաղմոսք եւ օրհնութիւնք երգելի են երբեմն նաև նուագարանօք, որպիսի էր յառաջն ի հին ևկեղեցւոյ, այսինքն ի մէջ իսրայէլի. եւ եւ այժմ՝ ի նոր եկեղեցիս ըստ սովորութեանէ իւրաքանչիւր ազգի։

Խորհրդապէս, ի ձայն քաղցրութեանէ սաղմոսին նորա՝ որք հոգւով կան յաղօթս. յոր միտ մեկնեալ լամբ՚՚ զայս բան՝ ասէ. * մեղ՝ որք հոգևորն ուսեալ երգել ,, օրհնութիւն՝ փողք եւ քնարք են մտաւորական հոգւոյն ընդ զգալի ձայնին համաչնչութեան, որով օրհ ,, նեմք ոչ բերանով, այլ ի սիրտս մեր զնծ ։։

Ո այսոսիկ եղեալ հայելով յորոյ նշանակութեան քանից առաքինիկ քնաբանիդ. իսկ եթէ միտիցուք ի փոխաբերական միտս ըստ Հարտատանից, բառդ սաղմոս, օրհնութիւն եւ դաղջութիւն, դնին աստ փոխանութեամբ փոխանակ այնց նուագարանաց որովք նուագին սաղմոսք եւ օրհնութիք. և ըստ այսմ բառիս օրհնութիւն՝ նշանակի Թմբուկ օրհնութեան. և բառդ սաղմոս՝ յատկապէս Հատուածի դնի փոխանակ հոգևոր նուագի, և յերկրորդումն փոխանակ ձայն. սոյնպէս և բառիս դաղջութիւն՝ նշանակի տաքիդ. և այս յայտ

է յերբայականէն և յայլոց թարգմանութենէ. զորոց տես ի համեմատութիւնն, և և ի նեթած. գլ. ժ. Ամէն իրէ գրէ դաւիթ անյաղթ ի յառաջաբ. սաղմոսց. * միաբանութիւն զսաղմոսդ դաւթի իւրաքանչ,, իւրի՝ սաղմ ի նուագարանաք երգելիս. և զմի,, ութեան յորդորելով ասէին. առէք սաղմոս և տուք ,, թմբուկ. սաղմոսարան վայելուչ և քնար. և սաղ,, մոս ասացէք ձեր քնարաւ և փողովք կառաջիւք, և ,, ձայնիւս փողոյ եղջերու ... [1]դդ առ այդպիսի յո,, բինուած նուագարանաց ասէր դաւիթ, օրհնեցի՛ք ,, զնա հնչմամբ փողոյ և սաղմոսարանի և քնարաւ և ,, թմբկաւ, և պարու և աղեաք տաւղաց, և ծնծղայ,, իւք քաղցրաձայնիւք ||:

Արքիմեդ ոչ փոխի միտ քանի առաջի եդեալ բնաբանիս, այլ յայլ իմն աստիճան վերաաեալ բերի. որով յորդորիմք ի մարդաբարէն՝ առնուլ զաղտոսս, և տալ զայն ոչ ծնծղայիւք, քնարիւք և տաւղաք. զի ի հնչել մեր զայսոսիկ յականջս ոչ, նա ինքն քաղցրացի առ մեզ, և պարգևեսցէ մեզ զառատահոս օրհնութիւն հնորհաց իւրոց: Լաւ արդ քանզի ի մէջ նուագարանաց հանդիսաւոր իմն էր փողն, զայն եւս ի մասնաւորի ի մէջ բերէ մարգարէն՝ ի սահմանեալ ժամանակի հարկանել, յասէլ.

ՁԻ. Փող հարէք ի գլուխս ամսոյ. յառաջ նշանաւորի տեղեացդ ձերոց:

ՁԻ. Զբանն է այս խորհրդական. և էրատահեն ոչ այլ[1]ևս

Հրամայեաց ձեզ մխիթար հարկանել փող յաւուրս հանդիսի ծանից և ի ժամ զոհից փրկութեանն ողջակիզացդ. և մասնաւորապէս յամենագլուխս. (Թուոց. ժ. 10:) Զոյն հրամայեաց առնել և ի գլուխս քաղաքացն տալով յառաջնում աւուր Թշրին ամսոյ, որ է ամին ներկայ որ և առի օր քաւութեան: Այլ պէս և ի տօնս տաղաւարահարաց, որ կատարիւր ի ւ[2]ոցն Թշրին ամսոյ (զկատց" իէ. 24--36. և Թուոց. իէ. 1--12:) Այնպէս և յամին յոբելենի յամենայնն ներկայ որ և առի օր քաւութեան: (զկատ. իէ. 8--10:) Իսկ յոբելեանն

եր յիսուն ամ՝ Յայսմհետէ ակնարկելով մարգարէին՝ ասէ ։

Փող հարէք ի գլուխս ամսոյ . յատեալ նշանաւորի պարեհանդ հերոյ ։ Յայս բան՝ առաջին հատուածն այն է՝ * փող հարէք ի գլուխս ամսոյ ‖ , լուծի սիւնս քա- ցատրութեամբ . զի է յայտնի . քանզի կամ ասէ՝ փող հարէք յիւրաքանչիւր ամսագլուխս , այսինքն յառաջ- նում աւուր իւրաքանչիւր ամսոյ ըստ հրամայելոյն ոյ։ Եւկ յերկրորդ հատուածն հայելով՝ գիտելի է՝ զի բառդ պարեհան՝ որ յիշի աստ , դնի փոխանակ հանդի- սի , կամ փոխանակ հանդիսաւոր տօնի՝ որ կատարի ամ- բոխ ամ յորշեալ աւուրս և ի սահմանեալ ժա- մանակս . ուստի նոյն լինէր Թէ ասէր , յաւուրս նշա- նաւորի հանդիսաւորաց , այսինքն հանդիսաւոր տօնից մերոց , յոր միա (ա . մակ . է . 48 .) ասի . * արարին ,, զօրն զայն տարեկան մեծ ‖ . այսինքն հանդիսաւոր տօն (կատարելի յիւրաքանչիւր ամի։) Ըստ և յերր". և յայլս ստացուօր փոխանակ բառիս պարեհան՝ դնի հան- դէս այսինքն հանդիսաւոր տօն ։

Ընդ բոլոր այսմ այս երկրորդ հատուած լուրեքիկն յա- րի յառաջինն . մի՝ երբեմն բացատրութեամբ այնր՝ որպէս Թէ եղեալ էր . փող հարէք յառաջնում աւուր իւրա- քանչիւր ամսոյ՝ որ է օր նշանաւոր , այսինքն օր յայտ- նի նշանակեալ՝ ի մէջ հանդիսաւոր տօնից մերոց ։

Երկրորդ՝ հայելով յօր իւրաքանչիւր տօնից . որպէս Թէ եղեալ էր , փող հարէք յամենագլուխս ձեր , և յիւրաքանչիւր նշանաւոր աւուրս տօնից տարեկանաց , այսինքն յիւրաքանչիւր հանդիսաւոր աւուրս տօնից՝ որք կատարին ի մէջ ի տարւոջ ։

Երրորդ՝ հայելով ի տօն տարեմտի . որպէս Թէ ե- ղեալ էր , փող հարէք յամենագլուխս , և և յառաջ- նում աւուր Թշրին ամսոյ՝ որ է օր նշանաւոր և հըր- ճակաւոր ի մէջ տարեկան տօնից ։

Չորրորդ՝ հայելով ի տօն տարաւարաշարաց , որ կա- տարիւր ի հնգետասներորդ աւուր Թշրին ամսոյ , յորում աւուր կանդնելին երբայեցիք զտաղաւարս ի բոցի , և պատելին զայն ստուերք ծառոց և եղեգամբք , և և կտաւօք . և բնակելին ի նմա զաւուրս եօթն ի յիշատակ վրանաբնակութեան կամ բնակելոյ նոցա

յանապատին. և Հարկանէին ի նմա զիրօղս սպզե-
ցութիւն, որպէս առնեն և այժմ. և յայս միտ կամի
ասել, փող Հարեք ի գլուխս ամսոյ և ի տօնս տա-
ղաւարաց։

Ա. յս չորրորդ մեկնութիւն Համաձայն տեսանի երբայա-
կանին. և Թուի Թէ յայս և եւթ Հայի առաջիկայ բը-
նաբանդ. և ըստ այմ բառդ նշանաւոր՝ դնի փոխանակ
տաղաւարի, նշանակողի զտօնս տաբերկանաց. ըստ ո-
րում այն տաղաւար նշան էր տաղաւարացն անտապա-
ս. յոր միտ լերը" դնի պտեպ, այս է՝ ի ծածկութիւն,
այսինքն ի տաղաւարի։ Տես ի Համեմատութիւս։

Ի. մէզ Հինգ Թուին տօնը տաղաւարաց, ի յայտնու-
թիւն, ի զատկի, ի վարդավառի, յոռծանին, և ի
խաչի. ի տաղաւարել զմեզ և ի տաճարացուցանել
յընդունելութիւն ածոյին շնորՀաց, նախ յայտնութիւն
նոր, երկրորդ յառնելով ընդ նոր, երրորդ այսպէս-
պէսով ի լուսաւոր կեանս Հանդոյն նոր. չորրորդ՝ գը-
տանելով զարքեպատուութիւն մեր նոր. և Հինգերորդ՝ զո-
րանալով խաչիւ նոր։

Ա. ւլ ծորձորեցին (ի մեկն. մատ. գլ. ժէ.) Հայե-
լով յոր այլակերպութիւն նոր, յորում ասացաւ ի պետ
բոսն յօրինել երիս տաղաւարս, մի նոր, մի մովսէսի
և մի եղիայի, զերիս տաղաւարս Թուէ. և գրէ այս-
պէս. * տաղաւար զերիս խորհուրդս սուրբ ա-
,, ւանդութիւն պահելոյ. զմին յանուն նոր զծննդեանն.
,, և զմին ի մովսէսի՝ զաղատեցութիւն. և զմին յեղիայի՝
,, զայլակերպութիւնն ։։

Ա. զդ յայսմիսի աւուրս տաղաւարաց փող Հարկանէին
վասն քաղում իրաց երբ. մի՝ վասն յիշատակելոյ զայն
Հանդէս մեծ, որ եղև ի սինայ ի ձայն սաստիկ փո-
ղոյ։ Երկրորդ՝ վասն ազգ առնելոյ զօրն, և զպար-
տաւորութիւն կատարելոյ զայն ամենայն՝ որք սահմա-
նեալ էին վասն այնր աւուր։ Երս և վասն զգաստա-
նալոյ յանձինս ի պաշտամունս այ. նաև վասն զգու-
շանալոյ ի պղծութեց, և սրբութիւն անգուցանելոյ զօրն
զայն։ Երրորդ՝ վասն Հաշակելոյ զանունն այ, և Հան-
դիսաւոր կացուցանելոյ զօրհնութիւնս մեծաւորացն առ
նա։ Չորրորդ՝ վասն յայտ առնելոյ զօրախութիւնն իւ-
րեանց՝ զոր ունէին առ նմա՝ ի ցնծալ նոցա առ նա

ընորհակալութիւ՛ն ի՛ ձեռն սաղմոսաց և օրհնութեանց ։
Ինգերորդ՝ ըստ խորհրդոյն՝ վասն ազգ առնելոյ
ձայն յետին փողոյն՝ զոր հանդերձեալ էն հարկա-
նել հրեշտակք յաւուրն յետնում ։
Յայսոսիկ խորհուրդս վերածելով և նարեկացւոյն
ձայնարձակութի՛ժամնհաղ փայտի, և գերազանց
ցուցանելով քան զինչուան փողոց որ ի հնումն՝ վասն
նշանակ գոլոյ սորա աւետարանութեան նոր օրինաց՝
գրէ (՛ի բանն. ղէ։) այսպէս. * Յաճախեցաւ խորան
„ փայտս այս՝ նուիրեալ ընդ խայրն թևոց սլացեալ
„ զօրէ. ոչ ՛ի գլուխս ամսոցն, և կամ յեօթնիցս
„ եօթնեցորդս յորելինիցն յանկեան ուրբք խափան-
„ մամբ զօրէ. այլ ընդ ծագս տիեզերաց և ընդ ծիրս
„ եզերաց ՛ի ծոցս ջուրց բազմութե՛ ծովուց և կըզ-
„ զեաց նոցա յաճախ սաստկութի՛ անարգել ձայնի-
„ մամբ ինն ածայնով հնչեցեալ աւետարանէ ։ Յայս-
պիսիս և յայլ ազգի ազգի խորհուրդս ակնարկելով՝
պատուէր ետ Ծոդովրդեանն իսրայէլի հարկանել
զփողս՝ զոր և բազում անգամ հրամայեաց՝ առնել
զայն անխափան. վասն որոյ ասէ։
Արդեան է այս իսրայէլ. Ե իրաւունք են ՚ի յակո-
ինքն այս հարկանումն փողոյ հրամայեալ է առ իս-
րայէլացիս, և այս հրաման տուեալ է նոցա յՅՆ նո-
յա՝ իբրև իրաւունք, այսինքն իբրև անփոփոխ պա-
տուիրանք պահելի յորդւոց յորդիս՝ մինչև ՛ի լրումն
սահմանեալ ժամանակին. զի ձայնք այնց փողոց գո-
չէին առ այն ժամանակ, և զամենեսին յայն հրաւի-
րէին, այն է ժամանակին՝ յորում սկսան առաքեալքն
գոչեցուցանել զփող աւետարանին յաշխարհ ամենայն,
որով և խափանելի յուցան փողահարութի՛ իսրայէ-
լացւոց. առ որ հայելով ամենայն ասաց ՛ի գիմաց ՚ՅՆ.
* ատեցի մերժեցի զտօնս ձեր, և ՛ի տարեկանս ձեր
„ ոչ հոտոտեցայց. զի եթէ մատուցանիցէք զողջա-
„ կէզս և զպտղս ձեր, ոչ ընկալայց, և յերևելիս փրը-
„ կութե՛ ես ոչ հայեցայց. ՛ի քաց արա լինէին ձայն
„ երգոց քոց, և ինուագ սրնգոց քոց ես ո՛չ լուայց.
„ և յորդեսցին իբրև զջուր իրաւունք, և արդարու-
„ թի՛ իբրև զվէղեղ անհուն ։ (ամովս. Ե. 21--24։)
Ուր ասէ լսեմք". փոխանակ փողոցս այսոցիկ * ընտ-

,, քեաց ՝ած փողս իւր բանաւորս զվարդապետս եկե-
,, ղեցւոյ. որոց և ասէ. բարձրացայ իբրև զիպողս ըզ-
,, բարբառս քո աւետարանիւդ Երուսաղէմ. այս փո-
,, ղոցս հրամայէ մարգարէս յաւուրս նշանաւորս միւ-
,, թարէլ զժողովուրդս և հաստատել ՚ի հնոցէն քեռ,
,, ըստ որում առաք հրաման. քանզի հրաման է այս
,, քոի ՚ոյ մերոյ . . . որոյ վասն ասէր պօղոս. վայ ինձ՝
,, եթէ ոչ աւետարանեմ. քանզի մնառնսուէին յանձն
,, է ինձ ՚։ Ի՚այլ թէ ևրբ և զիարդ եգաւ այս հրա-
ման փողահարութեանէ ընդ այլ հրամանս ՚ոյ, յայտ առ-
նէ ՚ի յաջորդ համարն ասելով։

Է. Ա յսուհետև յուշեցէք՝ զրբ եր ընդ նմա. որպէս ելա-
նէր նա յերկրէն եգիպտացւոց. և ըստ զրբ ոչ ե-
կեալ էր ՚։

Ո՚ազգն երբայեցւոց՝ զրբ ՚ի նախընթաց համարն կո-
չեաց իսրայէլ և յակոբ՝ յանուն նահապետին յակո-
բայ, ասա անուանել յոսէափ. որպէս և ՚ի նախընթաց
տաղ. ՚ի համարն ։. և պատճառն է՝ զի գումարութիւն
ազգին այնորիկ էր յոգւոյն յակոբայ և յորդւոցն յոս-
եփայ. ուստի որպէս ՚ի մէջ երկոտասան ցեղից ոչ
գոյր որշ ցեղ յակոբայ, այլ ցեղ որդւոց նորա՝ յա-
նուանել նորա յակոբ կոչեցեալ, սոյնպէս և ոչ գոլով
՚ի նոսա որշ ցեղ յոսէափայ, այլ ցեղ որդւոց նորա՝
այսինքն եփրեմ և մանասէի՝ յանուն նորա կոչէին և
յոսէափ, և այս մանաւանդ յայնպիսի զրոյցս յորս ա-
ռաքէ նկարիւբ բան ՚ի վերայ եգիպտոսի, կամ էլք
յեգիպտոսէ, որպէս և ասա, ուր խօսի մարգարէն
զնոցից որդւոցն իսրայէլի յեգիպտոսէ. ըստ որում գը-
լուխ ազգին համարիւբ անդ յոսէափ։

Ո՚ոչ ոք ևս ՚ոյ կոչէ վկայութիւն. և այս ըստ երկուց
մտածի. մի՝ ՚ի կողմանէ ՚ոյ. զորմէ տէս ՚ի տաղ. ՀՀԲ.
՚ի սկզբան։ Իբրևորդ ՚ի կողմանէ իսրայէլացւոց՝ ըստ
յանձնառութեանէ և ըստ հաստատութեանէ։ Ի՚սա յանձնա-
ռութիւնէ, զի վկայութիւնք իւրեանց են և մտածեսք յանձն
առին զօրհնս ՚ոնն. յոր միտ ասաց ՚ած ցմովսէս. * է՚ք
,, դիր վկայութիւնք ՚ոյ ժողովրդեանն ՚։ և ժողովուրդն են
պատասխանի. * զամենայն ինչ զոր ասաց ՚ած արաս-
,, ցուք և լուիցուք ՚։ (ելից. ԺԹ. 8—10։) Ի՚սա հաս-

աստուածէ, զի նոքա և այնոքիւք օրինօք իբր հաստատուն վկայութիւն ձանաչէին թէ զինչ կամիցի ՚ած, և զինչ պարտին առնել. և յայսմ կողմանէ մեռածեալ՝ հրամանն հարկանելոյ զփողս, տիրապէս կոչի աստ՝ վկայութիւն. զի այն էր իբրև հրատարակութիւն օրինացս, կամ իբրև ձայն մեռնեւակի հնչեալ յամենայն տօնս նոցա, առ ՚ի վկայել նոցա՝ թէ ՚ած ինքնին տուեալ է նոցա զօրինս իւր. յայս միտ խօսելով ասէ։

Վկայութիւն յովսեփու՝ զոր եդ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն եգիպտացւոց։ Կամի ասել. այն հրամանն՝ զոր յիշեցի ՚ի վերոյ՝ է իբրև վկայութիւն ազգին յովսեփայ՝ այսինքն ազգին իսրայէլի. և զայս վկայութիւն եդ ՚ած ընդ ազգին ընդ այնմիկ յետ հանելոյ զազգն զայն յերկրէն եգիպտացւոց։

Այլ աստ տեսանի խրթնութիւն շարադրութեան՝ վասն յաւելլոյ զբառդ զոր, որ յաւելորդս դնի, որպէս և բառդ ընդ նմա ըստ ոմանց եբր՚. և բանն պարզի այսպէս. վկայութիւն եդ յովսեփու. իսկ եթէ չիցէ աւելորդ, մեկնի այսպէս. հրամանն այն զոր եդ ընդ նմա այսինքն ընդ իսրայէլի՝ է վկայութիւն յովսեփու, այսինքն այնոր ազգի որ կոչի և յովսէփ. և նոյն էր թէ ասէր. ՚ած իբրև վկայութիւն եդ յազգն իսրայէլի զհրամանն զայն։

Զմանք վկայութեամբ յովսեփու իմանան զայն՝ որով վկայեցին նմա որդիքն իսրայէլի՝ թէ յելանել իւրեանց յեգիպտոսէ հանցեն զոսկերս նորա անտի. զոր և արարինն իսկ։ Իսկ բառդ որպէս՝ դնի փոխանակ բառիս յորժամ. որպէս յայտ է յայլոց թարգմանութեանցն, և ա՛ ՚ի բնագրին եբր՚. իբրև թէ եգեալ էր. յորժամ ելանէր ազգն իսրայէլի յեգիպտոսէ, եդ ՚ած ընդ նմա վկայութիւն. քանզի ոչ յետ բազում աւուրց ելանելոյ նոցա յեգիպտոսէ՝ այն է յամենայնի երկրորդի՝ ետ ՚ած զօրինս իւր, ինքնին խօսելով առ նոսա ՚ի լեռնէն սինայ։ Այլ զի նոր լինի էր այս բառբառ, և անծանօթ առ ազգն այն, սմին իբրև յարէ զկնի և ասէ։

Ելէք զոր ոչ գիտէք՝ լուա։ Այս բան ըստ մեկնելոյ աբ՚ հարց առ հասարակ և երևելի թարգմանչաց՝ հայի ՚ի բարբառն յայն՝ զոր բարբառեցաւ ՚ած ՚ի լեռնէն

անոյ. զայս բարբառ ասէ ոչ գիտելոյն իսրայէլացիք. և այս՝ ըստ երից. մի՛ ըմբռնիր, զի տանուտէրն չէնն լուեալ զայնպիսի ձայն ոչ, վասն որոյ սարսափեալ ասէրն ցմիսէս. * դու խօսեայց ընդ մեզ, և լուիցո ,, ցուք. և մի խօսեցցէ ընդ մեզ Աստ, գուցէ մեռա- ,, նիցեմք ‖. (ելից. ի. 19.) Յերրորդ՝ ըստ հանգամանացն, զի ահեղ էր յոյժ. (որպէս տեսանի ի գիրս ելից. գլ. ԺԹ. 16—24.) Յերրորդ՝ ըստ նիւթոյն, զի զբօս միանգամ պատուիրեաց Աստ յայնժամ, ոչ գիտելոյն, և նորոգ լուան. վասն որոյ և ասի. * լե- ,, զու՝ զոր ոչ գիտէր՝ լուաւ ‖.

Սովին նշանակի լուր քարոզութիւն աւետարանին. իբր զի ազգք մարդկան ազատեալք յեգիպտահարի ծառայութիւն դիւաց՝ լեզու զոր ոչ գիտէին լուան. քանզի նոր լեզու էր այն՝ ի լսել նոցա Թէ Աստ մարդացեալ իցէ, և եկեալ՝ ի փրկել զազգ մարդկան. նոր լեզու էր և այն՝ երանի՛ աղքատաց հոգւով, և որ հարկանէ զծնօտ քո՝ դարձո՛ նմա զլիւսն ևն. նոր լեզու էր և այն ըստ լսաքն". Թէ ձրի և չնորհիւ եղև Թողութիւն։

Ամենեք աստանօր բառիս յովսէփ՝ ըստ նկարագրին իմացեալ զնոյն ինքն զնահապետն յովսէփ. (որպէս դնի և՛ի քաղդէականն,) այլ իմն մեկնութի՛ տան. իբր Թէ յովսէփ իջեալ յեգիպտոս՝ ուսաւ զլեզու եգիպտացւոց. և և այնու լեզուաւ լուաւ զերազ փարաւոնի՛ զոր ոչ գիտէր, և մեկնեաց զայն. (Ծնն. խա. 25.) Նա կամ ազգն իսրայէլի կոչեցեալ՛ի յովսեփայ յեգիպտոս, լուաւ անդ լեզու զոր ոչ գիտէր. և յելանել այնր ազգի յեգիպտոսի՝ եդ Աստ զօրինս՝ ի վը- կայութի՛ այնր ամենայնի՛ զոր եցոյց նա ազգին յակոբ քայ ձեռամբ յովսեփու. Ամէն ըստ լսաքն". * ազգն իս- ,, րայէլի յորժամ ելանէր յեգիպտոսի՝ լեզու զոր ոչ ,, գիտէր՝ լուաւ յերկիրն քանանեա ‖.

Այլ յակոբ մեծաւոյ հայրապետ և սա զանձնէ յովսեփու իմանալով զայս բան՝ գրէ (՛ի Ճառն. ա.) այսպէս. Ծաթէլ, Նոյ, աբրահամ, իսահակ, յակոբ, հաւատով զօրացան. * և՛ յովսէփ վասն հաւատոյ փորձեցաւ ,, ի ջուրցն հակառակութե՛ն. և ապրեցաւ՛ի փոր- ,, ձութե՛ն. և եդ վկայութի՛ ընդ նմա. որպէս և դա-

,, Լեթ ասաց . վկայեմիւն եգ ընդ յովնեփայ ։ Վարդան ըստ ասորւոց յառաջ քեզեալ զայս բան՝ յաւելու ասել Թէ յանցանել որպէսզի խորայէլի ընդ Ծոյնի կարմիր նոր լեզու առին . և այնու նոր լեզուաւ երգեցին , օրհնեացուաք զնոր . և յայն անցս կոչեցան նոր անուամբ երբայեցիք . զի երբայն՝ անցիք կամ յայնկոյս լսի ։ Օ այսոսիկ եգեալ մարգարէին՝ այժմ ահաւասիկ պատմէ՝ զոր արաք ՚ուծ իսրայէլացւոց , հա-

նելով զնոսա յեգիպտոսէ . վասն որոյ ասէ ։

Ը. Եւ բայ արաբ ՚ի բէ՛ռանց չնիչառնս նորա . և չյեաս նորա յորն և ՚ի ՚ի ծառայէլոյ ։

Վ բաշմանալ որպէսզի իսրայէլի յեգիպտոս , կասկածեալ փարաւոնի Թէ գուցէ զօրասցին և յաւելցին ՚ի Թշնամիս իւր , հնարեցաւ վարել զնոսա ՚ի գործ չինուածոց . կարգեաց զնոսա գործել զշաղախ և զաղիւս . որպ վասն կացոյց ՚ի վերայ նոցա գործավարս , որք չարչարէին զնոսա և ՀՆչէին , գարչեցուցանէին և յաղթահարէին , նուաճէին զնոսա և կեղչէին ըզկեանս նոցա . և շինեցին զերիս քաղաքս գիիդոն , զռամսէ , և զօն՝ որ է արեգ քաղաք . (որպէս գրի ելից . ՚ա . 10 -- 14 ։) Վ բողոքել ապա որպէսզի իսրայէլի առ ՚ուծ՝ առաքեաց առ նոսա զմովսէս , որ քաւզամ աքանչելիս ցուցեալ առաջի փարաւոնի և ծառայից նորա՝ եհան բանիւն ՚ոյ զորդիսն իսրայէլի յեգիպտոսէ՝ ազատեալ զնոսա ՚ի չարչարանաց անտի՝

վասն որոյ ասէ ։

Վ Եւ բայ արաբ ՚ի բէ՛ռանց չնիչառնս նորա . և չյեաս նորա յորն և ՚ի ՚ի ծառայէլոյ ։ Վ յսիրքն Թէ ՚ուծ ազատեալ զորդիսն իսրայէլի ՚ի գերութէ՛ն անտի եգիպտոսի՝ նովքն ՚ի բաց արաբ զնոսա ՚ի բառնալոյ Թիկամբք զքերունս աղիւսոց , և ՚ի ծառայելոյ ձեռաք յորմէ և ՚ի Թէ , այսինքն ազատ արաբ զձեռս նոցա՝ մի ևս բրել Թիով չՀող , կամ մի ևս զանգել Թիով շաղախս , և մի ևս ածել չՀող կամ շաղախս որմէսզ , որ է հիւսել ասպատ կամ աման ածելոյ շաղախ կամ չՀող ։ Վ յլաբանօրէն այս բեռն Թիկանց նշանակէ զսկզբնական մեղս , յորմէ ՚ի բաց արաբ քո զԹիկունս մեր ՚ի ձեռն Միջտուէ՛Թ . իսկ ծառայել ձեռաք յորմէ և ՚ի

Թէ՝ է ծառայութիւն ներդործական մեղաց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, յորոց ազատեաց զմեզ քո՛ի կողմանէ իւրմէ՛ի ձեռն չնորհաց. և յամենայնի կամելով հանգուցանել զմեզ՝ յորդոր եղև առ մեզ՝ ասելով. * եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռ,, նաւորք, և ես հանգուցից զձեզ ‖. (մատ. ԺԱ. 28։)

Լ՛րդ եգեալ մարգարէին զազատութիւն սրտոյն խոբայելի՛ի բեռանց և՛ի ծառայութենէ՝ որթով և թիով, կրկին և առաջի առնէ զնոյն, ցուցեալ թէ զիարդ յաղագակէ նոցա առ նո՛ր չարժեցին զնա՛ի գութառ՛ի փրկել զնոսքեանս՝ միանգամայն և փոքձել. սակն իբրև խօսեցոլ՝ ի բերանոյն ՚ոյ ասէ։

Է. Եւ նեղուսցեն կարդացեր առ իս՝ և էրկեցի ղնէդ. լռասդ չեղ՛ի գաղտնութենէ մըրկէն. և էրկեցի ղնէդ՛ի վերբայ ջուրցն հանդարտութենէ։

Լ՛այս այն է՝ զոր գրե մովսէս՛ի գիրս ելից. (ի՛. 23-25.) յասելն. * տատապարկին որդիքն իսրայէլ՛ի գործոյ ,, անտի, և աղաղակեցին՛ի վեր, և ել աղաղակ նոցա ,, առաջի ՚ոյ՛ի գործոյ անտի, և լուաւ ՚ած հեծութիւն ,, նոցա. և յիշեաց ՚ած զուխտ իւր՝ որ ընդ աբրահամ, ,, մո՛ւ և սահակայ և յակոբայ. և հայեցաւ ՚ած յորս ,, դիմն իսրայէլի, և ծանուցաւ նոցա ‖. և առեալ՛ի ձեռս իւր զմովսէս, նորա առաքնորդութիւ՛ փրկեաց զնոսա. վասն որոյ ասէ։

Եւ նեղուսցեն կարդացեր առ իս՝ և էրկեցի ղնէդ։ Լ՛այսինքն՛ի նեղիլ և՛ չարչարիլ քո՛ի խնտա ծառայութենէ. եդ խտացուց՝ յորժամ աղաղակեցեր առ իս՝ ոչ անտես աբարի ղքեզ, այլ փրկեցի զքեզ՛ի նեղութենէ անտի։

Օ՛այս եգեալ յաւելու ասէ։

Լռասդ չեղ՛ի գաղտնութենէ մըրկէն։ Լ՛այս բան եթէ վերածեսցի՛ի նշանակել զդխոցածան՝ որք պատմին յածաչնէն՝ յայլևայլս հայի. նախ հայի յոյն՝ զի ած՛ի հարուածելն զեգիպտացիս պահեաց զժողովուրդ իւր՝ ի հարուածոց անտի երբև՛ի գաղտնի մրրկէ. զի առ խրայելացիս գաղտ էր այն, այսինքն թէ մեկուսի էր։ Լ՛րկրորդ հայի յոյն՝ զի՛ի պնդիլ եգիպտացւոց զնոսի խրայելացւոց՝ յորոց ած մրրիկ՛ի կարմիր ծովու հանդերձ որոտմամբ և կայծակամբք, որ

եւ գաղէլ՝ կամ գաղտնի առնել՝ այսինքն ընկզմել զեգիպտացիս. և ի գաղտնութէ՝ ասի ազատեաց ոճ զիսրայէլացիսն՝ լսելով աղաղակի նոցա։ Աղերդ Հայրն յայն, զի ոճ կալով ի սիւն ամպոյ՝ ի գաղտնու-թէ անտի ամպոյն, որ կոչի ասա մըրիկ՝ լսէր Ժո-ղովրդեան խրատս, և անտի ցուցանէր զպաշտպանու-թէն իւր։ Աղերդ Հայր յայն՝ թէ ոճ լուաւ խոսայե-լի յերկնից, ուր է գաղտնութէն մըրկի՝ այսինքն գաղտ-նի պատճառ յաբուցման մըրկի։ Ելից գերդ Հայր յայն՝ զի ի կալ ՚ի սինա լերինն՝ ծածկեալ ի ամպ և որոտման և մըրկի՝ անտի լուաւ Ժողովրդ-դեան՝ որք եգին վկայութէն առաջի նորա, և ասէն՝ զոր մինգամ ասաց ոճ պատասգրած է։ (ելից. ԺԹ. 16։) Ոչ եթէ այս բան առեալ լինի փոխաբերութէ՝ նշա-նակէ զանհնարին նեղութէն զայն, զոր կրեին իսրայէլացիք յեգիպտոս. քանզի այն նեղութիւն իրրև մըրկի պատարեալ էր գնոսա. իսկ պատճառ այսր նմա-նութէ է՝ զի յորժամ սաստկանայ մըրկին հանդերձ տարափով՝ ծածկի և գաղէ լինքեան զոյնոսիկ՝ որք բմբռնին ի նոյն, մինչև ոչ նշմարիլ նոցա ի մըրկի անդ. վասն որոյ և քերի յորինակ մեծի նեղութէ՝ յոր պաշարի մարդս, մինչև կարծել նմա՝ թէ անտես ինացեալ իցէ յայ, և երբեմն և յուսահատիլ։ Աղ-տաւ՝ ի կարգալ զո առ իս յայսպիսի գաղտնութէ, այսինքն յայսպիսի սաստիկ նեղութէ՝ լուայ քեզ, և փրկեցի զքեզ անտի։

Ա՝արձ է մըրկաւ խմնալ ասա և զայն՝ որ լինի ի մէջ հնոցի. յորում եթէ իցէ ինչ՝ ոչ երևի, այլ ա-մենայնիւ գաղի. որով և օրինակի վիշան այն՝ զոր ըստ գրելոցդ կրեին խրայելացիք յեգիպտոսի իրրև ի հնոցի. յորում և պաշարեալ կային յամենայն կող-մանց. և յայսմ գաղտնութէ, այսինքն յայսմ պաշար-մանէ լուաւ և փրկեաց զնոսա ոճ։ Այս ամենայն ըստ հոգևորին ցուցանէ լսել ՚ի աղաղակի մարգ-կային բնութէն. և զի այն աղաղակ ամենեցին գաղտ եր, վասն որոյ և ասի գաղտնութէն մըրկին, այսինքն գաղտնի հառաչանք վասն մըրկելոյ ի մեզոց, յոր գթացեալ ՚ի եղոյզ զփրկութէն իւր։

Յակ. լսաք՝. բարեպատեա մեզնեալ զբէ այսպես. ՚ի լսեա

,, քեզ՝ ոչ որպէս եղբայր հրով և յայտնի, այլ ի
,, գաղտնութենէ մերկի. որպէս զո նեղուիցիդ (զոր
,, կրես խորհրդովք) ծածուկ և և ոչ յայտնի, նոյն-
,, պէս և ես ի գաղտնութենէ լսեմ քեզ անձառ ինա-
,, մով։ Օ այս եղեալ մարդ արիւն՝ ի մէջ բերել և
զփորձելն ոչ միայն, և ասէ ։

Այս փորձեալ առանդի ի պատմութենէ անդ զոր գրէ մով-
սէս՝ թէ ի հասանել ժողովրդեան ի մեռա, զջուր
տեղւոյն գտին դառն, և ցասկին կուչեցին գառնու-
թեան. ուր և տրտնջեցին զմովսիսէ, և մովսէս հրա-
մանաւն ոչ էարկ զփայտ ի ջուրն և քաղցրացոյց զայն։
Չէտ պատմէլոյ մովսէսի զայս՝ յաւէտս ասէլ թէ
* անդ եդ խորհրդի իրաւունս և դատաստանս, և
անդ փորձեաց զնա ։ (Ելից. ԺԵ. 25։) Այլ փոր-
ձելն ոչ էր ցուցանել զՀաւատարմութի ժողովրդեանն.
իբր զի կամեցաւ ՅՈՎ զի ժողովուրդն ի հասանելն
անդ ի մեռա, և չոչ գտանելն զջուր՝ ապաւինեացի
առ ինքն, ակնարկելով թէ որ զջուր կարիր ծովուն
պատառեաց, և զնոսա ընդ նոյն անցոյց. կարող է և
զդառնութիւն ջուրցն քաղցրացուցանել. բայց նոքա
փոխանակ յՈՎ ապաւինելոյ՝ հակառակ եղեալ ոչ և
մովսէսի՝ տրտնջեցին, և ասեն. զինչ արբցուք. և
այս եղև իբրև առաջին փորձն, որով փորձեաց ՅՈՎ
զիսրաէլացիսն. և եթէպէ նոցա՝ թէ արդիսի ինչ էիցեն
Այլ գիտելի է՝ զի ի փորձն երկու բան նշմարի. մի՝
առնելոցն ինչ կարգեալ ի ձանձրել կամ ի չայտ
նել. և մի և՝ տեղեկութի կամ չայտարարութիւնն
ինչ ծագեալ յառնելոյն անտի. զորօրինակ չորժամ
ոսկեգործն մերձեցուցանէ զոսկին ի փորձաքարն,
ի ցուցանել զնողին զորպիսութիւնն ոսկւոյն, երկու
ինչ նշմարի չայն փորձ նորա. մի՝ առնելոցն չդիտելոյն
որ կարգի ի գիտել կամ ի չայտնել, թէ արդիսի է
ցե այն ոսկի. երկրորդ չայտարարութի լատուներ կամ
չոսկւոյն։

Այդ փորձելն ոչ ի կողմանէ ոչ մատածեալ Հայի չա-
ուաջինն բան չայտնելոյն. իսկ ի կողմանէ մարդոյն
մտածեալ՝ Հայի չերկրորդն բան ի չայտ գալոյն. իբր
զի ՅՈՎ ի փորձելն զոք՝ առնէ այնպիսի ինչ՝ որով

յայտնի լինի ոչ ինքեան, այլ այլոց որպիսութեի՛ փոքձեցեալ. ըստ այսմ ասի ատ զի՝ փորձել դիտաբար լայիս. իսկ նոքա՝ ի կողմանէ իւրեանց ցուցին զմոռոլեի՛ իւրեանց։

Օ այս փորձ դնել լեալ՝ ի վերայ ջուրց հակառակութե՛. ուր բառդ՝ ի ձէրչ՝ դնի փոխանակ բառիս առ. այսինքն է առ ջրով հակառակութե՛. որպէս թէ ձեալ էր, փորձեցի զքեզ՝ յորժամ ածի զքեզ՝ ի տեղի գառն ջուրց՝ ուր յարուցիք զհակառակութե՛։

Ամենեք զայս բան, ընդ որս և լամբ՛, վերածեն յայն դիպուածՙ որ եղև մօտ՝ ի կադէս. ուր յոչ գտանել ժողովրդեանն զջուր՝ բամբասեցին զմովսէս, և նա երկիցս հարկանելով զվէմն՝ եհան զջուր, յորմէ և անուն նորա կոչեցաւ ջուր բամբասանաց։

Խորհրդաբար, սոքիմբք ցուցանի անհաւատութե՛ն հրէից յընդունելութե՛ն ջուրց վարդապետութե՛ն նոր օրինաց. յորոյ վերայ՝ ի սկզբան անդ յարուցին բամբասիմք հակառակութե՛ն և բամբասանս. զի գառն էր այն՝ ի քիմս նոցա. վասն զի ոչ հաւատային նոցա՝ ի խաչելեալն՝ ոչ կարացին գտանել զիայն այսինքն զխաչն՝ առ՝ ի արկանել զայն՝ ի ջուր վարդապետուե՛ աւետարանին, և քաղցրացուցանել զնոսա։ Այնպէս և ոչ հաւատացին՝ թէ՝ ի վերմ անտի յորդւոյն այդ թղեալ ինքեանց ջուր հնարէաց. որով և՝ ի փորձել նոցա յայդ ցուցան ժողովուրդ անլուր անհաւան և խոտան։

Յարոյսալէս՝ սոյն այս պատահէն երբեմն և յայնոսիկ՝ զորս՝ ի փորձ մատուցանէ Ած. Թէպէտ տայ գալ ջուրց գառնութե՛, այսինքն գառն նեղութե՛ց առ՝ ի համբերութիւն. իսկ՝ ի տրտնջել նոցա՝ լինի նոցա այն ջուր հակառակութե՛. Յրէից իւրեանց կամաք ընտրելիս՝ համբերելիս՝ և ոչ գառնանային. իսկ՝ ի պահանջել այդ զհամբերութե՛ն յայն նեղութիւնսՙ որոց ինքն թէպէտ տայ գալ, փոխանակ համբերելոյ հակառակին։ Այնոսիկ սամարացի եկն հանել զջուր, և յօժարութե՛ն ունէր աշխատիլ. իսկ՝ ի խնդրելն քո՛ ակսաւ՝ ի սկզբան անդ դժուարիլ, և ոչ կամէր հանել. պատճառէր զպատճառս և հակառակէր, որով և առ ժամն՝ հակառակուե՛ եղև նմա ջուրն այն. (յովհ. ՟դ. 7-16)։

ԻՒ.

Օ սոյն չափեա՛ և ՚ի վերայ քո. ՚ի խնդրելն ՚ի քէն քեզ գՀամբերութիւնն՝ մի՛ դժուարիր. ՚ի խնդրել նորա ՚ի քէն զկատարումն Հաճոյիդ իւրոց յայսմ կամ յայնմ նեղուլեացդ, մի՛ պատճառեր ինչ. և որ կարևորն է՝ ՚ի խնդրել նորա ՚ի քէն՝ խնդրել զինքն՝ մի՛ Հակառակ կիր: Յորժամ սատանայն խնդրէ ՚ի քէն զդժուարինս ՚ի գործել գՀաճոյս մարմնոյ քո՝ ոչ դադարիս. ՚ի խնդրելն քեզ՝ Թուլանաս: Ո՞չ արդեաւ խնդրեաց զզարդս կանանց առ՚ի գործել զսուտ ածս. և նոքա ուրախութեամբ ետուն. (ելից. լբ. 2—4:) Եթէ խնդրեալ էր զայն մովսէսի վասն յօրինելոյ ինչ ՚ի փառս Աստուածարտին այ, Հակառակիչին. որպէս արարին յայլ բազում իրս: Յորժամ ըստ Հաճոյս նոցա վարեր ած՝ Հանդարտեին. յորժամ ՚ի Հաճոյս իւր առաջնորդէր, մ՚ա փոքր ինչ ընդդիմանէին վրդովչին և յիմարեին: Ա՛ւ այսոքիկ գրեցան առ ՚ի զգուշութիւն մեզ և ՚ի զգաստութիւն: Ո՞չ քանզի բարեբար է ած՝ երկայնամիտ լինելով անսայ. որպէս վարէր ընդ խօսակցացիս. որոց և բազմաք յորդոր լինէր՝ մի՛ միայն անսասան և անՀաման. այլ որպէս ինքն անսայր և տանէր նոցա՝ նոյնպէս և ինքեանք անսասցեն ինքեանս, և Հպատակ կացցեն. ամէն իրի ասէ:

Ը. Ա՛ռ ծողովեսդ իմ, և վկայեմ ՚ի ձեզ. և խօսել՝ ՚ի լսելիսդ ինչ:

Ո՞չ լսելս ոչ է սոսկ արտաքին, այլ ներքին, որով ցուցանի անսալ Հրամանին այ, և պահել զայն. վասն որոյ և ՚ի խօսել մովսէսի զայս բան ՚ի դիմաց այ առ իսրայէլացիս՝ ոչ սոսկ զլսելն եդ առաջի, այլև զպահելն ասելով. * եԹէ լսելով լսիցէք ձայնի իմում, ,, և պահիցէք զուխտն իմ՝ եղիցիք դուք ինձ ժողովուրդ սեփական յամենայն ազգաց ‖. (ելից. ԺԹ. 5):

Օ այսպիսի լսելութեն պահանջելով՝ ասէ:

Ա՛ռ ծողովեսդ իմ, և վկայեմ ՚ի ձեզ. և խօսել՝ ՚ի լսելիսդ ինչ: Ո՞չ այսքան բաց զներքին լսողութեն քո ոմ ժողովուրդ իսրայէլ, զոր ես ընտրեցի. զի եԹէ այսպիսի լսողութիւն. լսիցես, վկայեմ քեզ և յուցանեմ քեզ զանանապարհս իմ:

Ո՞ստ այսմ կարգի մեկնելով զայս բան՝ զերկրորդ

շաղկապ է՝ որ դնի ՚ի մերում թարգմ՚՚ պարտ է և
մանաւ իբրև զգարդ կամ իբրև զմեհենական շաղկապ.
որով շարադրութիւն բանին պարզի այսպէս. լուր ժո-
ղովուրդ իմ խրատել և ես վկայեմ քեզ՝ եթէ լսեիցես
ինձ. ուր որպէս տեսանես այս բան * վկայեմ քեզ ‖.
յարի ՚ի յետին բանն՝ այն է՝ եթէ լսեիցես, և ոչ թէ
յառաջինն, քան որում՝ տեսանի յերբ՚՚ և յայլ թարգ.
որպէս թէ եպեաւ էր. եթէ լսեիցես ինձ, վկայեմ
քեզ։

Իսկ վկայելն այլ էր խօսել յայտնապէս զպատգամն
իւր առաջի երկնի և երկրի, և առաջի հրեշտակաց
և մարդկան. որպէս թէ ասէր. ահա յայտնեմ քեզ՝
զինչ պարտ է քեզ առնել, և զինչ արժան է ինձ հա-
տուցանել. և այժմ ես ինքնին եղէց վկայ. վկայ լի-
ցին և ամենայն արարածք, վկայ լիցին և սքանչելիք
իմ։ Եւ զայս ասէ առ ՚ի ցուցանել նախ զձշմարտու-
թիւն ասացելոցն, երկրորդ՝ զհաւատարմութիւն ասողին,
և երրորդ՝ զանսասցողութիւն լսողին։ Իսկ թէ զինչ էր
այն՝ զոր վկայելոց էր, առաջի դնէ՝ և ասէ։

Թ. Այն է՝ զոր ասաց ածն առ ժողովուրդն Իսրայէլի.
(Ելից. ե. 2.) * Այլ եղիցին քեզ ածք բաց յինէն
ևն ‖. ուր զկուռս հեթանոսաց կոչէ ածս, զի հեթա-
նոսք զանուանն այդ դնէին ՚ի վերայ նոցա, և իբրև այդ
երկիր պագանէին այնոցիկ։ Իսկ թէ զինչ էին նոքա
յինքեանս, ցուցանէ երկու բառիւք, կոչելով զնոսա
առ ժամայինք, և օտարք։ Այլ ածանդ ասելով ցու-
ցանէ զունայնութիւն և զանցաւորութիւն նոցին. քանզի
ածն պարտի լինել անսկիզբն և անվախճան, անեղ և
անփոփոխ. իսկ կուռք հեթանոսաց էին առժամայինք,
այսինքն առժամանակեայք. զի էին շինեալք ՚ի մարդ-
կանէ, որք և յետ սակաւիկ մի կալոյ փոփոխէին, կամ
կործանէին. վասն որոյ և էին ունայնք։

Իսկ օտարք ասելով ցուցանէ զատուբն նոցին, զի օտար
է ՚ի Հանապազմանէ բանական ստեղծուածոյ համարիլ
զայնպիսիս ածս. իսկ որ օտար է յուղիղ Հանապազմանէ
և ներկայէ՝ է սուտ։ ( )տար էին դարձեալ և ՚ի կա-

տարեկուէն ալ. զի ոչ գտանիւր՝ի նոսա և ոչ ստուեր
ածուելոյ: (Ցաւր էին և աւ այլս, զի որք միոյ ազգի
էին ածք՝ ոչ էին և միաւսումն. ուստի և աւ նոսա հա-
մարեալ լինէին չածք, այսինքն սուտ ածք. վ՚որ որոյ
և Ձլամարիտն ածն՝ որ յայտնեաց զինքն Ճշմարտութիւ-
աւ ժողովուրդն Իսրայէլի, հրամայեաց նոցա հեռ
կաւ յայտապիսեաց. ամին երկի ասէ:

Ա՚ռ ահա եղէցին ՚ի քէզ ՚ծածուկ առաքաւոյն. և մի երկիւղա-
ցիս ՚ի նոցանէ ոչ ՚ի օտարէ: Ա՚ւր քաւոյ ահա՝ ոչ դնէ լուկ փոխա-
նակ քաւելոյ և ահա, այսուհետև, կամ այլ ահա, այլ փոխա-
նակ քաւելոյ էնաւ. որպէս ՚ի ՚ծածուկ ասէր. մի գնաւ եղէցին
քէզ կուռք ՚ի տեղի այ. զի առաջամանակեայ են նո-
քին, կամ որ նոյն է, մի եղէցին քէզ այնպիսի ածք,
որք էցեն առաջամանակեայք և նորք ՚ի մարդկանէ շի-
նեալք ՚ի ձեռն արհեստի: Այս և մի երբէք պաշ-
տեսցես ՚ի տեղի այ զայնպիսիս՝ որք են օտար լինէն.
կամ մի երբէք երկիրպագանիցես այնպիսի ածոց՝ զոր-
պիսիս ոչ պաշտեցին հարք քո աբրահամ իսահակ և
յակոբ. կամ մի երբէք ունիցիս փոխանակ այ զայն-
պիսիս՝ զորս օտար ազգք պաշտեն իբրև զածս. զի
ոչ են նոքա ած՝ ոչ այլոց և ոչ քեզ. այլ ես եմ ած քոյ:
Խարոյապէս ածք առաջամայնք լինին ժամանակաւոր
և մարմնաւոր բարիք առ այնոսիկ՝ որք յարին ՚ի նո-
ա, որպէս արծաթն յոգահս, և հեշտութիւնն ՚ի մարմնա-
պաշտս: Նոքա ածք օտարք լինին փառք և իշխանու-
թիւնք առ փառասէրս և առ պատուամոլս. առ որս
հրամայի այ մի երկիր պագանել այսպիսեաց, այս-
լոնքն մի յարիլ ՚ի նոսա, այլ թողուլ ՚ի բաց, մանա-
ւանդ թէ ջնջել:

Յակոբ նահապետ առեալ ՚ի կանանց իւրոց զչածսն
ոսկեղէնս՝ մանրեաց և թաղեաց ընդ բևեկնեաւ.
(ծնն. ծե. 4.) զի բարձցէ և զհետս նոցա: Այն-
պէս և սամուէլ մարգարէ ՚ի յորդորելն զՀրէայս յա-
պաշխարութիւն՝ ասաց. * դարձարուք առ ած, և ՚ի
„ բաց արարէք զածս օտարոտիս‖. (ա. թագ. է.
3.) զի ՚ի բառնալ նոցա կարէին ծառայել Ճշմարտին
այ. նակ ՚ի ՚ծնալն մասամբ իմն ծառայէին կռոց, և
մասամբ իմն այ. որ է անկարելի, զի չէ հնար եր-
կուց տերանց ծառայել. (մատ. զ. 24.) ոչ կարես

ծառայել ՚ին և մամոնայի. ոչ կարես ծառայել զաստուածն և վաշխ ցանկութեանց. ոչ կարես ծառայել փրկութեան և փառասիրութեան։ Այլեւս մարդաբար ՚ի կողմանէն զբուժման բահաղու՝ ասաց ցժողովուրդն. * մինչև ցկնի՞ կաղայք յերկուս հետս. եթէ տէր է ածի՝ ,, երթայք զհետ նորա ։ և եթէ բահաղին իցի՝ երթայք ,, զհետ նորա ։ (գ. Թագ. ԺԸ. 21։) Մինչև յերբ և դու կաղաս յերկուս ճանապարհս. մինչև ցերբ ծառայես երկուց տիրանց. ՚ի բայ արա զածս օտար բոտիս և զանցաւորս. չէն դոքա ածք. որ արարն զքեզ՝ նա է ածք Հմնարիս. դարձ առ նա. և ազատեսցէ զնա՝ ազատել զքեզ ՚ի ծառայութենէդ դոցա. և նա լիցի փրկիչ քո։ Հայս հայելով յարբ զինեի և ասէ։

Ժ. ԵՒ՝ եմ որ ածք * որ հանի զքեզ յերկրէն եգիպտացւոց. բաց զբերան * և լցից զնա։

՚ի վերոյ ՚ի համարն 8. ասաց * բուր ժողովուրդ իմ, ,, և վկայեմ քեզ ։ և զոր ասացն՝ վկայեաց ասելով, * մի եղիցին քեզ ածք առաժամայիք են ։ և քանզի առ ստուգութեամբ վկայութեանէ արժան է ՚ի մէջ բերել և զայն ինչ՝ որով հաստատի վկայութիւնն, յայս ակնարկելով մարդարէին առաջի դնէ ասա իբրև զհաստատութեան՝ զայն աքանչելիս, որով ետան ածք զբուժիս իսրայէլի յեգիպտոսէ. սմին իբրի ասէ։

Ա. ԵՒ՝ եմ որ ածք * որ հանի զքեզ յերկրէն եգիպտացւոց։ Որ ասելովին ածք * ոչ ցուցանէ թէ միայն իսրայէլացւոց իցէ նա ածՙ և ոչ այլոց, այլ թէ գոլով ածք ամենեցուն՝ նոցա յայտնեաց զինքն, և զնոսա արար իւր Աստի ածք զո դնելով՝ կամի ասել. ես որ եմ ածք ամենեցուն՝ եղէ ածք զո։ Նմ ՚ի յարբելն զինի՝ որ հանի զքեզ յերկրէն եգիպտացւոց, այս բան նախ հայի ՚ի ՚ի վկայութենէ ածք գոլոյ՝ յայն զոր ասաց, ես եմ ածք, իբրև թէ ասէր. այսու իսկ կարէք ճանաչել՝ թէ ես եմ ածՙ զի մեծամեծ աքանչելեաց հանի զձեզ յերկրէն եգիպտացւոց։ Յերկիրըզ հայի յայն՝ զոր ասացՙ * ո։ որպես թէ ասէր. ես եմ զո ձյմարիտ ածք, և դու ես իմ աստիական ժողովուրդ. զի հանելով զքեզ յեգիպտոսէ՝ եղէ զո և դու եղեր իմ։ քանզի ազատեալ զքեզ անտի՝ փոխադրեցի զքեզ ՚ի ծառայուէ

եդիպտացւոց ի ծառայութիւն իմ։

Լաւ բան հայելով ի բառդ ՚ս, ասրեալին ասի ՚ի բեքանոյ քմի առ մեզ հաւատացեալս. զի ազատելով զմեզ ի գերութենէ սատանայի՝ յատուկ ինն օրինակաւ եղիւ մեր, վասն որոյ և առ մեզ խօսելով ասէ. Ես եմ նոր ՚ած քո՝ որ հանի զքեզ ի գերութենէ սանդամանտականաց և յերկրաբերութենէ եդիպտական ծառայութենէ, այսինքն ախտից և մեղաց. և ածի զքեզ յերկեղեցի ՚որ ի ժողովս անդրանկաց գրելոց յերկինս։ Լաւ թէ զինչ ունէը տալ մեզ, յայտ առնէ ՚ի յաջորդ հատուածն, ՚ի մէջ բերելով զայն՝ զոր կամէր տալ խորայէլացւոց. վասն որոյ ասէ։

Լաւ զէրեան ՚ս, և ըղէը զքո։ Լաւդ էրեան ՚ի կրկին միտս դնի ասա. մի՝ փոխանակ բանն բերանոյ. և յայտ միտ կամի ասել. բայց զքերան քո աղօթիւք, և խրատբեամ յինէն զոր ինչ կարիւդ տեսանիս քեզ. և ես լցից զքա. այսինքն կատարեցից զոր միանգամ խրատեցի քա, այս է բերան քո. կամ բայց զքերան քո խոստմամբ, և ես լցից զքա օրհնութիւն։ Լաւ թէ զինչ կարէը պարզապէս ասել՝ ինդրեամ և տաց, բայց առ ի ցուցանել զպատրաստական յաժարուն իւր ՚ի տալ, և զառատութիւն տուեցելոյն՝ ասէ. բայց զքերան քո, որպէս թէ եդեալ էր. բաւական է բանալդ զքերան քո առ ՚ի ինդրել ինչ յինէն. զի ընդ բանալդ լցուցից, այսինքն լնալիը կատարեցից՝ զոր ինդրես։

Լերկրորդ՝ զնի փոխաբերութիւն փոխանակ բերանոյ բաղձանաց հոգւոյն, այն ինքն է յաժարութիւն բանականին, որ իբրև բերան բացեալ կայ առ ամենայն բարիս, բայց ոչ այլ ինչ կարէ ընդալ զնա՝ եթէ ոչ նա միայն՝ որ արարն զնա. վասն որոյ ասէ, բայց զքերան յաժարութենէդ՝ մի առ եդիպտական բարիս, այլ առ նա՝ որ հանի զքեզ յեգիպտոսէ. զի ես միայն եմ՝ որ ընդալ զայն։

Լամէն" այսու իմանայ զքերան մտաց. * զոր թէ բանէ ,, նամբ ասէ, ուղիղ հաւատով ընդ հոգւոյն ձառա- ,, գայթիւն չնորհիւ և իւր Տամեղ մարմնոյն կերակ- ,, րով"։ Օ այս ամենայն խոստացաւ ած ժողովրդեան ելիւ. բայց նէ չանսացին նմա, զի ոչ ձայնի նէր լուան, և ոչ ՚ի պարգևս նէր նայեցան. վ՚ն որոյ ասէ։

ժա՛. Յաղթե՛ցէք իմ ոչ լսաա յայնի իմաս. և խօսել չէս ինչ ոչ նայեցաս։

Ո՛վաքեր և այս գանգատ. զի յորմէ լինի՝ և ՚ի՞նչ, և զորմէ լինի՝ և ժառանգութի՛ն նորա, այսինքն ժողովուրդ ընտրեալ ՚ի նմանէ. և որոյ վասն լինի՝ և ապերախտութիւնն այսպիսի ժողովրդեան առ այնպիսի՛ն տէր. իսկ ապերախտութի՛ն նոցա էր կրկին. մի՛ զի տեսեալ զսքնչելիս սքանչելիս այնպիսի՛ն՝ ոչ լրբեցան ՚ի նա. և երկիւղած զի զոր միանգամ ասաց՝ ոչ անասցին նմա. սակս իրի ասէ։

Յաղթե՛ցէք իմ ոչ լսաա յայնի իմաս. և խօսել չէս ինչ ոչ նայեցաս։ Կամի ասել. ապաքէն ես ընտրեցի զնա ժողովուրդ սեփական զազգն իսրայէլի, և ետուս նմա զօրինս իմ հանդերձ վկայութի՛ւ. և ցօգի նմա զամենայն իմանան բարերարութեան իմոյ. իսկ նա արհամարհեաց զայս ամենայն. զի ոչ օրինաց իմոց լուաւ, և ոչ յերթախտիս իմ նայեցաւ. այլ զօրինս իմ յանարգութի՛ւն իջոյց, և զերեսս իւր յինէն կեաս դարձոյց, և կամ թէ լուաւ արտաքին ականջովք, այնինքն արտաքին արարողութի՛ւք, բայց հաւատով չէս ինչ ոչ նայեցաւ։ Կա՛ս ըստ այսմ բայիդ ոչ լսաա, և ոչ նայեցաս՝ ոչ ՚ի մէջ բերես ասսկ զոչ լսելն և զոչ նայելն, այլ ժանեաւանդ զոչ կամիլն լսել և նայել. որպէս յասելն ՚ի գիրս յոթայ (գլ. իզ. 13.) * զնմանապարհ ոչ արդարութի՛ն ոչ գիտացին՝ ոչ ցուցանէ սսկ զոչ զիտելն՝ այլ զոչ կամիլն գիտել. որպէս մեկնէ վանական վարդապետ ՚ի մեկնութի՛ն անդ։

Ո՛չ ասաւ մարգարէին՝ ժողովուրդ իմ, և ՚ի կամիլն ասպա բացատրել՝ թէ սր ժողովուրդ իցէ, ոչ կամիլն զգակօք, այլ թէ * և խօսել չէս ինչ ոչ նայեցաս։ իսկ թէ ընդէ՞ր պատասխանեաւ գէորգ վարդապետ (՚ի մեկն. եսայ.) ասելով. * ոչ ասե յակոբ, այլ խոչ բայէ. զի առաքինութի՛ն նախնոյն, (որով կոչեցաւ նա իսրայէլ) ա՛ձեցուսցէ զորբւոյն ապերախտութի՛ն. զի զոր նա առաքինութի՛ն ընկալաւ զօրինս՝ ՚ի՛ կոչմամբ, սորա վատնաբուքն անարժան եղեն։ Կա՛ս թէպէտ որ օրհնեաց՝ ոչ կամեցաւ նոցուն և նահանջել զօրհնութի՛ն իւր, բայց յոչ

անսալ նոցա խոպան, նա և եթող զնոսա խոպան. զայն որոյ ասէ.

ժբ. Բաւական է ինդ զնոսա երթալ, զի՞նչ կամայ սրտիդ էրբ-
եանց. չի փնտրէն նոքա քան կամս անձանց էրբեանց։
(Առողջ՝ այ զմարդն չորեքկին կարէ լինել. (զորմ-
տես՝ ի սաղ. ին. 11.) իսկ Թողուլ զնա այնպէս՝ զի
երթայցէ զհետ կամայ իւրոց՝ և լքանել զնա խոպան
՝ի հնորհաց, և Թոյլ տալ նմա առնել զոր ինչ և կա-
մի. և այս է պատիժ ինն մեծ յոյժ և սարսափելի։
Ա՛սացի նախ՝ մեծ, քանզի զրկիլ ՝ի հնորհացն այ ինս-
պատ՝ մեծ է քան զզրկիլ մարմնոյն ըստ ամենայնի ՝ի
ներգործութենէ հոգւոյն. վասն զի առաւելագոյն ինն
գերազանցութիւն բաղդատի հնորհն այ առ հոգին, քան
ազգութենէն հոգւոյս առ մարմինն։ Իսկ զհետ զրկե-
լոյ ՝ի հնորհաց մնանիլ մարդոյ ՝ի կամս իւր՝ և մնալ
նիլ ՝ի ձեռս խեղաթափ և մոլի առաջնորդի. զի ան-
կարգ կամք մարդոյ զրկեալ ՝ի հնորհացն այ՝ է երբև
մոլեալ գազան, և բերի յայն ամենայն, որ յերեսաւ
է անկարգ, կամ չար և կամ ոնոյն. և զինչ քան
զայս մեծագոյն պատիժ բանական էակի՝ որ ստեղ-
ծեալ է ՝ի գործել զբարին և ժառանգել զբարու-
թիւնն այլ։

Ա՛սացի երկրդ՝ սարսափելի, զի այս է պատժել զսար-
սափելին սարսափելեաւ՝ այսինքն է պատժել զմեղս
մարդոյ մեղօք ՝ի Թոյլ տալն գործել զանարժանս և
զանարդանս անձին (Հռոմ. ա. 21--24.) Ա՛րդ ասե
յասելոյնի բարի գոլով՝ Թէպէտ և ամենեցուն զբա-
քին կամի. և զամենեսին առ բարի վախճան ուղղէ,
բայց տեսեալ Թէ մարդս ոչ կամի գնալ յայն՝ ընդ
որ նա Հաձի, այլ յայս միայն՝ ընդ որ ինքն ախորժի,
յետ բազում աղաչարուեց Հայեցեալ Թէ, ոչ ուղ-
ղի, Թողու զնա ՝ի ձեռաց՝ գնալ ընդ այն ընդ որ ա-
պականեալ ախորժակ նորա առաջնորդէ յանարգանս
բանական մտացն, և յերջանկութենէ զայսականին. որպէս
արար ընդ այնոսիկ * որք ծանեան զնա և ոչ իբրև
,, զնա փառաւորեցին կամ գոհացան, այլ նանրացան
,, ՝ի խորհուրդս իւրեանց, և խաւարեցաւ անմտու-
,, թիւրք նոցա ‖. որպէս գրէ առաքեալն ՝ի Թուղթն

առ Հռովմայեցիս. ուր և վկայէ՝ Թէ ոճ մը այսպիսի լինելոյ նոցա մատնեաց զնոսա նախ * ի ցանկութիւն սրտից իւրեանց ‖, այսինքն՝ ի չաստարութիւն կամաց իւրեանց. երկրորդ * ի կարիս անարգուածն ‖. այսինքն՝ ի կիրս անամօթական զգայուածոց կամ՝ ի գազանութիւս. երրորդ * ի միտս անարգութիւն (այսինքն՝ ի մոլորութիւն մտաց) գործել զանշարժանս ‖. (Հռովմ. ա. 21—29.)

Վ. Յայսիսկ մատնութիւն կամ լքումն մարդոյ՝ ի ձեռս իւր ըստ երկուց կշռի. մի՝ ըստ անհաշտելի բարկութեանն այլ. և մի և՝ ըստ զիջանելի բարկութեան նորա. եթէ կշռեսցի ըստ առաջնոյն, է պատիժ պատժոց, կարգեալ՝ ի դատապարտութիւն. և թէպէտ ցորչափ կեայ մարդ՝ ի մարմնի՝ ոճ իսպառ ոչ թողու զմարդն յայսպիսի պատժի, բայց այդ մատծի՝ ի կողմանէ անքննին ողորմութենէն այլ, որ անհասանելի է մեզ. իսկ՝ ի կողմանէ մարդոյ մատճեալ է լքումն պատժոց. որոյ զհետ գայ պատիժն յաւիտենական դատապարտութեան. ուստի և կրկնապատիկ չար է մարդոյ մատնելն յայսպիսի պատիժ։ Ամին իրի ասէ սարգիս Շնորհալի (՝ի մեկն. ՟ը. պետ. ՟է. յ. Նառ. է.) * կրկին չար և բազմապատիկ՝ մարդոյ անտեառն, զի՝ ցանկութեանն կատարեալ ‖։

Ասի եթէ կշռեսցի ըստ երկրորդին, այսինքն ըստ զիջանելի բարկութեան նորա, է այնպիսի պատիժ, որով եթէ ոչ զգաստասցի մարդ, թողեալ լինի ըստ առաջնոյն. և այս պատիժ կոչի յեղին ապդարութիւն կարգեալ՝ ի յուղղութիւն. զի ոճ՝ որ յամենայնի զգալ լին կամի մարդոյ՝ որպէս թողու զնա բարկութիւն՝ ի չնորհսց իւրոց, այնպէս և բարեգթութեամբ դիտէ զուղղութեան նորին. և վասն երկայնամիտ լինելոյն թողուցայ զի մարդ՝ ի գնալն ըստ ցանկութեան սրտի իւրոյ՝ վաստակեալ և տառապեալ յանօրէնութեանս, զգաստացի և գարձցի առ արարիչ իւր. ա սելով, քանի վարձկանք են՝ ի տան հօր իմոյ հացս լից, և ես աստ սովամահ կորնչիմ։

Չայս ևեթ երկայնամիտ լինի բարեգթութիւն այ՝ ի թողուլն զմարդ՝ ի ձեռաց իւրոց. բայց մարդս յայնչ

տակեալ միանգամ՝ի մոլորեալ կամ՝ի չփոթեալ ձա-
նապհեան իւրմէ , և գերեալ՝ի չար յօժարութէ կա-
մաց՝ զոր և երբեմն պատշաճաւոր գտանէ , ընդդէմ
դառնալ՝ ոչ եթէ գործունեայ ներգործութեան բա-
րեգթութեանն այլ՝ որ է հաճոյաբար հնորհք՝ յորմէ
արդէն զրկեալ է , այլ նմին խոկ բարեգթութենէն ա-
նարժան առնելով զինքն : Այլ որ աւադելին է՝ եր-
բեմն ոչ գիտելով նորա զայս՝ կարծէ թէ իցէ յուղ-
ղութէ . կիմ թէ՝ի ձեռս իւրէ գտանել յօդղութէն .
որով ոչ ևս կեայ յայն՝ որ արար զնա , այլ կացեալ
յինքեան՝ մեռանի յինքեան . և գտանէ զայն՝ յորում
եկաց և յորում մեռաւ , և ոչ զայն՝ յորմէ հեռացաւ ,
և որում անարժան գտաւ :

Ա.ԴԴ ըստ նախակարգեալ զանազանուեդ՝ ամ կրկնա-
կի եմ ողզդիսն իսրայէլի երթալ ըստ կամաց իւ-
րեանց . մի՝ ըստ բարեգթութէն՝ առ ժամանակ մնչ ,
դիտելով զդարձ նոցա . որպես արար յառաջ քան
զգալ իւր առ նոսա : Այլ մի ևս՝ ըստ մեծի բարկու-
թեան՝ մինչև՝ի վախճան , յորմէ հետէ մերժեցին
նոքա զգալուստ նորա : Ցերկոսին՝ի նոսա ևս կարե-
հայիլ այս քան , զոր ասէ :

Բաբէլ նոքէ զնոսա երթալ զնէտ էաց պրեղ էրեանց :
Ասէ . զոր ինչ և հրամայեցի ժողովրդեանն իս-
րայէլի՝ նոքա զամենայն մերժեցին , և զոր ինչ ինք-
եանք կամեցան՝ զայն արարին . և ես ոչ կամելով մեր-
ժել զնոսա , բազում անգամ խրատեցի զնոսա բա-
նիւք մարգարէից , և գանիւք թշնամեաց , բայց նո-
քա ոչ բանից անսացին , և ոչ՝ի գանից ուղղեցան ,
այլ յամենայնի ընդդէմ դարձան ինձ՝ առ՝ի կատա-
րել զՀաճոյս անձանց իւրեանց . վասն որոյ և ես՝ի
բաց բարձի զնոսա՝ի հնորհաց իմոց իսպառ , և թողի
զնոսա՝ի նոսա , և թողլ եղուս նոցա երթալ զհետ
կամաց սրտից իւրեանց :

Ի՛ր կամք սրտի ասէլով՝ համանայ զյօժարութիւն կա-
մաց ըստ ստորին մասին , որ յամենայնի բերի յայն
զոր ցուցանեն զգայութիւնք . իսկ երթալ զհետ այս-
պիսի յօժարութէ՝ է գործել զայն ամենայն զոր կա-
մի այն յօժարութէ . և զի այն միշտ յոտպահանութիւն
վարուց դիմէ , մերդս ևս որ զհետ երթայ այնր՝ դի-

մէ յատկանուէն։ Լաւ յոչ նպաստեալ ընդհատեցաւ ոչ՝ վերին մասն եւս ստորնոյն հետեւելով՝ ի նոյն գնայ եւ ինքն, եւ ի նոյն ածէ զմարդ. եւ յայս հայեցուլ յաչ զկնի եւ ասէ.

Օ՜ք գնացին նոքա ըստ կամ անյաղ էրբեանց։ Յառաջ-նումն եղ կամք սրտից. իսկ ապա կամք անձանց. զի այն հայեր ի յօժարութեան կամաց ըստ ստորին մասին ի հետեւիլն զդայական կրից, որոց աճեռ է սերման. իսկ այս հայն ի յօժարութեան կամաց ըստ վերին մասին, որ բերի յայն ինչ զոր ցուցանէ ուղիղ բանն. որպ կայարան է անձն, այսինքն հոգին. բայց քանզի ի թողուլ մարդոյ ի ընդհատն ոչ՝ հակի զհետ ստորնոյն, եւ գնայ ըստ գնալոյ նորա յատկանութէ յատկանուէ՝ որպէս ապարիչ խոստացեալք. վասն որոյ ասէ * գնացին նոքա ևն։

Յայսպիսի պատիճ մատնեաց ած զիւրաքանչիւրս քաղաքս անդամ, ոչ ըստ այմ՝ ըստ որում նոքա ժողովուրդ ևն ձեւացուցանելին զինքեանս, և նախարեին զեկեղեցի ոչ, այլ ըստ այմ՝ ըստ որում կրեին զանուն ազգի. քանզի ըստ որում ժողովուրդ ոչ, կամ ըստ որում եկեղեցի ոչ, ած ոչ եթող գնոսա առհասարակ ի կայնի ի նմա բաղում ծառայք ոչ, որովք պատիճս եկեղեցի, և յորոց պաշտիւք ած ի յոկ ըստ ոչ բում եին ազգք սերեալք յիսրայէլ, եթող երկք գնոսա ած յետ մնանելոց նոցա յերկիրն աւետեաց, մատնելով գնոսա ի կամս նոցին պաշտել զկուռս, և առնել զձառոյս անձանց իւրեանց։

Բայլ քանզի ուխտ եդեալ էր ած ընդ նահապետս այսինքն ընդ հարս նոցա՝ խոստանալով ի զաւակէ սոցա ազգի օրհնել ամենայն ազգս, վասն այսր ուխտի կամելով յետս դառնցել գնոսա ի կամաց նոցին՝ հարկանէր եւս գնոսա պատժովք. մինչեւ զդաստանալ նոցա և դառնալ առ ինքն։ Յոկ ի հասանել լրման ժամանակին եւ ի գալ խոստացեալ զաւակին՝ երբեմն մերժեցին նոքա զնա՝ ըստ ամենայնի մերժեաց գնոսա ած։ որպէս եւ առասանեմք խոկ։

Բ՜ացի ըստ ամենայնի։ Նախ՝ զի մերժեաց գնոսա առհասարակ՝ մինչեւ ոչ եւս մնալ ի նոսա եւ ոչ խոկ միում անձին առ ի ձեւացուցանել զեկեղեցի, զի բարձաս-

'ի նոցանէ արքայութիւն ոչ՝ այսինքն եկեղեցի չը, և առաւ այլուսմ ազգի՝ այսինքն հեթանոսաց. քան ոնն քանի (մատ. ին. 43։)

Երկրորդ՝ զի մերժեաց զնոսա մինչև 'ի վախճան. քանզի իբրև եկն հասս ժամանակին առհմանեալ, յորում եկեղեցին փոխագրեցաւ 'ի հեթանոսս, յայնմ ժամանակի՝ որք ընտիրքն էին 'ի մէջ իսրայէլի՝ նոքա եւեթ ոչ մերժեցան, այլ մնին յեկեղեցի (հռոմ. ժա. 2։) Իսկ ազգն քան բոլորին մերժեցաւ. և գոյ մնայ մերժեալ մինչև 'ի կատարած, այսինքն մինչև մտիցէ լրումն հեթանոսաց. քան գրելոյ առաքելոյն (հռոմ. ժա. 25։)

Երրորդ՝ զի մերժեաց զնոսա ոմն քան ամենայն քան բեաց՝ ըստ հոգևորին և ըստ մարմնաւորին. ըստ հոգևորին յայտ է. թէ ոչ զայն՝ զի եթող զնոսա գնալ զհետ մտաց ձանձրացման և մտել կամաց իւրեանց։ Իսկ ըստ մարմնաւորին եթող զնոսա ոչ եթէ գնալ ըստ հաճոյից իւրեանց, այլ վտրիլ չարչարալ 'ի հաճոյից օտար ազգաց։

Չորրորդ՝ զի մերժեաց զնոսա՝ առանց կամելոյ օձնիլ այլ եւս զնոսա. և եթող 'ի ձեռս սրոց։

Յառաջագոյն իսկ մերժէր զնոսա այսպէս, բայց վ'ա երկուց երկայնամիտ լինելոյ առ ժամանակ մի. մի՝ զի որովհետև կամեցաւ՝ զի 'ի նոցանէ ծագեսցի, մեաց մինչև 'ի ժամանակ ծագմանն. և 'ի հասանել ժամանակին՝ թօթափեաց զնոսա որպէս զբեռն ծանր և անբերելի։ Երկրորդ՝ զի ակն ունէր ուղղութիւն նոցա, և պաղղ գործոց նոցին. որոյ վասն թէպէտ և անհնայ հարկանէր և պատուհասէր, այլ զգուշանայր եւս զնոքօք. բայց իբրև եւս թէ ոչ եւս ունին նոքա տալ զպատուղ ինչ 'ի բաց եթող զնոսա։

Օ այսմանէ խօսելոյ դէպրգ վարդապետ ('ի մեկն. եսայ. գլ. ին.) գրէ այսպէս. * Պահապանք այգեաց ,, 'ի զուարճանալ ողկուզային յայգիսն՝ բաղում զգու- ,, շութիւք պահէին 'ի գաղջ և 'ի դաղանաց. զնոյն առ- ,, նէն և 'ի սեխեխս. իսկ 'ի կիթել զղկոյզսն և 'ի ,, կոխել, և 'ի բառնալ մրգացն 'ի սեխեխենաց, լքա- ,, նէն զհոգեթս պահպանութիւնն, թողուն զիւրեանց ,, տաղաւարսն. զի համարձակ լիցի մատղացն։ Իսկ

,, այսպիսի ինչ Թշուառականին սիրեմ. զի մինչ զար-
,, դարուԹԵ բերէր պտուղ, զգուշանայր նմա ամ՛ ա-
,, սելով. ես եղէց նմա պարիսպ հրեղէն չուրջանա-
,, կի. և ոչ հնձիր պահպանին իսրայելի : Իսկ իբրև
,, այգին ցանկեալ և ձողաբարձ դարմանեաւն եբեր
,, փուչ՝ Թողալ չոյ՝ (կոխան լինել) վնասակարացու-
Կարոյապէս, այսպիսի անցք անցանեն և ընդ անձն
ընդ այն, որ յետ բազումս դարմանելոյ չոյ, յոչ ուղ-
ղիլն Թողեալ լինի ՚ի նմանէ՝ գնալ ըստ կամս ան-
ձին իւրոյ. որպէս հիւանդ յետ բաղում դեղոց յոչ
օգտիլն Թողեալ լինի ՚ի բժշկացն ուտել զոր կամի.
կամ ագարակ լքեալ ՚ի տնէ իւրմէ. իսկ արդ զինչ
կարէ ցանկալ հիւանդ Թողեալ չոյ, և կամ զինչ
կարիցէ բուսուցանել ագարակ անիծեալ։

Ստանօր բառս փաղ դնէ փոխանակ գործելոյ. և
այս՝ ՚ի ցոյց առաւելուԹԵ. ըստ որում գնալն առա-
ւել ինչ ցուցանէ քան զգործելն, զի գործելն յեզուաց
հայի. իսկ գնալն ՚ի հանապազորդելն ՚ի չարիս, որ-
պէս և ՚ի բարիս. ըստ որոյ ասէ բարսեղ (՚ի մեկն.
մարկ. ժՁ.) * զգործմն գնացք կոչէ (որ գիրն) ...
,, ընդէ՞ր ոչ ասաց գործեցին ըստ պատուիրանին, այլ
,, Թէ գնացին. զի առաւել ե գնալն քան զգործելն.
,, զի գործեցինն (ասէ) իբրև զեղեալ և զվճարեալ
,, իրացն պատմէ. իսկ գնալն իբր Թէ յարաժամ զնա-
,, վին չածիլ, և հանապազ գնովաւ դալ, և ոչ երբէք
,, դադարել ։

Ամբ՚ աստանօր զուառդ բարձն Խոշ՝ փոքր մի այլազգ
մեկնի, և գրէ ասել՝ այ այսպէս. * Ոչս (բարձի, այս-
,, ինքն) բարձրացուցի և առի ձգեցի. (իսկ) յոր-
,, ժամ ոչ կամացաւ լսել կամ առնել նայել՝ Թողի եր-
,, Թալ զՀետ կամից իւրոց. և ահա այս մեծ Թշուա-
,, ռութիւն. զի յառնելն զկամն մեր՝ եմք արդարև որ-
,, դիք բարկութիւն ըստ առաքելոյ. տակաւն ամ՛ ազա-
,, տ՚ի բամբասանաց, և մեք ընդ պատժովք յան-
,, ցանացն՝ որք ոչ լուսք նմա կամ նայեցաք ՚ի նոսին
,, և ուղղեցաք զձանապարհս մեր. զի Թէ ոչ էր կո-
,, չեալ, գոյր տեղի պատասխանւոյ. իսկ եԹէ կոչեաց
,, և բարձրացոյց և ոչ վերացաք, անձամբ անձանց
,, մեղ դէցուք ՚ի Թողուն ՚ի նմանէ. քանզի ինքնիշ-

,, խան կամովք ընտրեցաք զկամս անձանց առաւել
,, քան զՅիսուս ։ Լայց այս մեկնութիւն է ըստ յարմա-
բերցուցանելոյ զբառն. իսկ ըստ նկարագրին այս բան
հայի ի լքանել ՚ի զժողովուրդ իւր՝ գնալ ըստ հա-
ճոյս անձանց իւրեանց. որոյ վասն ասէ ՚ի վերայ նո-
ցա այն ամենայն՝ զոր ասացաք. և թէպետև նոցա զո-
բացան ընդդէմ նոցա. և զայսմանէ խօսի մարգարէն
՚ի յաջորդ համարսդ ասելով։

ԺԴ. Ո՞Վ է ՚ի թողուլբդեան իմոյ լսեալ եր ինէ, կամ
երբայէլի զձանաչարկս իմ գիտացեալ եր։

ԺԴ. Որպես զրէ՚ն խնայարհ արարեալ եր իմ զընդհակառ-
բա. ՚ի վերայ ՆեղելոյՆորա արձէքալ եր ինէ։
Լ.յս տարազ խօսից յաւէտ ցաւակցական է քան զան-
դատական. որպէս թէ սիրասուրով՚ն ՚ի վերայ ժո-
ղովրդեան իւրոյ աւադել զնա և ողբալ, ասելով։
Ո՞վ է ՚ի թողուլբդեան իմոյ լսեալ եր ինէ։ Այր բառդ զի
ինէ՝ ունի և զօրութիւն բառիս ահ՚ թէ, ըստ որում և
յերբայականն՝ դնի լա՛. այս է ահ՚ թէ՝ կամ երանի
թէ, որպէս թէ ասէր. երանի՚ թէ ազգն իսրայէլի՝
որ է ժողովուրդ իմ, անսացեալ եր պատուիրանաց
իմոց, և գնացեալ եր ըստ ձանաչարկս իմ, այսինքն
՚ի օրէնս իմ. զի թէ այսպէս արարեալ եր նոցա՝ ոչ
միայն ոչ թողուի զնոսա ՚ի ձեռաց իմոց, այլև
նուաճէի զթշնամիս նոցա, որպէս գնէ ՚ի յաջորդ
համարն։

Լ.յս եղանակ խօսից յայտնի ցուցանի՝ թէ ՚ի ձեռս
մարդոյ է լսել և ոչ լսել ձայնին ՚ի՛, և և գնալ և
ոչ գնալ զձանապարհս նորա, ապա թէ ոչ՝ ոչ վարձս
խոստանայր ՚ն՛, և ոչ պատիժս սպառնայր. յոր միտ
խօսելով գէորգ վարդապետ (՚ի մեկն. եսայ.) ասէ.
* տես զիմարդ յայտ առնէ զանձնիշխան ազատութիւնս՝
,, որ ՚ի մէջ. զի ասէ՝ոնի՚ թէ ախորժեսջիք և լուիք
,, ջնիք, և դարձեալ՝ թէ ոչ կամիջիք լսել ինձ, այսու
,, ՚ի բաց բառնայ զՏարկ, զբախտ, և զձակատագիրս,
,, և զաբբանջանս՝ զնուիրեալ աստղաց զբոր. վասն զի
,, ախորժելն և կամիլն ոչ է գրաւեալ ՚ի ներքոյ հար-
,, կի. և ոչինչ խափանել կարէ զկամս և զախորժակս

,, ուրուք ՚ի լինելոյց , բարի կամ՝ չար ‖ . զի եթէ կա-
միցի գնալ զնամապարհս նմա՝ էր չկարէ . զի ունի և
զնաժ օգնական ինքեան , որ զօրացուցանէ զնա , և
զդիմադարձս նորուն ևս խոնարհեցուցանէ . ըստ ո-
րում և ասէ հան՝

Որպես ղէնիլ խոնարհ արարեալ էր իմ զընդհատ նոցա , ՚ի վե-
րայ հեղեղաց նորա արիեալ էր ղնեռն իմ , ՚ի ժառանգելոյս
ցանել ՚ոյ զրգռացն իսրայէլի զերկիրն աւետեաց՝ ե-
թէ ոգ անդ ՚ի թշնամեաց նոցա զազգս հինգ , և զայլս
ևս . (ըստ որում դրի ՚ի գատ . ՟ը . 20 -- 23 . և ՟ը .
1 -- 5 .) որպէս զի ասէ փորձեսցին նոքօք . եթէ հա-
ւատարիմ գտցին , զնոսին ևս ջնջեսցէ . բայց քանզի
անհաւատարիմ գտան նորա , վասն որոյ և եթող զնո-
սա իբրև զգուտսան՝ առ ՚ի հարկանել նոքօք զիսրայէ-
լացիս . և զի ցուցցէ թէ պատրաստ էր ած ջնջել զնո-
սա , և դիւրաբեր քառնսալ ՚ի միջոց , ասէ՝

Որպես ղէնիլ խոնարհ արարեալ էր իմ զընդհատ նորա , ՚ի վե-
րայ հեղեղաց նորա արիեալ էր ղնեռն իմ , ՚ի վասն ասէլ . եւ որ
ժառանգեսցուն իսրայէլացոց զերկիրն խոստացեալ՝
եթէ տեսանի զնոսա գնալ ըստ հաճոյս իմ , զթշնա-
միս նոցն իբրև զջնջեալ այսինքն իբրև զանա-
պատաս նուաձել և խոնարհեցուցանել առաջի նոց .
և որք նեղէին զնոսա՝ ամենակարող ձեռամբ իմով
հարկանել . Օ այս ասելով կամի ցուցանել , թէ ոչ-
ինչ դժուարին էր ոյ վանել և նուաճել զթշնամին
իսրայէլի . զի ոչինչ էին նոքա , և ոչինչ կարէին առ-
նել ընդեմ իսրայէլացոց . և դիւրին էր նմա ձեռամբ
իւրով արգելուլ զնոսա զի մի նեղեսցեն զիսրայէլ .
բայց նա ինքն փոխանակ նուաճելոյ զթշնամիս նոցա՝
արար՝ զի թշնամիք նոցա նուաճեսցեն զնոսա , որով-
հետև խոտորեցան նոքա ՚ի նմանէ .

Հոգևորապէս այսու բանիւ ըստ լամբ՚ ցուցանի՝ թէ
ած նուաճէ և խոնարհեցուցանէ զթշնամիս հոգւոց
մերոց առաջի մեր , եթէ և մեք լուիցուք ձայնի նո-
ա : ՚Այլ մեք ասէ լամբ՚ . * վասն այնր եմք կոխան ,
,, զի ոչ մեր ոչ լուաք ‖ . և հոգւով թշնամի գաղանք ,
ստեալ ընդեմ ուխանին՝ զոր եգաք ընդ նմա ՚ի միտս .
թէ . որպէս արարին իսրայէլացիք . (գատ . ՟ժ . 13 .
և ՟ը . մնաց . ժ՟ . 11 .) զորոց դանդատեալ մարգա-

բնին. առնու լինքն զդեմն բանին, և խօսելով՝ ի վեր մաց իւրոց ասէ։

ԺԵ. Պաղնափ ան սպեղին նմա. և եղիցին ձամանակ նո
ցա յաշխարհի։

Պաղնափ անուանակին աստ իսրայէլացիք. զի Թէպէտ ած էառ զնոսա ինքեան իբրև զաբրահամ, կամ իբրև զղոդիս վասն ուխտին՝ զոր եդ ընդ Նոցա, բայց նաբաս յետս դառնալով՝ ի նմանն՝ Թշնամի եղեն նմա, և զոր խոստացան՝ ստեցին, վասն որոյ ասէ։

Պաղնափ ան սպեղին նմա։ Այսինքն իսրայէլացիք որք իբրև որդիք ուխտ եդին ընդ նմ՝ ծառայել նմա, և խոստացան առնել զամենայն՝ զոր հրամայեաց նա։ (ելից. ԺԴ. 8.) դարձան և եղեն Թշնամի նորա, և ստեցին նմա, այսինքն սուտ հանին զխոստումն իւրեանց զոր խոստացան նմա, ոչ պահելով զայն։ որով և գրգռեցին զբարկութիւնն ած՝ ի վերայ իւրեանց. իսկ Թէ զինչ պատահիլ ունէր նոցա՝ յայտ առնէ ասելով։

Ա՝ եղիցին ձամանակ նոցա յաշխարհի։ Ժամանակաւ կարէ նշանակիլ աստ ժամանակ բարի և ժամանակ ոչ բարի. այսինքն ժամանակ յաջողութեան և ժամանակ ձախողութեան, ժամանակ անդրդո և ժամանակ տար, ժամանակ հանգստեան և ժամանակ Թշուառութեան։ Այնժէ ըստ բարւոյ մասին առցուք, կրկնակի մեկին այս բան. նախ՝ Թէ իսրայէլացիք Թշնամի լինելով ած՝ Թէպէտ և արժանի էին ջնջելոյ, բայց ած գԹալով՝ ի նոսա վասն ուխտի հարց նոցա՝ եցոյց նոյ յաշխարհի աստ յամենայն ժամանակի զնեցամն իւր ոչ մեռ նոցա, այլ վասն հարց նոցին. ուստի գասն նոցա ժամանակք յաշխարհի։ Այնկրորդ ըստ հակառակն. ի մերժել ած զժողովուրդ իւր՝ եՀաղ զնոսա՝ ունիլ զժամանակ բարի յաշխարհի աստ միայն. կամ Թող եւս զի երջանկութիւնք նոցա լցին առաժամանակեայ՝ ի վերայ երկրի իբրև անառնոց. Թերևս յառաժամանակեայ երջանկութենէ յորդորեսցին գասնել գյաւիտենականն։ Կամ եԹէ ըստ անբարի մասին առցուք զժամանակն, կամի ասել. որովհետև իսրայէլացիք Թշնամացեալ ընդ ած՝ ստեցին նմա, մնասեաց զնոսա ած ի Թշուառութիւն։

զի առ ժամանակ մի չարչարեցին յաշխարհի աստ, որպէս զի ղգաստասցին և դարձցին, և մի կորնչեն ՚ի յաւիտեան։

Նարօյապէս, որք մեղօք Թշնամի լինին ՚ոյ, և ապա ապաշխարուքէ դառնան առ նա, և խոստանան ոչ ևս մեղանչել, յոչ պահելն զխոստմունս իւրեանց՝ ստեն նմա. որպիսի են ոմանք ՚ի քրիստոնէից, որք ՚ի հանանել աւուրց զատկի՝ խոստովանին և ապաշխարեն և լուանան զհանդերձս իւրեանց արեամբ գառինն. (յայտ. իբ. 14.) և առաջադրեն ոչ ևս ստել, ոչ ևս հայհոյել, ոչ ևս վավաշել, ևն. և յետ քանի մի աւուրց՝ եղծանեն զխոստմունս իւրեանց. որով և ստեն ՚ոյ։ Եւ եղիցին ժամանակք նոցա յաշխարհի. իբր զի յաշխարհի աստ միայն կարեն այսպիսի խաբէութիւք վարիլ ընդ ՚ոյ. իսկ ՚ի հանդերձեալն ոչ ևս, այլ տուգանիլ յերեսաց բարկութենէ նորա։

Ոմանք ՚ի բաբունեացն հրէից և ՚ի նորոց՝ Թշնամեօք իմանան աստ զհեթանոս, և զբանն առնուն ընդ պայմանաւ, այսինքն ընդ Թէութիք. որպէս Թէ ասացեալ էր. եթէ Թշնամիք ՚ոն այսինքն հեթանոսք էին ստեալ իսրայէլի՝ այսինքն պատրեալ զիսրթայէլացիս, ժամանակք իսրայէլացւոց լինէին երջանիկ յաշխարհի։ Այլ աւասիկ մեկնութիւնն ե համաձայն կարգի բանին. իբր զի ՚ն ծած Թէպէտ և Թշնամի եաես զիսրայէլացիս, բայց հայհոյել ոչ ՚ի խոստուամն նոցա, այլ ՚ի խոստուամն իւր, ոչ ՚ի քայ արար խոպառ զնոսա ՚ի նոցանէ, այլ բազմօք խրատեաց զնոսա, և ս և բազում երկրաւոր և ժամանակաւոր բարեօք լցոյց զնոսա. զորմէ քայցայայտ և ս խօսի ՚ի յաջորդ համարն՝ ասելով։

ԺԷ. Երակրեաց զնոսա ՚ի պարարտութենէ ցորենոյ. և ՚ի վէմ ի մեղր յագեցոյց ՚ի նոսա։

Այս այն է՝ զոր ասէ մովսէս յերգս իւր (ՃՀ. օրին. ԼՔ. 13.) * եհան զնոսա (այսինքն զիսրայէլացիս) „ ՚ի զօրութիւն երկրի (այսինքն ՚ի պարարտ երկիր) „ կիր), կերակրեաց զնոսա արդեամբք անղաստատ „ նաց, զի եղեցոյց մեղր ՚ի վիմէ, և ևղ յատակաւաժ վէմ „ ՚ն։ Այս է՝ զոր ասէ

Վերակրեաց զնոսա ՚ի պարարտութիւն ցորենոյ. և ՚ի վեր դեղը յաճեցոյց ՚ի նոսա: Այսինքն՝ յորժամ էած ամ զհարայլացս յերկիրն խոստացեալ՝ որ է պաղեստին, պարարտ ցորենով հովտաց այնը երկրի կերակրեաց զնոսա, զի ՚ի հովիտս պաղեստինոյ պարարտ լինի ցորեանն, և առատ. (սաղ. կէ. 14:) Որպէս ասէ և քաղցրութիւնը մեղու որ լինէր ՚ի վէմն՝ յաճեցոյց զնոսա. քանզի ՚ի պաղեստին (որպէս և յայլ բազում տեղիս) մեղուք ՚ի խորշս վիմաց կազմեն զմեղը առատ յոյժ, յորմէ հա-

նեալ ուտէին իսրայէլացիք և լինէր յաճէին:

Բայց քանզի երկիրն աւետեաց էր վիմուտ կամ ապառաժուտ, մարթ է ասել, թէ յայն որպիսութիւն երկրին հայելով՝ փոխաբերութիւնը խօսի զայս մարգարէն. որպէս թէ եդեալ էր. ՚ի վիմուտ և յապառաժուտ երկրէ մեղը քաղեցոյց ամ, այսինքն զլուութիւն պէսպէս արմտեաց. և նոքիմբք յաճեցոյց զնոսա:

Ոյս բան ոմանք ըստ պայմանաւ մեկնեն, իբր թէ ասէ. եթէ իսրայէլացիք չէին յետս կացեալ յոյ, կերակրէր զնոսա ամ ՚ի պարարտութիւնէ ցորենոյ, և յաճեցուցանէր զնոսա ՚ի քաղցրութիւնէ մեղու: Կան և այլք որք պարարտութիւն ցորենոյ իմանան զմանանայն, որով կերակրեաց ամ զիսրայէլացիս. զի վասն բազմահամ լինելոյ նորա անուամբ պարարտութիւն ցորենոյ յիշի աստ. սոյնպէս և մեղը ՚ի վիմէ ասելով՝ իմանան ընդոստակեբերանի զջուրն որ աքանչելեօք հանեալ եղև ՚ի վիմէ. և զի յոյժ քաղցր թուեցաւ այն ծարաւեալ ժողովրդեանն, վասն այսորիկ անուամբ մեղու յիշէ զնա մարգարէն: Յաւելու վարդան՝ թէ ՚ի կողմանս ինչ այնը երկրի իջանէր գազպէն մեղրահամ ՚ի վերայ վիմի. զոր ժողովեալ ուտէին հրէայք. ըստ որոյ ասի՝ ՚ի վիմէ մեղը յաճեցոյց զնոսա: Բայց առաջինն մեկնութիւնն երևի հաւանական, և հարազատ:

Այլաբանօրէն, այս բանք հանդերձ նախընթացիւք մեկնին ՚ի դէմս քոն. իբր զի եթէ ՚ի գալ նորա առ իսրայէլացիս, լուեալ էին նոքա ձայնի նորա, փոխանակ թշնամեաց նոցա՝ այսինքն փոխանակ հեթանոսաց ընտրէր զնա իբր եկեղեցի. բայց քանզի նոքա թշնամացան ընդ նմա, և ատեցին զբանս մարգարէից որ վ-

նորա, և սուտ վկայութիւնք յարեան ի վերայ նորա, վասն որոյ և նա եթող զնոսա, և ժամանակք նոցա եղեն յաշխարհի՝ այսինքն արտաքոյ եկեղեցւոյ և ոչ յեկեղեցւոջ, և ի կեանս յայս միայն և ոչ ի հանդերձեալն:

Նոքա զորս միանգամ ժողովեաց յեկեղեցի իւր՝ կերակրեաց զնոսա պարարտութիւնք ցորենոյ և գինւոյ այսինքն մարմնոյ և արեան իւրոյ. և յապերցոյց զնոսա խորհրդով մեղու, այսինքն խորհրդովք որք բղխեցին ի նմանէ իբրև ի վիմէ. և ա և լիացոյց զնոսա մեղու երկնային խմաստութիւնք. և հանդերձեալ է ըստ ամենայնի կերակրել և յապերցուցանել զնոսա յարքայութիւնն իւրում ի սեղանն ամենալի, յաւիտեան և յաւիտեանս:

ՍԱՂՄՈՍ ՁԱ:

Ա Ջ եկայ ի ժողովս սուրբոց, և ի մէջ նոցա դատեցի զդէմս ընդ դէմ: 2 Ա՛նկնէ չիք դատել անէրանալ, և աւելի անէրանալ, և աւելի սրտիւք ոչ ոք ի մարդկանէ: 3 Ո՛ւմեք արարէք որբոյն և այրւոյ. և նեղեալ և աղքատ արարէք պնդանիքն և խոնարհեցուցէք: 4 Ա՛պրեցուցէք զաղքատս և զպնդանիքն. ի ձեռաց մեղաւորաց ետրէք զնոսա: 5 Ո՛չ գիտացան և ոչ ի մտի առին. ի խաւարի գնացին, և շարժեցան ամենայն հիմունք երկրի: 6 Ես ասացի՝ ընդ աստուածս էք, և որդիք բարձրելոյ ամենեքեան: 7 Ո՛րպէս ահաւադիկ մարդիկ մեռանիք. և որպէս միով չափով անկանիք: 8 Ա՛րի Աստուած, և դատեա զերկիր. զի դու ժառանգեցուցես ամենայն հեթանոսս:

ՎԵՐՆԱԳԻՐ

ԱՂՔԱՏ ՅԱՍԱՔ։



ԱՅՍ ՎԱՐՆԱԳԻՐ ՅԱՐՈՒՆ ՁԱ-
ռաքելս մեր դնի հանդերձ բառիս օրհնու-
ւէն՝ այսպէս. * օրհնութիւն, սաղմոս յա-
,, սափ ‖. կամ * օրհնութիւն սաղմոսաց յաստափ ‖. և՛ է
միւսմ ևս յաւելեալ լինի բառս՝ է կոպտաց։ Ասէ յայլ
ձեռաքելս մեր և՛ տպագրեալս և՛ վարդանայն
դնի ըստ վերոյհիշելոյդ. նոյնպէս և յեբր" և յայլ
թարգմանութիւնս։

Ասէ թէ ուստի և ելեալ էցէ յօրինեալ այս սաղմոս, և
չինչ առթէ, չէ յայտ. ոմանք ասեն՝ թէ այս էցէ
շարունակութի նախընթաց սաղմոսին. և այլք պնդեն՝
թէ այս ասացաւ՝ ի գաւթայ յետ մահուն աբեսաղո-
մայ՝ նմանեցուցանելով զգործ նր և զգործ հետևո-
ղաց նորին այնոցիկ դատաւորաց՝ որք անիրաւութիւք
առնեն զդատաստան։ Ոմանք թէ այս ասացաւ յաս-
փայ ումեմնէ մօտ՝ ի վախճան գերուեն բաբելացւոց՝
յանդիմանելով զարարս անիրաւ դատաւորաց առ՝ ի
զգուշութիւն այլոց։

Ոմանք ևս ասեն՝ թէ այս ասացաւ յոգիսէլ՝ որ
էր յորդւոցն ասափայ յաւուրս յովսափատայ արքային
յուդայ. որ յետ ուղղելոյ զսիրտս ժողովրդեան առ
ած՝ կացոյց դատաւորս յամենայն քաղաքս յուդայ. և
ասէ ցնոսա. * տեսէք զինչ առնէիցէք դուք. վասն զի
,, ոչ զմարդկան էրս դատէք դուք, այլ զէն. և ընդ
,, ձեզ են բանք էրատանց. և արդ եղիցի երկիւղ էն
,, ի վերայ ձեր. պահեցէք և արարէք, զի ոչ գոյ էն
,, այ մերոյ անիրաւութիւն, և ոչ երեսաց աչառել, և
,, ոչ առնուլ կաշառս ‖. (բ. Մնաց. ԺԹ. 6։) Ա. յա
կարծիք երևի հաւանական, մանաւանդ թէ և յայտ-
նապոյն կամ. քանզի մեք ոչ յորոշումն հեղինակի և ոչ

յամխոփուցին ժամանակի, այլ՝ ի միտս բանին ուշ դնելոյ՝ ի հատարակի ունելիք մեկնել։

ՐԱՆ

ՐԱՒԻՒ ՁԴ՝ ի՛ ԵՐ զիրս ուրեք ուրեք նշանակին հրեշտակք, ուրեք ուրեք մարգարէք և ՅԲՔ, ուրեք ուրեք և կուռք. զորոց տե՛ս ի սաղ. խթ. 1։ Նաև զուտ ուրեք և ոս նշանակին դատաւորք կամ առաջնորդք, ըստ այնմ (ելից. իբ. 28.) * զՅուդա քո (այսինքն զդատաւորս քո) ոչ բամբասիցես, և զիշխան ժողովրդեան քո ոչ հայհոյեսցես ॥։

Եւ սորա պատճառն է այն՝ զի այսպիսիքս բերեն յինքեանս զփոխանորդութի՛ն այլ՝ ի դատել. յոր միտ ասաց յովսափաթ՝ ի վերոյ ցդատաւորսն. * ոչ զմարդոյ կան իրս դատէք դուք, այլ զՅՀՆ ॥։ Եւ այս՝ ըստ երկուց. մի՝ զի դատելն ՅՀՈՎ է. ըստ այնմ (Բ. օրին. ա. 17.) * մի առնուցուս ակն՝ ի դատաստանի.... զի դատաստանն ՅՀՈՎ է ॥. յոր միտ ասէ յակոբ առաքեալ. * մի է օրէնսդիրն և դատաւորն ॥. (յակ. դ. 12։) Երկրորդ՝ զի իշխանութի՛ն դատելոյ յՅՀՈՎ է տուեալ. ըստ այնմ (իմաստ. գ. 2--5.) * լուարուք թագաւորք և՝ի միտ առէք. ուսարուք դատաւորք ծագաց երկրի.. զի՝ ի ՅՀՈՎ տուաւ ձեզ իշխանութի՛ւդ ॥. զի * ոչ ուստեք է իշխանութի՛ն (ասէ առաքեալն), եթէ ոչ ՅՀՈՎ ॥. (հռոմ. ժգ. 1.) զի հրամանն տալ կենաց և մահու է յիշխանութի՛ն ՅՀՈՎ։

Եւ վասն այսորիկ որք միանգամ հաղորդ գտանին այսպիսի իշխանութի՛ն՝ որպիսի են դատաւորք և թագաւորք, և այլ ո՛և իցէ առաջնորդք, հրեն երբեմն զանուն ՅՀՈՎ. որպիսի եղև և մովսէս՝ որում ասաց ՅՀՆ. * ահա եսու զքեզ ՅՀՆ փարաւոնի ॥. (ելից. է. 1։) Այսպիսի՛ տե՛ս և՝ ի վերոյիշեալ սաղ. խթ. 1. յոյն

քան որ ասէ. * ած աստուածոց ամէ խօսեցաւ ‖: Ա՛րդ
վկայէ մարգարէս լինել այսպիսեացս,
յասելն:

Ա՛ձ եկայ՝ ի ժողովս ածոց, և՝ ի դէզ նոցա պատէր ընծաս:
Ա՛յս բան կարէ հայել նախ՝ ի հրեշտակս և՝ ի հոգիս
հատարելոց. որք վասն լինելոյ բնակարան այլ, և՝ ի
պատիւեր այլ՝ կոչէին ածք, և որդիք բարձրելոյ. և ած
ե՝ ի նաստ իբրև՝ ի ժողովս ածց:

Ներկրորդ կարէ հայել՝ ի մարգարէս, և՝ ի աքս. որոյ
մին իբրև ած գաւազանաւ աստեաց ծովու և բաժա-
նեաց զայն. և միւան յետս նահանջեաց զջուրս գե-
տոյ, նաև զարեգական կապեաց. մին արգել զերկինս՝
զի մի տեղասցի, և միւան ծննդական կացոյց, ևն:
Եւ ած աս կալ՝ ի ժողովս սոցա ըստ այնմ զի աս թէ
* կայ՝ ի մէջ այնոցիկ, որք ածացեալ են սրբութիւն,
,, և կեան ըստ այլ ‖:

Ներորդ՝ կարէ հայել՝ ի դատաւորս և յիշխանս. և
որպէս յայտնի երևի՝ ի յաջորդ բանէց՝ սկզբնաբար՝ ի
սոսին հայի աստ այս բան. քանզի մարգարէն դիտէ
այսու յուցանել՝ թէ ուր իշխանք և դատաւորք նստին
իբրև ած՝ ի դատել, ած կայ՝ ի մէջ նոցա. և ձեռամբ
նոցա դատ զդատելս. ըստ որում և աս * ՝ի միջի
,, նոցա դատէր զնոսա ‖:

Նոյնակ այս կալս՝ ի միջի ոչ է իմանալի ըստ հատարակ ե-
ղանակի՝ որով աս լինել յամենայն տեղիս, այլ յա-
տուկ իմն եղանակաւ. և այս երկրակի. մի՝ իբրև տէր
ամենայն դատողութիւն, կամ իբրև առաջին դատաւոր
՝ի վարել յաներևոյթս զդատաստան նոյ և՝ ի քննել
զվէմս նոցին: Ներկրորդ՝ իբրև օրէնադիր՝ ի ձեռն օ-
րինաց իւրոց կամ՝ ի ձեռն լուսոյ բանին զոր տուեալ
է նոցա՝ ի յուցանել՝ թէ զինչ պարտ է առնել նոցա
՝ի դատելն: Ներորդ՝ իբրև իշխան՝ ի դատել զնոսա.
իբր զի ըստ դատաստանաց նոցա ուղի դատել զնոսա.
յոր միտ յաւելու զայն՝ թէ՝ ի միջի նոցա դատէ զնո-
սա. ուր դերանունդ զնոսա՝ յարաբերէ զդատաւորան.
որպէս թէ ասէր, ած կալով՝ ի մէջ նոցա և լսելով
զդատաստան նոցա զոր առնեն, ըստ դատելոյ նոցա
հատուցանէ նոցա:

Նոյնակ յասելն աստ յանցեալ ժամանակի՝ ելոյ, նոյնպէս

և յասելն՝ պաթէր, այս եղանակ բայն ոչ ցուցանէ սոակ
ջանցեալն՝ այլև զնեցկայն և զապագայն. զի որով-
հետև ՚այ է կալ ՚ի մէջ դատաւորաց ՚ի դատել, որ-
պէս միշտ եկաց և դատեաց, նոյնպէս միշտ կայ և
դատէ։

Ա.յլ արժան է քննել և զայն՝ զի ոչ ասէ, նատաւ՝
որպէս օրէնն է դատողին, այլ եկաց. որով ոչ ցուցա-
նէ՝ թէ ոչ է նստեալ կամ թէ լեալ նստեալ, այլ թէ
ոչ է հեռւ ՚ի նոցանէ, և թէ ոչ է յանհոգս զնոցանէ՝
այլ կայ աջդ ՚ի դիտել և ՚ի դատել. զայսմանէ տե՛ս
և ՚ի հաամարն. 6։

Ա.յլաբանօրէն լինի այս բան ուղղակի հայի ՚ի քո, որ
մարմնով իսկ բաղում անգամ եկաց ՚ի մէջ աստուածոց՝
այսինքն ծերոց ժողովրդեան և քահանայից՝ ՚ի տա-
ճարի և ՚ի ժողովրդանոցս հրէից, և դատեր զնոսա,
լսեր և պատասխաներ. որ ուղիղն էր՝ ցուցաներ, և
որ թիւրն էր՝ յանդիմաներ. որպէս տեսանի յաւետա-
րանի ՚ի բազում տեղիս։ Այս և եկաց ՚ի մէջ առա-
քելոց բազում անգամ, և դատեր ՚ի մէջ նոյ։ Կացցէ
և այսուրն յետնում ՚ի մէջ աստուածոց, այսինքն ՚ի
մէջ հրեշտակաց և սրոց, և դատեսցէ, զորս դատե-
լիքն են, մանաւանդ զայնոսիկ՝ որք անիրաւեցան ՚ի
դատէն զայլս, և որք ՚ինասեցին այլոց կամ վրէժս
հանին. և յայնժամ հասցէ նոցա խորտակումն և կո-
րուստ. ըստ որոյ ասէ նաբեկացին. (՚ի բանն. լէ.)
* իսկ յորժամ կացցէ ՚ած համբարձեալ հրաշիւք ար-
„ ուեստից ՚ի մէջ աստուածոց հաշտարանացն խաղա-
„ ղութե, բարձեալ ընդ ինքեան զչնորհացն կտակ.
„ առ որ ամենայն ՚ինասակարութիւնք խարդախութե,
„ և կարճմտութիւնք սրտնեղութե լքեր ընդ վիմաղէն
„ լերին պնդուե բաղխեցեալ ցնդին ջրոյ օրինակաւ՝
„ սակաւու հեղեալ, և կամ հոդոյ՝ խորտակմամբ
„ փշրեալ։ Եւ արդ քանզի եղ մարգարէն՝ թէ ած
դատէր ՚ի մէջ դատաւորաց, զդատել նորա ՚ի մէջ
քեզ ՚ի հեռւեալ յերկիս համարս, և ասէ։

Պատուիրեաց ած խորհելացւոց ՚ի ձեռն մովսէսի

(գեա. լիե. 15. և 35.) և ասէ. * անիրաւութիւն
„ դատաստանի մի առնիցես, և ակն աղքատի մի առ-
„ նուցուս. և մի երեսաց աչառիցես հարստի. արդա-
„ րութիւն դատեսցես զընկեր քո ։. սմին նման խօսե-
ցաւ և՛ ի գիրս երկրորդ օրինաց (ա. 17. և ժէ. 19--21։) Եւ զի այս իրաւունք հային՝ և՛ բնական օրինա, և՛ պատուիրեալ ոյց զայս առ իսրայէլացիս, նո-
վին պատուիրեալ լինէր և առ ամենայն դատաւորս։
Եւ պատճառ այսչափ խստիւ պատուիրելոյն էր այն՝
զի դատաւորք դիւրաւ հակին յանիրաւ դատաստան.
և այս՝ վասն երկուց. այսինքն կամ վասն օգտի իւրեանց
և կամ վասն օգտի այլոց. կամ որ նոյն է, կամ վասն կա-
շառացն՝ որ հայի յօգուտ իւրեանց և կամ վասն ակնա-
ռութեան որ հայի յօգուտ այլոց. և զի յաճախ պատահի
այս՝ վասն որոյ խօսելով նախ ըստ առաջնոյն ասէ։
Մի՛ ընկալցիր դէմս անիրաւութեան։ Այսինքն մինչև կերբ
և՛ դատելն ձեր՝ անիրաւութիւն վարիք վասն օգտի ձե-
րոյ և վասն կաշառացդ, կամ որ նոյն է, մինչև կերբ ոչ
դադարիք անիրաւութիւն դատել՝ հայելով յօգուտ
ձեր. խօսելով ապա և ընդ երկրորդին՝ ասէ։
Եւ՛ ակն առնուլ ոչ ումեք։ Այսինքն զի մեղաւորացդ ասելով՝
իմանայ զմեծատունս և զբռնաւորս կամ զանողորմս և
զանօրէնս՝ որք հարստահարեն զխոնարհս և զտկարս.
և յածխելն կամ՝ ի վարելն՝ ի դատաստան՝ ի ձեռն մե-
ծութեանէ կամ զօրութեանէ իւրեանց տան դատաւորաց ակն
առնուլ ինքեանց, այսինքն՝ ի չնորհս իւրեանց առ-
նել զդատաստան, կամ ըստ հաճոյից իւրեանց տալ
զվճիռ. ոչ յիրաւունս հայելով և ոչ յարդարութիւն,
այլ՝ ի մեծութենէ և՛ ի զօրութենէ նոցա ակնարկելով. կի-
թէ ոչ փառաց աղքատին և որբոյն, և ոչ բանից խո-
նարհին ուշ դնելով՝ այլ մնոտի պատճառաց մեղաւո-
րացն զինջանելով. փոխանակ զի պարտ էր նոցա ընդ
հակառակն գործել. վասն որոյ յարէ զկնի մարգա-
րէն և ասէ։

ՀԵ. Վաղ արարէք զբերան և այրուց. երաւանս արարէք զ-
նանչին և խոնարհի։

Դատաստանք ջունելով երկիւղ յորբոց և յայրեաց,
նոյնպէս և՛ ի տնանկաց և՛ ի խոնարհաց, զորեքկին

կարեն անիրաւիլ ի նոսա. մի՝ անիրաւ վճիռ հաստատել. երկրորդ՝ անիրաւ ինչ պահանջելով, իբր զի եթէ դատելին տայէ կամ արասցէ զայս ինչ՝ տայեն նմա զիրաւունս. երրորդ՝ յապաղելով յոյժ, մինչև անկանիլ նոցա ի տուժանս կամ ի վտանգս. չորրորդ՝ անպատիւ առնելով յիմիք։

Ի սա չորից ըստ այսոցիկ պնդ մարգարէն զերս օրէնսն. զերկուսն աստ, և զերկուսն ի յաջորդ համարն. բայց քանզի յիւրաքանչիւր օրինակսդ չորեքին տոքա ևս ըստ միմեանս կապակցեալ մնասցին, մեք ևս ի հասարակի դնեմք զայնոսիկ առաջի։ Ա. րդ նախ ասէ։

Վա՛յ արարէք ոչբան և այրուց թշուառագոյն համարեալ լինի. զի մին զրկեալ գոլով ի ծնողաց, և միւսն յառնէ, երկոքին ևս մնացեալ են անտէր. ուստի եթէ հարկ լինի նոցա անկանիլ առ դատաւորս, դատաւորք կրկին պարտականութեն ունին ուղիղ դատելոյ զիրաւունս նոցա. մի՝ իբրև հայր և խնամօղ. և մի ևս իբրև ջատագով արդարութեն՝ որովք պարտաւորին դատ առնել նոցա, այսինքն առնկն դնելով իրաւանց և փաստից նոցա ի նպաստ նոցա հատանել զվէճս, կիմացուցանել զնոսա արդար, եդեալ թէ իրաւունս ունէցին նոքա. ապա թէ ոչ՝ անիրաւութեն լինի տալ նոցա զիրաւունս։ Ա. այլ քանզի դի դատաւորք բազում անգամ պակասին յայսպիսիս, վ՚ա այսորիկ ասէր Եսայի. (ա. 23.) * Իշխանք ձեր ,, ապստամբք՝ գողակիցք են գողոց. սիրեն զկաշառս, ,, վրէժատրմունք. որբոց իրաւունս ոչ առնեն, և դա- ,, տաստանի այրեաց ունկն ոչ դնեն ‖. և Երեմիա. (ե. 28.) * Դատաստան արդար ոչ դատեցան. զի- ,, րաւունս որբոյն ոչ իրաւացուցին, և զդատաստան ,, այրուն ոչ դատեցին ‖։

Յարոյսապէս, ըստ լամբ՚՚ այս բանք ասին առ բանականս միտս՝ ի դատել նորա անիրաւութեք զհոգին. որ իբրև որբ և այրի, կիմբրև աղքատ և խոնարհ կրէ զրկանս յոտնից իւրոց, այսինքն ի մարմնոյ. և միտքն՝ որ ըստ վերին մասին պարտական էր զիրաւունս հոգւոյն՝ հոգւոյ տալ, անսաց մարմնոյն, և զանիրաւ փաստս նորա իրաւացուցեալ՝ զհոգին այնմ հետևել ստիպէ։

Յայս հայի զան շարականին. * դատաւոր արդարութ
ևէն ||: Ոյայս եդեալ մարդարէին խօսի ապա և զնրա-
ւանց տնանկին և խոնարհին ասելով:

Իրաւունս արասջիք տնանկին և խոնարհի: Ա.յսինքն՝ ի ը-
նդունել տնանկին՝ ի դատաստան ընդդէմ մեծատան,
կամ՝ ի դատ վարել հզօրի զխոնարհն, զպ՛յշ կացջիք՝
ոմ դատաւորք, զի արդարութիւն արասջիք իրաւունս
տնանկին և խոնարհին յորոց չունիք ակն առնլոյ ինչ,
զի և նոքա չունին տալոց. զպ՛յշ կացջիք և զի մի վն
յարդելոյ զերեսս մեծատան կամ վանն երկնչելոյ՝ ի
բանսուիլ հզօրի աղաւաղիցէք զարդար փաստս նոցա.
որով փոխանակ ապրեցուցանելոյ զնոսա՝ մատնեսջիք
՝ի տուգանս կամ՝ ի վիշտս. յորմէ առաւել և կամե-
լով զգուշացուցանել, յարէ զկնի և ասէ:

Ձ. Պրեցուջէք զաղքատն և զկնանկն, ՚ի ձեռաց զեղա-
ւն զերիվեցէք զնոսա:

՚ի դատել դատաւորին դատաստան արդար առ աղ-
քատս և առ տառապեալս պարտաւորի և ևս՝ յորդո-
րել և ըզ իրաւանց ստիպել զմեծատունն կամ զհզօրն,
զի եթէ վճարելի ինչ իցէ՝ վճարեսցէ. և եթէ հրա-
ժարելի ինչ իցէ, հրաժարեսցի. ապա թէ ոչ՝ ոչինչ
օգտէ այն վճիռ նորա. զորօրինակ եթէ պարտական
ելցէ մեծատունն վճարել այսչափ ինչ դրամ, կամ
դարձուցանել զանօթն կամ զտունն, պարտի ստիպել
զնա ՚ի կատարումն. նոյնպէս եթէ դատեսցէ հրա-
ժարել ՚ի պահանջելոյ յաղքատէն զայս ինչ կամ
զայն, պարտի հրամայել նմա, զի դադարեսցի ՚ի պա-
հանջելոյ. և եթէ զայս արասցէ, ազատեսցէ զտա-
ւասէանն զայն: Ձայս հայի առաջնկայ յորդոր բա-
նիդ յասելն:

Ձ. Պրեցուջէք զաղքատն և զկնանկն, ՚ի ձեռաց զեղա-
ւորէ զերիվեցէք զնոսա: Ա.յսինքն ուղիղ դատելով ազատեսջիք
զաղքատն և զտնանկն ՚ի զրկանաց՝ զորս կրեն նոքա
՚ի ձեռաց մեծատանց և հզօրաց, և փոյթ կալջիք
վրկել զնոսա ՚ի բռնութենէ առն մեղաւորի՝ այսինքն
անօրէնն մեծատան, և կամ անողորմ բռնաւորի կամ
ներգաւոր խաբեբայի. քանզի յայս իսկ ընկալան դա-
տաւորք իշխանութիւն դատելոյ. քայց քանզի նոքա

բազում անգամ հետևելով ազահութիւնէ կամ մարդահաճութիւնէ՝ աղաւաղեն զայս, վասն որոյ յանդիմանելի զնոսա մարգարէն և ասէ։

Ե. Եւ ասացի առ իշխանսն Յակոբայ և առ ոչ՚ի դլուխ տունն Իսրայէլի, և ընդ ձեզ է ամենայն հմտութիւն զիտելոյ զիրաւունսն։

Երկաւ ինչ հարկաւոր է՚ի դատաւորն. առաջինն է՝ լոյս իմաստութիւնէ, իբր զի ունելոյն զբնական հանճար՝ և զտեղեկութիւնէ օրինացն. որպէս զի՚ի գնելոյ առաջի նորա մեծին ինչ խնդրոյ՝ լուծանել իմաստութիւնէ իւրոյ տեսցէ որ ինչ կայ՚ի նմա, և տացէ տեսանել այնմ, որ մատուցանէ զխնդիրն, որոշելով թէ որ իցէ իրաւունքն. քանզի յայս իսկ ածեալ լինի խնդիրն առաջի նորա յերկուց կողմանց, ոչ իբրև յայտնի, այլ իբրև մթին. զի թէ յայտնի էր՝ զի՞ պիտոյ էր՚ի քննութիւնէ դատաստանի մատուցանել։

Իսկ եթէ դատաւորն չունելոյ լոյս իմաստութիւնէ, այլ իցէ խաւարեալ, ոչինչ կարէ որոշել. և խնդիրն առաւել ևս թուի մնալ՚ի մթութիւնէ, վասն զի * Ձրագ ,, մարմնոյ (ա և իցէ հասարակութեանէ) ակն է (այսինքն ,, իմաստութիւնէ դատաւորին կիր կատարելոյ). յորժամ ,, ակնն առատ է, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի. և երբ ակն չար է (այսինքն տգիտութիւնէ խա- ,, ւարեալ է, յայնժամ) և մարմինն խաւարին եղիցի ,, ցի ։. (ղուկ. ժա. 32.) * Իսկ արդ (ասէ տէր) ,, եթէ լոյսդ որ՚ի քեզ է (ոմն դատաւոր) խաւար է, ,, խաւարն (այսինքն միտք տգէտ ժողովրդեան) ո՛րչափ ևս ։. (մատ. զ. 23։)

Երկրորդն է առաքինութիւնէ կամ բարեպաշտութիւնէ, և կամ անախտութիւնէ. իբր զի դատաւորն չիցէ ծառայ ախտից. ապա թէ ոչ՝ թէև և իմաստութիւնէ իւրով որոշեցէ զիրաւունս, ՚ի ձեռն ախտից անհաւատացուցանէ. զորօրինակ եթէ իցէ ծառայ ագահութիւնէ՝ կաշառօք հուրանայ. վասն զի * կաշառ հուրացուցանէ զաչս իմաստնոց, և ապականէ (նաև) զբանս արդարոց ։. (ե. օրին. ժզ. 19։) Երեք իցէ փառասէրն, հակիւ յայն կողմն՝ յորմէ փառաւորի։ Երեք իցէ հեշտասէրն՝ ՚ի նոյն բերի՝ յորմէ առնուն իւրեանց հեշտասիրութիւնէ զարման գտանել։ Երեք իցէ որկրամոլն՝ առնելով

ընդունելութիւնք ուսեալեաց և ըմպելեաց մոլորի։ Ա-
թէ եցէ բարկասիրտ՝ ըս բարկութիւնք վարի և դատ։
Այնպէս լամ և ըս այլոց մոլութեանց, յորոց եթէ
ըմբռնեալ եցէ դատաւորն՝ ապականէ զինդիրն առա
ջի նորա մատուցեալ, կիմ գոնէ ըս առթիւն պատահէ.
լոյ ոչ առնէ այնպիսի ինչ՝ զորմէ ասիցի բարի կիմ ար-
պար. և պատճառն է զի ո՛ և եցէ խնդիր առաջի նո.
րա մատուցեալ եթէ զրկանաց եցէ, և եթէ յանցա.
նաց, ոչ միայն համարեալ լինի իբրև մթին առ՛ի
յայտնել լուսով նորա, ըս որում ասացաք այժմ, այլև
նմանութիւնք ինն խօսելով՝ իբրև անհամ ինչ առ՛ի հա-
մեմել վճռով նորին. իսկ եթէ ինքն դատաւորն եցէ
անհամ, այսինքն մոլի, զիարդ կարէ համեմել. զի որ
չունի զհամ, զիարդ կարիցէ այլում հաղորդել զայն.
վասն զի * եթէ աղն անհամի՝ ւիւ յաղիցի, ոչ իմիք
,, ազդիցէ այնուհետեւ ‖. (մատ. ե. 13.) տէս և զոր
ասացաք ՛ի սաղ. հդ. 74։

Ա.րդ երկաքանչիւր սոքա՝ այսինքն իմաստութիւն, և
բարեպաշտութիւն այնպէս կապակցեալ են ՛ի դատա-
ւորն՝ ևս և յո՛ և եցէ առաջնորդս, մինչ զի եթէ մին
պակասիցի, դատաստանն ապաւաղի, և կառավարու-
թիւնն խանգարի։ Ա.թէ բարեպաշտ եցէ՝ բայց տգէտ
և զուրկ իմաստութենէ, առաւել ՛քան տգիտութի՝
քան զոր շահի բարեպաշտութիւն։ Այնպէս եթէ եցէ
իմաստուն, բայց մոլի, առաւել եղծանէ մոլութի
քան զոր չինէ իմաստութի։

Ա.կ եթէ ՛ի միոյ յայսցանէ պակասելով՝ արդար դա-
տեսցէ, կամ ուղիղ կառավարեսցէ, այն ըստ երից
կարէ լինել. մի՝ ըստ դիպուածոյ. իբր զի թէպէտ և
ինքն ոչ գիտէ թէ այնպէս պարտ է առնել, բայց
դիպուածով ինն այնպէս եղև. որպէս եթէ ոք առանց
կանոնի հաւաքաբանութենէ ուղիղ հաւաքաբանութիւն
կազմեսցէ՝ այն ըստ դիպուածոյ է։ Ա.րկրորդ՝ ըստ
բերման նիւթոյն՝ իբր զի կիմ չինչին ինն է նիւթն, և
կամ ըստ ինքեան յայտնի՝ առ որ ոչ պիտի և ոչ դա.
տաստան։ Ա.րրորդ՝ ը պարագայից. իբր զի այնպիսի
պարագայիւ առաջի դնի իրն, մինչ զի ոչ կարէ դա.
տաւորն առնել ինչ ընդդէմ այնր։ Բայց ամենայն
հայելով՝ յանդիմանի մարգարէն զդատաւորս, և ա

զկրաւաւլարս ժողովրդեան, և նախ ըստ առաջնոյն ասէ։

Ալ էմայան և ոչ՝ ի դէպ առնէ։ Այսինքն ոչ առնելով զնմանութիւն՝ ոչ իմացան զկրաւունս, կամ ոչ կարացին՝ ի գատաստանի իմանալ՝ թէ որո՞յ էցէ իրաւունքն. վասն որոյ և գատաստան թիւր գատեցին. քայց որ չար ևս է՝ ոչ՝ ի դէպ առնէ. այսինքն է՝ ի գատելն թիւրութիւն, ոչ առնին՝ ի միտ՝ թէ թիւր է զոր առնեն։ Այս յետին բան կարէ համարեալ լինել իբր նոյն ընդ առաջնոյն, կամ իբր բացատրութիւն նորա ըստ երկոցունց՝ ըստ թանձրութեանն տգիտութեանն, իբր զի տգիտութիւն վակեալ ունելով նոցա զդրունս մտաց՝ յորժամ պայ գատելի ինչ՝ ոչ կարեն առնուլ՝ ի ներքս, որ է ասել, ոչ իմանան։ Ներկրորդ՝ ըստ խստութեան. իբր զի թէպէտ և կարէին իմանալ՝ զոր լսէին, եթէ ուշ դնէին, քայց ոչ տալով տեղի կամովին ոչ առնուն՝ ի ներքս, այսինքն ոչ կամին իմանալ՝ առ՝ ի ոչ գատել ուղիղ։ Ներորդ՝ ըստ կուրութեան. իբր զի կուրանալով՝ ի միտս՝ ոչ իմացան թէ ած կայ՝ ի մէջ իւրեանց՝ ի գատել. և այս տիրապէս հայի՝ ի մոլութիւն կամ յանիրաւութիւնն. զորմէ խօսի՝ ի յաջորդ հատուածն առաքելով։

՚Ի խաւարէ գնացէն։ ՚Ի խաւարի գնալն կրկնակի կայրն լինել. մի՝ յորժամ ոք առանց լուսոյ իմաստութիւն գործէ, կամ խաւարաւ տգիտութիւն առնէ ինչ՝ եթէ ակամայ էցէ, որպէս որ՝ ի խաւար անկեալ՝ ակամայ խարխափէցէ, և եթէ կամաւ՝ որպէս որ վասն ոչ եւրևելոյ գործոց իւրոց՝ խաւարեցուսցէ զտեղին ուր գործէ. քայց զայսմանէ չէ աստ բանն. զի զայս եղ յառաջնում հատուածի անդ։ Ներկրորդ՝ յորժամ ոք զխաւարային գործ գործէ, այսինքն զայնպիսի գործս՝ որք վասն չարութեն նմանին խաւարի. յոր միտ առաց յովհ՚՚ առետարանիչ. * եթէ ասիցեմք՝ եթէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա, և՝ ի խաւարի շրջիցիմք, ստեմք, և ոչ առնեմք զճշմարտութիւն ‖. (ա. յովհ. ա. 6։)

Յայս միտ առեալ կամի ասել. յորժամ գատաւորք առնիրաւութիւն գատեն, գատաստան նոցա կիճ վճիռ նոցա է գործ խաւարային, զի նոքաւ անցուցանեն կամ

Եասիանեն զերաւուն՝ որ ՚ի կողմանէ զրկելոյն երթայ լայս փայլէ. և Թողուն կամ ոչ բառնան զանիրաւութիւն Թէն որ երթայ եասար ՚ի կողմանէ զրկողին Թանձրացեալ կայ. և զայս այսպէս առնելով՝ գնան ՚ի դատաստանի երթայ ՚ի եասարի։ Ո՞սոյն ինն և վե գործոց ո և էյե իշխանաց և առաջնորդաց՝ որք ե ախտից երեսանց կատարելեն զհպատակեալս երեսանց։ Ասէ Թէ զի՞նչ զհետ գայ այսպիսի կատարութիե, յայտ առնէ մարգարէն յաջորդ բանիւն ասելով։

Վ՚ե զարձեցան ամենայն հեթանոս երկրէ։ Հիմամբք երկրի մարթ է իմանալ նախ զհաստատութի երկրի. և յայս միտ կամի ցուցանել մարգարէն զմեծութի չարութիե դատաւորաց ՚ի դատելն, որպէս Թէ ասէր. այնչափ մեծ է չարութի անիրաւ դատաստանաց, մինչև զալ հիմանց երկրի, կամ որ նոյն է, այնչափ է անիրաւութի դատաւորաց յաղաւաղուե երացանց՝ մինչ զրեթէ և երկիրս եթէ ընդունակ էր, սարսէր և դողայր։

Ներկորդ՝ մարթ է իմանալ զբոլոր տիեզերս ըստ բնակչաց. և յայս միտ զհաստատուն մանն գնէ մարգարէն փոխանակ հաստատուն բոլորին, այսինքն զհին փոխանակ բոլոր շինուածոյ տիեզերացս. որով և կամի ասել. ՚ի մոլար դատաստանաց և յանիրաւ վճռոց, կամ յանխոհեմ և ՚ի մոլի կատարութէ առաջնորդաց՝ ժողովուրդ կիս քաղաք՝ որք կան ՚ի տիեզերս, վեր ՚ի վայր շփոթին, որպէս և ընթեռնումք ՚ի բազում պատմութիս, նաև աչօք ինչ տեսանեմք երբեմն։

Ներորդ՝ փոխաբերութէ մարթ է իմանալ զնոսին իսկ զդատաւորս և զիշխանս. զի են նոքա երբեմն հիմունք երկրի՝ այսինքն հաստատութիւն ժողովրդոց. քանզի նոքիմբք երբեմն հիմամբք հաստատուն ճնան ժողովուրդք երկրի. և սոքա յայնժամ շարժին՝ յորժամ անիրաւութէ դատեն. որով յերացանցն ՚այ դրդուին և հեռանան։

Ներորդ՝ այլով ինն փոխաբերութէ մարթ է իմանալ զերեշտակս երացանցուր ազգի կիս տերութե. յորում յանիրաւել դատաւորաց՝ շարժին նոքա ՚ի բարկութե, կամ՚ի տաղտկութէ. և երբեմն յառաւելուլ անիրա-

ուԹենն՝ հրամանաւն այ Թողուն զաղգն կամ զքա-
ղաքս ազգին . յոր միտ ասացին երբեմն զաբիլոնի .
* բժշկեցաք զբաբիլոն, և նա ոչ բժշկեցաւ ‖ . (երեմ.
ծ՚ա . 9 .)

Հինգերորդ՝ նմանաբանուԹիՒ մարԹ է իմանալ զի-
բաւունս արդարուԹեան , յորս հիմնին իշխանուԹիՒք դա-
տաւորաց . և սոքա յայնժամ շարժին և աղաւաղին ,
յորժամ դատաւորք՝ ի խաւարի գնալով՝ խաւարային
դատաստան առնեն .

Վեցերորդ՝ բարոյապէս մարԹ է իմանալ զառաքի-
նուԹիս , այսինքն զարդարուԹիՒ և զնոհեմուԹիՒ , զա-
բիւրԹիՒ և զբաբեխառնուԹիՒ , զի սոքա են իբրև չո-
բեքին հիմունք բանեսւորք կենաց մարդկան . ապա ե-
Թէ դատաւորք անիրաւ դատեսցեն , և առաջնորդք
յիմարուԹիՒ կառավարեսցեն՝ այսոքիկ առաքինուԹիՒք
չարժին և տապալին ոչ միայն ի նոսա , այլև ի ժո-
ղովուրդս .

Լ՚այ բան կարէ վերածել և ի վէՀակ այնր խաւա-
բային ժամանակի՝ որ յառաջ քան զքե . յորս մարդիկ
ոչ իմացան և ոչ ի միտ առին զՀմայրուԹիՒն ածայնող ,
այլ իբրև ի խաւարի գնային , և ոչ տեսանէին . և
սրք հիմունք Համարէին ի նոսա , չուներին զՀաստա-
տուԹեան . մինչև ևն փրկիչն , և լուսաւորեաց զամե-
նայն , և յայտ արար , սրն իցէ ՀմայրուԹիւնն և սր
իցէ սուտքն , ևն .

Աստ ասէ բարսեղ . (ի մեկն . մարկ . գլ . ժէ .)
* զորօրինակ ի խաւարին գիՀերի քարն և փայտն ,
,, երկաԹն և կաղապարն , անագն և պղինձն , ոսկին և
,, արծաԹն , և ակունքն պատուականքն առՀասարակ
,, ի իմն օրինակ Թուին , մինչև իցէ Հասեալ պայ-
,, ծառուԹեանն լուսոյն , որ զատել և որոշել գիտասցէ
,, զմին ի միսոյն : Այսպէս և յայնժամ մինչև
,, յայտնեալ էր Հշմարիտ լոյս օրինաց աւետարանա-
,, կան քարոզուԹեանն , ոչ կարէին որոշել զչարն ի
,, բարւոյն , և կիր զարբածս յարբալէն . զի ոչ զՀուր՝
,, Հուր իմանային (արարեալ) , և ոչ զջուր՝ ջուր , և
,, ոչ զայլ ինչ մանս արարածոցս . ուստի և ծածկեան
,, անուամբ զարարածս պատուեցին ‖ .

Յարմարական մեկնուԹիՒ այս բան Հայի յամպարիշտս .

օրք ՚ի գործէլն զբարիս զրեթէ ոչ իմանան , զի ոչ կամին ՚ի միտ առնուլ . այլ կամովին ՚ի խաւարն դնան, որով և ամենայն զօրութիւնք հոգւոյ նոցա՝ որք են իբր հիմունք մարդկութեան , խաթխաթին : Օ այսպիսի զանգամանութիւն կամելով մարգարէին հետ առնել ՚ի դատաստանի՝ զպատիւ նոցա յանդիման առնէ նոցա , և ասէ ,

Ղ. Վա՛յ ասացի՛ նէ ածո՛ էղէ , էա՛մ օրդի՛ բաբդրելոյ ամենեցեան :

Ճ. Զո՛ւ ահաւադիկ օրդեա մարդկի հեանի՛ . և օրդեա զի չէշխանաց անկանի՛ :

Ի սկզբան ստացոսիս մարգարէին կոչեաց զդատաստան և զիշխանս՝ ածս , յասէն . * ածե՛ եկայ ՚ի ժողովս ,, ածց ՚՚ . զի ետես զնոսա հաղորդս իշխանութեանն՝ որ տուեալ էր նոցա յոյդ , առ ՚ի դատել արդարութիւն , և կառավարել ուղղութիւն . որովհետև որդիք բարձրելոյ կոչեցան և կոչին . քանզի ինքն ածե իբրև Հայր կառավարէ . իսկ իշխանք և դատաւորք իբրև որդիք նորա կառավարեն իւրաքանչիւր զժողովուրդս յանձնեալս ինքեանց յոյդ՝ իբրև որդւոց : Վայիսի տեսեալ մարգարէին զիշխանս և զդատաւորս՝ Հոյն ասա ՚ի գործս նոցա , և զարմանալով ասէ ցնոսա ,

Վա՛յ ասացի՛ նէ ածո՛ էղէ , էա՛մ օրդի՛ բաբդրելոյ ամենեցեան :

Զո՛ւ ահաւադիկ օրդեա մարդկի հեանի՛ . և օրդեա զի չէշխանաց անկանի՛ : Այս ասացուածք Հայելով ՚ի նախկին ետաց բանսդ՝ դնին իբրև յանդիմանութեի կշտամբանս . որպէս թէ ասացեալ էր , ստրջացայ՝ զի կոչեցի զձեզ ածս . կի՛ թէ ոչսոս՝ զի ասացի ձեզ՝ թէ ածք էղէք , կի՛ որդիք բարձրելոյ . զի դուք աւազիկ որպէս ըս մարդկան մեռանիք , նոյնպէս և ըս մարդկան գործէք , և ոչ ըս այ . վասն որոյ և հանդիպեալ էք անկանիլ յիերաւանց իշխանութե և յիերեսացն այ , որպէս անկանի և մերժի մէկ մարդ ՚ի մէջոյ իշխանաց : Հայտ տեսութե առեալ և որն յակօք մեծեցայ Հայրապետ (՚ի Ձառն . ԺՀ .) վերածէ զայս ՚ի դէմն խորայելացւոց . և զրէ այսպէս . * Այս դատեմ զասց վասն նո-

,, ցա. Էս ասէի բամ հրեշտակք ինչք կիմ որդիք բարձ-
,, բելոյ ամբոն. և իբրև ոչ եղեն պիտանացուք, ապա
,, այնուհետև ասաց՝ Թէ իբրև զմարդիկ մեռանիք,
,, և իբրև զմի յիշխանաց անկանիք ||.

Լսոկ եթէ առանց հայելոյ ի նախընթաց բանսդ կա-
միցիմք մեկնել՝ այս բանք դնին իբրև ազդարարուիք
առ իշխանս և առ դատաւորս, և ա և առ ա և իմ
մարդ՝ որ հաղորդ գտեալ իմ ածայինն պարգևաց.
յոր միտ կամիք ասել. Էս կուգեցի զձեզ ածս, նաև որ-
դիս բարձրելոյ՝ վասն իշխանութեն որ տուեալ է ձեզ,
կամ վասն պարգևացն այ՝ որ չնորհեալ է ձեզ. բայց
այդու ոչ կարիք դուք ածս համարելով զձեզ՝ առնել
զայն զոր կամիք, այլ կատարել զայն զոր կամի ած-
քանզի դուք Թէպէտ և ածք և որդիք բարձրե-
լոյ, բայց ամենեքեանդ առ հասարակ մահկանացու
մարդիկ էք. զի որպէս մեռանին այլ մարդիկ, նոյն-
պէս և դուք աւադիկ որպէս գնասա մեռանիք. և հա-
ւասարիք այնոցիկ որք ունէին և ոչ ինչ. և եթէ եր-
կար էս կեցջիք, ոչ միշտ ի նոյն մնայիցէք, այլ որպէս
պատահի իշխանաց անկանիլ յիշխանութէ, սոյնպէս
և ձեզ. զի և դուք որպէս զմի ի նոցանէ անկանիք.
|՝սա այսմ առնմն երբեր ձեր մեր զայս բան ընդդէմ
յամառ հրէից. զի ի կուէլ իւր գինեաւ ած՝ յորժամ
ընդդէմ դարձան նմա հրեայքն և ասացին. * դու
,,մարդ էս, և զանձն քո ած առնես||. էս պատասխա-
նի. * ոչ յօրինս ձեր գրեալ է. էս ասացի Թէ՝ ածք
,, իցէք. իսկ եթէ գնասա ածս ասէ՝ առ որս բանն այ
,, եղև և չ՝ մարթի եղծանիլ գրոյն. իսկ զոր Հայր
,, սրբեաց և առաքեաց յաշխարհ դուք ասէք Թէ հայ-
,, հոյես, զի ասացի Թէ որդի այ եմ||. (յովհ. Ժ.
34.) որով կամէք ասէլ Թէ դուք ընդունիք զայն
բան՝ որ գրեալ է ի սաղմոսի էս ասացի Թէ ածք ի-
ցէք և որդիք բարձրելոյ. և զայն գրուած ոչ կարիք
եղծանել, կամ չընդունիլ. իսկ արդ եթէ նոքա մար-
դիկ գոլով՝ միայն վասն ընդունելոյ յինքեանս զբանն
այ այսինքն զչնորհս մարգարէութէ, կամ զպարգև
իշխանութէն՝ ածք կոչեցան և որդիք բարձրելոյ, սր-
չափ էս առաւել արժան է՝ զի էս՝ որ եմ Ճշմարիտ
որդի այ կենդանւոյ և բան յաւիտենական, կոչեցայց

ահ և որդի ՚ից ։ Լաւ եթէ այն մարգարէք կամ գաւտւորք և իշխանք մարդկօրէն գործէլով՝ ցուցին թէ ահք իցեն , զինչ ասա ասիցէք ինձ՝ որ ահօրէն գործեմ. եւկ եթէ ոչ գործեմ այնպէս , մի հաւատայք ինձ ։ Լաւ թէպէտ այս բան ոչ էր գրեալ յօրէնս մովսէսի , այլ ՚ի սաղմոսի ասա , սակայն տէրն մեր կամելով յարդոյ ընծայել զանս սաղմոսերգուէն իւրեւ օրէնս՝ առաջի արար զօրէնսն ։ ըստ որմէ ՚ի նոյն յերեալ էին հրեայք , ըզ որս նահ սպառակեցիք ։ եւկ թէ օրէնս կոչեաց զսաղմոսն , այն վասն այսորիկ է ասէ իգնատիոս վարդապետ (՚ի մեկն ղուկ. իէ. 44.) * զի ,, զամենայն հմայորի օրինք և մարգարէքն ։ եւկ ուր պատահձէն էր , որոշ որոշ էդ , յօրէնս , ՚ի մարգարէս , և ՚ի սաղմոս . որպէս յայտ է (՚ի ղուկ. իէ. 44 ։)

Ասաբեկացին (՚ի գոլ. առաք.) և այլք բազումք զայս բան յարմարէցուցանեն առաքելոց և աշակերտաց , և այլք եւ՝ այլոց ՚որ , որք ահձք ասացան , և որդիք բարձրացելոյն ՚ի խաչ . որք մեռան ախտից , և բազումք եւս կատարեցան նահատակութէ ։

Ամենք եւս վերածեն զայս ՚ի դէմն հրեշտակաց . բայց որպէս ասէ սարդիս ՀՈՐՀՅալի (՚ի մեկն . ՚ա . պետ . ՚է . 12 . ձառ . ՚է . յորդ .) * հրեշտակք ոչ երբէք (բաց ,, որոշաբար) ասին որդիք ՚ից , այլ՝ սպասաւոր հոգիք . ,, իսկ մարդ որդի ՚ից եղև և անուանեցաւ ։ ուստի և տէրն մեր որոշ յիշեաց զհրեշտակս և զորդիս ՚ից . (ղուկ . ՚ի . 36 ։)

Լաւ մի անդէպ Թուէսցի՝ թէ միայն մարդս ասի տէրեաղս որդի ՚ից . զի այս դիպաւորս եւս եղև . ապաքէն անդէպ և անկարելի Թուէր թէ որդին ՚ից լինիցի որդի մարդոյ . և սակայն եղև Ճշմարտիւ . այնպէս թէպետ և անդէպ և անկարելի Թուի թէ որդի մարդոյ լինիցի որդի ՚ից , սակայն եղև ՀՈՐՀՈՎ , և եղիցի եւս փառօք ։

Լաւկիկ կողբացի (՚ի գլ. ԺԵ.) զայս բան Համարի ասացեալ ՚ի դիմաց ՚ից առ որդիս մարդկան . և զրկ այսպէս . * ես ասացի թէ ահձք իցէք և որդիք բարձ ,, բելոյն ամենեքեան . այսինքն թէ ես զձեզ անմահս ,, արարի եթէ կացեալ լինք յիմում հրամանին . բայց

,, որովհետև ոչ կացիք յիմիւմ պատուիրանիւ , դուք
,, իբրև զմի յիշխանաց անկանիք . ես ոչ զձեր մաշն
,, կամիմ , և ոչ ընդ իշխանութիւնք վատ խրատատուին
անկանել ։

Ամբրոնացին զայսոսիկ բանս առ հաւատացեալս ուղ-
ղելով յանդիմանութիւն ինն խօսի , և ասէ . դուք որք
ծածացայք քահիւ , սիրելով զհեշտութիս՝ իբրև զմարմնա-
պաշտս մեռանիք . և ես դուք որք վասն քահ աղքա-
տացայք հոգւով , սիրելով զմեծութիս իբրև զմի յիշխա-
նաց՝ այսինքն իբրև զմի յաշխարհասիրաց անկանիք ի
վիշս մեղաց ։ Լաւ զի այսմ ամենայնի վկայիցէ ինքն
է , և ինքն է միայն՝ որ յամենայնի դատէ ուղղութիւնք
և արդարութիւնք , ի նա ապաստան առնէ մարգարէն
զդատաստան ամենեցուն՝ և ասէ ։

ԼԲ. ՚ի ձեզ , և դարձեալ զերկիր . զի դու ծառանգեսցես
զամենայն հեթանոսս ։

Դատաստան մարդկան երբեմն կարէ սխալիլ . մի՝ ի
ագիտութիւնէ . երկրորդ՝ յամբարշտութիւնէ , զորոց խօսե-
ցաք ի նախընթաց համարն . և այսոքիկ մնածին առ-
ի ներքս . երրորդ՝ ի թիւր օրինաց , կամ յանկարգ
սահմանադրութիւնց , որովք վարին հեթանոս դատա-
ւորք և իշխանք . որք թէպէտ և իմաստունք իցեն , և
ի բնական կարգի բարեպարիշտ կիմ առաքինի համա-
րեալք , բայց ըստ իշխանութեն զոր յանձն առեալ են՝
պարտաւորեալ առդնեն զինքեանս առնել դատաստան
համաձայն այնոցիկ օրինաց , որք գտանին յազգի կի՛
ի քաղաքի անդ՝ յորում են ։

Ոչ թիւր օրինք ասին այնք որք խոտորեալ են յուղղու-
թէ ճշմարիտ օրինաց կամ ի բնական իրաւանց . այլ
սխալ և անկարգ սահմանադրութիւնք կամ սովորութիւնք
ասին այնք , որք թէ և չիցեն ուղղակի ընդդէմ ճշմարիտ
օրինաց կամ բնական իրաւանց . բայց կամ ծանր են
և խիստ , և կամ ոչ կարգին յոգուտ ժողովրդեանն ,
այլ մանաւանդ ի միտս նոցա . և մնասմբ ինն ի զրկա-
զուբթի նոցին , կամ ի թոյլտուութիւն ընարձակութե .
և զի անպակաս են այսպիսի դատաստանք ըստ միոյ կո-
րիցէ , տալովակացեալ մարգարէին՝ բողոքել առ Տէր ի
դէմս հեթանոսին ազգի մարդկան , և ասէ ։

Աչքի ձեռք բռնել զերիւք. Ոմանք ասեն զի ասէր. ոչ տեսանեմ տէր զինչ գործեն Թագաւորք և գտաւորք, որք հաղորդ գտանելով իշխանութեան քում ծիրք անուանին. զի՞ տէր, զի անքուն աչիւդ ցուցանես զքեզ իբրև ոչ տեսող. արի և տէս զթիւր գտաստանս նոցա, և զնախանձս նոցին. և դու ինքնին գտատես ոչ միայն զՀրէշտաստանեայս, այլև զերկիր, այսինքն զամենայն ազգս որք կան յերկրի, եւս և զամենայն հեթանոսս՝ զի քո են և նորա։

Աչքի ասելով՝ ոչ միայն կամի յորդորել զինծ և փութացուցանել, այլև զահեղութիւն ներհայտանել Աստուածային գերագոյն վարդապետ (՝ի մեկն. եսայ. գլ. ՟ը.) զայս բան յառաջ բերեալ՝ գրէ այսպէս յասել մարգարէին * արի ծած և գտատես ղերկիր, ՝ի մարդկեղէն կերպարանաց զինչ կարող զօրութիւն դրօշմէ, արի ասէ, ՟ լով ՟։ Վարձուցեալ ապա մարգարէին զանձ իւր ՝ի վերայ հեթանոսաց՝ յարէ զինէն, և ասէ. Օ՜ դուք ծառայեցողք զամենայն հեթանոսս։ Կամի ասել. որովհետև ստացուածք քո են նաև ազգք հեթանոսաց, արա զի ժառանգեսցես զնոսա, այսինքն իբրև զքոյդ խնամեսցես զնոսա. զի նորա հեթանոսքն գոլով՝ այնու ոչ լինին անձանց ՝ուր. զի ո՛չ են ինքեանց, այլ քո. քանզի և ՝ի Թողուլ քո զնոսա ՝ի չնորհսայ քոյ՝ ոչ Թողեր զնոսա լինել արտաքոյ իշխանութեանդ քո. ապա Թէ ոչ ես պահէիր զնոսա. * քանզի զիարդ ,, կայր ինչ եԹէ ոչ կամիբր. և կամ որ ՝ի քէն չէր ,, կոչեցեալ՝ զիարդ պահէիր. խնայես յամին՝ զի քո ,, են տէր ոգեսէր ՟։ (խնասա. ժա. 26. որպէս և ՝ի նախընԹաց բանս ասի ՝ի համարն. 24. և 25.) * ո ,, ղորմիս ամենեցուն զի յամենայնի կարող ես. և անտես առնես զմեղս մարդկան ապաշխարութիւն. զի սիրես զամենայն որ ինչ է, և ոչ գարշիս յումեքէ՝ ,, յորոց արարեր. զի ո՛չ եԹէ առ առել հաստատեր ,, չէր ինչ ՟։ Զայս Հայի և գիտացին մարգարէին ՝ի նախակարգեալ բանսդ, որով խնդրէ յայ՝ այց առնել ազգի մարդկան, և ուղղել զդատաստան անիրաւացս առ ՝ի յօգուտ և ՝ի գերութենէ ժողովրդեանն՝ Թէ և հեթանոսք իցեն։

Ա.յլ այս բանք ուղղակի հային յորդին ՚ոյ լըր մաղ-
թանք, որպէս զի ինքնին եկեալ յաշխարհ դատեսցէ
զդատաստան մարդկան, աչատեալով զնոսա ՚ի չար
ոտիսէ նոցին այսինքն ՚ի սատանայէ ՚ի դատապարտե՛լ
նէր զնա, և ՚ի պատուե՛լ զդատակնիքք նոցա: Ա.զատե-
լով դարձեալ ՚ի Թիւր և ՚ի սուտ մեկնութենէ դրոց՝
զորս տային քահանայք և դպիրք հրէից, աւ ՚ի խո-
տորեցուցանելոյ զժողովուրդն ոչ միայն յուղղութէ
վարուց, այլև ՚ի հաւատալոյ գալստեան նորա. զի մի՛
յանդիմանեսցին գործք իւրեանց. ոյզ և արդեամբք
ցուցին զայս ՚ի գալ նորա աւ նոսա: Ա.զատելով դար-
ձեալ և ՚ի խոտոր օրինաց և յանիրաւ պարտաւորու-
թենէ և յանխիղճ դատապարտութենէ այլոց ազգաց,
նաև ՚ի մոլար խղճէ մտաց:

Ա.յսպէս ազատելով զնմանն մանաւանդ զհեթանոս՝
առնուլ ազաչէ զնոսա ընդ լծուլ նոր օրինաց. և այնու
ժառանգել զնոսա իբրև զիւր, և կարգել ՚ի վերայ
նոցա զհաւատարիմ պաշտօնեայս, որպէս և արարն
խակ ՚ի կողմանէ իւրմէ. * զի նա էր ակնկալութի՛ հե-
„ թանոսաց ‖. (ծնն. խթ. 10:) Լրուել և լոյս ծագե-
ցաւ առ նոսա, և խաւար նոցա ՚ի լոյս դարձաւ. և
ձանապարհք նոցա հարթեցան և ուղղեցան: Զայս
հայելով գէորգ վարդապետ (՚ի մեկն. եսայ.) հետե-
ւմամբ ինն ասէ. * դարձեալ այլ զարմանալիք. զի խա-
„ ւարն (հեթանոսաց) լոյս լինի. և դժուարինքն հե՛շ-
„ տալիք. զի այս ՚ի գալստեանն քոյ կատարեցաւ.
„ որ զայս բան արար հեթանոսաց ‖. որով և ժառան-
գեաց զնոսա:

Ո՞յս ամենայն արարեալ որդւոյն ՚ոյ յառաջին գա-
լստեան իւրում, եկեսցէ ՚ի կատարած աշխարհիս
իբրև դատաւոր արդար, և գատեսցէ զամենայն եր-
կիր՝ այսինքն զմեռեալ մարդ. և զորս միանգամ գտցէ ար-
ժանաւորս վարձուց՝ զամենեսեան զնոսա արասցէ իւր
ժառանգս:

Այն այս ասի և ՚ի բերանոյ եկեղեցւոյ և իւրաքան-
չիւր արդարոյ. արի՛ յո. և արդար դատաստանաւ քոյ
նահանջեա՛ յինէն զայնոսիկ՝ որք զերկրաւորս հե՛թ
ետրհին. և եթէ հեթանոսք էին, զդատաւոյն զնո-
սա, կամ կա՛յր ընդ ձեռամբ քոյ. (բարեպատ.) նահան-

ջեան և զերկրաքարշ յօժարութեիս իմ. ևս և խափանեա յինէն զխորհուրդս համեմատս հեթանոսական խորհրդոց, կամ փոխարկեա զայնս ի լաւն և ի հաճոյն առաջի քո: Նոյնպէս զամենեսեան զմեզ ազատեալ ի չարէ՝ առաջնորդեա ի բարին և ժամանեցո ի փրկութեիւն յաւիտենական:

ՍԱՂՄՈՍ. ՁԲ.

Աղաղակ առ ած առ ի ամրանալ յերեսաց թըշնամեաց, որք բաղմութիւք յամենայն կողմանց ժողովեալ էին ընդդէմ իսրայէլացւոց:


( )երգնուրիւն սաղմոսաց յաւսէ:

1 Ձ, ո՛ չէիր նմանիլդ. որ լսէր, և որ դատէրը ած: 2 Ոչ ահա ընչաւոր ո գոլիցին, և ապիւր ո հասցէին ջգլուխս երիսանց: 3 Վերայ ժողովրդեան ո խորամանիցին ջգիտուիր. խորհեցան ի վերայ սրբոց ոմ, և սասցին: 4 Ասացին ապստիացուա ջնոսա յազգաց, և որ յիշիսցի անուն իսրայէլի և ևս: 5 Խորհեցան դաբանուիր ի դասին. վասն ո ուխտ արարին: 6 Հանիկ էդովմայեցւոց՝ և իսմայէլացիք, մովաբ և հագարացիք: 7 Գեբաղ՝ ամոն՝ ամաղէկ, և այլազգիեան ամենայն բնակիչքն հանդերձ ծուրայ: 8 Գ,աև ասուր եկիալիր ընդնոսա. ամենիցեան սոքա զօրավիգն էին որդւոցն ղովայ: 9 Գրա՛ ջնոսա որպէս մադիամ, որպէս սիսարայ, որպէս ջաբին՝ ի ծործորան հիսոփէ: 10 Կոսպացիցան նոքա յենան պովրայ. և եղեն որպէս ջաղբ երկրի: 11 Գրա՛ զիշխանս նոցա որպէս զովրէբն, զէբն, զզէբէէ, զսաղմանա, և զամենայն իշխանս նոցա: 12 Կոյ ասացին ժառանգեսցո՛ ի մեզ զսրբոսն ո՛ղ: 13 Գձ իմ՝ արա՛ զնոսա որպէս զանիւ, որպէս զեզիզն առաջի հողմոյ: 14 Կորպէս հո՛ր՝ զի այրէ զանդաստս, որպէս բոց՝ զի հիզու զլերինս: 15 Գյաւիտս հալածեսցես զնո-

սա մըրթաս ոտվ. և բարեխոսեսցէ վասս
16 [էից պիղծս նոցա անարգանաց, և խնդրեսցեն զանուն ս-
եր։ 17 [Ասելոցն և խոտվեսցին յարեխանս յարեխնից,
և ամօթալից երեսցեն։ 18 Ոչ անիշեն էլ անուն ս-ո պեր է. և
դու պիտի բարեխոսել ես ի վերայ անիծեալ երկրի։

ՊԱՏԻՒ ՆՈՒԳԻՒ։

Օրհնութիւն սաղմոսաց յաւարտ։



Ի ՍԿԶԲՈՒՆՍ ԻՆՉ ՄԵՐ ԴՆԻ

* օրհնութիւն. սաղմոս յաւարտ։ և ի
լորս ձեռագիրս ոչ դնի բառս օրհնութիւնն,
այլ միայն՝ սաղմոս յաւարտ. և ի միում, ի կատարած
սաղմոս յաւարտ. յայլում ևս յաւելեալ լինի բառս
դասուն՝ յասելն, օրհնութիւն սաղմոսաց յաւարտ և ի
դաւիթ. և յայլս՝ սաղմոս օրհնութեան յաւարտ. այլ
քանզի ի լորս ընտիր ձեռագիրս ըստ նախակարգե-
լոյդ դնի, մեք ևս այնպէս եդաք համեմատս երբ". և
քաղդ". և եօթ". և լաս". լորս փոխանակ բառիս
օրհնութիւն՝ յերբ". դնի ընդ. այսինքն է երգ. որով
և իմաստ վերնագրիդ բացատրի այսպէս. օրհնութիւն
սաղմոսաց երգեալ յաւարտ վասն ազատութեան։ Ա-յս
սաղմոս է վերջինն ի սաղմոսաց՝ որք դրին յանուն ա-
ստուած։

Ա-յլ թէ երբ իցէ յօրինեալ այս սաղմոս, և յինչ առ-
թէ, դժուարին է յայժ որոշել. հայելով ի պատմու-
թիւն զոր նկարեմ մարգարէն ի սաղմոսի աստ՝ ի 5 հա-
մարոյ մինչև ի 9-զի այն պատմութիւն՝ որպէս աստ
գրի, այնպիսի օրինակաւ որոշակի ի չոր գիրս ոչ ա-
նանդի. և եթէ ըստ միոյ մասին յարմարեացի, ըստ
այլոյ մասին ընդդէմ երևանի. սակս իրի տառապին
մեկնիչքն, ոմն յայս և ոմն յայն վերածելով. և այսու
պատճառաւ բազմադիմի կարծիք առաջի ընծային։
Ա-ռաջին կարծիքն է՝ թէ այս պատմութիւն որ ի սազ-
մոսս՝ հայի ի պատերազմն յայն՝ զոր յարուցին ամ-

մինաց[ք] ընդդէմ դաւթի վասն նախատանացն՝ զորս
ետուն հրէշտակաց նորա. (զորմէ գրի՛ ի ՚ի. թագ.
ժ. 4-19.) Յերկրորդ կարծէքն Հայի՛ ի պատերազմին
զոր արար յովհամ արքայ յուդայ ընդդէմ եդովմա-
եացւոց՝ ի նշկահել նոցա զիարարել. (զորմէ գրի՛ ՚ի.
Ի թագ. ՚ի. 20-22.) Յերրորդն Հայի՛ ի գալուստ սեն-
նաքերիմայ՝ ի վերայ Իսրայէլի. (զորմէ գրի՛ ՚ի. թագ.
ժ՚ի. 13-30.) Չորրորդն Հայի՛ ի գալ նաբուգոդոնո-
սորայ՝ ի վերայ երուսաղէմ. (զորմէ գրի՛ ՚ի. թագ.
լե՛. 1-10.) Հինգերորդն Հայի՛ ի պատերազմին զոր
յարուցին պարսիկք յաւուրս քաջքաջայ արքային, զո-
րոց խօսին մարգարէք յովէլ, միքիա, և զաքարիա,
և մանաւանդ եզեկիէլ յանուն գոգայ և մագոգայ.
(եզեկ. գլ. լ՚ի. և լե՛.) Վեցերորդն Հայի՛ ի պա-
տերազմունս որ՝ ի ժամանակս մակաբայեցւոց. (զո-
րոց գրի՛ ՚ա. մակ. ե՛. 1-15.) Յօթներորդն Հայի՛
ի հակառակութենէն յայն՝ զոր յարուցին ի վերայ Իս-
րայէլացւոց ազգք բնակչալք շուրջ զնոքօք յետ գար-
ձի նոցա ի գերութենէ՝ կամելով խափանել զշինուիլն
տաճարին, և զկանոնսն պարսպին երուսաղէմ.
(զորմէ գրի՛ ՚ի. եզր. ՚ի. 1-7. և ՚ի. եզր. ՚ի. 1-8.)
Այսա կարծիս է վարդան. իսկ լսմա՛. յամենայնին ևս
հաւան գտանի. Ութերորդն Հայի՛ ի պատերազմին
զոր յարուցին ամենայնք և մամաքացիք հանդերձ ե-
դովմայեցւովք ընդդէմ իսրայէլացւոց յաւուրս յով-
սափատայ արքային յուդայ. (զորմէ գրի՛ ՚ի. մնաց.
՚ի. 1-30.) Զ տատգովք այսոցիկ կարծեաց են արք
երևելիք և մեկնիչք հնոցք, բայց ի յարմարեցուցա-
նել զաղմոս զայս ընդ այգոսիկ պատմութիւնդ՝ կրեն
զժուարութիւն մեծ.

Ա՚ԱԼ քանզի ի մէջ այսոցիկ կարծեաց յեսինն երևի
հաւանականագոյն, ի վերայ այնը պատմութենէ ու-
նիմք յածել ի մեկնութենէդ. Այս ըստ այսմ կարծեաց՝
այս սաղմոս երևի արաբեալ յողիէլէ՝ որ ի ցեղէն ա-
սափայ, յորոյ վերայ է նոգի ՚ոյ. զի գրի (՚ի. մնաց.
ՀՀ. 14.) Թէ՝ ի ժողովիլ ամենայնոց և մամաքացւոց
և այլոց ազգաց ի վերայ իսրայէլացւոց. * ողնէլ որ.
,, դի զաքարիայ, յորոյ ցեղն քահանայ և յորոյ ցեղն է-
,, ղեալն որդւոյն մաթանիայ զևտացւոյ յորոյ ցեղն

,, ասասիայ. և եղև՝ ի վերայ նորա հոգի տեառն՝ ի մէջ
,, եկեղեցւոյն և՚ն ։

Այլ գիտելի է, զի սկզբնաւորութեանն սաղմոսիս՝ որպէս և բոլոր ընթացք՝ սորին ըստ արտաքին տեսութեանն զննեալ՝ ցուցանէ, թէ զայս սաղմոս ասացեալ իւիւ մարգարէն յառաջ քան զգտանել իսրայէլացւոց զօգնութիւն յոյն, որպէս և համարին ոմանք. բայց յիրն հայեցեալ՝ ցուցանէ թէ յետ գտանելոյ զայն՝ ասացեալ իւիւ զայս՝ իբրև զընորհակալութիւն, որպէս սովորութիւն էր իսրայէլացւոց՝ յետ գտանելոյ զաւազուրթն ինչ յօրինել զերգս գոհութեան, ձևացուցանելով զինքեանս ուրեք ուրեք իբրև գտեալ զայս ազատութեան, և ուրեք ուրեք իբրև ոչ գտեալ. որպէս առնէ և աստ մարգարէն, առաջի մտաւուցանելով զիսրայէլացիս իբրև զպաշարեալս ի մեծի նեղութեան յերեսաց բաղմութեան թշնամեաց. վասն որոյ թախանձէ զնա հասանել յօգնութիւն ինքեանց, և մի թողուլ անտես։

ՐԱՀ

ա. Ընդ ո՛ւղղ նախնջեղ. ք լեր և ք գաթարէը ած։

ՄԱԿԱՐԱԹԻՆ

Ի սկզբան նախընթաց սաղմոսին զիշխանս և զդատաւորս կոչեաց ասս, և ապա ցուցեալ թէ նոքա են մարդիկ ակարք, նմանութեամբ այ ոչ գտանելով ի նոսա, և ոչ իսկ յօգնութեան նոցա յուսալ յօժարի, այլ յասն միայն. ցուցեալ թէ չիք նման նմա յարարածս. վասն որոյ ասէ։

Ընդ ո՛ւղղ նախնջեղ. ք լեր և ք գաթարէը ած։ Այս թախանձանք հայի յայն՝ զոր արարին որդիքն իսրայէլի առ ած. քանզի իբրև լուան թէ ամմնացիքն և մովաբացիքն և այլ բազմութիւնք թշնամեաց գան ի վերայ իսրայէլի, զահի հարեալ յերեսաց նոցա ժողովեցան ի տաճարն, և սկսան աղաղակել առ ած և

ասէին. * Ձեր ՚ած հայրմն մերոյ՝ ոչ ապաքէն դու ես
,, ՚ած յերկինս, և դու տիրես ՚ի վերայ ամենայն
,, թագաւորութեանց հեթանոսաց, և ՚ի ձեռս քո զո-
,, րութիւն ուժոյ. և ոչ ոք կարէ կալ ընդդէմ քո. և
,, արդ ահա որդիքն ամմնայն և մովաբու և լեառն
,, սեիրայ, (յորում են եդովմացիքն)... յանդգնին
,, գալ ՚ի վերայ մեր, և հանել զմեզ յերկրէս ժա-
,, ռանգութեան մերոյ՝ զոր ետուր մեզ. Ձեր ՚ած մեր
,, ոչ առնես դատաստանս ՚ի նոսա. վասն զի ոչ գոյ
,, զօրութիւն մեր ընդդէմ կալ բազմամբոխին այնո-
,, րիկ. և ոչ գիտեմք զինչ արասցուք նոցա, այլ առ-
,, քեզ են աչք մեր». (ՃՀ. մնաց. Ի. 6. 10-13՝)

Այսպա՛ս զան աղօթիցն և ՚ի սոյն ձև աղաչէ ասա մար-
գարէն զ՚ած, նախ մեծացուցանելով զնա, և ապա
թախանձելով. և ասելով. ՚ած ո՛ նման ՚ի քեզ չէն. և
այս առացուած կրկնակի դնի առաջի. յո՛ ՚ի մանաւանդ
և ՚ի հասարակի. ՚ի մանաւանդ կամի ասել. ո՛ նման ՚ի
քեզ յերկայնամտել և ՚ի լուել՝ այլ այժմ չէ ժամանակ
երկայնամիտ լինելոյ. արի, մի լռեր, և մի դադարիր
առնուլ վրէժ մեր: ՚Ի հասարակի մնածեալ՝ կամի
ասել. դու ՚ած մեր դու փրկիչ մեր, դու ինքն այնպէ-
սի ես՝ որոյ ոչ ոք ՚ի նման, ոչ ՚ի զօրուն և ոչ ՚ի կա-
րողէ, ոչ ՚ի արդարէն և ոչ ՚ի բարւոէ. քանզի դու
միայն ես ամենազօր, ամենաբարի, և յամենայնի օգ-
նական և պաշտպան՝ որոց յուսան ՚ի քեզ. և արդ մի
լռեր և մի դադարիր, այսինքն մի ցուցաներ զքեզ
իբրև զանտեսիկ՝ որք ՚ի չարձակիլ ՚ի հնամեաց ՚ի վերայ՝
վասն ոչ զգալոյ լուռ կան, կամ վասն ոչ կարելոյ վա-
նել զնոսա՝ անշարժ մնան:

Պատճառ այսպիսի նմանութեամբ խօսելոյն է, այն՝
զի պարտական էր գնոսա երկիւղ Ա՛ստուծոյն, որք
մեծաւ ամբոխմամբ չարձակեալ էին. մանաւանդ զի
չատացին լուսաւորեալ բարեկամ ձևանալոյն, և ապա խու-
ներեալ գոյմամբ դիմեցին ՚ի վերայ. վասն որոյ ար-
ժան էր այ զգալ զայն ամբոխումն, և զաթենալ, և
վանել զնոսա, և մի լռեալ ցուցանել զինքն:

Լ՚այլաբանօրէն, այս բան Հայի յորդին այ, որում
չէր ոք նման. իսկ մարդկային ազգ աղաչէր զնա՝
զի մի այնպէս անմնան մնասցէ, այլ եկեսցէ առ ին-

քեանս , և լինի նման ինքեանց . և այնու վանեսցէ զԵհուդիան իւրեանց զմահ և զաւատասյ՝ որք յարուցեալ էին ի վերայ նոցա . զորոց խօսի ի յետագայսդ ։ Եւ արժան է կշռել և զայս , զի որդին ոչ նմանեալ մօրն կան՝ գուսւ ըստ ամենայնի անճման . զի ո՛ նմանիցի նմա՝ որովհետև ոչ ոք է ՅԱՅ ի մարդ կա տարեալ . և զի ամենևին աննման եղև , աննման օրի նակաւ վանեաց զԵհուդիա մեր , այսինքն առանց զի նուց , միայն խոնարհութեաբ , և չարչարանաց , և մա հուամբ . ոչ լռել նորա՝ եղև լուռ լինիլ նորին . և ոչ դադարիլ նորա՝ եղև դադարեցուցանել զբռնութեաբ մեհեաց ։ Ի տանօր կրկնութեաբ բառիցդ ասէ լեր , ասէ դա դարիր՝ ըստ Ձառին առեալ ցուցանէ զառաւելութեան երկիւղի կամ ազատից աղաչողացն ըստ առաւելութեաբ յոխորտանաց Եհուդացոց և մեծի Եհուսառութեան , յոր իբր ի գուբ անելանելի ըմբռնեալ գոլով աղա զակեին առ Ձած , և ասէին ։

Ը. Ո՞ է սա Եղիափ գո գալեցին. և սպեղիէ գո համբաբ. յէն գելոխ Եբեանց ։

Ո՞ Եհուսիան իսրայէլի կոչէ Եհուսի ՅԱՅ և առեալն նո բա . զի վասն այնպիսի լինելոց նոցա առ Ձած՝ յարու ցեալ էին ի վերայ իսրայէլի ։ Իսկ պատճառ այսպէս դնելոյ մարգարէին՝ այն է զի սովին չարժեսցէ զՁած ընդդէմ նոցա . որպէս Եհ ասացեալ էր . առասիկ որք եկեալ էն ի վերայ մեր , Եհուսիք քո են և առեցօղք բարուեհ քո . վասն որոյ և դու Եհուսի համարեալ զնոսա քեզ՝ մի անիայեր ի նոսա , այլ վանեա ի բաց ։ Այս Եհուսիք էին ամենայնիք և մովաբացիք , որք յա ռաջն կային ընդ իշխանութեաբ իսրայէլի և յուդայ . և յետ նշհաՀելոյ նոցա զիարաչեալսն և զյովրամ աբ քայ իսրայէլի , (որպես գրի . ՚ի . Թագ . ՚ա . ։) գաբ ձան ի Եհուսութեաբ ընդդէմ յովսափատայ աբքայի յուդայ վասն ձեռնասու լինելոյ նորա յովրամայ աբ քայի իսրայէլի , որ եւ ընդդէմ իւրեանց . (՚ի . Թագ . ՚ի . ԿՀ . ։) վասն որոյ և ի գառնել զառիթ դիպոյ՝ վարձեցին զառաջամ զօրս յայլոց ազգաց , և ա և յաստ բեստանեայց , և դիմեցին յայնմ կողմանէ մեռեալ ծովուն՝ գումարեալք յայսկոյս յաստանութեամբ՝ որ

'ի գաղդի կամ յԻնգլադդիս. (ՅՀ. Մաց. Ի. 1. 2.) և կարծելով թէ խորայելացիք չունին զոք իւրեանց պաշտպան, սպառնային ընդդէմ նոցա ՔՋՈՒԼ զնոսա. վասն որոյ ասէ.

Օ. Ի ահա ընդնիւթ ոչ գնացին. և աթելիս ոչ հանգիպին պղտոխս իրեանց: Լուառս գնացին՝ ոչ ցուցանէ աստ զաւազակելն, այլ զաներկիւղ գումարիլն և զյանդուգնն յոխորտանն ձայն առուալ միմեանց, որպէս թէ ասացեալ էր. ահա թշնամիք քո ամբոխին մեծաւ և բազմութեամբ ժողովեցան ընդդէմ մեր, և յարձակին 'ի վերայ. և որք յառաջին նուաճեալ կային ներկիս ղիս, այժմ համբարձին զգլուխս իւրեանց, այսինքն յոխորտացան, և նշկահելով զմեզ՝ ապստամբեցան 'ի մէնջ. զի յայս հայի աստ գլուխ համբառնալն: Լ,ս զի զայս արարին խորամանկութեբ, վասն որոյ ասէ.

Ի. Վ վերայ ծողովրդեան ոչ խորամանկեցին պղիտութիւն. խորհեցան 'ի վերայ ՚ԷՅ, և ասացին.

Ի. Ա հայ սաթպէնացոյ զնոսա յաչեաց. և ՚ի չէնջոյն ա նոսն խրայելի և Լս.

Ե. Ա ռաքելեցան ձեռանուբ 'ի գետն. վասն ոչ ուխտ ա բարին:

Լայս գումարումն թշնամեաց ընդդէմ խորայելացւոց եղև վտանգաւոր յոյժ ըստ երկուց. մի՝ ըստ տարածութեան. և մի և՝ ըստ վախճանին. ըստ տարաղութեան, զի առանց զգացուցանելոյ ինչ միանգամայն գումարեցան 'ի վերայ նոցա. ըստ վախճանին, զի կամ ի նոսա ձերբել զտառապն և ՚ի ջնջել զազգն. արդ 'ի տարակոյս հայելով՝ ասէ.

Վ վերայ ծողովրդեան ոչ խորամանկեցին պղիտութիւն: Լայս բամանկելն զգետուսէն կրկնակի կարէ լինել. մի՝ 'ի կողմանէ այնր՝ ընդդէմ որոյ լինի խորամանկել, որպէս յոր ժամ ոք այնպիսի խորամանկութեբ կամի տանել ինչ ընդդէմ այլոյ՝ միւսև ոչ տալ նմա գիտել զոր առնելոցն է. և յայս միտ կամի ասել. Թշնամիք մեր՝ ոչք յառաջին ձևացուցանելն զինքեանս մեզ բրեկամ, այնպիսի հնարիւք ժողովեցան 'ի վերայ մեր՝

մինչև ոչինչ իւրք իմացուցանել մեզ. կամ ոչ տալ մեզ դիտել զժողովիլ իւրեանց ի վերայ մեր. և այս յայտնի տեսանի յերկրորդ գիրս ենաց. ի ա. ։ ուր պատմի Թէ յետ ժողովելոյ բազմութեն Թշնամեաց ընդդէմ իսրայէլացւոց՝ յայնժամ ազդ եղև յովսափատայ, Թէ ահա եկն ի վերայ քո ամբոխ բազում, մինչև սաթասափիլ այնպիսի Տղոյ Թագաւորի ի համբաւոյ անտի ։

Երկրորդ լինի ի կողմանէ այնր՝ որ խորամանկ, որպէս յորժամ որ խորամանկութեն ի գործ ածէ զիւրեան իւր. և ըստ այսմ կամի ասել. Թշնամիք մեր զոր ինչ գիտեին զմեզ, խորամանկութեն ի կիր արկին զայն ընդդէմ մեր. զի ի ծածուկ դաշնադիր լեալ ընդ այնոսիկ ազգս, զորոց գիտեին Թէ ընդ ահաւոր Հայկին ի վերայ մեր, ի խորհուրդ մտին ընդ նոսա ի ծածուկ վասն մեր ։ Հայէ՛ լով և ի վախճան կամ՝ ի դիտաւորութեն գումարութեն նոցա՝ ասէ ։

Աբրէգան ի վերոյ պէդ ։, և ասացին ։ Ուր բառդ պէդ՝ բրէքգին կարէ նշանակել. մի՝ փոխանակ ժողովրդեան ասեն՝ որք վասն ձևացուցանելոյ զեկեզեցի որ՝ կարէին ասել որք ։ Երկրորդ՝ փոխանակ պատուհանից ին՝ որք կին սրբեալ ին, այսինքն նուիրեալ ին, որոյ վասն և որք կարէին կոչել ։ Երրորդ՝ փոխանակ տաճարի և կահուց տաճարին, որք կարէին կոչել և կոչէին իսկ որք, կամ սրբութիւնք ։ Չորրորդ՝ փոխանակ գանձուց տաճարին, որք վասն պահպանեալ լինելոյ անդ՝ կոչէին որ ։ Ընդդէմ ամենայն այսոցիկ խորհեցան, և ասեն նախ ։

Աբիայ սպասիցուք ընտ յաղթ, և մի յիշեսցի անուն իսրայէլի և Ես ։ Ուր յաւելուլ զառդ յաղթ՝ ցուցանէ Թէ իսրայէլացիք երեւելի գոլով ի մէջ ազգաց՝ նախանձելի էին Թշնամեաց իւրեանց. վասն որոյ և ի նոյն նախանձ վառեալ՝ ասեն. եկայք սատակեսցուք զնոսա, կամ այնպէս ցրուեսցուք զնոսա, մինչև ոչ ինչ լինել նոցա ի մէջ ազգաց, և ոչ իսկ յիշել ումեք զանուն նոցա և ասել՝ ազգ իսրայէլի ։ Այս զի զայս եդին ի մտի առնել հաստատութեն և միաբան հաւանութեն, վասն որոյ յաւելու ։

Աբրէգան գաբաոնէացիք ի գնաին. ձե տո ոսկի ապրին ։

Օ այս ասէ մարգարէն զարմանալով՝ իբր Թէ ասէ, զինչդիւ հնար եղև այսչափ բազմութեամբ ազգաց ժողովել զիս՝ ի միասին, և ի մի խորհուրդ միաբանել, առ՝ի ջնջել զմեզ, և վասն քո ուխտ առնել· այսինքն դաշն հաստատել ի մէջ իւրեանց ընդդէմ ժողովրդեան քո. զի վասն քո ասէլն յայս հայի· քանզի այն Թ հնամիջ ի ժողովիլն՝ ոչ եթէ ուխտ եդին, զի մերժեսցեն զնա, կամ ոչ պաշտեսցեն, այլ զի ջնջեսցեն զիսրայէլ, որ էր ժողովուրդ նմա, և եղծցեն զտաճարն՝ որ էր տուն նմա· [1]այլ պատճառ այսպէս ասելոյ մարգարէին այն է՝ զի շարժեսցէ զնա՝ ի վրէժխնդրութիւն ընդդէմ Թշնամեաց իւրեանց։

[1]Յիսրաէլացիքն՝ այս ամենայն բանք հային նախ՝ ի ժամանակս հալածանաց, զորս կրեաց եկեղեցի օր, և զորս կրեն այժմ հաւատացեալք՝ ի հեթանոսաց, և ի դիւաց բստ լամբ". երկրորդ՝ ի ժամանակս ներհուն՝ յորժամ հետևօղք նորա զոչեսցեն ընդդէմ ազգաց՝ ամբառնալ զգլուխս իւրեանց (այսինքն դնել ինքեանց գնորանոր առաջնորդս իբրև զգլուխս.) և խորամանկել ընդդէմ սրբոց՝ այսինքն ընդդէմ հաւատացելոց, և ջանալ ջնջել զհաւատս նոցա և զանուն քրիստոնէութեան Թէ, [2]ահա Թէ այլ են այսօրիկ, ուխտս առանել ի յաջորդ բանսդ, յորս օրինակին ասէր՝ այսինքն յերդումնեցեալս, յիմայելացիս, ևն, զորս և ի մէջ բերել մարգարէն ասելով։

ՀԸ. [1]Ահանից եղեմայեցւոց՝ և խմայելացւոց, մաւաբ և հագարացւոց։

ՀԷ. [2]Գեբէալ, ամմէն, ամաղէկ, և այլազգւոյն ամենայն բնակչացն հանդերձ ծովեայ։

ՀԸ. [1]Ահա ասասր եկեալ էր ընդ նոսա· ամենեցեան սուտ զօրավիգ եղեն նոցա։

Յետ ազգք Թուին ի բանսդ յայդոսիկ՝ այսինքն են եդոմայեցիքն, իսմայելացիքն, մովաբացիքն, ագարացիքն, գեբաղացիքն, ամմոնացիքն, ամաղեկացիքն, փղշտացիքն, ծուրացիքն, և ասորեստանեայք· յորս Թէպէտ առաջինքն էին ամմոնացիքն և մովաբացիքն՝ որք զրզռե-

ցին զայլս, և միաբանեցուցին զնոսա ընդ ինքեանս, բայց մարգարէն յայլ ինն կարգ հայելով Թուէ զնոսա, և նախ ասէ։

Ասանէ՛ էդովմայեցոյ՝ և էմայելտայէ, հովքե և հաճաքաշէ։ Ասանակաւ իմացեալ լինի բազմութեի զօրաց՝ ի միասին ամփոփ կացեալ ՚ի մարտ։ Ասյսինքն բազմութեի հասին ՚ի վերայ իսրայէլացւոց եդովմայեցիք, իսմայէլացիք և այլք։ Այլ թէ ոչք էին այսոքիկ ազգք՝ խօսեսցուք կարգաւ։

(1) Էդովմայեցիք էին ազգք սերեալք յեսաւայ, որ կոչիւր և եդովմ. (որպէս գնի ծնն. ԼԶ. 30. և ՀԼ. 1.) յորմէ և սերեալքն յանուն նորա կոչեցան եդովմայեցիք. որպէս գնի ծնն. ՀԶ. 9. յասելն. * բնաւ ,, կեցաւ եսաւ ՚ի լերինն սէիր. եսաւ որ նա ինքն է ,, եդովմ. և այս են ծննունդք եսաւայ հօր եդովմայ,, եցւոց ՚ի լերինն սէիր ‖. յորմէ կոչեցան և որդիք սէիրայ. (գործ տես. Ք. մեաց. ԺԴ. 14.) Այլ եր բնակութեի նոցա ՚ի հարաւակողմն պաղեստինոյ. ուր է սէիր լեառն, որ յանուն եդովմայ կոչեցաւ եւս և դովմ, կամ իդումէա. (եզեկ. ԼԵ. 16.) առքա որպէս տեսանի Ծ. Թագ. Ծ. 9. բարեկամութեի էին ընդ իսրայէլ յաւուրս յովսափատայ, և երկեին հպատակ նմա. և յետոյ յաւուրս որդւոյ նորա յովրամայ ապստամբեցան յիշխանութեի յուդայ. և եդին իւրեանց առանձին Թագաւոր. (ոն գրի Ծ. Թագ. Ը. 20. 22.) Այլ մինչև ապստամբեալ էին՝ միաբանեցան ընդ ամմանացիս և ընդ մովաբացիս յաւուրս յովսափատայ. (որպէս յայտ է Ք. մեաց. ի. 10. և 22. և 23.) ուր փոխանակ ասելոյ ազգ եդովմայ, գրի լեառն սէիր, և ս և բնակիչք լերինն սէիրայ. Այլ զի ազգ մեծ էին եդովմայեցիք՝ վասն այսորիկ նախ զնոսա յիշէ աստ մարգարէն. և յետ նոցա դնի զազգն իսմայէլացւոց։

(2) Իսմայէլացիք էին ազգք սերեալք յիսմայէլէ. ո. րոյ մայրն էր ագար՝ աղախին սարրայի և աբրահամու, և բնակուէր նոցա էր յանապատին փառանու, յորում է անապատ աբաբիա. ուստի և աստ իսմայէլացւովք իմացեալ լինին աբաբացիք բնակեալք ՚ի նոյն անապատն աբաբիա. և սոքա ևս էին հարկատու յովսափատայ. (որպէս գրի. Ք. մեաց. ԺԷ. 11.) Ո՛ս-

ցանէ Թէպէտ ոչ յիրէն՝ զոր գիրն՝ ի պատմութիւն անդ՝ Թէ էին ընդ մովաբացիս և ընդ ամմնացիս, բայց քանզի զի ասէ Թէ էին *ընդ նոսա ի միւնեցւոց ‖. (ընդ. միաց ի. 1.) ընդ անուամբ միւնեցւոց իմացեալ լինին և սոքա, ընդ որս և հագարացիք. քանզի միւնեցիք են արաբացիք ի հասարակի առեալ, որոց կէսք ասին իսմայէլացիք և կէսք հագարացիք.

(3) Հագարացիք որ և ագարացիք, կամ ըստ ևբրայեցւոց ագէմ, էին ազգք սերեալք ի նախայիշեալ ագարայ յաղախնոյն սարրայի. զորոց Թէպէտ և ասի Թէ էին յարբահամ՝ որպէս իսմայէլ. սակայն մնդկին ոմանք Թէ յայլմէ առնէ էին. որպէս Թէ ագար յետ արձակելոյն ի տանէն աբրահամու ամուսնացեալ իցէ ընդ այլում. և ծնեալքն ի նմանէ կոչեցեալ իցեն հագարացիք. զայս գնէ և վարդան. և սոքա ևս ի մացեալ լինին ըստ անուամբս միւնեցիք, որպէս ասացաք այժմ. և բնակուէ սոցա էր յերջանկին արաբիա.

(4) ԵՒնաւէթ կամ մովաբացիք՝ էին ազգք սերեալք յառաջնոյ դաւթէ դովտայ. (որպէս գրի ծնն. ԺԹ. 37.) Յոր բնակութիւն սոցա էր յայնկոյս յորդանան նոր առ ևբրամբք գաղատոյ ընդ հարաւ.

(5) Ամն կամ ամմնացիք, զորոց յիշէ մարգարէն ի յաջորդ համարն, էին ազգք սերեալք ևբկրորդ դրստերէ դովտայ. (որպէս գրի ծնն. ԺԹ. 38.) Յոր բնակութիւն սոցա էր ի սահմանակցութեան մովաբացւոց յայնկոյս յորդանանու առ ևբրամբք գաղատոյ ընդ հիւսիս. Յերկոքին այս ազգք եղեալք գոլով ի նոյն ձօրի՝ յամմնայնի գրեթէ միաբան էին. և որպէս գրի. ը. միաց. ի. 1. սոքա էին՝ որք միաբանեալ ընդ իւրեանս զեղովմայեցիս, զիսմայէլացիս, և զհագարացիս, և զայլս ևս, եկին ի վերայ իսրայէլի. և գումարեցան յենգադի. Յակ Թէ այք էին միացեալքն, խօսի զմնի և ասէ.

Պէեռ, ամէն, ամաղէկ, և այլազգիսն ամենայն ինակիցն հանդերձ ծառայ. Ա՝ ո՞ ամենայ խօսեցաք ի նախընթացս համարն ի Թիւն 5. խօսեսցուք ասա զայլոց.

(6) Պէեռ կի գեբաղացիք ըստ հաստատելոյ բազմաց, էին ազգք լեռնականք ըստ ոմանց սերեալք յեսաւայ՝ սահմանակիցք եղովմայեցւոց և ամաղեկացւոց. և

Թէպէտ այլազգ ասէն, բայց և այն չէ յայտ։
(7) Ի՛մաղէի կամ ամենակացիք էին ազգք սահմանա-
կիցք եդովմայ սերեալք յելիփազայ յորդւոյ եսաւայ.
որոց և բնակութի՛ն էր յատաստանն աբաբիա, և էին
սոքա ազգք պատերազմասէրք և թշնամիք իսրայէլի։
Սոքա ևս ընդ դէմ բարացիս յարեցան յամենայնի ընդ-
դէմ իսրայէլացւոց։
(8) Ի՛յտուրէա՝ ազգ ասա յիշին, էին փղշտացիք, ազգ
յերը՛ կոչին Թէլլէլէն, այսինքն պաղեստինացիք, որ
է նոյն. զի՛ մեզ անխտիր տառապարձուն՛ ասին
փղշտացիք, կամ պաղեստինացիք. և սոքա ի՛ Թարգ՛.
եօթ՛. այլազգիք ասին. որպէս և ի՛ մերումն. (գատ.
ժ՛ղ. ւ. Են՝) և բնակութիւն սոցա էր ծովեզերեայ
յարևմուտս հարաւոյ յերկրին պաղեստինոյ. որք և
տային հարկս յովսափատայ. (բ. Ճեաց. ժ՛է. ւ։)
Յա՛ր որպէս երևի՛ սոքա ևս միաբանեցան ի՛ ծածուկ
ընդ ամենայնս ընդդէմ իսրայէլի հանդերձ քանակիւք
երկրին ծուբայ։
(9) Ենո՛ր կամ ծուբացիք կամ տիւբացիք էին քնա-
կիւք ծուր քաղաքի՛, որ և տիւբոս կոչի. և զի այն
էր մայրաքաղաք փիւնիկեցւոց, բնակիչքն նորա նշա-
նակին ասա ծովեզերեայ փիւնիկեցիք։ Յակ յասէն
* և այլազգիք ամենայն բնակիչքն հանդերձ ծուբայ՝։
բառդ ծոբայ դնի իբր յատկացուցիչ բնակչաց ի՛ սե-
ռական հոլովին. որպէս դնի՛ ի՛ ձեռագիրս և ի՛ լատ՛
և ի՛ վարդ՛։ Յակ մեռութի՛ չարագրութենն պարզի
այսպէս. Ժողովեցան և այլազգիք հանդերձ ամենայն
բնակիչքն ծուբայ քաղաքի՛։ Յա՛ զի՛ ի՛ նոյն միաբանե-
ցան և ասուրացիք, վասն որոյ յաւելու ասել.
Յա՛ Ե ասուր եկեալ էր ընդ նոսա. անկնելոն սուտ զօրա-
վիգն էին որդւոցն ղովտայ։
(10) Ի՛ասուրա՛ համացեալ լինին ոչ ասորիք յայսկոյս եւ-
փրատայ ի՛ հիւսիսակողմն պաղեստինոյ, որոց մայրա-
քաղաք էր դամասկոս, այսինքն է շամ. ոչ ասորես-
տանեայք բնակիչք յայսկոյս տիգրիսի. որոց իշխա-
նութի՛ն մեծ էր. ի՛ սոցանէ ևս ասէ բազումք ձեռն-
տու եղեն որդւոցն ղովտայ. և այս չէր ինչ ընդդէմ,
զի ասորեստանեայք բազում անգամ ինքեանք իսկ դէմ
մեկնին ի՛ վերայ իսրայէլի. վասն որոյ և ի՛ դիպել առ-

Թէն կարելին լինել և ձեռնտու թէ նամակաց նոցա, յոր որդիք զովսոյ կոչին ամենացիք և մովաբացիք, քան որում՝ ի նմանէ ծնան, որպէս ասացաք ի վերոյ ի Թիւն. 4 և 5. ուստի փոխանակ ասելոյ, ամենից քեան սոքա զօրավիգն էին ամենացւոց և մովաբացւոց, ասէ, զօրավիգն էին որդւոցն զովսոյ։ Ուստի և բառդ ամենչեան Թէպէտ և հայի յայն ամենայն՝ զոր յիշեաց ի նախընթաց յերկուս համարսդ, բայց ի բաց առնելով զամենացիս և զմովաբացիս. զի որով հետև սոքա էին որդիք զովսոյ գրգռիչք և գումարիչք պղոց ազգաց, զսոսա իբրև ուրոյն տոյ համարել, և զայլսն համարի զօրավիգն սոցա, ապա Թէ ոչ Տարի լինի ասել, Թէ ինքեանք ինքեանց եղեն օգնական։ Այս կի պարտ է խմանալ զերկուսն՝ միմեանց զօրավիգն. իբր Թէ ասէր. ամենացիք և մովաբացիք՝ որք էն որդիք զովսոյ՝ միմեանց եղեն զօրավիգն. որպէս և այն ամենայն ազգք զոր յիշեցաք։

Աղբիւրք նշանակին հալածիչք եկեղեցւոյ, և մնացեալ այն ամենայն ազգք որք հանդերձեալ են զօրավիգն լինել նոցին, և ապա մերժիլ, և յանարգուԹիւն մնանել. որպէս գնի մարգարէին ասելի։

Ա.ՂԴ ի գումարիլ այսչափ ազգաց յանկածուածս ի վերոյ իսրայէլ՝ զահի հարեալ նոցա ժողովեցան ի տաճարն Տանդերձ Թագաւորաւ իւրեանց յովսափատ. և բազում պաղատանաւք գոչեցին առ Տր. քան որում գրեցաք ի Տանգն 1. քան մեղեանց սոցա ահա գոյլ և ատ մարգարէն առ Տած, և ասէ։

Յե. Ա.բա ընտ որպէս մարիամ, որպէս ահարայ, որպէս ղաբին՝ ի ծործորան ինոռէին։

Յէ. Ա.ապաիեան նոտա յանահս գովքայ. և եղեն որպէս զաղբ երկրի։

Յէ. Ա.բա զիշխանս նոցա որպէս զովքերէն, զքերն, զզիբեէն, զզեբաղմանա, և զամն իշխանս նոցա։

Ա.զա բարւոք իմանալոյ զայսոսիկ, պարտ է Տամառօտիւ առաջի դնել զպատմելի եղելոցդ։ Ա.ՂԴ պատմի ի գիրս դատաւորաց (գ. 2–23.) Թէ ի խոտորիլ

յայ ազգին իսրայէլացւոց՝ յարեաւ ի վէր նոյ աբեղն արքայ քանանացւոց. և առաքեաց ի վէր նոյ զսիսարայ զօրապետս իւր. յայնժամ գեբտրա մարգարէուհի յորդորեաց զբարակ ելանել ընդդէմ նոր սասն հազար առամբք ի ծովծորան կիսաժին, կամ որ նոյն է ի հեղեզատն կիսաժին, և եղև ի դիմել բարակայ՝ զարհաւրեցոյց տէր զսիսարայ և զամ զօրս նոր. և անկաւ ամբանակ նոր. և ոչ մնաց և ոչ մի. և սիսարա փախեաւ հետիոտս, և գնաց ի վրան յայէլի կնոջ քաբերայ. և յայէլ յետ ընդունելոյ զնա ի ներքա՝ եհար ի ծամելիս նորա զցից վրանին, և սպան զնա: Իւր ասէ սուրբ գիրն՝ Թէ * կորացոյց ոտր ոճծ յաւուր յայնմիկ ,, զյաբին արքայ քանանացւոց առաջի որդւոցն Իսրայէլի և զսիսարա զօրավար նորա. (դատ. գ. 23:) Յետ այսորիկ յարեան ի վերայ Իսրայէլի երկոքին Թագաւորք մադիանացւոց զեբէհ և սալմանա. (դատ. գ. 2.) և ժողովեցան բազմաւԹիւ ի հովիտան յեզրայէլի առ ստորոտով լերանցն գեղբուայ. և ել ընդդէմ նոցա գեդէոնն երեք հարիւր արամբք. և եհար զնոսա. և ի փախչիլ ինացեալոցն՝ ընդառաջ ելին որդիքն եփրեմի, և կալան զերկուս իշխանս նոցա, այսինքն զորեբ և զզէբ. և հատին զգլուխս նոցա. զգլուխ որեբայ հատին ի ժայռն որեբա (կամ ժայռն որեբա,) և զգլուխն զէբայ հատին յակեբզիբա, և բերին առ գեդէոն յայնկոյս յորդանանու. (դատ. է. 22-25:) Նոյնպէս գեդէոնն սնդեցաւ երեքհարիւրովքն զկնի երկուց Թագաւորացն մադիամու, այսինքն զեբէի և սալմանայ. (դատ. ը. 10-12.) և ձերբակալ արար զնոսա. և զի սպանեալ էին նոքա զեղբարս գեդէոնի՝ վասն այսորիկ ասաց ցնոսա, եԹէ խնայեալ էիք դուք յեղբարս իմ, ոչ սպանանէի զձեզ. և ասէ ցանդրանիկ իւր՝ հար զզոսա. և յոչ համարձակիլ նորա, ասեն ցնա զեբէի և սալմանա, * արի և դու քեզէն պատահեաց մեզ ||. և նա անդէն եհար և սպան զնոսա: Նա զի պարտուն ոտքա եղև առանձինն սքանչելւոք և արտաքոյ կարգի, ի տուս հայելով մարգարէին՝ զոսին ի միջ բերէ երբև յարացոյց.

որով պաղատի առ Ամծ և ասէ:

Ա՛ռ զնոսա որպէս ճաղիամ, որպէս սիսարայ, որպէս զաբէնի՝

՚է ծովծորան հետէէ։ Ա՚յսինքն վանեա զայսոսիկ Թըշ
նամիս մեր, և հար զսոսա՝ որպէս վանեցեր և հարեր
ձեռամբ դեդէոնիւ զազգն մադխամու, և ձեռամբ
բարակայ զղօրապլուխն քանանացւոց զսիսարա և կո-
րացուցեր զԹագաւոր նոցա զյաբին՝ ՚ի ծովծորան կի-
սոմիւն՝ այսինքն առ հեղեղատաւ կիսոմիւն։ Նակ Թէ
զինչ եղեն նոքա անդ՝ յայտ առնէ ասելով։

Ապաչէեան նոքա յանկոս գովքայ. և եղեն որպէս զաղէ
եէնէ։ Ա՚կուռնա գովքայ ասելով իմանայ զայնոսիկ տե-
ղիս յորս կային վտակք ջուրց՝ ոյք իջանէին ՚ի հեղե-
ղատն կիսոնի. և մի ՚ի վտակացն իջաներ առ գովքաւ,
որոյ փոխան յեբր" դնի պէէն պօա. այսինքն յակն (աղ-
բերաց) գովքայ. սոյնպէս դնի և յայլս, որպէս և ՚ի
մեկնաբանութիէ քաղդ"։ Նակ գովքն կարծի լինել ար-
քայանիստ քաղաք ծովեզերեայ ՚ի սահմանս կիսոյ ցե-
ղին մանասէի որ յայսկոյս յորդանանու։ Յականա սո-
րա ասէ սատակեցան Թշնամիքն իսրայէլացւոց՝ մա-
դխանացիք և քանանացիք, և եղեն որպէս զաղբ երկ-
րի՝ վասն երից. մի՝ զի ՚ի փառաց իւրեանց անկան
՚ի յետին անարգութիէ. երկրորդ՝ զի անթաղ մնա-
ցեալ գարշահոտեցան երրորդ՝ զի իբրև աղբ, (այս-
ինքն իբրև Ճիպուէ) եղեն երկրի ՚ի պարարտացուցա-
նել զհողն։ Ո՚յա եդեալ խօսի ապա և զայլոցն
ասելով։

Ա՚ռ՚ ձիշխանս նոցա որպէս զՈրէբ, զԶէբ, զԶէբէէ, զսա-
լմանա, և զամենայն իշխանս նոցա։ Ա՚յսինքն՝ այնպէս վա-
նեա զԹշնամիս մեր, և կորո՛ս զնոսա, որպէս վանե-
ցեր և կորուսեր զերկուս երևելի զօրավարս մադիա-
նացւոց զՈրէբ և զԶէբ ձեռամբ որդւոցն եփրեմայ.
և որպէս սատակեցեր զերկուս Թագաւորս նոցա զԶե-
բէէ և զսալմանա, նաև զամենայն իշխանս նոցա ձե-
ռամբ գեդէոնի։ Որովք յայտնապէս ցուցանէ զի
սատակումն նեռին և հետևողաց նորին. Ո՚յսպէս
սիկ եդեալ մարգարէին՝ խօսի այժմ և զյար խորհըր-
դոյ Թշնամեացն և ասէ։

Ժէ. Ա՚յ ասացին՝ ձառանգեսցո՛ւ ՚ի ձեզ ՚ժառանգութիէն այս։

Արդարեև իմացեալ լինի ա՛ոտ նախ տաճարն, և ա

այն ամենայն մեծութիւնք որք սրբեալ էին, այսինքն նուիրեալ էին տաճարին։ Յերկրորդ՝ քահանքն երուսաղէմ, որ որոշեալ էր լինել բնակութիւն նոցա. յոր միայն էբը" դնի նեղն այսինքն գեղեցկութիւն. որով նշանակի գեղեցիկ բնակութիւն, որպիսի էր երուսաղէմ։ Յերրորդ՝ կրօնն էբրայեցւոց, որով համարեալ լինէին նոքա ժողովուրդ աբ։ Զորրորդ՝ այն ամենայն՝ որ էր էբրայեցւոց. զի զոլով նոցա ժողովուրդ այ՝ ամենայն ինչ նոցա բան այսմ մտածեալ՝ էին աբ՝ նուիրեալ այ և գեղեցիկ. և զի զայսմ ամենայնի էին խորհուրդք եւ ձնամուտն, վասն այսորիկ ասէ։

Այս ասացին՝ քառասնիցորս՝ ի հին ընթերանէն այ։ Կամի ասել. ի ժողովել եհմամեաց մերոց ի միասին՝ քաջալերեին զմիմեանս ասելով բարձցուք յերկրե, և ընթեացուք զկրօնս սոցա, զի այսպէս կարեմք առնուլ ի ձեռաց սոցա զինչս և ստացուածս սոցա, եւս և զտաճարն մեծ, ուր գտանեմք մեծութիւն անբաւ, և ժառանգեմք գանձ բազում։ Ո՛ այսպիսիս ունէին խորհիլ և նեռինն հետեւողք ընդդէմ եկեղեցւոյ։ Ընդեմ որոց մաղթէ մարգարէն առ ՅԱՀ, և ասէ։

ԺԳ. ՅԱՀ իմ՝ սբ՛ ընծա որպէս զանիւ, որպէս զեղբեւ առաջի հողմոյ։

Ա՛պաքէն ի Թողուլ ուրուք զանիւն ի ձեռաց ընդզառ ի վայր առ՝ ինքնին գլորեալ իքանի ի վայր. և ի հոլովիլն անդ՝ վերին կողքն՝ ներքին լինելով Թաւալի։ Այդպէս և ի յառնել հողմոյ եղեգունք մղեալք ի հողմոյ անտի խռովին, և խռիւք եղեգանցն աստ և անդ ցրուին։ Այլորակն անուսոյ բերի ի նմա նուիրել Թողոյն այ զինամին. իսկ խռովումն եղեգանց կամ ցրուումն խռուի եղեգանց բերի ի նմա նուիրել զարհուրեցուցանելոյն այ զինամին։ Կամելով ասել մարդ արկին նմանութիւք խօսիլ զնուիրել Թէ Թշնամեացն խրատէլի՝ զայնպիսիս ի մէջ բերի ասելով։

ՅԱՀ իմ՝ սբ՛ ընծա որպէս զանիւ, որպէս զեղբեւ առաջի հողմոյ։ Կամի ասել. դու որ պատրաստ ի մէնջ երբեք ձշմարիտ ՅԱՀ, հայեաց՝ Թէ զիարդ յանդգնին հեԹանոսք ի վերայ մեր. տես ամենահայեաց ալեք քո զալք

կամ նոցա, և մի զօրացուցանէր զնա ի վերայ մեր. այլ թո՛ղ զնա ի ձեռաց քոց իբրև զանիւ, զի ինքեալ յանարգուն կորիցեն. և առաքեա՛ զաղբ ի նոսա, և նովին զարհուրեցուցանելով զնոսա խռովեցո՛ և ցրուեա՛ զմխաքանեալն նոցին՝ որպէս խռովի հողմ զեղէգն և ցրուէ զնոսին եղեգան։

Ա՛արթ է յայլ ինն միտս վերածել զմեհենութի՛ն այսր բնաբանի. իբր զի որպէս ի սաստիկ հոլովիլ անուի՝ ի՛բրեւ հուր թափի ի նմանէ. և որպէս եղէգն ի սաստիկ չնչմանէ հողմոյ ի՛բրեւ ոտքերի. այսպէս լինել ասէ և թշնամեացն՝ ոմն ի չքնաղակիւ նշ յիւրեքեանս և ի մերկիլ նոցա առ այլս։

Օ այս եդաք ըստ հասարակ կարծեաց. և սակայն ի՛բրեւ թե բառիս աչ՝ նշանակի աստ փշանման ծաղկին կամ փշափունջ սերմին կանկառին. որ ի չոր բանալն անկանի, և հանգոյն անուոյ ընթանայ առաջի հողմոյ, և ինքնին ցրուի. այսպէս լինելի ասէ մարգարէն և թշնամեաց իւրեանց ի բորբոքելոյ բարկութե՛ն նոյ։ Ա՛յս մեհենութի՛ն ըս պատշաճի զնի, և կարի վայելուչ. հոչակով նախ յայն՝ զի ի միասին ը՛ եղեգան յիրէ զանիւն. հայհոյով երկրորդ յայն՝ զի զնե՛ վանիլ կի՛ ցրուիլ հողմով, յասելն առաջի հողմոյ. որում ըստ պատշաճի յարմարի վանիլն փշանման անուի ի հողմոյ քան բուն անուի կառաց նն։

Լակ թե լեբո՛ զնի կալ կալ կի՛ գեղգեղ, որով նշանակի անիւ, որպէս և տեսանել և յայլս, այն և այ իբր հանգիստանուն առեալ լինի փոխանակ փշանման կի՛ փշափունջ սերմին կանկառի. որպէս առեալ լինի և ի մերս բառդ աչ. որ նշանակէ նաև զնոյն բոյսն։ Ա՛զդ յետ առաջի զնելոյ մարգարէին զվանիլ թշնամեացն ի հողմոյ բարկութե՛ն նոյ, կամելով զառաւելն ցուցանել յարեկ զինի, և ասէ։

ժէ. Ո՛րպէս հաւ՝ ըզ այգե ցանեսցես, որպէս բոյ՝ ըզ կնոքս զքրիստոս։

Ցորժամ աստիճանայ հուր, այրէ ոչ միայն զփայտ ջոր, այլև զդալարագեղ անտառս. սոյնպէս և բոց ատրճիճքրեայ հրոյ ի բղխելն ի դուրս կիզու և հալէ զառեղծ ելից իւրոց. որպէս և տեսանել ի բազում

լերինս, յորս բոց բղխեալ՝ կիզու, և երբեմն հալէ
ևս զաւազն ըստ որ ելանէ։ Նաւքն բերի ի նմանու-
թիւն սաստկութեանէ և բարկութեան Տիրանանելոյն այ. իսկ
երկրորդն բերի ի նմանութիւն անխնայ կորուսանե-
լոյն. և զի այսպիսի Տարուածով եհար ասէ զԵհնա-
միան իսրայէլի, վասն որոյ ասէ։

Որդեա հոգ՝ չէ այլ զնացաւս, որպէս բոց՝ չէ կիզա-
չէբինս։ Յայնմհետէ որպէս յորժամ վառեալ լինի հուր
ի մէջ անտառի, ի սաստկանալն այրէ զամենայն
ծառս, սոսկալիս և բարկութիւն քո իբրև հուր վառեալ
ի մէջ Թշնամեաց մերոց՝ սաստակեսցէ զնմանին զնա-
սա։ Նա եթէ կայցեն ի մէջ նոցա մեծամեծք զօրու-
թիւք իբրև զերինս, բոց սբսմնութեանէ քո Տալեսցէ և
կորուսցէ զնոսա անխնայ։

Արթն է լերամբք իմանալ աստ զերեսս լերանց՝
յորս կայցեն խոտք բազումք, որք եթէ ցամաքեալ
իցեն, ի մերձենալ բոցոյ՝ ինքեանք բորբոքին, և դիւ-
րաս այրին. և ըստ այսմ միա բանին կարգի ի ցուցա-
նել, թէ առաւել դիւրին է նոյ կորուսանել զԵհնա-
միս, քան կիզալ բոցոյ զչորացեալ ոչզս։

Չարմարական և բարոյական մեկնութիւն՝ Տրով նշա-
նակին աստ փոքանութիւնք որք ի զայրանալն և ի սե-
ղի գտանել՝ այրին զանտառս բարի գործոց, և կի-
զուն զլերինս մեծամեծ առաքինութեանց։ Կարձակալ
և ըստ հակառակին՝ այսու Տրով նշանակի սէրն Աստ-
ուծոյ, որ այրէ զանտառս մեղաց, և կիզու զլերինս չար ուն-
կութեանց։ Եթէ այս Տուր սերոյ մեծ իցէ՝ առաւել
բորբոքի Տոգմով փոքանութեանց. իսկ եթէ իցէ նուազ՝
շիջանի. որպէս տեսանի ի զգալիս Տուր. որ եթէ
ժամադացեալ իցէ՝ ի փչէն զօրանայ. իսկ եթէ տիա-
բացեալ իցէ և նուազեալ յոյժ՝ նոռչին փչմամբ սպա-
ռի։ Արդ եդեալ մարգարէին զպատուհասս Թշնա-
մեացն՝ կամելով ասել և զայլ իմն առաւելութիւն նո-
ցին յանդիմանն առնել, ի մէջ բերի զնմանութիւնն
մերկի ևս, և ասէ։

ԺԶ. Այսչափ հալածեսցես զնոսա մրրկաւ քո, և բարկա-
թիւ քով խռովեցուսցես զնոսա։

Օ բարութիւնն Աստուծոյ՝ զոր նախ նմանեցոյց Տոգմոյ և

հրոյ , առատ նմանեցուցանէ մերկին . զի մերկին եթէ իցէ հողմոյ՝ ունի զերթս յատկութիւնս . այսինքն գյանդարծականութիւնէ , զարագութիւնէ . և զխռովութիւնէ որով և բերի ի նմանութիւնէ բարկութիւնն այ , յորժամ յանկարծ հասանէ , արագ հարկանէ , և անխնայ խռովեցուցանէ : Ասացեալ եթէ իցէ հողմոյ , զի երբեմն ասի և զհրոյ , յորժամ բոց նորա կամ ծուխ նորին իբրև մերկի փոթորկի ի հնոցի՝ ելանէ արագութիւն և ելանէ շփոթութիւն . և ելանէ այսմ ևս բերի ի նմանութիւն ասատկացեալ բարկութիւնն այ . յոր միտ և դիցէ ի նմանութի այսպիսեացս հայելով՝ ասէ մարգարէն ։

Ասացեալ հալածեսցես զնոսա մրրիկ հով . և բարձրանիցէ հով խառնվիրաւորեսցես զնոսա : Խառդ այսպէս՝ վերացեր ի նահապետէ՝ ի բացատրութիւն նոցին . իբրև թէ ասէր . զորօրինակ հուր այրէ զանտառս, և բոցն կիզէ զոչ զերծինսն, արա , զի այսպէս պատահեսցի և թշնամեաց մերոց . առաքեա զարկութիւնն քո ի նոսա՝ ոչ միայն իբրև զհուր , այլև իբրև զմրրիկ . և նովին հալածեա զնոսա , և լից խռովութիւն զառնակ նոյ . մինչև խափան շփոթիլ նոցա ի մէջ իւրեանց , և կորուսանել զմիմեանս ։

Այս յիրաւի կատարեցաւ ի պատերազմի անդ յովսափատայ , քանզի յաղաչել խորայլացւոց զնա՝ և ի սկսանիլ սաղմոսասացից զօրհնութիւնն այ՝ խռովեցան և սաստեցան թշնամիքն նոցա , յարեան որդիքն ամմնայ և մովաբայ՝ նախ ի վերայ եդոմիայեցւոց, և կոտորեցին զնոսա . և ապա Հարան յերեսաց , և առ հասարակ սատակեցին զմիմեանս . (որպէս գրի . ՚ի· մնաց . ի· 22 -- 25·) ուր ասէն բազումք՝ թէ այս եղև ի գէշերի . յորում կարծելով թշնամեացն կոտորել զերբայեցիս՝ զինքեանս կոտորեցին՝ յանհաւրինս շփոթելով . որպէս և իցէ այսու խռովութիւն յանարգուն դարձաւ խորհուրդ նոցա, և ի նախատինս եղև դումարութիւնն նոցին . յայս հայելով մարգարէին՝ յարի զինքն և ասէ ։

ԺԷ. Եկ զերեսս նոցա անարգանօք , և խնդրեսցեն զանուն տո տէր ։

ԺՂ. Ա՛մէնեցունն և խոովչացն յաւիտեան յաւիտենից. և ամէնեցիք ըսէիցեն.

Ա՛յս բանիք նոյնպէս և այն ամենայն զոր ասաց յինն Ներսիսէ Համարոյ մինչև ցայսօր, ոչ են համարելի իբրև վկայ ժխդրութիւնը ընդդէմ Հշտութեան, այլ իբրև խնդրուածք պաշտպանութեան ժողովրդեան նոն. և զի այն պաշտպանութիւնն լինիցէ հարուածողաց Հշտութեան կարգաւ եղ զայնս առաջի, դիտելով միանգամայն և զօգուտ նոցա, այսինքն զգաստանալ նոցին. որպէս և առաջիկայ բանիւդ յայտ առնէ յասելն.

Ի՞նչ վնասս նոցա անաբիծոյ, և ինքեանցն պահանջ չունի՝ վասի ասել. զայս ամենայն առնելով ի նոսա՝ զպարծանս նոցա՝ որովք խրոխտային կորուսանել ըզմեզ՝ դարձ՛ի գլուխս նոցա. որով և երեսք նոցա լցին անարգանաք, այսինքն ամաչեսցեն, և այնու՝ ի միտ առցեն սղգք նոցա և ամենայն հեթանոսք, թէ դու ես որ տիրես՝ ի վերայ ամենայնի. որով և սուիք պեսցին խնդրել զանուն քո, և ոչ զանուն իւրեանց. կամ փոքեացին կոչել յօդնուիթի զանուն քո և ոչ զանուն կուռց իւրեանց։ Կա՛մ կամ բանադատեսցին՝ քեզ տալ զփառս և ոչ ինքեանց. և յորդորեսցին՝ ի քեզ ապաւինիլ և ոչ յինքեանս. և նուաճեալ խոպան՝ զքեզ ծանիցեն յամենայնի կարօղ՝ և ոչ զինքեանս կիր զկուռս իւրեանց։ Ա՛յս թէ քնաւ ինչ ոչ զգաստասցին՝ ձեռացեն յանարգութեան իւրեանց. և առ այս յաւել.

Ա՛մէնեցունն և խոովչացն յաւիտեան յաւիտենից, և ամէնեցունց ամաչեսցեն՝ ի վերայ պարծանաց իւրեանց. և եթէ յամառեալ ձեռացեն, անկցին՝ ի խոովութիւն յաւիտեանս յաւիտենից. որով նշանակի, թէ ժամանակաւոր ամօթ նոցա փոխեսցէ և յանարգութիւն յաւիտենական. որոյ վասն իսկ ասէ՝ ամէնեցիք ըսէիցեն. և յայնժամ կամայ և ակամայ ծանիցեն զգօրութիւնն

ԺԲ. Ով անիծեն չէ անուն ոչ տէր է. և զոս դայն բարե-
բեալ ես ի վերայ ամենայն երկրի։

Լատա անուն՝ յորժամ լինծայի ոյ, երբեմն ունի զգան նշանակողի, և երբեմն զգան նշանակելոյ. որպես յասէին * մի առնուցուս զանուն տէն ոյ քո ի վերայ ,, մատեաց ‖. (ելից. ե. 7.) անուանն ունի զզօրուի նշանակողի. որպես թէ ասէր. զայն անուն՝ որ նշա-նակէ զնծ՝ մի դիցես ի վերայ այլոց։ Լսակ յասէին. * սաղմոս ասացից անուան տէն բարձրելոյ ‖. (սաղ. է. 18.) բառդ անուն ունի զզօրութի նշանակելոյ. որպէս թէ ասէր. սաղմոս ասացից այնմ որոյ անուն է տէր բարձրեալ։ Լսատ երկուցս ըլ այսոցիկ ի գործ ածի ի գլխս բառդ անուն. իսկ աստ լատ առաջնոյն առեալ լինի յասէին։

Ով անիծեն չէ անուն ոչ տէր է։ Լյսմենքն փորձիս ի միտ առցեն թէ ձշմարտապէս անուն քո կոչի եւմա այսմենքն ոչ, որպէս. կիմ թէ սատուիս գիտասցեն թէ քեզ միայն վայել է անուանս ոչ. և զոս միայն ես ի վերայ ամենայնի և յամենայնի փառաւորեալ. և առ այս յարէ։

Լյ- զոս դայն բարեբերեալ ես ի վերայ ամ երկրի։ Լյսմենքն է, ծանիցեն թէ զոս միայն ինքնիշխան զօրութ տէրեա ամենայնի, որով և զոս միայն ասիս և ես բարձրեալ թագաւոր ընդ ամենայն տերիս ի վերայ ամենայն թագաւորութենէ։

Լյս բանք լիապէս կատարեսցին ի կատարածի աշխարհիս, յորում հետևօղք նեռին ծանիցեն զփրկիչն ամենայնի. որով և յայտնի տեսցեն՝ թէ խաբեցան. զի թողեալ զիւրեանց փրկիչն հետևեցան կորուսչին։ Այնպէս և զկք լցցին անարգանաք յերեսս իւրեանց և ի հնարս իւրեանց. և քանդատասեսցին անկանիլ խոպառ ըլ ոտիւքն քոյ, և ձանաչել զնա յայնմ տէր։ Լյսպէս պատահելոյ և ամենեցուն նոցա՝ որք ոչ կամեցան ձանաչել զնծ. և կամ ծանեան, բայց ոչ ծառայեցին նմա։ Լյս սակայն ծանիցեն յետոյ, և ամաչեսցեն, մանաւանդ ի տեսանել նոցա թէ զիարդ որք ծառայեցին ոյ, փառաւորեալ պատուին ի նմանէ ի կեանսն յաւիտենական։

ՍՂՄՈՍ ՀԱ

Փափաք տեհնչանաց սրտի արդարոյն ի վայելումն տանն ՅՀՍ, ի մէջ բերելով թէ քանի երանելի են նոքա՝ որք բնակին անդ. մինչև աւելի ընտրել զմի օր կալ անդ քան զանցասա. ամն յաշխարհի աստ. միանդամայն առաջի դնի և ցոյցք օգնականութեանն ՅՀՍ առ այնասիկ՝ որք ցանկան ի նմա ժամանել։

Ի կոթաբաժ. վասն հնչանաց. որքունն կորհայ սաղմոս։

1 Որքա՜ն սիրելի են յարկք քո փեր զորութիւն. ցանկայ և փափագիմ անձն իմ ի գաւիթս քո։ 2 Սիրտ իմ և մարմին իմ՝ ցնծասցե առ ՅՀՆ կենդանի։ 3 Վասնզի ճնճղուկ եգիտ իւր տուն. տատրակ զբոյն՝ ուր դիցէ զչափս իւր։ 4 Սեղան քո ՅՀ զորութիւն, թագաւոր իմ և ՅՀ իմ։ 5 Երանի՜ անձանց՝ որ բնակեալ են ի տան քում. յաւիտենից օրհնեսցեն զքեզ։ 6 Երանելի է այր՝ որոյ օգնականութիւն ի քեզ է. ելս եդ ի մտի իւրում ի հովիտս արմատութեան ի տեղւոջ յորում հաստեաց։ 7 Օրհնութիւն տացէ, որ զբնին դնէ. գնասցեն նա ի զորութիւն ի զորութիւն. և երեւեսցի ՅՀ հրեղէնից ի սիոն։ 8 Լիր ՅՀ զորութիւն՝ լուր աղօթից իմոց. ականի դիր ՅՀ յակոբայ։ 9 Պատռանելի ես դու մեր. տես ՅՀ և նայեա յերեսս օծելոյ քոյ։ 10 Զի ասն միոյ լաւ է քան զիս՝ ի օր ի գաւիթս քո, քան ընտրեալ։ 11 Պատրեցի ընդ աղբ տալ ի տան ՅՀ. քան բնականալ ի յարիս հեղեսրայ։ 12 Օ՜ զորութիւն և ՅՀ զորմածութիւն սիրե տեր ՅՀ մեր. ընտրեա և գթասցէ տայէ։ 13 Ո՜չ ինչ պակաս առնէ ընդզորմածին իւր յոյժ, որ գնան յանբծութիւն։ 14 Լիր ՅՀ զորութեամբ, երանելի է այր՝ որ յուսայ ի տեղ։

ՎԼԱՐՆԳԻՐ

Ի խոպոչ. վասն հեյմանաց. որդոցն կորեալ սաղմոս։



Ի ՀԻՆԴ ԶԵՒՈՒԴԻՒՍ ՄԵՐ ՅԱ-
ւելեալ լինի ի վերնագրիդ բառս ի դա-
ւիթ. որ բաց յօրինակէ ասորւոց ոչ ուրեք
գտանի, և ոչ յընտիր ձեռագիրս մեր։ Ի տալգ բեալ
սաղմոս ինչ մեր փոխանակ բառիս ի խոպոչ՝ դնի
ի ձամանակի. այլ այս վերիսկաւ է եդեալ. զի ոչ ի
ձեռագիրս մեր, և ոչ յայլ թարգմանութիւնս գտանի
այդ. այլ յամենայնի որպէս և յերբ" ըստ վերոյ գրե-
ցեդ դնի։ Ի ՚ալ թէ. զինչ նշանակէ բառս ի խոպոչ,
տես ի ներածութէ. գլ. Թ. Այոյնպէս և մ հնձա
նաց տես ի սաղ. ը. և ի ներած. գլ. Ժ. և վասն
որդւոցն կորեալ տես ի սաղ. խա։

Յոկ թէ երբ և յորմէ իցէ յօրինեալ այս սաղմոս, ե-
րեք են գլխաւոր կարծիք։ Ի ՚ոաջինն է այն, թէ այս
յօրինեալ եղև ի գերուէն բաբելացւոց ի ղևռատւոյ
ուխտիւն՝ որ էր սերեալ յորդւոցն կորեալ (Թագ.
իզ. ււ.) ի ցոյց փափաքանաց Ժողովրդեանն ՚ոյ առ
առաջարն որ յերուսաղէմ։ Ի ՚այս կարծիք Թէպէտ և
է բազմաց, ը որս և վարդանայ, բայց ոչ երևի հա-
ւանական. զի սաղմոսերգուն ի խօսիլն՝ ցուցանէ ի
բանս իւր՝ Թէ ի ժամանակի անդ կայր տաճարն.
իսկ ի գերութէն բաբելացւոց ոչ գոյր տաճար։ Ի-
ւ գարձեալ բան սաղմոսիս նիւթ ատէս միայն հայել յայն
տաճար. իսկ ը նկարագրին հայի յանձեռագործ տա-
ճարն ՚ոյ՝ այսինքն յարքայութէն երկնից։

Ի երկրորդ կարծիքն է նոցա, որք զայս սաղմոս ասն
գաւթի ի ժամանակս հալածանացն սաւուղայ, և
կիմ աբեսաղոմայ. զի որովհետև գաւիթ ի հալածմանն
անդ հեռի գոլով ի տաճարէն ՚ոյ՝ անձկանօք ներին
մաշիւր. գուցէ ի փափաքանաց անտի տեսանելոյ և
վայելելոյ զայն՝ ասաց զայս սաղմոս։

Երբորդ կարծիքն է՝ թէ այս սաղմոս իցէ ասացեալ ի դաւթայ յամենամեծ տենչանաց սրտի իւրոյ՝ զոր ունէր առ երկնային տաճարն։

Բայց հաւանականագոյն ևս է զերկոսին զայսոսիկ միանդ կարծիս զոգել ի մի. իբր զի դաւիթ թէպէտ և առաքեալ հեռի լինելոյ ի տաճարէն՝ իմն ի խոր բանէ տապանակին՝ ասաց զայս սաղմոս, բայց հայեցուլով յիմանալի տաճարն ի նոյն ուղղեաց. վասն զի բանք սաղմոսիս գերազանց գոլով յոյժ՝ հայկն յայնպիսի ինչ՝ քան զոր առաւել փափաքելի չկայցէ մարդոյ. իսկ այն է ժառանգութիւն ոչ յերկնային տաճարին զոր ստուերագրէր տաճարն երկրաւոր, վ՛ր որոյ և մեք յայն հայեցուլով ունիմք մեկնել զսոյն։

ՐՒԲ

ա. Որդեաց սիրելի են յարկք քո աբբա Տ֊ր. ցանկայ և փափաքէ անձն իմ ի գաւիթս քո։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Յարիւրք ոչ նշանակին օթևանք տանն ոչ այսինքն աբբայութիւնք երկնից. ըստ որում ասաց քր, * ի տան ,, Հօր իմոյ օթևանք բազումք են ‖. յովհ. ժԴ. ։ ։) Իսկ այս օթևանք փոխաբերութիւն նշանակին զանհամանելի աստիճանս և զբանձրելի կարգս փառաց արքայութիւն, որք վասն պարագրելոյ զամենայն փափաքմանս սրտի մարդկան՝ նմանութիւն իմն կոչին յարիւք։ Եւրդ այսոքիկ յարիւք ասին սիրելի պանդխտելոցս մեզ ի մէջ անցաւորացս՝ վասն երկուց. մի՝ վասն երջանկութեան՝ որ կայ ի նոսա. և մի ևս ըստ հակառակին՝ վասն թշուառութեան՝ որ կայ ի սոսա. յորս և հեշտութիւնքն ցաւ են. և փառքն տանջանք, մեծութիւնքն խեղդիչք և համբոյն ընծայք կենդանի վեր ի վայր։ Ի սոսին և ի նոսին հայեցուլ մարգարէին՝ աղաղակէ առ նոսա, և ասէ։

Որդեաց սիրելի են յարկք քո աբբա Տ֊ր։ Ասացեալ բառդ՝ որդեաց՝ դնի իբր միջոցութեան զարմացական կիր ըղձական. յոր միտ ի քանիս մի սաղմոսս և ի սաղմոսն

լամբ" դնի իբրև զի այսինքն վիճդ և քանի. որով կամի ասել. ով թէ վիճդ և քանի ցանկալի և փափաքելի են յարկք քոյ առ այնոսիկ՝ որք Ձանաչէն զգեղեցկութիւն նոցին, և զգան զՔաշուառութիւն պան.

դ Խոտութիւն խրատանց ։

Որ յաւելուլով ասել՝ տէր զօրութեաց, երկու ինչ տայ խմանալ. մի՝ թէ այն յարկք չինեալ են յայնմանէ, որ է ՚ի զօրութեաց. ուստի և են գործք ամենաբուխաստ և աքանչելի՝ արժանի այսպիսի Ձարտարապետի. երկրորդ՝ թէ յայնոսիկ յարկս նստեալ կայ տէր շուրջ պատեալ և պաշտեալ և փառաւորեալ յանհամար զօրութեաց՝ այսինքն յանթիւ զօրաց երկնից. որոց միոյն տեսութիւն միայն բաւական է սքանչացուցանել և ըզմայելեցուցանել զտեսօղսն. և եթէ միոյ նոցա տեսութիւն այսչափ՝ քանի՞ ասպա տեսուլ ՚ին նոցա. սմին իբրև և յարկք այնպիսի աքանչելի ՚ին յամենայն սրտէ փափաքելի լինին ծառայից նորա. ընդ որս և զինքն միայաբեալ մարգարէին՝ նոցին փափաքանօք ՚ի նոյն բերի, և ասէ ։

Ո՞Ձանիկ և փափաք անձն իմ ՚ի փառիս տ ։ Ո՞Ձանկալն նշանակէ աստ ուժգին յօժարուիլ բերել յայն՝ որ է սէր բերել. իսկ փափաքիլն է այնպիսի յօժարութիւն բերել ՚ի սիրելեացն, մինչև ոչ ևս ձկտել յայլ ինչ ։ Ո՞Ձայսպէս բերի ասէ անձն իմ այսինքն Հոգի իմ ՚ի գաւ.

լիթս քո ։

Գաւիթն նշանակէ զարտաքին սրահն, որ ասի քակ. և զի ՚ի յարկս ՚ոյ այսինքն ՚ի յարքայութիւնեան երկնից արտաքին և ներքին սրահ ոչ գոյ, նոյն լինի ցանկալի ՚ի յարկս ՚ոյ, և ցանկալն ՚ի գաւիթս նորա ։ Ո՞Ձայց մարգարէն այսպիսի նմմնութիւն խոսելով կամի ցուցանել զառաւելութիւն յօժարութեան սրտի իւրոյ՝ քան զայլ և այլ բանի. մի՝ ըստ սովորութեան ցանկանալոյն, իբր զի եթէ այսչափ ցանկայ ՚ի գաւիթս տանն ՚ոյ՝ քանի՞ և ա ՚ի բուն իսկ ՚ի ներքին սենեակ տանն ։ Ո՞Ձերկրորդ՝ ըստ աներևակայելութիւն ժառանգելոյ զիմն, իբր զի եթէ հասցէ ՚ի գաւիթսն, անկասկած ժամանեսցէ և ՚ի ներքս ՚ի ժառանգութիւն տանն ։ Ո՞Ձերրորդ՝ ըստ բաւական տեղւոյն, իբր զի այնչափ է գեղեցկութիւն տանն ՚ոյ՝ մինչև բաւական համարիլ և զկալն ՚ի գա.

ւելեա նորա ։ Յորմէրդ՝ ըստ մեծութեանն եմիմ գաւթին և եմիմ տանն. զի որչափ անձկագոյն են գԺօխք, նոյնչափ անհամեմատ առաւելութիւն ընդարձակագոյն է տունն ոյ յերկինս. Թէպէտև բազումք են որք խ. ջանեն անդ ՚ի գԺօխս քան որք ելանեն ՚ի տուն նոն. ուստի ասէ բարեբ. (՚ի մէկն. մարկ. գլ. ԺՃ. յորդ). * արքայութիւնն՝ որ զսակաւս ունի՝ յոյժ մեծագոյն է ,, քան զդէհենն՝ որ զազգումս ընդունի ։ Հինգերորդ՝ ըստ բարոյական տեսութեան. ըստ որոյ առաջի առնել և զխնամարհութիւն հոգւոյն. որով գրեթէ անաւր ժան համարելով զինքն մտանել ՚ի ներքս անդ՝ շատ վարկանի կալն ՚ի գաւթիս տան նոն ։

Վաթսուն առեալ՝ յարիւք և գաւթաւ նշանակին բուն յարիւք և գաւիթք տաճարին. իսկ այլաբանօրէն՝ եկեղեցի որ , որ յինքեան մտածեալ է յարիւք հաւատացելոց. իսկ հանդիսատեսիք արքայուն է գաւիթ նորա ։ Վաթսունակին գարձեալ և տաճարք և տունք աղօթից. յորս փափաքմամբ ժողովին հաւատացեալքն ցանկալով ժամանել ՚ի ժառանգութիւն երկնային տաճարին ։ Իսկ քանզի յայսպիսի փափաքանաց՝ որ արմատացեալ իցեն ՚ի յոյս հաստատուն, ծագի ուրախութիւն ՚ի մարդն, յոյն ըմբռնեալ մարգարէին՝ գոլ և ասէ ։

Ե. Ուրախ էմ ես մարդն էմ ինձ ասա ես ձեզ երկրպագել ։

Չնծալ կամ ուրախ լինել կրկին է ՚ի մէկ. մի՝ ասակ ըստ բանականին, որ է ներգործութիւն կամաց ՚ի հոգին ըստ ժառանգութիւն բարւոյն ըմբռնեցելոյ մտօք. զայսպիսի ցնծութիւն կի ուրախութիւն ունին և հրեշտակք, ևս և հոգիք մեր ՚ի ժառանգութիւն հոգևոր բարւոյ. միւսն է ըստ զգայական մասին, և է ներգործութիւն զգայական բաղձանաց ըստ ժառանգութիւն բարւոյն ըմբռնեցելոյ զգայութիւն. և սորա բուն կայսրան է ՚ի սրտի. զայս ունին և անբան կենդանիք յիւրեանց կարգի ։

Ակայ գիտելի է՝ զի ցորչափ կամք ՚ի մարմնի՝ որով. հետև հոգին անբաժան ունի զգայութիւնն, գրեթէ միշտ ՚ի ծագիլ ցնծութիւն ՚ի կամն՝ իբր զհամեմատ ծագ է նոյն և ՚ի զգայուն. նոյնպէս և ՚ի ծագիլ ցնծու-

ԼՁ՝ ի զգայութիւն՝ ծագի և ի կամն. և հասարակօրէն նոյն է ցնծութիւն երկոցունց. և զանազանութիւն նոցա առեալ լինի ըստ առարկայիցն՝ յորոց յառաջ գան։ Այս միտ խօսելով ասաց մարգարէին՝ ասէ։

Սէրս իմ և մարդն իմ ցնծասցէ առ ած կենդանի։ Արտաքին իմացեալ լինի ասա ոչ սոսկ կազմուածն այն ներքինը, այլ հոգին յուրախանայն յինքեան. ուստի ի վերայ սորա գրելով Հոգերկաւոյն (առ միջագետս երես. 274.) ասէ. * սիրտ իմ և մարմին իմ ցնծասցէ առ ,, ած կենդանի. և զինչ է սիրան՝ եթէ ոչ մարմին. ,, ապա զինչդրէ ը սրտին յաւելու և զմարմինն. որով ,, յայտ է՝ զի ոչ զոյսմ սրտի ասէ, այլ զՀոգւոյն ։ Այսպէս և մարմնով իմացեալ լինի ասա ոչ սոսկ զանգուածն մեռեղէն, այլ զգայութիւնք ներքինք, կամ զգայական յօժարութիւնք, և ս զգայարանք։ Յաւ ը այսմ կամի ասել. ցնծասցէ Հոգի իմ առ ած կենդանին, և ի զեղմանէ այնր ցնծութեանն զաւարձացուին նաև զգայութիւնք իմ՝ ի նոյն։

Կենդանի կոչէ զած ը երից. մի՝ յինքեան մտածելով. երկրորդ համեմատութիւն այլոց. և երրորդ հակադրութիւն մեռու. յինքեան մտածեալ միայն ոչ վայելէ տիրապէս անուանս կենդանի. քանզի կենդանին ասի նա՝ որ շարժէ զինքն ի ներգործութիւն իւր՝ ոչ յայլմէ՝ այլ յիւրմէ. որպէս թռչունք և անասունք ասին կենդանի, զի ինքեանք զինքեանս շարժեն ի ներգործութիւս իւրեանց, ը որում ինքեանք էլուզանեն յինքեանց զուրախութիւն, զսէր են, ոչ սպասեն և մարդիկ և հրեշտակք։ Այլ քանզի ուրք ևս ի շարժելն զինքեանս՝ շարժին յայլ, զի նուազ կեան, շարժին և են, և յոյժ շարժելն յայլ՝ ապականին և բառնին ի կենաց, վասն որոյ ըստ Հաղորդութիւն միայն ասին կենդանի. իսկ ած ոչ յայլմէ, այլ յիւրմէ է՝ ոչ ի շարժման այլ յանշարժութիւն. զի անշարժ գոլով յինքեան շարժէ զամենայն և կայ ինայ յիւրում յանփոփոխ ներգործականութիւն, այսինքն յանշափ ի մտացման, յանշափ կամեցման, յանշափ ասէր, յանշափ ուրախութիւն են. ուստի և ինքն է միայն կենդանի

որ էն տուօղ կենդանուԹէ այլոց · ըստ որում և ասէ Թէ նովաս կեանք էր ։

ՀամեմատուԹէ այլոց կենդանի կոչի ասէ , ի բաղդատուԹէն ընդ նմա և ընդ չնմա ։ Ա.սացէ ընդ նմա , որով իմացեալ լինին Թագաւորք և իշխանք , մարգարէք և հրեշտակք էն · որք ընդ սաղմոսերգուԹիւն (սաղ . ձն . ւ .) ասէն · բայց զկենդանուԹէն իւրեանց ոչ ուՆին յիՆքեանց , այլ յայլ · Ա.սացի և ընդ նմա , որով իմացեալ լինին կուռք՝ որք բնաւ չունին ինչ կենդագանուԹէ · զի այս ունին և ոչ տեսանեն , ականջս ունին , և ոչ լսեն · (սաղ . ՃԺԵ . Տ .) Ոակ ասէ ստեղծող գոլով այսպիսեաց՝ ինքնին զամենայն տեսանէ , զամենայն լսէ ևՆ . վասն որոյ ինքն միայն ասի ունենդանի ։

ՀակադրուԹէ մանաւ կոչի ասէ կենդանի . զի որպէս անեղ է , նոյնպէս և անմահ · և կեայ յինքեան անփոփոխ յաւիտեանս յաւիտենից ։

Ա.յլ պատճառ աստանօր այսպէս կոչելոյ մարգարէին զնա՝ է ցուցանել նմա՝ Թէ այն ցնծուԹէն զոր եդ առաջի՛ է Ձմարիտ · զի ոչ է առ անկենդանս կամ առանոտիս , այլ առ կեանքն Ձմարիտ · Ա.րկրորդ՝ Թէ այն ցնծուԹէն իւր է ունայնն ինչ յառաջ եկեալ յոչ իբր յաղեբերէ ցնծուԹեան · զի ունի գոլով կենդանի՝ ինքնին բղխեցուցանէր զնոյն ի Հոգի Նէր · Ա.րբորդ՝ Թէ այն ցնծուԹէն իւր ի ժառանգելն գունի՛ մնալոց է յաւիտեանս յաւիտենից , զի նա՝ յոր ցնծայ , է անմահ և ունայ յաւիտեան ։

Ա.յդ այս ցնծալս զոր դնէ մարգարէն , կարէ խմացեալ լինել եՆԷ ըստ հանդերձելոյն , և եՆԷ ըստ աստի կենաց · ըստ հանդերձելոյն իմացեալ՝ կամի առել ի հասանել իմում ի յարկս ունն ցնծասցէ անդ սիրտ իմ , և և մարմին իմ յետ յարուԹեան առ ունենդանի յաւիտեանս յաւիտենից ։

Ոակ ըստ աստի կենաց իմացեալ՝ կամի առել · վասն փափաքելոյ իմ՝ ի յարկս ունն՝ ցնծայ և ցնծասցէ սիրտ իմ և մարմին իմ · նա զի և ես ինքն բաղձ ի նոյն բերիմ , զնոյն խորհիմ , և ի ժառանգուԹէ այնր փուԹամ՝ Ա.յսպիսիս ԹԷպէտ և մարմնով կայ ի վերայ երկրի , բայց կեանք նորա յերկինս ի վեր է բարձրա-

ցեալ. նմանի այսպիսիս ծառայ, որ արմատով միայն յերկրի է՝ ի ժողովել զհիւթս բարիս, և այլով մասամբ՝ ի բարձրանալն. քան սմին և այսպիսիս քան մարդիոյ սեռսանի յերկրի՝ առ՝ ի առնուել զնմանդ հոգւոյ, և տալ զոյտուր հոգևոր կենաց, իսկ քան հոգւոյ յերկինս։ Վասդահ՝ է կացեալ միով կեաս՝ ի գետնի. և ինքն՝ ի վեր բոլորակի, զի բոլորք՝ ի վեր ունի զինքն։ Այս որպես գրէ սաղմոս ընդհանալի (՝ի պատառսան կամ թագաւորից երես· 846·) յայս յորդորեն զմեզ գիրք ասե· * ծայրիւք ոտին միայն չքնիլ ,, յերկրի· իսկ այլոցն ամենայնիս զվերինն խորհիլ·

,, ուր քո նստի ըստ աջմէ որ ‖

Այսպիսիս զվերինն խորհելով՝ այսինքն զերկինս, զյառատեղս երկնից զգենու· լինելով անապական՝ ի մեղս անշաղախ՝ ի մարմնի· լուսաւոր՝ ի խորհուրդս· ընդարձակ՝ ի սիրտս, խաղաղ՝ ի հոգիս· բարձր յիմաստուքեան· զարգարուն յառաքինութեան· և սրագ՝ ի գործս բարիս· որովք ցնծայ՝ ի հոգի և՝ ի մարմին իւր· երկրաւոր գոլով՝ յերկինս թռչի· մահկանացու գոլով՝ ընդ անմահս նմանիլ· մարմնաւոր գոլով՝ ընդ անմարմինս կենցաղի·

Կենդանիքն զոր եաւես եզեկիէլ՝ երկրաւորք էին, և յերկինս թռչէին· անմիաբանք այլաւսակք էին, և միաբան միաւոր յարբայսն ընթանային· անթևք էին՝ ի բնութէ, և թևօք մեծաձայնեան սլանային· Օ՛ի կայր նմանութէն հասատատուն երկնից՝ ի վերոյ գլխոյ նոցա, այսինքն է՝ թէ կայր՝ ի գլուխ նոցա՝ և՝ ի միտս նոցին, խորհուրդ նկարագրուն արքայութէն երկնից· կայր նաև՝ ի ներքոյ խորհրդոյ նոցա նմանութէն ձեռին մարդոյ· որով՝ նշանակի գործնական կեանք· զի այսպիսիքն զվերինն խորհելով՝ ջանան գործել՝ ի սատարանուն զգործս արժանիս վերնոյն· Կեաղ սոցա՝ ի վերայ երկրի վասն այսորիկ է միայն՝ զի երբեք խմսատուն վաճառականք գնեսցեն ատ գործովք զդիւթագին վաճառս, առ՝ ի թանկագին վաճառել զայնս՝ որ յերկինս· Այս ահա յայսպիսիս խորհելով և՝ ի սոյնս բերելով ցնծան սիրտք սոցա և մարմինք սոցին առ՝ ած կենդանի· և փութան ժամանել առ նա·

Լեռն այս քանք ասիցին ՚ի քեռանոյն քոյ՝ սրտիւ նո-
րա խմացեալ լինին կամք նորին , և խորհրդաբար ե-
կեղեցականք . իսկ մարմնովն իմացեալ լինի մարմին
նորա յարուցեալ ՚ի մեռելոց , և խորհրդաբար աշ-
խարհականք : Ձասել նորա զայս առ Հայր՝ մեք ևս
ցնծումք ՚ի բերիմք առ նա ինչն քո իբրև առած կեն-
դանի ՚ի վայելուչն կենդանութեէ նորա . քանզ որում
ինչն ասաց . * ես կենդանի եմ, և դուք կենդանի
,, լինելոց կք ։ (յովհ . ժդ . 19 .) ոչ յաղթաւոր
կեանս յայս , այլ յերկնայինն յարիւն . և զի այնմ
յարիւն օրինակ էր սեղան տաճարին , ընդ որ իբր ՚ի
գաւիթ լինի մտանել յերկինս , յայն ևս ուղղէ մար-
գարէն զփափաք իւր առակաւ ինն , և ասէ ։

Ջ . Ո՞րքանի՞ ձնձղուկ եփէս իւր գոմ . գարեկ ղբոյն՝ ոչ
դիջէ ցնփա իւր ։

Ջ . Սղոյն չո պէր ղրուխեց , խափաւոյ իմ և աջ իմ ։

Ձնձղուկ ասի փոքրիկն ՚ի թռչունս ձնձուղ (ա-
յլ-
է) , և ա և իցէ փոքրիկ թռչուն , որ ՚ի գոտանել
զտեղի յարմար՝ հանգչի ՚ի նմա իբրև յիւր տուն ,
անդ հանէ զձագս իւր . անդ պատսպարի ՚ի ցրտոյ և
յանձրևոյ . և ՚ի նոյն ապաստան լինի ՚ի հալածիչն
իւր ՚ի մեծամեծ թռչնոց : Ոչ սատարին և աղա-
նէնման ընտանի թռչուն հեզ ինչոյ , (որ յոյլազ-
գեաց գումիու կամ ղումրի կոչի ,) որ ՚ի գոտանէն
գյարմար տեղի վասն բունոյ՝ այնչափ ուրախանայ ՚ի
նոյն , մինչև մոռանալ և զքաղց իւր : Ո՛ այսպիսի յօ-
ժարութէ ունելով այսոցիկ թռչնոց առ բոյնս , և ՚ի
նմին գտանելով զՀանգիստ՝ բերին յառակ օրինակի
առ այնոսիկ՝ որք փափաքին ժամանել ՚ի յանկալին
իւրեանց . յայս Հայելով և մարգարէին առաջի դնէ
զոյն՝ և ասէ ։

Ո՞րքանի՞ ձնձղուկ եփէս իւր գոմ . գարեկ ղբոյն՝ ոչ
դիջէ ցնփա իւր ։

Սեղան չո պէր ղրուխեց . խափաւոյ իմ և աջ իմ : Ցերկո-
սին յայսոսիկ բանսդ ՚ի միասին առեալ՝ յայտնի մար-
գարէն իբր յարացուցիչ զմեծութէ այնր փափաքանաց՝

զոր եդ ի համարն ։ բան որոյ կամի ասել. Հանապազ հառաչեմ, երբ իցէ զի ժամնեցից ի յարկս քո տէր զօրութեանց, քանզի հեռի տեսեալ զիս ի ժառանգութեանն այնը հալիմ և մաշիմ. տեսանեմ, զի վայրի ձնձղուկ գտեալ իւր տուն՝ ցնծայ ի նմա, և պատապարսի ի նմին, և հանգչի ի նոյն, քանզի եգիտ նա զոր խնդրէր. տեսանեմ և զի ընտանի թռչունք՝ որպիսի է տատրակն՝ գտեալ իւր տեղի բունոյ, բերկրի ի նմին, և հանեալ անդ զձագս իւր՝ ցնծալից գոլայ. զի և նա եգիտ՝ որում ցանկայր. իսկ ինձ օտարացեալս յերկնային յարկացդ և պանդխտեալս ի պատուիրակեանս յայս զինչ կայցէ այլ փոխանակ այնոցիկ յարկաց՝ բայց եթէ սեղան ի քեզ ջրոռնէդ ինձ խաթաոար իմ

և աճ իմ։

Լաւ արդարև ի պանդխտութեան մերում զինչ այլ ինչ տեսանի այնպիսի՝ որ յանդիման առնելով մեզ զվայելուչն վերին յարկացն՝ սփոփեացէ զտառապանս մեր՝ քան զքաղաքուն ծնդային սեղանոյն՝ որ է ի խորան տաճարին. ոչ ապաքէն անդ գտանեմք զաւազանդիմի օրհնակս երկնային վայելուչեց, և և զառանձին իմն նեղակայութեանէ հրեշտակաց ի սպաս ոչ կենդանւոյ իրրև ի խորանս երկնից. ուր և ի տեսանելն զնաւիրմանս պաշտամանց եկեղեցւոյ նոցին նշմարեմք և զընծայութեանն աղօթից՝ զոր են յարքայութենէ երկնից։

Լաւ զարձեալ անդ գտանեմք լուսաւորուն ի միտս, բորբոքումն սիրոյ ի կամս, զգալութենէ և զգաստութենէ պաշկեչտութենան և զգայութենէս և յարատևին շարժմանս, որպես եթէ նոքա ի յարկս արքայութենէ առաջի ոչ։ Այլ որ մեծն է՝ անդ գտանեմք զաստ նեալ պանդխտութենէս մերոյ զդրաւ երանութենէ զոր վայելեն զոքա յերկինս, և ի ձեռն հաւատոյ, յուսոյ և սիրոյ ժառանգեմք զնոսա մեր իրրև զժառաւոր, և որպես զտէր զօրութեանց. մինչև ասել առ նա ընդ մարգարէին, Թագաւոր իմ և Աստուած իմ։

Այս բան կարէ փոքր ի շատէ և մեկնիլ. այլ այն է ի նոյն միտս. իրրև եթէ ասէր. ոչ ձնձղուկ և տատրակ ցանկան ունել զտուն և զբոյն, և ի գտանել՝ ցնծան և բերկրին, այսպէս և ես փափաքիմ ի

սեղան քո. և ի ներկայ լինելս իմ այնմ բերկրիմ. զի որովհետև ոչ եմ ժամանեալ ի յարկս երկնից՝ յոր ցանկամ լինել, ի սոյն բերիմ և փափաքիմ, զի գոնէ սովին լցից զկարօտ իմ՝ զոր ունիմ ի նոսն։

Արթ է և աս զայս բան առնուլ ոչ իբրև յարացոյց, այլ իբրև փոխաբերութեան ինչ. որպէս առնու և լամբ՝ այլով ինն տեսուք. յոր միտ կամի ասել. անձն իմ իբրև զձնձղուկ տատանեալ աստ և անդ եգիտ զիւր տուն, և իբրև տատրակ ներանձնացեալ եգիտ զիւր բոյն. և այն է սեղան քո տէր զօրութեց, ուր գտա- նեմ զձագս ուրդ իմ և զնիդ իմ։

Օ սոյն զայս յառաջ բերեալ մարգարէին գիտէ երբ գու ինչ. մի՝ ի ցուցանել՝ թէ որովհետև տակաւին ոչ է ժամանեալ ի վայելուչն սեղանոյ երկնայինս առաքին՝ այսինքն արքայութէն երկնից. փափաքէ վայելել յերկրաւոր տաճարի, և ի նմին սփոփել։ Այրկ բորդ՝ ի ցուցանել՝ թէ մեծ է յոյժ փափաք իւր առ երկնային սեղանն. զի թէ այնչափ փափաքելի էր նմա սեղան տաճարին, քանի ևս սեղանն արքայուն երկնից։ Այլ ըստ այսմ՝ ի ցանկալ նորա ի սեղան տաճարին՝ նովին ցուցանէ մեծասէս ցանկալ ի սեղանն երկնային. յոր միտ կամի ասել. որպէս ձնձղուկ և տատրակք ոչ ուրեք հանգչին՝ եթէ ոչ ի բոյնս իւրեանց, ուր և հանեն զձագս, սոյնպէս և ես՝ որ ցանկամ ներկայ գտանիլ առաջի սեղանոյ քո, ոչ հանգչիմ ի նոսն. այլ փափաքիմ վայելել յամենացանկալի սեղան արքայութեանդ քո. այդ սեղան միայն է ինձ փափաքելի. այդ միայն է հանգիստ իմ, և այդ միայն է՝ որ լիացուցանէ զիս։

Ի սոյն բերկրին և փափաքմանէ մէջ, մինչև ցանկալ գթեմ թառանիլ անդր հոգւով. այլ ծանրութիւն մարմնոյս ոչ թողու. ոչ տեսանի ի ձագս թռչնոց. ուստի ասէ բարեգթ. (ի մեկն. մարկ. գլ. ժդ.) * ձագք ջանան թռչիլ առանց թևոց և ոչ կարեն. ,, նոյնպէս և մարմին ծանրացուցանէ զհոգին ։

Այլաբանօրէն՝ սեղանով իմացեալ լինի մարմնացեալ քանն ած. զի ի նմա գտին հանգիստ ձնձղուկք և տատրակք, այսինքն հեթանոսք և հրեայք. կամ ըստ լաւի՝ խոհականք և աղջախոհք, և և իմաստասէրք և

առաքինասէրք, որք կերակրեցան ի սեղանոյ անտի և եղին զոյն լեհեղեցւոջ նոցա. և ծնան զձագս բարի գործոց հաճոյս ՚ի

Լարդոյապէս՝ սեղանով իմացեալ լինի առաքինական կեանք. յորում ՃՆՃղուկք և տատրակք այսինքն աշխարհականք և եկեղեցականք, կի՛ ըստ լսմբ՚՚ հետեւոցք գործնական և տեսական կենաց՝ գտանեն իւրեանց տուն, և հանեն զարգասիս բարեաց իւրեանց զձագս։ Այլապէս և որք գտանեն ՚ի մեղաց և ապաշխարեն, և ապրին ՚ի ձեռաց սատանայի, ՃՆՃղուկք են, յաս սել իւրեանց * անձինք մեր ապրեցան ոյլ ՃՆՃղուկք ,, յորոգայթէ որսողաց ՚՚։ (սաղ. ՃԻԴ. 6.) իսկ որք անմիջն են և որք կի՛ կատարելք, տատրակք են. յորոց մատչիւք պատարագ ՚ի սեղան ՚ան. ասէ և ՚ի համմատութեան։ Ձագք սոցա են սկսանօղքն. որոց որչափ սիրելի են բոյնք բարի վարուց և առաքինական կենաց, այնչափ զգուշալի են երկրասէրքդ փաթաքմինք. ապա Թէ ոչ կորնչին. առ որս խօսելով ասէ բարեաղ. (՚ի մէջն. մարկ. գլ. ԺԲ.) * Ձագք ,, նորափետուրք սիրեն զբոյնն. բոյն՝ կեանք աշ,, խարհիս են ՚ի շիւղից և ՚ի կաւոց շինեալ. յանկա,, նել բունոյ՝ անկանիս և ապականիս ՚՚։ Ո՛ այն օրի՛նակ բերէ և զբոյնս ծիծառնց ասելով. * բոյնք ծիծ,, առնց ՚ի Հայաստանէ ՃմերաՃոյն անկանին. ՃմերՃն ,, օրն կատարածի ասէ՛. . . Ձագք ծիծառնց յորժամ ,, անկանին ՚ի բունոյ՝ չհնձելով Թէ ոչ կարեն ,, Թռչիլ. և մերքն ոչ կարեն բառնալ զնո՛ա. այսպէս ,, և այնօրիկ որք ոչ ունին գործս բարիս՝ և յարեալ ,, իցեն յերկիրք, յաւերել երկրիս ոչ կարեն Թռչիլ ,, զկնի ՚ան յօդս. և ոչ կարեն արդարքն վերանալ ,, յանել զնոսա ՚ի յարկս արքայութեան երկնից ՚՚։ Լարդ ցուցեալ մարգարէին զփափաքումն իւր՝ զոր ունէր առ յարկս երկնից արքայութեան, առաջի գնել այժմ զերանութեն նոցա, որք կան ՚ի նմին. վը որոյ ասէ՝

Փրկեա զծառայս քո ձեզ ի, որ ի քեզ յուսացեալ է։ Զառաջսահաս նա՝ որ կալով ընդ իշխանութիւն այլոց յանձն առեալ և գործել ըստ հաճոյից նոցա։ Ի դէպ թէպէտ և ամենայն մարդիկ կալով ընդ իշխանութեան ոմն պարտաւորին գործել ըստ հաճոյից նոցա, բայց նոքա ևս ասին տերապահս ծառայ ոմն որք գործեն ըստ հաճոյից ոմն՝ ակն ունելով միանգամայն առնուլ վարձս ի նմանէ, թէ և ըստ մարդկայինս տկարութեան պատահիցէ նոցա երբեմն զընդդէմն ևս գործել։

Ո այսպիսի ծառայութեան ոմն վստահանալով մարգարէին ունել յանձն՝ ասէլոյ զնա փրկել զնոսն։ Ծառայ քո եմ ասէ, և ոչ ծառայ օտարի. եթէ դու ոչ փրկեացես զիս՝ ո՞ապա փրկեսցէ. մանաւանդ զի առանց քո ոչ ոք կարէ և ոչ զնոսն փրկել թող թէ զայլս. վասն որոյ և ոչ յայլ ոք՝ այլ ի քէն միայն յուսացայ զի դու ես ած իմ։

Նա ասա յասելն, ած իմ. բառդ ձի՝ դնի կուականապէս. և յարի ի բայդ էլենի. որպէս թէ եդեալ էր. ած իմ փրկեա զիս զծառայս քո՝ որ ի քէն յուսացայ։ Ոչ զի ոչ որոշէ թէ յորոց կամի փրկել, կամ յմրսելոյն փրկութեն հասանել, այսու թէպէտ և այլ իմանալ զմ և իցէ փրկուի, բայց հայելով ի յաջորդ հատորն՝ իմացուցանի զիրկնէն առ հասարակ ի թշուառութեն, և այնու գտանել զուրախուն ի հոգի նոր. վ որոյ առատացուցանելով զաղաչանսն յարէ զնոսն և ասէ։

Ողորմեա ինձ տէր. զի առ քեզ աղաղակեցի զորհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քո. զի առ քեզ

տէր համբարձի զանձն իմ։

Ողորմիլն ըստ երկուց կարէ առեալ լինել. մի՝ ըստ շարժելոյ յողորմելն. և երկրորդ ըստ ցուցանելոյ զողորմելն. և այս՝ առ այնոսիկ որք են ի թշուառութեն՝ առ ի բարձումն այնր եթէ ըստ հոգւոյ իցէ, և եթէ ըստ մարմնոյ. ըստ երկուց ըստ այսոցիկ առեալ լինի ասա ողորմիլն, յասելն։

Ողորմեա ինձ տէր։ Կամի ասէլ. եթէ չիցեմ արժանի

փրկութենէն՝ զոր ինդրեցի, նայեցաց ի Թշուառութենէ իմ, և յողորմ շարժելով ի վերայ իմ արժանացոյ զնա զմիմ փրկութեան։

Ա. Այս ողորմիլս կարէ՞ հայիլ և ի լուր աղաչանացն. որպէս թէ եդեալ եր. եթէ ոչ կամիս լսել ինձ վ՚ի անարժանութենէ իմոյ, գոնէ վասն ողորմութեանդ լուր աղաչանացս, կի՛ր ի նմին գլխի, ողորմագին աղաչանաց իմ շարժեսցէ զողորմութիւն քո ի վերայ իմ։ Ա. Ոաքի գնէ ապա և զառիթ ի գութ շարժելոյ զնա ասելով,

Օ՛ք տէ՛ր, մի՛ աղաչէիցէ զբնաւապաշ։ Ա. Ընդունելութենէ աղօթից՝ երեք ինչ պահանջի. մի՝ զի լինի ի խոնարհութենէ, զոր յայտ արար մարգարէն ի հանմատն. ։ և աստ ևս յայտ առնէ գնելով զառաջ տէ՛ր. որով ցուցանէ թէ քնաւ ոչ է ապաքինեալ յինքն, այլ յաստ։ Խրիմոյդ՝ զի լինիցի ջերմ և աստակէ. և յայս սակս գնէ աղաղակել. որով ոչ նչանակի արտաքին գոչումն, այլ ներքին պաղատանաւք հառաչանօք նուիրեալ ոյ։ Խրիմոյդ՝ զի լինիցի հանապազորդութենէ. և առ այս յաւելու գնել զօրհնապազ. որպէս թէ ասէր. ամենայն խոնարհութենէ, և յամենայն սրտի գոչեցի առ քեզ՝ ոչ մի օր, այլ յամենայն աւուր, և յամենայն ժամ. և ակնառնիմ թէ լուիցես ինձ, որով և ուրախ արասցես զիս. և առ այս յարէ,

Ա–բա՛ր սբ զանձն ծառայ տո։ Ա. Այս ուրախ առնելս երբեմն կարէ՞ իմացեալ լինել. մի՝ սոսկ ըստ լսելոյն. յոր միտ կամի ասել. եթէ լուիցես ձայնի իմում, այն բաւական է ինձ առ ի ուրախ առնելոյ զհոգի իմ. զի լսելոյդ ընդունիս, և ընդունելոյդ կատարես զոր ինդրեմ։ Խրիմոյդ՝ ըստ փրկելոյն՝ զոր յիշեաց ի նախընթաց համարն, յոր միտ կամի ասել. տուր զփրկութիւն քո, զոր մաղթեցի. և տալովդ ուրախացո զանձն իմ, այսինքն զհոգի իմ զոր ստեղծեր ի պատկեր քո։ Խրիմոյդ՝ ըստ ընդհանրոյ հոգւոյն զբերկրութենէ, յոր միտ կամի ասել. լսելով աղաղակի իմում փարատեա զտրտմութիւն հոգւոյն՝ որ պարաբեալ է ի պէսպէս փորձութիւնս. և անդորրացո զանձկութիւն սրտիս. և մխիթարեա զաղտեղութիւն խղճի մտացս. և արա՝ զի ուրախ լինի ծառայ քո ի քէզ ըստ օրինակի

ուբախութիւնէ՝ զոր ունէը ի սկզբան, կիմ ըստ ստուե-
բի նորին. որպէս զի ուրախութիւնդ ծառայեսցէ քեզ,
և այսմ ևս պատճառ տուց ասելով,

Ո՛ւ ես ոչ ունիմ ինչ ընդ քեզ, Համբառնալ
դանձն առ Հայր՝ երբեակի կարի լինել. մի՛ ըստ յոյս-
լոյ. (զորմէ տես ի սաղ. իգ. 1.) յոր միտ կամի ա-
սել. ի քեզ յուսացայ, և ի քեզ ապաստան արարի
զհոգի իմ. Երկիրդդ ըստ աղաչելոյ, յոր միտ կամի
ասել. աղաչեցի զքեզ, և զհառաչանս հոգւոյ իմոյ
առ քեզ ամբարձի, և զամենայն ինդրուածս անձին
իմոյ ի վեր բարձրացուցի, և եղի առաջի քո։ Երբ-
րորդ՝ ըստ յափշտակելոյ հոգւոյն առ Հայր. յոր միտ
կամի ասել. խոկմամբ մտացս, և տարփմամբ կամացս
իբր երկրաբուխիք թևաք թռուցի և բարձրացուցի զՀո-
գի իմ առ քեզ. ահ ընկալ ի քեզ աղաչեմ՝ զի մի
յարձակեսցին ի վերայ վայրկեան թռչունք չարք, և
կալցին յիւրեանս։ Խոկ պատճառ այսպէս յուսալոյ
ինձ, և այսչափ վստահանալոյ ի նա՝ ոչ այն էը զոր
ունէը, այլ այն էը զոր ինձ տեսանէը. վասն որոյ
ասէ.

Ո՛ւ դու ես ճշմարիտ և ուղիղ ես. Բազմաղօթս առ
ամենեսեան որ հարցան առ ինէ։

Ճշմարիտ ասէ ինձ յինքեան և առ մեզ. յինքեան ասէ
քաղցը, ըստ որում է քաղցրութիւն անսահման՝ ըստ
բնից. մի՛ տեսականապէս՝ ըստ անսահման երանութեն,
յորում ինքնաբաւ լիութիւն կայ քաղցրացեալ այսինքն
երանեալ անսպառելի։ Երկրորդ՝ առաքեալս՝ ըստ
անսահման բարութեն, որով առաքիչ իւրում կամաց՝
ի սիրելն զինքն անյագիապէս, յորմէ և յոժարի զե-
ղալ զքաղցրութիւն իւր՝ այսինքն հաղորդել զարբին
առ այլս. և ըստ այսմ որպէս ոչ կայ ի նմին ստուեր
խաւարի, այնպէս և ոչ կայ ի նմին ձաշակ ինչ դառ-
նութեան։ Երրորդ՝ նմանակցողապէս՝ ըստ անսահման
զթասիրութեն. մանաւանդ ըստ ողորմածութեն, որով
յոժարի բառնալով զձշտութիւնն այլոց՝ առնել զնո-
սա իւր նման երջանիկս և բարիս։

Ո՛ւ մեզ ասի քաղցր, ըստ որում ցուցանէ մեզ զզե-
ղումն իւրոյ քաղցրութեն ըստ երից. մի՛ ըստ ժառան-

գումեր. երկրորդ՝ ըստ բարերարութեր. և երրորդ՝ ըստ ողորմութեր։ Ըստ ժառանգութեր ասի քաղցր՝ ժառանգեալ լինելով և այս ի հաղորդելն անդ ըղքաղցրութեի իւր, յորում որպէս մեղրն՝ որ յինքեան քաղցր է, ի ձաշակիլն թէպէտ ոչ առնէ զձաշակօղն մեղր, բայց տայ նմա ժառանգել զբոլոր քաղցրութեի իւր, այնպէս և ՅԾ գոլով յինքեան անսահման երանութիւն՝ ի ձաշակիլն ի ՅՁ ազգութիւք և կի տեսութե՝ թէպէտ ոչ առնէ զնա ՅԾ՝ բայց տայ ՅԾա նմանս առնել, զի տայ նոցա ժառանգել խոպատ ըղքաղցրութիւն երանութե իւրոյ. որ յաստի կեանս տաւերաբար կարէ լինել իբր առհաւատիւ յուբախ առնելն զՀոգիս. իսկ ի հանդերձեալն տիրապէս և ըստ ամենայնի։

Ըստ բարերարութե ասի քաղցր, զի որ միանգամ դիմի առ նա՝ ցուցանէ նմա զառաբերարութիւն իւր. որպէս թե քաղցր դիմս ցուցանելով նմա, և յօժարելով տալ նմա զայնպիսի ինչ՝ որ իցէ ՀՇմարտիւ բարի, կամ որ համարեալ լինիցի նմա ի բարերարութիւն, որով և տիրապէս քաղցր ցուցանի նմա ՅԾ։

Ըստ ողորմութե ասի քաղցր, զի ցուցանելով յուսացելոց իւրոց զգործս ողորմածութե իւրոյ՝ բառնայ զդառնութե նոցա։ Ըստ վասն քաղցրութե՝ ՚ի տես և ՚ի սաղ. իէ. 6. և ՀՃբ. 66։ Նմանապէս ուղիղ ասի ՅԾ յինքեան և առ արարածս, յինքեան ասի ուղիղ՝ զի է անսպառնի ուղղութե ՚ի երից, մի՝ ՚ի գոյոյ իմացականութե անսահման՝ յանսահմանս կատարեալ. երկրորդ ՚ի ՀՃաչելոյ զամենայն ըստ ամենայնի առ ամենեսեան անսխալ. երրորդ ՚ի լինելոյ իբր առաջին կառն ուղղութե գործոց մարդկան։

Ըստ արարածս ասի ուղիղ ՚ի երից. այսինքն ըստ նախնամութե, ՚ի առաջնորդութե, և ՚ի տուչութե։ Ըստ նախախնամութե կի ըստ կառավարութե ասի ուղիղ՝ զի զամենայն էակս ուղիղ կարգէ. և եթէ թիւրութե ինչ տեսցի՝ ՚ի ՆՅ այն ոչ է ՚ի նախախնամելոյն այլ ՚ի թիւրելոյ արարածոց. որպէս ՚ի կառավարել հոգւոյն զանգամն մարմնոյն՝ ուղիղ, եթէ մին յանգամից թիւր շարժեսցի՝ այն ոչ է ՚ի կառավարութե հոգւոյն՝ այլ ՚ի թիւրութե անդամոյն։

Լսատ առաջնորդութեանն ասի ուղիղ՝ հայելով ի բանա-
ւորս, զի զամենայն շարժմունս նոցա առ ուղիղն վե-
րածէ, յամենայն խոտորմունս զուղիղն ցուցանէ, և
յամենայն վրիպմունս զուղիղն առաջի դնէ. իսկ թէ
բանաւոր էանն ըստ հաճոյս իւր վարեալով խոտորեսցի՝
իւր է յանցանքն որպէս ի գրել Աբարատ գործի ըստ
արուեստի՝ եթէ թիւրութիւն երևեսցի ի գիրն, ի
պակասութիւն գրչին է, և ոչ գրողին։

Լսատ տուչութեանն ասի ուղիղ՝ զի ի տալ նորս մէջ ինչ՝
զոր բարի ձանաչէ՝ զայն տայ. և ի խնդրել մեր ըզ-
բարին՝ ոչ տայ զայն զոր մեք բարի տեսանեմք, այլ
զոր ինքն բարի ձանաչէ, զայսմանէ տէս և ի սաղ-
մոս. ճ։ Լայլ գիտելի է, զի այս ուղղութիւն զոր ե-
դաք, եթէ մտածեսցի ըստ ներգործութեան մտաց,
այսինքն է ըստ ձանաչման, վերածի առ Աչխարհութիւնն
ոչ. իսկ եթէ ըստ ներգործութեան կամաց մտածեսցի,
այսինքն ըստ կամեցման՝ վերածի յարդարութեն. որ-
պէս գնէ առատ լամբ"։

Լսազմաղորմ ասի ոճ ըստ չորից. մի՝ զի բազում
անգամ ողորմի, և ի բազում անգամ ողորմելոյ ոչ
դադարի։ Լերկրորդ՝ առատել ողորմի քան զիշուա-
ռութեն մեր, իբր զի եթէ ի միում աստիճանի էին
Թշուառութեն մեր, նա բիւրապատիկ աւելի ողորմի։
Լերրորդ՝ զի յաւէտ զողորմութիւն իւր ցուցանէ մեզ
քան զարդարութեն։ Չորրորդ՝ զի առ բազումն ողոր-
մի, առ աղքատս և առ մեծատունս, առ հրէայս և
առ հեթանոսս։

Լսատ այսոցիկ ամենեցուն ի կարդալ մեր առ ոճ՝ ոճ
ասի լինել քաղցր առ մեզ ի կամել նմին զբարին մեր.
ասի ուղիղ առ մեզ, ի ձանաչելն զբարին մեր և
յուղղելն ի նոյն՝ ասի բազմաղորմ առ մեզ՝ ի գոր-
ծելն զբարին մեր, այսինքն ի տալն մեզ զայն ինչ՝ որ
է բարի, և ի բառնալն ի մէնջ զայն ինչ որ ոչ է բա-
րի, այլ Թշուառութեն։ Չայս ամենայն հայելով պա-
զատի մարգարէն և ասէ։

Օ՛ տո՛ւր ինձ խոստովանութիւն և ողորմեսցի ինձ ամենե-
ցունց՝ որ խոստան առ ինէ։ Լիւր ասելոցն էր պատճառս
տայ այնմ՝ զոր եդ ի նախընթացս համարն. որպէս
Թէ ասէր. ի քեզ տէր յուսացայ, և առ քեզ աղա-

զակեցի, ոչ զի ունէի ինչ առ ի նովաւ վաստհանալ, այլ զի գիտէի և գիտեմ, զի դուս քաղցը ես, և ամենեցուն զբարին կամիս, և զորս դիմեն առ քեզ՝ ոչ մերժես ի բաց. այլ ըստ ամենահայեաց ուղիղ ձանապհայման քում տեսանելով զբարին նոցա՝ զայն շնորհես նոցա. և որք կարդան առ քեզ՝ բազում օրինակս ողորմութեն ցուցանես առ նոսա։

Յաստանօր բառս առ ամենեսեան՝ դնի իբր խնդիր բայիդ ես՝ վերաբերելով յերեսին բառդ. որպէս թէ ասէր. քաղցր ես առ ամենեսին, ուղիղ ես առ ամենեսեան, և բազումդորմ ես առ ամենեսեան, ըստ Յայսիսի ձանաչելով մարդարէին զնա՝ մատչի կրկին յաղաչանս. և խնդրելով ունկնդիր լինել ինքեան՝ ասէ։

Ե. Ունդիր եր աղօթից իմոց. և նայեա՛ ի ձայն խնդրուածոց իմոց։

Օ երկոսին զայսոսիկ եդ և յաւարտումն համարի՝ բայց անդ այլով իւիք շարադրութեբ, և աստ այլով յաւելն։

Ունդիր եր աղօթից իմոց, Յայս հայի յայն՝ զոր ասաց ի սկզբան, խոնարհեցո՛ եր զունկն քո։ Յզդ թէ. պէտ խոնարհեցուցանել զունկն է նշան կամելոյ լսել, բայց դնել զունկն առաւելու ի նշանն. զի ոչ միայն է նշան կամելոյ լսել, այլև նշան կամելոյ իմանալ զոր լսէ։ Նչ ձայս միտ դիտել ասել՝ աղաւեմ զքեզ՝ զի հաձեսցիս ի միտ առնուլ զբանս աղօթից իմոց, որ է ասել, ընկալ զաղօթս իմ զոր մատուցանեմ քեզ. և զայս բացայայտել կամելով յարել զկնի և ասէ։

Եւ նայեա՛ ի ձայն խնդրուածոց իմոց։ Յայս հայի յայն՝ զոր ասաց ի վերոյ, ըմբռնի։ Յայց քանզի՝ ոչ ամենայն որ լսէ՝ նայի, այսինքն դիտէ կատարել, զայն ևս խնդրէ յասելն, նայեա՛. որպէս թէ եղեալ եր. լսեր ձայնի իմում՝ դիտելով կատարել զոր խնդրեմ։ Օ այսմանէ տես և՛ ի սաղ. ե. ։ Յայս նայիլս ըստ երկրորդական մեկնութեբ կարէ վերածիլ և՛ ի գննութեբն. յոր միտ կամ ասել. քննեա և տես, մի արդեօք թերթ էին ձայն խնդրուածոց իմոց. և եթէ

իցէ Թիւր՝ ուղղեա՛, և զուղիդն կատարեա՛։ Օ այս եղեալ յարէ զԿնի, և ասէ։

Շ. Յաւուր նեղութեանդ իմոյ կարծեցի զԱ տէր և լուաւ ինձ։

Օր նեղութեան կոչէ աստ զայնպիսի ժամանակ՝ յորում պաշարի մարդ՝ ի պէսպէս նեղութիւնս՝ զոր այլուր կոչէ օր չար. զորմէ տես՝ ի սաղ. իա։ Եւ քանզի յայսպիսի աւուրս կարդալով մարգարէին առաջի՝ լսելի եղև, զայն բերէ օրինակ առաջի, և ասէ։

Յաւուր նեղութեանդ իմոյ կարծեցի զԱ տէր և լուաւ ինձ։ Այսմ ասել. ոչ իբրև անփորձ քաղցրութեանդ քումդ կարդամ առ քեզ, այլ փորձ եմ. զի յորում աւուր և իցէ, ՚ի պաշարիլն իմ՝ ի նեղութիւնս՝ յորժամ կարդացի առ քեզ, ոչ անտես արարեր զիս, այլ լուար ինձ, և ցուցեր զայցելութիւնդ քո առ իս. յայսմ փորձ գոլով՝ ահա և այժմ կարդամ առ քեզ՝ ի նեղութիւնս. լուր ուրեմն և այժմ ձեր ածիմ, և մի ընդդէմ այնպէս փորձոյ ունանայն արձակեր զիս։

Ա. Այս բան կարէ և յատուկն մեկնել, որպէս մեկնեն ոմանք, աւուրք նեղութեան իմմանալով զաւուրս կենցաղոյս. յոր միտ կամի ասել. ՚ի կարդալ իմում առ քեզ՝ ՚ի պանդխտութեանդ կենցաղոյս՝ լուիցես ինձ. քանզի սովոր ես լսել ամենեցուն՝ որք կարդան առ քեզ. մանաւանդ զի դու ինքն ես՝ որ տաս կարդալ. և որպէս տաս, սոյնպէս և ընդունիս. զի ոչ ես իբրև զմարդ կարօտ և տկար, և ոչ իբրև զածս այլոց ազգաց, որք ոչ զտայն ունին, և ոչ զընդունելին գիտեն։

Յայս հայեալ յարէ զԿնի և ասէ։

Շ. Ա՛լ ոչ է նման տէր յածս պէս. և ալ ոչ է որպէս ղեործեալս։

Ա. Այս բան ոչ ցուցանէ՝ Թէ կարէ լինել ոք նման ՚ի՝ բայց յիրում չգուցէ. այլ Թէ անհնարին է լինել ուստեր նման ՚ի՝ Թէ և ածն ասիցի, և այս՝ Թէ ՚ի գոլն և Թէ ՚ի գործելն. զի ածն ՚ի գոլն է անեղ ինքնագոյն էն, և յիմ կատարելութիւնս անսահման, ՚ի բարութենէ, յիմաստութենէ, ևն։ Այնպէս և ՚ի գործելն

է յանհունս կատարեալ, զի յանհուն ոչնչէ առնէ զոր կամի յանթառս ցանթառս. և պահէ զամենայն ՚ի գոլ և ՚ի գործել, անկախ յամենայնի։

Իսկ որք միանգամ ՚ի մարդկանէ ՚ածք կոչին, որպիսի են իշխանք և դատաւորք, մարգարէք և առաքինորդք, նաև հրեշտակք, յամենայնի կախեալ են զոյացա-նութէն ՚ի գոլն և ՚ի գործելն. և ըստ նորս նա-խանամէջս կեան, և առանց նորա ոչ գոլ կարեն և ոչ կեալ, ոչ գործել և ոչ շարժիլ։ Այս եթէ ու-նին ինչ կատարելութէն՝ զորօրինակ իմաստութէն իշ-խանութէն, ևն, որով ասին ՚ածք, յայլ է այն ամենայն իբրև հաղորդութէն ինչ ՚ածային կատարելութեանց, բայց ստուերաբար. զի ՚ի համեմատին ընդ կատա-րելութեան այդ՝ են իբրև ստուեր, կիմ իբրև ստուե-րական ինչ պատկեր. և կամ դիտողական ինչ երե-ւեալ ՚ի հայելիոջ. զի որպէս որ ինչ կատարելութէն և որ ինչ շարժուն երևի ՚ի պատկերն տպաւորեալ ՚ի հայելիոջ է, ՚ի մարդոյ՝ որ հայի ՚ի պատկերն, և յորշափ հայի մարդն՝ կայ այն, և յոչ հայինն՝ ոչ և-ս կայ, սոյնպէս և որ ինչ կատարելութէն կայ ՚ի մար-դիկ, և որ ինչ շարժուն, է յայլ, յորշափ հայի ՚ի նո-սա ՚ածն՝ կան, և յոչ հայինն՝ յոչնչութէն դառնան։

տե՛ս և ՚ի սաղ. ղէ. 7։

Այսպա եթէ ՚ի սուտ ՚ածս հեթանոսաց հայիցես՝ զորս մարգարէն դևս կոչէ (սաղ. ղե. 5.) ամենևին զուրկ են յամենայն նմանութէն, զուրկ գոլով յամենայն կատարելութեանց. զի ոչ գոլ ունին կենաց՝ և ոչ գոր-ծել ըստ կենսաւորաց. քանզի աչս ունին և ոչ տես-անեն. ականջս ունին և ոչ լսեն, ևն. և են արա-րածք մարդկան կախեալք զնոցանէ ՚ի պաշին։ Իսկ ՚ածք ոչ ունելով զմարմնաւոր աչս և ականջս՝ զամե-նայն տեսանեն, զամենայն լսեն, և է արարիչ ա-մենայնի։

Այլդ քանզի եթէ սոքա և եթէ նորա չունին նմա-նութէն ընդ ՚ած, չունին և-ս ինչ՝ յոր արժան իցէ յու-սալ. մանաւանդ թէ որք յուսան ՚ի կուռս, ունայնա-նան ըստ նոցա. որպէս գրէ սաղմոսերգուն (ՃԺգ. 16.) յաւելն. * նման նոցա եղիցին ամենեքին որք ,, յուսացեալ են ՚ի նոսա ‖։ Այնպէս և որք յուսան

յամենայնի ՚ի մարդկէ՚ ընդ անիծիւք են. զսա որում ասէ երեմիա (ԺԷ. ՟ե.) * անիծեալ լիցի մարդ՝ որ ,, արասցէ գոյս իւր ՚ի մարդս ՚՚: Այլ մեք իրի և մարգա-րէն Թագեալ զամենայն յոյս մարդկային՝ յոյժ միայն ապաւինիմ. և զի ցուցցէ Թէ իրաւամբք առնէ զայս, առաջի դնէ զանմանութիւն նորին. խոստովան լինել-լով՝ Թէ ոչ ոք է՝ որ հաւասարիցի նմա. վասն որոյ ասէ՝

Այլ ոչ է նման չէզ յաճո՞ սէր. և ոչ է որպէս պէտքն ո՞ր ՚ի ստանօր եՀէ բառիս աճո՞՝ իմացեալ լինիցին կատար հեԹանոսաց, յայնժամ բառս ոչ նման դնի ըստ ամե-նայն ընդարձակութեանէ, որպէս Թէ ասէր. ամենևին չէք նմանութիւն ՚ի միջ քո տէր և ՚ի միջ կռոց. և ոչ ևս հանգիստութիւն ինչ ՚ի միջ գործոց քոց և ՚ի միջ գործոց նոցա՝

Լսակ եՀէ բառիս աճո՞ իմացեալ լինիցին իշխանք և Թագաւորք, հրեշտակք և մարգարէք, ևս, զորս աճս կոչեաց մարգարէն (սաղ. ՀԽ՟. ՟ւ. և ՟ճ.) յայնժամ բառս ոչ նման՝ դնի ըստ բանի կատարելութեանէ. որպէս Թէ ասէր. ոչ ոք յայսպիսի աճոց կարէ հաւասարիլ քեզ ՚ի կատարելութիւնս կամ՝ ՚ի գործս՝

Կամ ասա յաւելցն. * և ոչ ոք է որպէս զգործս քո՝. զորութիւնէ իմացեալ լինի և բայս գործել. որպէս Թէ ասէր. և ոչ ոք գոհանի՝ որ գործիցէ ինչ ըստ գոր-ծոց քոց, կամ՝ ոչ ոք է որ կարիցէ գործել զայնպէս-սի գործս՝ զորպիսիս գործես դու՝

Կամ՚՚ ընդ նմին և վարդան զայս գործ վերածանէն յայն՝ զոր արար որդին ոյ դնելով զանձն իւր ՚ի վե-րայ մեր՝ յորժամ Թշնամի էաք նմա. զի ոչ ոք արար զայսպիսի գործս՝ Կարդ որովհետև այսպիսի է աճ՝ և այսպիսի գործ նոցա, յորդորի մարգարէն զամե-նայն ազգս՝ յամենայնի զնա մեծացուցանել. վասն որոյ ասէ՝

Ը. Օ անենայն ազգս զոր արարեր եկիցեն և երկիրպագեն առաջի քո տէր. (Ե) և մեծասցեն զանուն քո յաւիտեան՝

Կա՚ ՚ի մեծացուցանել զնա՝ պարտ է մտօք մերձե-նալ առ նա, և կամաք պաշտել զնա. և սրտիւք և

բերանով փառաւորել։ Հայելով յառաջինն ասէ եղեւն առ նա, և այս վերածի ի ներգործութեն հաւատոյ։ Հայելով երկրորդն՝ ասէ, երիւղպաղեցաւ։ և այս վերածի ի զօրութեն յուսոյ ըստ ներգործութեն կրօնի։ Հայելով երրորդն՝ ասէ, խոտոր աչացն։ և այս վերածի յառաւելութեն սիրոյ։ Հայսոսիկ ահաւոր հելով առաջի դնէ մարգարէն զայս բան որով ցուցանէ զծայրագոյն փափաք սրտի իւրոյ առ Աստ. զի միայն սիրոյն է ցանկալ մեծութեն սիրելելոյն։ սմին իբրև խրախուսելով ինն ասէ։

Օ. ամենայն ազգք երթեալք եղիցեն և երկրպագեսցեն առաջի քո տեառն։ Ի. յսմինքն ամենայն ազգք մարդկան՝ որք են ստեղծուածք քո՝ ձանաչելով զքեզ Ստեղծիչ մարիա Աստ Թողցեն զնոտի յոյս իւրեանց, և զսուտ Աստս, և եկեսցեն առ քեզ։ և երկիրպագանելով քեզ՝ անկցին առաջի քո, և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան։ ուր տեղւով կամի ասել։ փառաւոր արասցեն ոչ զանուն չաստց իւրեանց կամ զանուն իշխանաց, այլ զանուն քո։ կամ տացեն զփառս ոչ անուան կռոց և Աստ ազատոյց, այլ անուան քումմ յաւիտեան։ կամ որ նոյն է, փառաւորեսցեն զքեզ՝ որոյ անուն է եհովահ Աստ կենդանի, և ոչ զկուռս՝ որոց անուանք անարգանաց են արժանի։

Իսկ փառաւոր առնելն կրկնակի լինի։ մի՝ առ ի ներքս՝ յորժամ այնպիսի ինչ առնի ուժք, որով չինքեան լինի փառաւոր, այսինքն շքեղ և պատուական։ յոր միտ ասի (ի սաղ. ղ. 16.) * փրկեցից և փառաւոր արարից զնա։ և յայտ է Թէ յայս միտ ոչ դնի աստ բառս խոտոր առնել։ Իսկ երկրորդ՝ առ արտաքս յորժամ այնպիսի ինչ ասի, կամ առնի, որով հաւատկի փառաւորեալ գոլն ուրուք։ և յայս միտ դնի աստ։

Ի. յս բան է միանգամայն և գուշակութեն ինչ, հայելով ի ժամանակ գալստեանն քոյ յառաջնումն և յերկրորդումն։ զի յառաջնումն անդ ոչ միացին ազգք յորոց ոչ եկին յերկրպագութեն և ի փառաւորութեն քոյ ցմ։ և այն մինչև ի կատարած աշխարհի, որ է յաւիտեան մի։ ընդ սոսին իմն և ցերեքշաբաթ առ Հաստատակ, և զանդադարամտաբանս։ Իսկ յերկրոր-

դուն ոչ եթէ տմարդ յամենայն ազգաց, այլ ամենեքին որք կան յիւրաքանչիւր ազգս՝ եկեսցեն և անկցին առաջի նորա, և երիցք պագցեն նմա, և փառաւոր արասցեն զանուն նորա յաւիտեան, եթէ արդարք և եթէ մեղաւորք. արդարք ցնծալից բերիրութիւն, իսկ մեղաւորք ակամայ բռնադատութիւն։ Զոր դարեալ մարգարէին զաղջս ամենայն ի մեծացուցանել զնա՝ ինքնին յառաջ մատոյն՝ անձամբ անձին առնել զնոսին ասելով առ նա։

ԻԹ. Ասեն ես դու պէր և առնես այանելիս. և դու գիտես ես ած։

Ա. Այս բան եթէ ի կողմանէ ասողին մտածեսցի և փառաբանութիւն առ ած, կամ փառաւոր առնել զնա՝ յայտ առնելով զփառաւորեալ գոլն նորա, որպէս ինքն ասէր. փառաւորեցից զքեզ ասելով՝ մեծ ես դու տէր և առնես սքանչելիս և դու միայն ես ած. և ըստ այսմ այս ասացուած լինի նեղգործութիւն սիրոյ առ ած. որպիսի և ասի՝ զոր դնէ ի համարս 11։ Իսկ եթէ ի կողմանէ առարկային մտածեսցի այսինքն ի կողմանէ այնր առ որ ասի, և յայտարարութիւն իրին ծանուցելոյ ըստ որում՝ ասողն ճանաչելով զնա՝ լինել յինքեան մեծ ևն, խոստուվանի զնոյն. յոր միտ կամի ասել. ճանաչեմ և խոստուվանիմ զի դու միայն ես մեծ, և դու միայն ես որ առնես սքանչելիս, և դու միայն ես ած ճշմարիտ։ Իսկ ըստ այսմ այս ասացուած է նեղգործութիւն հաւատոյ։

Ա. Այս զանազանութիւն թէպէտ և յայլ բազում տեղիս մտածի, յորս կայ այսպիսի եղանակ խօսից, բայց առաւելապէս ասա է դիտելի, հայելով ի նախընթաց և ի յաջորդ բանսդ։ Այդ որովհետև ասաց ի վերոյ՝ ոչ ոք ինման քեզ չիցես, և ոչ ոք է՝ որոյ գործն իցէ որպէս զգործս քոյ, այժմ կամելով ցուցանել զայն զանբաւ մեծութիւնն՝ այ առաջի առնէ զայս բան յասելն։

Ասեն ես դու պէր։ Ի մեծ ասել զնոյ ոչ է իմանալի ըստ տարածութիւն կամ ըստ քանակութիւն, այլ որպէս ասացաք այլուր՝ ըստ անչափութիւն և այն ըստ երից, այսինքն ըստ անչափութիւն էութիւն, ըստ անչափութիւն

զօրութիւնէ, և ըստ անչափութեան տէրողութեան. յոր հայի զան առաքեալն, որ ասէ. հռոմ. (ա. 20.) * անեղական նորա (որովք արար զամենայն) ՚ի ,, սկզբանէ աշխարհի՝ արարածովքս իմացեալ տեսա- ,, նին. այսինքն է միտնջենաւորութիւնէ և զօրութիւնէ, և ,, ամբութիւնէ նորա ||։

Ա՛յլ գիտելի է՝ զի կրկնակի ասի իմն մեծ. մի՝ հա- մեմատութիւնէ փոքու, որպէս պատանին ասի մեծ՝ հա- մեմատութիւնէ տղայոյ. նաեւ ասի մեծ՝ համեմատութիւնէ նաեակի. ծառն ասի մեծ՝ համեմատութիւնէ թփոյ, եւն։ Այրկրորդ առանց համեմատութեան, ըստ որում ունի յինքեան զայնպիսի ինչ՝ որ ոչ պարապրի ՚ի ղեայու- թենց, կամ ՚ի մտաց. որպէս ովկիանոսն ոչ պարա- պրելով յաչաց վասն ընդարձակութեան՝ մեծ ասի, թէև ոչ համեմատեսցի այլում ծովու. ըստ այսմ և եր- կինք մեծ կոչի առանց համեմատելոյ ընդ այլում։ Ա՛րդ յայտ է թէ ամբ թէպէտ և երբեմն մեծ ասի համեմատութիւնէ, որպէս յասելն (սաղ. ճՀԵ. 3.) * տէր մեծ է քան զամենայն կուռս ||. բայց այդ է ըստ եղանակի խօսից, և ոչ ըստ իրին. զի յիրում է մեծ առանց համեմատութեան։ Այս յայս միտ կոչե- ասա զամբ՝ մեծ. որպէս թէ ասէր. ասացի՝ ոչ ոք է նման քեզ յամբս, վասն զի այք և իցեն նորա, կամ փոքր են, կամ ոչինչ. իսկ դու տէր՝ ինքնութեդ մեծ ես։ Ո՛յս եդեալ՝ առաջի առնէ և զմեծութիւն գործոցն ասելով։

Այ՝ առնես սփանչելիս։ Աքանչելիք ասին այն գործք՝ որք ՚ի վեր են քան զկար բնութեանէ, և քան զհասա- րակ կարգ լինելութեանէ, ոչ սոսկ յերևելին, այլ և ՚ի լի- նելն. զորպիսիս արարչին մովսէս, եղիաս, եղիսէ ևն։ Այս զի միայն ամբ է ամբ բնութեանէ, և ՚ի ձեռին նորա է ամենայն կար և կարգ բնութեանէ, նա միայն կարօղ է առնել զսքանչելիս, եթէ՛ ինքնին և եթէ ՚ի ձեռն այլոց. վասն որոյ զոր ասա դնէ, և առնես սփանչելիս. ՚ի սաղ. հա. ՚ի վերջն. և յայլ տեղիս յասելոյ զբ- բառդ գոյն, յասելն՝ նա միայն առնէ զսքանչելիս։ Այս այսմ պատճառ դնէ զայն՝ թէ վասն զի նա միայն է ամբ, յասելն։

Այ՝ դու գոյն ես ամբ։ Այր բառդ Այ՝ ունի զզօրու-

[Ա]ինչն պատճառական չարկապիս՝ պէ· որպէս թէ ե-
դեալ էր· դու միայն ես մեծ , և դու միայն ես՝ որ
առնես աքանչելիս· վասն զի դու միայն ես ած , այս-
ինքն արարիչ ամենայնի· իսկ եթէ այլք ևս ասիցին
ածք , նոքա ոչ են արարիչ այլ կամ սուտ ածք , և
կամ արտաքսակս հաղորդք քոմէդ կատաբելութե
և ամենեքին արարեալք ։ Օ այս ամենայն եդեալ
մարդարէին՝ հայի ապա յանհաւատնելի նախախնամու-
թիւնն իդ , հայի և ի կարգս օրինաց նորա , հայի և
ի բազմադիմի վտանգս անձին իւրոյ , և ի սոսին
յափշտակելոյ և իբրեթէ չուրջ պաշարեալ լինելով՝
մնալի պաղատանօք առ ած , և ասէ ։

Յ· Ա· աւետարանէ ինէ ի ճանապարհի դամ· և գնացէ ի
ձկնաբոուն դամ· և ոչխարն եղէցի սերդ իմ
երկնելի յանտառին դամին ։

Լայս բան է բովանդակութե որ և իցէ մարդկանաց
և աղօթից , որպէս նախընթացս սորա էր բովանդա-
կութե փառաբանութե· և որպէս նովաւ փառաւոր
արար զած , սոյնպէս և սովաւ մնդկանս մատուցանէ
առ նա· և աղաչելով ասէ ։

Ա· աւետարանէ ինէ ի ճանապարհի դամ և գնացէ ի ձկնաբ-
բոուն դամ ։ Ա՛նապարհ՝ ոյ ասի նախ այն՝ ընդ որ
ինքն գնայ· երկրորդ այն՝ ընդ որ կամի՝ զի մեք եր-
թիցուք ։ Ա՛նապարհ՝ ընդ որ ինքն գնայ է անհա-
սանելի նախախնամութե նորա , որով վարէ և տնտե-
սէ զամենայն· Ճանապարհ՝ ընդ որ կամի զի մեք եր-
թիցուք է օրէնք նորա ։

Ոստ առաքիոյն՝ ի հայել արդարոյ ի նախախնամու-
թիւնն ոյ՝ որ յայսմանէ երևի յարաբածս , եթէ ի բա-
նաւորս և եթէ յանբանս և յանդգոյս , զայսպիսիս
տեսանէ՝ յորս եթէ չուներիցի առաքնորդ զձեռնտու-
ութիւնն ոյ՝ մոլորի և գայթակղի , պաշարի և կորնչի·
զի անհաւանելի է եղանակ նախախնամութե նորա
յարարածս իւր , որովհետև է ներգործութիւն ան-
սահմանն իմաստութե և անբաւ կարողութե· առ որ
այլ մեր տկարանն հայիլ· իսկ եթէ առաքնորդ ու-
նիցի զօգնականութիւնն ոյ , միայ անմիւսք , և գնայ
ի ձկնարուութե՝ այսինքն յանխախտութե խորհրդոց՝

և յանմոլարուեձ գործոց։ Եւ յայս միտ կամի ասել՝ Լ. զաւետ զբեղ՝ մի թմզուր զիս յորժամ պաշարին միաք իմ՝ ի վերայ նախախնամութեձ քո. այլ լեր ինձ առաջնորդ, որպես զի գնացից ի ձշմարտութեձ քում, այսինքն գնացից ըստ ձշմարիտ և ըստ անսխալելի ձանապհին քում. որով և ի միտ առեալ զանհաւատ նելն գոլ քումդ նախախնամութեձ՝ երկեայց յանուտ նել նախախնամողիդ. և յերկնչելն իմ՝ ոչ եթէ տրտմութեձ մատեցոյց, այլ ուրախ եղէց վասն ունե-

լոյ իմ զայդ պիսի նախախնամող։

Իսկ ըստ երկրորդին՝ ի քննել արդարոյ զօրհնս ոյ առ՝ ի գնալ՝ ի նոյն, և՝ ի տեսանել նորա առաջի իւր յամենայն կողմանց խոչընդոտս՝ եթէ չունիցի ինքեան առաջնորդ զնծ, լքանի. վասն որոյ աղաչէ, դու ասէ լեր ինձ առաջնորդ յօրհնս քո՝ մանաւանդ յորժամ մթութեձ պաշարին խորհուրդք մտաց իմոց ի վերայ նոցա, և ընդդիմութեձ սխալին յօժարութեձ կամաց իմոց՝ յետս կալ՝ ի գնալոյ ի նոսին. յորս եթէ ոչ օգնեսցես ինձ՝ մոլորեցայց, և իբր ի խաւարի խորխափեցայց. ասպա եթէ օգնեսցես, և իբրև թէ կալեալ զձեռանէ պաշարեցելոյս առաջնորդեսցես յայս, գնացից ի ձշմարտութեձ քում՝ այսինքն կատարելոց զձշմարիտ միտս օրինաց քոց. որով և ուրախացայց ի քէզ՝ միանգամայն և երկեայց.

և առ այս յաղէ։

Եւ ուրախ եղէցի սէրդ իմ երկնչելոյ անուանէ քումմէ, Լ. յայ երկնչելս՝ որովհետև կասկածեալ դնի ընդ ուրախութեձն՝ ոչ է ըստ ծառայական երկիւղի, որ ծնանի զարտմութեձն սրտի, այլ ըստ որդիական պատկառանաց. զորմէ ասէ ի սաղ. Ե. 7. Լ. զրդ յայս քան Հայելով ի կարդ շարադրութեձ՝ երկնչելն կրկնակի յաղի յուրախ լինելն. մի՝ իբրև պատձառ ուրախանալոյ. յոր միտ կամի ասել. երկնչելս իմ յանուանէ քումմէ՝ չերկիւղէ անտի ծնանիցի ի սիրտ իմ ոչ տրտմութիւն դառն, այլ ուրախութիւն մեծ. և ըստ այսմ առեալ՝ յետնեն ձեռագիրս մեր դնի ի վերայ երկնչելոյն նախադրս, զի գրի չերկնչել. և այսմ Հաւանձայնի Թարգ" արաբ" զի գրի առ նոսա այսպէս. * ուրախ եղիցի սիրտ իմ, յորժամ երկնչիցի յանուա-

,, նէ քումմէ ։

Երկրորդ՝ յարի երբև հետեւութեի ուրախութեի, յոր միտ կամի ասել. յառաջորդելդ քո ինձ՝ ուրախ լիցի սիրտ իմ. և այնուհետեւ երկնչեցի յանուանե քումմէ՝ առ՝ ի ոչ գործել ինչ ընդդէմ օրինաց քոց ։ Նմ յայս միտ՝ զասէլն յերկնչել, իմն առ՝ ի երկնչել, վ՛ երկնչեալց. որպէս դնի ի թարգմանութեիս եօթ" և լատ" և եթէոլմ". կամ բատ իմաստից, ուրախ եղիցի սիրտ իմ, որպէս զի երկիցէ յանուանե քումմէ ։

Այսրեի է ևս ոչ իբր պատճառ և ոչ իբր հետեւութեի առնուլ զայդ, այլ միանգամայն իբր թէ եդեալ էր. ուրախ լիցի սիրտ իմ, միանգամայն և երկնչեցի. կի՛ երկիցէ սիրտ իմ յանուանե քումմէ, միանգամայն և ուրախ լիցի. զի ցորչափ կեամք ի վտանգաւոր կենցաղս յայս, սոսկ երկնչելն պատճառել լքումն կամ յուսահատութեի. սոյնպէս և սոսկ ուրախանալն պատճառել համարձակութեի կամ յանդգնութեի. իսկ միամիտք բարեխառնեալ ծնանին զայս բարի, և մնուցանեն զնոսա ։ Նայս միտ՝ ի թարգ" ասոր" դնի * ուրախ եղիցի սիրտ իմ յայնոսիկ՝ որք երկնչին յ,, նուանե քումմէ ։ որով ցուցանի ուրախանալ հանդերձ այնու երկիւղիւ՝ զոր ունին երկիւղածք ևս ։ Օ այս եդեալ՝ առաջի առնէ և զպատուն այսր ուրախութեի և երկիւղի յաստէն ։

ժ։ Խոսովան եղէց առ տէր՝ որ ած իմ, բոլորով սրտիւ իմով. ճառասար սրբից զանան ո յաւետեան ։

Խոստովան լինիլն առ ած՝ որպէս այլուր ասացաք՝ ի յայտնել առաջի նորա զոյն՝ զոր արարեալ է ած, և կամ զոյն՝ զոր արարեալ է մարդն. առաջինն միշտ է բարի՝ որպէս յաստէն. դու արարեր զերկինս և զերկիր, կամ դու փրկեցեր զիս ևս։ Երկրորդն կարէ լինել բարի և ոչ բարի. բարի՝ եթէ իցէ զղջական յայտարարութեի չարի, որպէս յաստէն. * բարկացուս,, ցի զոտմտութեի, և չար առաջի քո արարի ևս ։ լինի և ոչ բարի, եթէ իցէ յայտարարութեի բարւոյ՝ ոչ ի պարծանս ած, այլ ի պարծանս անձին. որպէս յաստէ փարիսեացոյն առաջի ած. * պահեմ երկիցս ,, ի շաբաթու, ևս ։ Կարդ յայտ է եթէ բանք մար-

գաբելին Հային յառաջինն, և դնին իբրև հնօրհակալութեն յասելն։

Խոստովան եղէց առ տէր սէր ած է՛։ Յայնքան յայտնի խոստովան եղէց զարբերարութեն քո զոր արարեր ընդես, և ի այս խոստովանութեն է նէրգործութեն հնօրհակալութեն առ ած, վասն այսորիկ դնէ առ տէր։ Այս առ ի ցուցանել՝ թէ յայնմ խոստովանութեն ոչ-ինչ տայ ինքեան՝ այլ զամենայնն ընծայէ ած, յաւելու ասել։

Երեսրով սրտիս է՛մ։ Ի՞ր բառս էլորով՝ հայի՛ ի սատակութեն և՛ տարածութեն։ ըստ սատակութեն կամի ասել։ ամենասատիկ բորբոքմամբ սրտի մատուցա-նեմ քեզ զայս խոստովանութեն կամ հնօրհակալու-թիւն։ Կամ տարածութեն կամի ասել։ ոչ ըստ միոյ յօժարութեն սրտիս՝ այլ ըստ ամենայն յօժարութեն նորին խոստման եղէց քեզ։ Չհաւելու ապա և զիա-ւաքանութիւնն անուանին այլ ասելով։

Փառաւորեցից զանուն տ՛ն յաւիտեան։ Կառս յաւիտեան՝ երբակի նշանակէ. մի՝ մինչև՛ ի վախճան կենաց՝ որ է յաւիտեան մի. որպէս տեսանի՛ ի բանն յայն զոր ասաց ամենա վասն սամուէլի մանկան իւրոյ, թէ յոր-ժամ հատուցից զդա՛ ի ստեղ, ածից՛ ի տուն հոն, և *նստցի անդ մինչև յաւիտեան։ (ա. թագ. ա. 22։) Կա՛ս յայս միտ կամի ասել մնդպարիս. ցորչափ կեն-դանի եմ, փառաւորեցից զքեզ բերանով և սրտիս իմով։

Երկրորդ՝ նշանակէ մինչև՛ ի կատարած. և յայս միտ կամի ասել. կեա մնհատանս իմոյ և ա փառաւորեցից զքեզ ընդ ամենայն տեղիս մինչև՛ ի կատարած աշ-խարհի՝ բանիւք սաղմոսաց՝ զորս արարի՛ ի փառս անուան քոյ։

Երրորդ՝ նշանակէ զանվախճան հնօրհնեալութեն. և յայս միտ կամի ասել. ՛ի ժամանելս իմ յաքքայու-թիւն երկնից՝ փառաւորեցից զքեզ անդ յաւիտեանս յաւիտենից։ Իսկ վասն փառաւոր առնելոյ տէր ՛ի

Համարն 8։

Ա՛յժ աստ գիտելի է. զի ոմանք զայս բան յարեն ՛ի բառադ էլորով սրտիս՝ այլազգ դնելով զկէտն. իբր զի կեա ասելոյ՝ խոստովան եղէց առ քեզ տէր ած

ի։

իմ դնեն զկին, և ապա յարեն՝ բոլորով սրտիւ ի մով փառաւոր արարից զանուն քո յաւիտեան։ Այլ ոչ է դնելի այդպէս՝ այլ պարտ է զկնի բառիդ ելոյ բով սրտիւ՝ խով՝ դնել զմիջակէտ. և ապա սկսանիլ՝ փառաւոր արարից։ Այս այս յայտ անտի է, զի՝ ի քնա. դիլս էրը" և յայլ ամենայն Թարգմանութիւնս չէտ ասելոյ բոլորով սրտիւ խով՝ դնի ոչ միայն կէտ, այլև շաղկապս և, որով յայտնի ցուցանի՝ Թէ բառդ բոլորով սրտիւ խով յարելի են՝ ի խոստովան լինիլն, և ոչ՝ ի փառաւոր առնելն։ Այլ Թէ զինչ՝ էր այն՝ զոր ունէը խոստովանիլ՝ առաջի դնէ՝ ի յաջորդ հատ մարն ասելով։

ԺԶ. Ապ եղև՝ ի վերայ էմ ողորմութիւն ոտ ոքէ. էրէեցեր զանցն էմ՝ ի գթոխոց ներսոց։

Ողորմութիւնն այ է Թէ՝ ի կողմանէ այ մտածեսցի. միշտ մեծ է և մեծ ասի. իսկ Թէ՝ ի կողմանէ մերմէ մտածեսցի, այնչափ մեծ ասի, որչափ մեծ է Թշուառութիւնն՝ յորմէ հանել զմեզ, և որչափ մեծ է բարին՝ զոր տայ, կամ առ որ ածէ. և զի այսպիսի ողորմութիւնէ պատահեցաւ մարգարէին, մեծ կոչի զանցն՝ ասելով։

Ապ եղև՝ ի վերայ էմ ողորմութիւն ոտ։ Այսինքն ողորմութիւն քո զոր արարեր ընդ իս՝ մեծ եղև առիս։ Որ երկու ինչ կայ խորհելի. մի՝ զի ոչ ասէ մեծ եղև ինձ՝ կամ առիս, այլ՝ ի վերայ իմ. որով ցուցանել կամի Թէ յայժ մեծ էը, մինչև ըստ սահմանին անցաներել՝ ի վերոյ քան զաբժանաւորութիւնն իւր, և և մեծ քան զՊշուառութիւնն զոր կրէը. և այնչափ մեծ՝ մինչև ծածկել զնա։ Այրկրորդ՝ զի ոչ որոշէ առելով՝ մեծ եղև այս կամ այն ողորմութիւն քո զոր արարեր, այլ ընդհանրապէս ասէ, մեծ եղև ողորմութիւն քո. որով կամի ցուցանել, Թէ ո և իցէ ողորմութիւն՝ զոր եցոյց նմա ած, մեծ եղև՝ Հայելով՝ ի մեծութիւն Թշուառութենէն յորոց Թեւեաց[ոյց] զնա։ Այս զի մեծագոյնն՝ ի Թշուառութենէ է մատնելն՝ ի գժոխս, զկրկինն անտի առաջի դնէ իբրև զմեծագոյն գործ մեծի ողորմութենէն այ ասելով։

Փրէեցեր զանցն էմ՝ ի գթոխոց ներսոց։ Գժոխքը կոչի տե-

ղի խոր փակեալ յոմինոյն կողմանց. և յայս միտ երբայեցիք ըստ սահելոյ ոմանս զեօթն դժոխս թուեն սեա՛ի հանմատութեան ժե. 10. բայց ի՛ նոր գիրս երբեակ ազգք դժոխոց յիշատակին ըստ տեղւոյ. մին է զերեզման ըստ այսմ (ծնն. խը. 29.) * ինձ՝ այս, ,, նիք զձերութեանս իմ տրամուխ հանդերձ ի ,, դժոխս ‖. այսինքն ի գերեզման. և զայսմանէ ոչ է սատ բանն. զի սա ոչ կոչի դժոխք նեղբին, Լրկրորդն է տեղին այն՝ որ կոչի գոգն աբրահամու (զուկ. ժը. 23.) ուր ինքանին հանգստութք և մարդարէք. ըստ այսմ. * ինչից ես նովին սգով առ որդի իմ՝ ի ,, դժոխս ‖. (ծնն. լէ. 35.) և զամանէ ևս ոչ ասի տիրապէս լինիլ նեղբին. Լերրորդ է տեղին այն որ է՝ ի սանդարամետս անդնդոց երկրի. ըստ այսմ (զուկ. ժը. 23.) * մեռաւ մեծատունն և թաղե ,, ցաւ, և՝ ի դժոխսն ամբարձ զաչս իւր՝ մինչ՝ ի ,, տանջանս էր. եւ ես զբրահամ տես ‖. և սա է տեղի դատապարտելոց՝ որոնեալ՝ ի դժոխոց անտի հանապատաց. որպէս և տեառնէ՝ ի բանի յայտնի. ուր ասի թէ եւ ես մեծատունն զբրահամ՝ ի հեռաստանէ տես. (տես և զ՝ օրին. լէ. 22. սաղ. խը. 15. իմաստ. է. 14.) Այս դժոխս որ գիրք երբեւին կոչեն խորխորատ, երբեւին վիհ, երբեմն գեհեան, ես. և սա տիրապէս կոչի դժոխք նեղբին, ուր ոչ ևս է գոհանալ զերկրպագութիւն.

Լորդ յայտ է թէ սատ ըստ այսմ առանն գնէ մարգարէն զրադ դժոխք. որովհետև նեղբին կոչի զայն. որով և երբակի մեկին այս բան. մի՝ ի փոխաբերականն միտս զի որովհետև նեղբին դժոխքն է տեղի դառն տանջանաց և յուսահատութեան, ըստ ոմանց որ գրոց բերի՝ ի նմանութեան մեծաց վշտաց նեղբանց՝ ևս և յուսահատութեան, և ըստ այսմ կամի ասել. փրկեցեր զիս՝ ի դժոխանման վշտաց և յուսահատութենց. յայս միտ առնու և լսմբ". Լերկրորդ՝ յինէ աղբեան միտս, որով կամի ասել. ազատեցեր զիս ի մեղաց, որով պարտաւորէի ինքանել՝ ի դժոխս նեղբինս. և ազատելովդ՝ ի մեղաց՝ այնու խոկ փրկեցեր՝ ի դժոխոց անտի զանձն իմ, այսինքն վշտից իմ. Լերրորդ՝ ի հարուածս միտս. և ըստ այսմ այս բան ասի՝ ի դէ-

մաց իբրեւ մարդոյ առ որդին ՚ի, որ եկն և փրկեաց զազգ մարդկան առհասարակ ՚ի գժոխոյ նեղութենէ. վասն զի ՚ի գալն իւր՝ պատառեաց զգատանիքն զոյն, յորում հատեալ էր վճիռ դատապարտելոյ ամենեցուն ՚ի գժոխսն անդ, և կրճտելոյ գյաւիտենական տանջանս վասն մեղաց իւրեանց։ Ասէ զայս գործ ՚ինն տեսեալ մարգարէին խոստովան լինել, և չնորհակալութեամ մատուցանել առ նա։

Իսկ եթէ ոք նեղբքին գժոխոք խմասցի զերկրորդն զոր յիշեցաք, այս բան ասի ուղղակի ՚ի դիմաց ադամայ, և ՚ի դիմաց այլոց արդարոց՝ որոց զոգիսն էհան քո ՚ի գժոխոց։

Օ այսոսիկ յայտ արարեալ մարգարէին՝ առաջի դնէ այժմ և զվիշտս զոր կրէր ՚ի թշնամեաց իւրոց. վասն որոյ ասէ։

ԺՇ. Ա՚Ջ անօրէնս յաբեան ՚ի վէրայ իմ. և ծաղուէ հզօրացեալ ՚ի վերայ իմ. և հզօրք խնդրեցին զանձն իմ. ,, և ոչ համարեցան զքեզ նաճ առաջի իւրեանց։ ՚Ի՚ր նոյն է բանն, և յերկուս անեթ է տարբերութիւնն, որպէս և տեսանես. մի՚ զի որ ատ դնի անօրինք, անդ դնի օտարք. և որ ատ դնի ժողովք հզօրաց, անդ դնի հզօրք։ Այլ և այլ տարբերութիւն, իբր զի անդ հայհոյեալ առ սաւուղեանս՝ ասաց զայն ՚ի մատնուորն. իսկ ատ հայհոյեալ առ այլևայլս՝ խօսի ՚ի հասարակի և ասէ։

Ա՚Ջ անօրէնս յարեան ՚ի վէրայ իմ. և ծաղուէ հզօրաց խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զնեղ զաճ առաջի իւրեանց։ Յերբեակ ազգք են՝ թշնամեաց մերոց. ոմանք տկարագոյն քան զմեզ, ոմանք հաւասար, և ոմանք զօրաւորագոյն։ Այլ երբեմն և այլևայլ ձանապարհաւ մարտնչին ընդ մեզ. որք տկարքն են՝ երբեմն գաղտնի մարտնչին, որդայթ լարելով, կամ ՚ի ձեռս օտարս մատնելով, կամ առ այլս չարախօսելով, ևն. և երբեմն արտաքուստ յոխորտալով, կամ առ այն զինքեանս փայլեցուցանելով, ևն. զի չտենելով զօրուն՝

յոխորտանաց և փայլմամբ երկեցուցեն՝ և ցուցցեն
թէ իցեն ինչ։ Այլեալս և որք հաւատացքն են՝ եր-
բեմն գաղտնի և երբեմն յայտնի մարտնչին։ Ա՛յլ որք
հզօրագոյնքն են՝ գրեթէ միշտ յայտնի մարտնչին։
Ա՛րդ թէպէտ և բան մարգարէին ոչ որոշէ ասա զոյ-
սսսիկ երիս դասս, բայց հայելով՝ ի կարգ բանին՝
մարթի է զատաչխոյն։ Իսմայէլ զոյն՝ զոր ասէ * անօ-
,, ընդ յարեան՝ ի վէր իմ՝։ անօրէնս կոչէ զսոսա, զի
որք ակարքն են և հաւատացք, ՚ի մարտնչին, կամ ՚ի
նեղչին, կիմ ՚ի հալածելն և ՚ի կորուսանելն կրկնակի
անօրինին։ մի՝ զի ՚ի զուր մարտնչելոյն կիմնեղչոյն։
և երկրորդ՝ զի նենդուքն հալածելոյն կիմ կորուսանե-
լոյն, Թող զյոխորտալ նոցին, իսկ յարեան դնելով՝
կամի ասել, Թէ թէպէտև չէին ինչ զօրաւոր, բայց
իբրև զօրաւոր եղիցեն ՚ի վէր իմ հալածուածք։
Ասկ զոր ասէ * Ժողովք հզօրաց ինդրեցին զանձն
,, իմ՝, զայս պարտ է իմանալ զայնցանէ՝ որք հզօրա-
գոյնք են։ Ա՛ւր յաւելելով զառաջ ձեղՀ ցուցանէ, մե-
ծութիւն վտանգին։ զի եթէ նոքա առանց Ժողովելոյ
վտանգէն՝ քանի՛ եւս ՚ի Ժողովելն։
Ա՛րթի է եւս անորոշակի խօսելով՝ զայս չէտին բան
առնուլ իբր կրկնուիլն կամ բացատրութիւն առաջոյն.
որպէս թէ եգեալ էր. անօրէնք չարուցեալ են ՚ի
վերայ իմ, և են սոքա Ժողովեալք ՚ի հզօրաց առ ՚ի
ինդրել զանձն իմ։ Ասկ պատճառս չառնելոյ և Ժո-
ղովելոյ սոցա այն էր՝ զի չունէին զերկիւղն այ. որոյ
վասն չարէ զայն բան. * Թէ ոչ համարեցան զքեզ
,, ած առաջի իւրեանց ։։ Ո այսմանէ աճս ՚ի վերոյի-
շեալ սաղ. ծԲ. ՝ :
Ո այս առաջի դնելով մարգարէին կամի յորդոր շար-
ժել զնոսՀ առ ՚ի նայիլ կիւքն և աղաւել, որպէս Թէ
ասէր. տէս ՚որ՝ Թէ զիարդ զուր տարապարտուց չա-
րուցեալ են ընդդէմ իմ Թշնամիք հզօրոյ և մարմնոյ
իմոյ. նայեա՛ց և չայնասիկ՝ որք Ժողովեալ են առնուլ
կինէն զՀոգի իմ՝ կամելով սպանանել զիս։ Ա՛ւ զի
նորա ասէ զայս առնելով ոչ համարին ինչ զքէզ,
ցկոյ զզօրութիւն քո ընդդէմ նոցա, և չայտնեա՛ Թէ
դու ես ած հզօր և պաշտպան յուսացեալոց ՚ի քէզ։
Ա՛յս ցուցանելս ասՀ զզօրութիւն իւր չայելով առ Թշ-

համիան ասի և ի գործ վըկայնդրութիւն նորա. զի գոլով նա արդար, յարդարութիւն իւրում ստիպի խըղդել զվըկայ ի թշնամանս, իսկ Հայելով ի պաշտպանելն ասի և ի գործ գթութիւն և Ճշմարտութիւն. զի գոլով նա գթած՝ ի գթութիւն անտի ստիպի ցուցանել Ճշմարտութիւն զհնամն պաշտպանութիւն իւրոյ առ որս յուսան ի նա։

Լաւ քանզի առաւել քաղցր էր մարգարէին ապաւինել ի գթութիւն այ քան չարժել զվըկայ խնդրութիւն նորա ընդդէմ թշնամեաց իւրոց, այնուհետև վանս վըկայ խնդրութիւն, այլ բուռն հարկանելով զգթութիւն և զՃշմարտութիւն նորա ասէ։

ԺՀ. ՈՉ դու պէր ած էմ գինած ես և աղբմած. երկայ նացիր, բաղաձաղերմ և ճշմարիա. նայեա առ ես և աղբեա ինձ։

Լաւաբա աղբմած և գինած՝ թէ սկսեալ երբեմն ի տեղի միանգամ ի գործ ածին, բայց զանազանին ի զանազանութիւն առարկայից. առարկայ աղօրմութիւն է բարձեալն թշուառութիւն ած և իցէ անձին. իսկ առարկայ գթութիւն է բարձեալն կարօտութիւն ընտանի անձին։ Առաջինն Հայի պարզապէս ի նմին իսկ առարկեալն աղօրմութիւն. իսկ երկրորդն մերձաւորապէս Հայի ի քաղցրութիւն, և հեռաւորապէս յարդարութիւն։

Լաւ այսոցիկ զանազանութեանց՝ աղօրմած ասի նա՝ որ տեսանելով զոք ի թշուառութիւն՝ շարժի յողորմութիւն իւրում՝ առնել նմա զայնպիսի ինչ, որով կարացէ բառնալ զթշուառութիւնն նորա։ Իսկ գթած ասի նա՝ որ տեսանելով զոք յընտանեաց իւրոց յիմիք կարօտութիւն՝ ստիպի յարդարել առնել նմա քաղցրութիւն զայնպիսի ինչ՝ որով կարասցէ բառնալ զկարօտութիւն նորա։ Լքդ՝ որովհետև ած ոչ միայն առ ընտանիս իւր, այլ և առ ծառայս իւր, այլև առ ամենեսեան վարի այսպէս, վասն այսոցիկ կոչի գթած և աղօրմած։ Լյ զի բազմապատիկ օրինակաւ ցուցանի նէ զայսպիսի աղօրմութիւն, վասն որոյ բազումիցդրմ

Եւս կոչի. զորմ տես ի վերոյ ի Համարն 4։

Լայլ ծանիր եւս, զի ի սաղմոսի միայն այ ընծայի բառս աղօրմած, և ոչ մարդոյ. նաև ի բոլոր սուրբ

գիրս սրմանէս տեսանի բաց յերից տեղեաց. առակ. ժա. 17. և. ե. 6. և ի մատ. ե. 7. Աղով ցուցանէ Թէ ողորմածն լինել սեպհական է նմ. զի հիմնի ի ներքին ողորմելեն. որպ աղբերն է ածե. որ և յողորմելն անդ՝ լիւրմէ ողորմի. իսկ մարդիկ յողորմելին՝ ոչ լիւրեանց բերելն, այլ շարժեալ յողորմելի գոլոյ կարօտելոյն։

Իսկ երկայնամիտն է՝ որ յերկայն ժամանակ սպասէ՝ տանելով իմիք չարի վասն սիրոյ բարւոյն՝ յոր կամի հասանել կամ հասուցանել։ Աստ տեսեալ ուրուք Թէ բարեկամ իւր խեթիւ է ընդ ինքեան՝ սպասէ զի ներկայն ժամանակ՝ տանելով խոժռոմանն նորա՝ վասն փափաքելոյ ստանալ վերստին զարեգակամեղեն նորին։ Այնպէս և ածե տեսեալ զմարդն ի մեղս՝ սպասէ՝ և որպէս Թէ տանի մեղաց նորա, փափաքելով տեսանել զդարձ նորին։

Այլ վասն բառիս Ճշմարիտ՝ ծանիր, զի եԹէ այս բառ ընծայեսցի գործոյ, նշանակէ զոյնպիսի ինչ՝ որ իցէ համաձայն ուղիղ գաղափարի, կամ համեմատ սահմանելոց կամ խոստացելոց. եԹէ ընծայեսցի խօսից՝ նշանակէ զոյնպիսի խօսս՝ որ իցէ համաձայն Ճանաչմանն խօսողին. եԹէ ընծայեսցի Ճանաչման՝ նշանակէ զոյնպիսի Ճանաչումն՝ որ իցէ համաձայն իրին ծանուցելոյ։ Իսկ եԹէ ընծայեսցի անձին՝ նշանակէ զոյնպիսի ոք, որ իցէ անվրէպ Ճանաչող և անվրէպ խօսող և անվրէպ գործող. Թէպ զի այնպէս Ճանաչէ զինքն՝ որպէս է, այնպէս խօսի՝ որպէս Ճանաչէ. և այնպէս գործէ՝ որպէս Ճանաչէ և խօսի։

Ըստ այսմ յետին առման ասի աստ զՅիսմբրիտ, Թէպ զի ամենայն Ճանաչէ որպէս և էն, և ըստ իւրում Ճանաչման գործէ զամենայն. և զոր խօսի կամ խոստանայ բանիւ, զնոյն կատարէ անվրէպ. յոր միտ կոչի և հաւատարիմ։ Զայս ամենայն հայելով ասէ։

Այլ դու սէր ած իմ գիրքս ես և ողբեաց. երկնաբեր, բազմաղօրհ և Ճշմարիտ. հայեա առաւ և ողբիա ինէ։ Առաւօտ շաղկապ այն՝ տայ հայիլ ի նախընԹաց բանն. որպէս Թէ եղեալ էր. անօրէնք և չգործք կամին կոծանանել զիս. բայց դու որ ած իմ, մի Թոյլ տար նոցա կատարել զկամս իւրեանց, այլ հայեաւ առաւ և

ողորմեա ինձ։ Ըստ նայելն վերացի ի ներգործելն դիացաւելն, և ողորմիլն ի ներգործելն ողորմելն. որպես թէ եգեալ էր. նայեա առ ես ծառայ քո ըստ գիացաւելեդ, և ողորմեա ինձ տա. ժանեցելոյս ըստ մեծի ողորմածելեդ։ զի գու գիացաւեա առ ամենեսեան։ Այս եթէ ես յանցաւոր գոլով արժանի իցեմ պատժոյ քան ողորմելն քում, գու որ երկայնամիտ ես առ յանցաւորս, և բազումդորմ առ ամենեսին, մի՛ հայիր յայն՝ յոր ես արժանաւորիմ, այլ յայն՝ յոր գու արժանաւորիս, այսինքն է՝ ի գիացաւ և ողորմիլ այնոցիկ՝ որք կարգան առ քեզ։ Նա զի խոստացեալ ես ցուցանել զողորմելն քո յաւացելոց ի քեզ. և ոչ վերպիս ի խոստմանեդ, զի Ճշմարիտ ես և հաստատուն։ Լսեդ զոր ասաց, նայեա և ողորմեա, այժմ զգործս նայելոյն և ողորմելոյն առաջի դնէ. և իբրև թէ, բացատրելով խնդրէ գտանել զնոյն. վասն որոյ և ասէ.

ԺԵ. Տէր ղբրութիւն ծառայէ քո. լեր ղբրդի աղախնոյ քո. և արա առիս նշան բարութեան։

ԺՀ. Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի գու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Պանծալի են յոյժ այս բանք ասդնիսիս, և քաղցր ի բերանս հաւատացելոց, գովաբանեալ ի բազմից բազում իրօք և յամանս կրկնեալ ի բազում պատառս մտնեան. վասն որոյ և իբրև կնիք սաղմոսիս դնէ մարգարէն ի վերջոյ առելով։

Տէր ղբրութիւն ծառայէ քո։ Օգնութիւն իմացեալ լինի ասա այնպիսի կարողութիւն՝ որով արիանայ հոգին ի գործել զբարին և ի վանել զչարն. և կամ այնպիսի քաջալերութիւն որով ոգի առնու մարդ ի տառապանս իւր։ Այս յայս միտ կամի ասել. ի տկար մարմնի գալով, և ի պատիս վտանգս չընկրկով, ոչ զբարին գործել կարէմ, և ոչ զչարն վանել զօրեմ. մանաւանդ զի և ի թշնամեաց պաշարելով սաստ նեալ և վշտացեալ կամ. և եթէ գու ոչ զօրացուցես զիս՝ ընկղմիմ կարացից հաստատուն կալ ի բարին։

Նա որպէս զի պատշաճագոյն ցուցցէ զտուչութիւնն զորութեանն՝ ծառայ կոչէ զինքն. տուր ասե զօրութիւնս ծառայիս քո. որպէս թէ ասէր. ես ծառայ քո եմ, և զնորդ կարիցեմ ծառայել քեզ՝ եթէ ոչ տացես ինձ զօրութիւն։ Կ՚յայտ տուչութիւնն զօրութեանն՝ ոչ միայն կարգի ի զօրացուցանել, այլև ի վտանգէ կենաց ապրեցուցանել. և յայս առնարկելով յարէ զկնի և ասէ։

Աղեր՝ ղբրդ աղախնոյ քո։ Աղեցուցանելն հայի ի փրկութիւն կենաց. և այս կարէ լինիլ կամ պահպանելով զկեանս՝ զի մի պատահեսցի նմա չար ինչ. կամ ազատելով զկեանս ի վտանգէ և կամ նորոգելով զկեանս նուազեալս իւիք իբրև զհիւանդացեալս։ Օ այսպիսի փրկութիւն խնդրէ գտանել յայ, կոչելով զինքն որդի աղախնոյ նորա. որպէս կոչէ և ի սաղ. ՃԺԶ. 6. յասելն. * ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախ.

,, նոյ քո ‖։

Իսկ աղախնով նշանակի աստ նախ ըստ յովհաննու իմաստասիրի ի կարգս պաշտամանց եկեղեցւոյ երես. 316. և ըստ այնց բաղմից նախամայրն Եւայ՝ որ ստեղծաւ յայր յաղախնութէն ամենաբարի կամաց նորա. և թէպէտ կորոյս մեղօք զարժանաւորութիւնն պատուոյ աղախնութեան, բայց միշտ ունէր զպարտաւորութիւն գործոց աղախնութեան։ Նա քանզի որդիք նորա ծնանէին զուրկ ի գերբնական կենաց և կային ընդ դատապարտութէն յաւիտենական մահու, յայս հայելով խնդրէ մարգարէն կեցուցանել, այսինքն տալ նորոգութիւն կենաց, և ազատել ի դատապարտութէն անտի անվախճան մահու։

Նրկրորդ՝ ըստ բազմից աւանդելոյ նշանակի կինն աբրահամու սարբա՝ որ ասի աղախին այ՝ յորմէ սերել էր դաւիթ։ Նա յայս միտ կամի ասել. որպէս խոստացար ի զաւակէ սարբայի կեցուցանել զաղգ մարդկան, կեցո և զնա՝ որ եմ որդի նորա. (տես ի գաղ. Դ. 22. և 23։)

Նրրորդ՝ նշանակի մայրն որ ծնաւ զնա։ Նա զայս դնելով՝ կամի ցուցանել՝ թէ ոչ է որդի այնոցիկ որք ոչ ձանաչեն զնա, կամ որք ոչ գիտելով զօրէնս նորա՝ և յանարժան գործս ծննդեան մատչելով ծնաւ

նին զորդիս. այլ թէ է որդի այնպիսի մօր՝ որ ձա-
նապէր գնծ, և պաշտէր զնա, և էր ի զատակի աբ-
րահամու, և էր իբրև ընդոծին ոչ. վասն որոյ ապա-
չէ մի իբր զօտար ոք լբանել զինքն, և թողուլ ի
վտանգի կորստեան կենաց. այլ ցուցանել զայցելուե
իւր, և փրկել։

Ղաբրորդ՝ փոխաբերաբար ըստ լամբ" նշանակի հին
օրէնքն՝ որ տուեալ եղև ի լեառն սինայ, զի հինն
էր աղախին ծնորոյս՝ զոր առաքեալն օրինակ ի հա-
գար յասէլն. (գաղ. դ. 22--26.) աբրահամու էր
կու որդիք էին. մին յաղախնոյ անտի հագարայ, և
մի յազատէն սարբայէ. որդի աղախնոյն էր օրինակ
հին կտակարանաց՝ որ տուեալ եղև ի լեառնէ սինայ՝
իբր ի հագարայ. իսկ որդի ազատին էր օրինակ նոր
կտակարանաց՝ որ տուաւ յերկնից իբրև ի սարբայէ։
Նա ըստ այսմ օրք էին ի հին օրէնս՝ էին որդիք ա-
ղախնոյ՝ այսինքն որդիք այնր օրինաց՝ որ ծառայէր
նոր օրինաց։ Նա զի մարգարէն ասա խօսի իբրև որ-
դի հին օրինաց, վասն այսորիկ կոչէ զինքն որդի ա-
ղախնոյ. կեցո զնա ասէ, որ եմ որդի օրինաց քոց
այնպիսեաց՝ որ է և կամ որ լինելոց է աղախին գե-
րագոյն օրինաց ի քէն հաստելոց։ Նայս միտ առնու
մեսամբ իմն և ծործօրեցին (ի մէն. մատ. գԼ-
ժԸ.) յասէլն. * ասէր (դաւիթ,) որդի աղախնոյ քո
,, եմ օրինացն, և ոչ վերին. երուսաղէմի ծնեալոյն
,, ազատին ||։

Հինգերորդ՝ այլաբանօրէն նշանակի եկեղեցի ՚ոբ,
զի անուանն եկեղեցի ըստ էրբ" և ըստ այլոց ազգաց
յիւգական սեռի է. վասն որոյ և իգական անուամբ
յիշատակի՝ յոր միտ կոչի և Տարսն քոյր և գուստր յերգս երգոց, և ի բանս մարգարէից և ա-
ռաքելոց։ Նա ըստ այսմ կամի ասել. կեցո զնա զոր-
դի աղախնոյ քո այսինքն եկեղեցւոյ քոյ՝ փրկելով
զանձն իմ ի վտանգէ մեղաց և ի փորձութենէ՝ և
եւս ի մահուանէ չարէ և ի դատապարտութենէ։

Վեցերորդ՝ գերազանցութեամբ իմն նշանակի ամե-
նօրհնեալ կոյսն. յոր միտ այս բան ասի առ ՚ոճ ի
բերանոյ բարի քրիստոնէի, մաղթելով Տեառն ինքն
իբրև յորդի միայնոյ աղախնոյ իւրոյ, և վասն նորա

կեցուցանել։ Լ՚որ չէ թէ խօսելոյ մարգարէին կեցուցանել զինքն իբրև զծառայ նը, և իբրև զորդի ա զաւրնոյ, աղաչէ ցուցանել առ ինքն վասն այսր գնդան ինչ. վասն որոյ յարէ զինի և ասէ,

Ե՚ս արա առիս նշան բարւոյն։ Յասելն նշան բարւոյն, բառս նշան՝ դնի իբրև անորոշ հայցական փոխանակ ասելոյ գնդան որպէս յայտ է յերը" և յայլոյ Թագէ". իսկ բառս բարւոյն ունի զդրութիւն ածականի. որպէս Թէ ասէր. արա առիս գնդան բարի, կամ արա առիս գոյնպիսի նշան՝ որ կարգեալ իցէ առ բարի, այսինքն Թէ իցէ նշան կեցուցանելոյ զնս։

Լ՚ո ժամանակիզ աւերմանն երուսաղէմի եղեւն բազում նշանք՝ բայց ոչ՝ ի ցուցանել զբարին, այլ զչարն. իսկ մարգարէն գոյնպիսի նշան խնդրէ՝ որ իցէ ցուցաւղ բարւոյ։ Լ՚ստ սմին իմանալով և իդնատիոս վարդապետ (՝ի մեկն. զուկ. Ե. 16.) գրէ այսպէս. ❋ և որ ասէ աւերածոյն երուսաղէմի նշան երեւեալ ,, առ լաբյարանաքն, և չէտ այսորիկ կառք և երիվարք ,, վարք՝ ի վերոյ քան զնոսա յօդն խաղացեալ՝ նշան ,, չարի նոցա, և որ ըստ այմ կարգի (նշան իցէ.) ,, վասն որոյ ոչ ւիւրեմ մաղԹէ ՚ոյ՝ առնել առ նա նշան ,, բարւոյն Թէ, և մի չարեաց ինչ։

Լ՚որ ծանիր. զի նշանն է այնպիսի ինչ՝ որ երևեցուցանէ զայլ ինչ. և այս կարէ լինիլ այլևայլ օրինակաւ. մի՝ իբր անցաւոր կամ իբր հաղորդակցական. որպէս գործ ինչ արարեալ յերևեցուցանել զայս ինչ կամ զայն. զորօրինակ ողջունատուութիւն՝ յերևեցուցանել զբարեկամութիւն՝ ձեռնատուութիւն՝ յերևեցուցանել զՀաւանութիւն կամաց. խաչակնքուիլ՝ յերևեցուցանել զխաչակցութիւն ընդ քոյ այսինքն զքրիստոնէութիւն, ևն։ Լ՚երկրորդ՝ իբր մնայուն՝ որպէս դրօշմ՝ ի ձեռն և ի ճակատի՝ յերևեցուցանել զորպիսի լինիլ իբրն՝ կամ զորոյ լինին կամ զկաբգիչն յայս ինչ. ըստ որում առնէին ՚ի հին ժամանակն ՚ի վերայ ծառայից. զոր և այժմ առնեն բազումք։ Լ՚երրորդ՝ իբրև բնական. որպէս զարկ բազկին յերևեցուցանել զառողջութիւն կամ զՀիւանդութիւն և խոժռուածն դիմաց ՚ի ցուցանել զբարկութիւն սրտի. ևն։ Չորրորդ՝ իբրև նմանական որպէս պատկերն յերևե-

ցուցանել զմարդ։ Հինգերորդ՝ իբր յարմարական. որպէս լեզուակ ժամացուցին՝ զժամանակն, և արքունի գաւազանն՝ զիշխանութիւն, եւ. առ այս վերադիմի և աքանչելիք՝ յերևեցուցանել զնմանութիւնն կամ զսպասովութիւն. որպ վասն իսկ կոչին նշանք։ Հայս առնայն կարէ վերածիլ աստանօր բառս նշան։ Ի՝ստ առաջնոյն՝ այսինքն ըստ անցաւորս գոլոյ կամ ըստ հաղորդակցութեան՝ նշանաւ իմացեալ լինի աստ այցելութիւն ոյ, կամ ձեռնտուութիւն նորա, կամ օգնականութիւն նորին. և յայս միտ կամի ասել. ցոյց առիս զքաւրի այցելութիւն քո. որով իբր բարի նշանաւ գիտացից զկամիդ քո կեցուցանել զիս։

Ի՝ստ երկրորդին՝ այսինքն ըստ ինայնոն գոլոյն նշանաւ իմացեալ լինի աստ հաստատութիւն զօրութեանն զոր ինդրեաց. յոր միտ կամի ասել. որովհետև ծառայ քո եմ ես և ընդ ածին քո, արա առիս կամ դիր ի վերայ իմ գնշան բարութեան, այսինքն հաստատեա յիս զզօրութիւն հոգւոյ, որպէս զդրոշմ ի ձևաւտիւ. զի նովաւ իբրև յայտնի նշանաւ ծանիցի՝ թէ որ՝ ես եմ ես։

Ի՝ստ երրորդին այսինքն ըստ բնական գոլոյ՝ նշանաւ իմացեալ լինի աստ խաղաղութիւն և ուրախութիւն սրտի՝ ի հոգևորս, զոր ինդրեաց ի համարն. յ· զի զրեթէ քան զայս հաստատագոյն նշան հոգևորութեան ոչ կարէ լինել վասն որոյ եւանդիւ ինդրէ զսոյն։

Ի՝ստ չորրորդին՝ այսինքն ըստ նմանական գոլոյ՝ նշանաւ իմացեալ լինի աստ տպաւորութիւն կենդանադրութիւնն ոյ կամ նմանութիւն նորա. յոր միտ կամի ասել. նորոգեա յիս զնմանութիւն պատկերի քոյ յոր առեղծեր։

Ի՝ստ հինգերորդին՝ այսինքն ըստ յարմարական գոլոյ նշանաւ իմացեալ լինի աստ այնպիսի գործ՝ որ իցէ արտաքոյ հասարակ կարգի, կամ՝ ի վեր քան զհասարակ նշանն՝ առ ի ցոյց փրկելոյ և կեցուցանելոյ, կամ առ ի ցոյց խնամելոյ և պաշտպանելոյ. որպէս զարձ առաքելի ժամացուցին զոր ինդրեաց եզեկիա աղքայ ի նշան զարձի առողջանալն իւրոյ. կամ որպէս իջանել անձրևոյ զոր ինդրեաց գեդեան եւ. Ա՝ւ ես այժմ առեալ՝ կամի ասել. արա առիս զայնպիսի նշ՝

որով յայնի ցուցցի՝ Թէ դու ես Տէր իմ և պաշտպան իմ, փրկիչ իմ և կեցուցիչ իմ։

Ա. Լաբանօրէն այսու նշանաւ իմացեալ լինի պատուական որ խաչն քրիստոսի. որ եղև մեզ նշան բարութեան. ըստ որոյ զոյն զոյս բան երգեմք ի յիշատակութեան նոր խաչին. որպէս գրի և մեծն խոսրով (՚ի մեկն. Ժամագրք. երես. 368։) Նա յայս միտ կամի ասել. արժանացո զիս տեսանել զաքանչելի նշան քո, այսինքն զխաչ քո։ Նա զայս ինդրէ իբրև նշան բարութեան ցուցանել, և ի իբրև նշան բարկութեան։

Ակ բարութեն ասէ՝ յայլևայլս ակնարկէ. ի՝ ի հաշտութեն ընդ Հօրն յաւիտենական. զի ի ձեռն այսր նշանի հաշտեցաք ընդ նմա (կողոս. ա. 20։) ՚՚որոյ յօրինակ բերաւ առ նոյ և առ որդիս նորա ի տապան անդր * տեղև ձիթենւոյ չիւղ՚՚. որ է նշան հաշտութեան. և այն՝ ընդ Երեկս (ծնն. ը. 11.) զի ընդ Երեկս կանգնեցաւ որ խաչն ի գողգոթայ։

Ներկորդ՝ ի կենդանութեն հոգւոյ կամ առ ի կեցուցանել զմեզ. զի ի կենարար նշանակ անտի տուաւալ լինի մեզ կեանք հոգևոր. յորոյ ասացոյց ասաց եղիկիել մարգարէ. * ևկ շունչ ի չորից հողմից. և փչ՚՚ւեաց ի մեռեալս յայսոսիկ, և կեցցեն՚՚. (եզեկ. լէ. 9.) ՚ի ցուցանել Թէ ի չորեքկուսէ խաչէ անտի փչէ ի մեզ շունչ կենդանութեն։

Ներորդ՝ ՚ի ցոյց ժառանգութեն արքայութեն երկնից. զի այսու նշանաւ միայն կարեմք մտանել ի նոյն. նա զի և խորհրդաւոր ձև արքայութեն զնոյն ցուցանէ. քանզի գրի (՚ի յայտ. իա. 16.) Թէ էր * քա՚՚ռակոսի՚՚. որ ի մէջ բերի զձև խաչի։

Չորրորդ՝ ի ցոյց բարերարութեն կոչման հեթանոսաց. զի խաչիւ կոչեցան հեթանոսք, և ի ձեռն խաչի արժանացան օրհնութեն նոյ. յորոյ տարացոյց յաղագս նահապետ յօրհնէրն զեփրեմ և զմանասէ՝ խաչաձև տարածեաց զձեռս իւր ի վերայ նոցա. և որս. չեաց այնու զեփրեմ յանդրանկութեն. (ծնն. խը. 13--21.) ՚ի ցուցանել՝ Թէ հեթանոսք՝ որք ելին կրօտեր՝ ՚ի ձեռն պաշտաման խաչին առին զանդրանկութեն մանասէի, այսինքն իարայելի. որով եղև նոցա այն նշան բարութեն։

Հինգերորդ՝ի ցոյց օրհնութեանէ, որ խաչիւ սիրեցաւ՝ի չորս կողմանս աշխարհի, յարևելս և յարևմուտս, ի հիւսիս և ի հարաւ. ի չորեսին աշխարհս, յասիա և յեւրոպիա, յաֆրիկէ և յամերիկա. զի մի ամենայն մնասցեմք աշխարհի կանգնեցաւ այս նշան, և վասն օրհնութեանէ ամենեցունն պատարագեցաւ՝ի վերայ նոքա որդւոյն իւր. յոր միտ արի՝ի չարաչարանի. (կան. Կ.) * որ կանգնեացն զքառանկիւնն սեղան խաչին, յա ,, զգաս քառակողմ աշխարհի պատարագեալ։ ըստ սմին գտանես և զայլ բազում վկայութիւնս՝ի շարականէն անդ. մանաւանդ՝ի կանոնն ձէ. մինչ՝ի ղէ։

Ի յայ կենդանարար որբ նշանի բանմնապատիկ նմանութիւնք ցուցան և ցուցանին՝ի յոլով իրս. ՝ի քնա կաեա, որպէս՝ի պտուղս, ՝ի ծաղիկս, ՝ի քարինս, և յայլս. որոց՝ի բազումս յայտնի տեսանի ձև խաչին. ՝ի կենդանիս, զի ասասիկ թռչունք խաչաձև թըռչին. և մարդիկ՝ի ձև խաչի տարածին. ՀՀարհեատս կաեա, նաւք խաչանման կայմիւ առագաստին. արօրագործեն ըստ ձևոյ խաչի յօրդոյն. ուստի ասի յաեակս յուստինեայ փիլիսոփայի՝ թէ * երկիրք առանց ,, հետոյ խաչի ոչ արօրագործի։ Ի՝ի, մնտիցես՝ի հին օրէնս՝ բազմապատիկ և գտանես նմանութիւնս. որք էին առաւեր այսր որբ նշանի. զի * այն ամենայն ,, օրինակաւ անցանէր։ (՝ա. կոր. Ժ. 11.) Ի՝ըզգ զորօրինակ պատկերացանք նախ զուրբեանսնս ինչ ձևացուցանեն, և ապա զնոյն՝ի կատար ածեն, այսպէս և ածէ ազգի ազգի զուրբուհանս ձևացոյց որբ խաչին. և՝ի վախճան ժամանակի լրացոյց զնոյն. և ետ ամենեցուն նշան բարի. Ի՝ըդարձ ամենեցուն էտ, բայց ոչ ամենեքին վայելեն՝ի բարութիւնսդ. այլ՝նոքա միայն՝ որք հասու լեալ զօրութիւնսդ նորա՝ զնա փարին, ՝ի գիտել և՝ի հետևիլ. ըստ որում յորդորէ և առաքեալն ասելով. (Եփես. Դ. 18.) * զի կարօղ լինիցիք հասանել ընդ ամենայն սբս, ,, զինչ է լայնութիւն (խորհրդոյ խաչին) և երկայնու ,, թիւն, բարձրութիւն և խորութիւն։

Ի՝այս սքանչելի ձև խաչի չունի ամենևին ինչ բնաւ կան նշանի ընդ այմ՝, զոր ցուցանէ. զի ինքն է նշան մահու, և ցուցանէ զազատութիւնէ՝ի մահուանէ.

է գործի չարչարանաց, և երևեցուցանէ զիրկութիւն
ի յաւիտենական տանջանաց. է նախատինք սպանե-
լոց, և յայտնէ զփառս խաչելելոյն ի վերոյ նորա և
խաչակցելոցս ընդ նմա. միւնն ամենեցուն մեզ պար-
ծանօք ունիլ զայն յանձինս, և կանգնել ի բարձրա-
բերձ տեղիս և յեկեղեցիս, և բերկրալից սրտիւ եր-
կիրպագանել նմա, և հանապազ կնքել նովաւ զդէմս
մեր, և յամենայնի ունիլ մեզ զայն իբրև մի միայն
նշան քրիստոնէութեան։

Այս նշան խաչի՝ որ հայելով ի գործն՝ ասի նշան
աննման, հայելով ի խաչելեալն՝ ասի և նշան նմա-
նական. ըստ որում է իբրև պատկեր խաչելելոյն.
յոյր սակս և երկիրպագանեմք այսմ ածային երկր-
պագութիւն՝ յանդիման ունելով ի նմա զնոճ մարմնով
ի խաչ ելեալ վասն մեր։

Բարոյապէս, նշան բարութիւն է մեզ դարձեալ նոյն
խաչն ի կրելն, այսինքն ի խաչելն վասն քոյ եթէ
ի մեռուցման սիրոյ, և եթէ ի համբերութեան
վշտաց. և զայս նշան տայ ինձ երկիւղածաց իւրոց
(սաղ. ծԶ. 4։) Արդարև խաչ տագնապիչ է, բայց
ի կրել մեր զայն՝ ընօրհնելն ոչ դիւրաբառնալի առնէ
և իբրև թէ օծանէ զայն։ Ընօրհնելն զառաջաւս՝ ըզ-
խաչն որ յորմէնս նոցա են՝ օծանեմք. սոյնպէս և
ընօրհնէ հոգւոյն սրբ ի հաւատնելն առ մեզ՝ օծանէ և
դիւրացուցանէ զնաւս մեր՝ զորս կրեմք ի մեզ, և
առնէ զմեզ օծեալս և օրհնեալս. զի շատ է յամե-
նայնի՝ ամենայն իրօք (ՃԲ. կոր. ժԲ. 8։) Ի խաչն Քի-
ստի հեղգասցուք և մեք յափաչխնելոյ ի խաչն և ի
խաչեալն ի նմա վասն մեր. զի և նա ոչ պակասի
գոյ ինչ յաշխարհին զոր չիցէ արարեալ ոյ՝ եթէ ի
հիւսիս իցէ և եթէ ի հարաւ, այլ նորա արարածք
են ամենայն. զի եթէ սոքա այսինքն հիւսիսայինք և
հարաւայինք նորա են, և ս առաւել նորա են արեւելք
արեւմուտք, և որ ինչ ի նոսա իցէ։ Այսոքիւ նորա են
ծովք և ցամաք, և ամենայն՝ որ է ի նոսա. նորա են
դաշտք և անապատք, լերինք և բլուրք և որք ի նոսա։
Այս զի յայսմ ամենայնի ահեղ ինն է մեծութիւն ջուրց
ի ծովս, և երևելի են յոյժ ի ցամաքի լերինք, զոս-
սա ի մասնաւորի յիշէ. զծովն խօսեցաւ ի վերոյ.
իսկ զլերանցդ խօսի ասա՝ ի մէջ ըներելով զերկուս
յանուանէ՝ զԹաբոր և զՀերմոն յատկէն։

Թաբոր և Հերմոն յանուն ս ցնծասցեն։ Այրկու տեսակք
են լերանց. իբր զի ոմանք են առանձին լերինք միայ-
նակ. որպիսի է Թաբոր լեառն (առաքեալ որպէս գնէ
ծործորեցին ի գով. լուս.) զի կայ ի մէջ ծովուն գա-
ւառն առանձինն բարձրացեալ գեղեցիկ ի տեսանել. իսկ
ոմանք են աղեսաղեսեալ լերինք, և զիմակամբք բարձ-
րացեալք. ոյք են լերինք Հերմոնի՝ որ աղեսաղեսմամբ
տարածին ի լերանցն լիբանանու մինչև ի լերինս գա-
զաձոյ փոխելով զանուն իւրեանց ի սահիր, որպէս
տեսանի այս և ի լերինն տորոսի, և կորդուաց և
կովկասու։

Այդ մարգարէն զերկուս զայսոսիկ տեսակս միայն

յառաջ բերելով՝ սոքիմքը զամենայն լերինս տայ ի մանալ. և փոխանակ ասելոյ՝ դու արարեր, և քե՛ն նոքա, ասէ յանուն քո ցնծասցեն, որով կամի ասել. որովհետև դու արարեր զնոսա, արժան է նոյ ցնծալ յանուն քո։

Ոտկ այս ցնծալս կրկնակի խմացեալ լինի. մի՝ ըստ համարման. յոր միտ կամի ասել. եթէ ունէին լերինք ղդգայութիւս, ցնծալից ուրախանային վասն ունելոյ զքեզ իւրեանց արարիչ. [2]յորկորդ՝ ըստ ցուցանելոյ զինքեանս իբր ցնծալից. յոր միտ կամի ասել. լերինք իւրեանց բարձրութե՛ և իւրեանց տնկոլք և կենդանեօք ցուցանեն զինքեանս ուրախալից. և այսպէս ցուցանելով զինքեանս գրեթէ աղաղակեն առ մարդիկ՝ խոստովանիլ, թէ նո՛ւ է որ արար և զարգարեաց զինքեանս. և զի յայս աղաղակ լսի՛ ի մարդկանէ անունն ՚ի՛, վասն որոյ ասէ՝ յանուն քո ցնծասցեն։ [3]Մեզ ևս մեկնի այս բան ՚ի հասարակ կարծեաց՝ հայելով ՚ի նախընթաց բանն. զի որովհետև անդ եղ զՀիւսիս և զՀարաւ, ասա զԹաբոր և զՀերմոն յիշելով կամի խմացուցանել զարևմտեան և զարևելս. քանզի Թաբոր կայ յարևմտից կողմանէ ՚ի Հիւսիսոյ՝ Հերմոն պաղեստինոյ յայսկոյս յորդանանու. իսկ Հերմոն յարևելից կողմանէ յայսկոյս յորդանանու. ուստի և ՚ի մեկնաբանութե՛ քաղդէացւոց դնի այսպէս. * դու ,, հիմնեցեր զանապատն հիւսիսոյ և զնոսկիչս հարաւ ,, ոյ. և Հերմոն յարևելից (և Թաբոր յարևմտից) ,, գովեսցեն զանուն քո ։ [4]արդ՝ զՀերմոն համարի ՚ի հարաւոյ կողմանէ. Հերմոն պաղեստինոյ. իսկ զԹաբոր ՚ի կողմն հիւսիսոյ. իբր զի մին է յարևելից հարաւոյ, և միւսն յարևմտից հիւսիսոյ։

[1]Այս բանիք խորհրդաբար՝ մնաւանդ թէ գուշակութե՛ Հայէին ՚ի խորհուրդ անօրէնութե՛ որդւոյն ՚ի՛ խոնարհել նորա յերկինից յերկիր, և ՚ի նորոգել զաշխարհ՝ միաւորելով զհիւսիս և զհարաւ ևս և զհինն և զնորն ՚ի մի եկեղեցի. զորոյ զհինն էարկ հանդերձել Հերմոնի ՚ի մկրտիլն ՚ի յորդանան. և զկատարումն եղոյց ՚ի Թաբոր յայտնելոցն։ [2]Համ ըստ լամբ՚ զհերմոն զհին ժողովուրդն և զԹաբոր զնորս ՚ի մի վերածելով՝ ետ նոցա ցնծալ յանուն իւր՝ առհասարակ

քրիստոնեայ կոչելով ,

Լայց զայս գուշակութիւն ի մէջ բերել մարգարէն իբր անցուղարձ կամ իբրև յիշատակուն այնը զոր ասաց՝ աշխարհ ողորմութիւն չունեցոյ · զի որպէս որ միշտ խորհի զինքն և միշտ խօսի զայնմանէ , ի բուն լինին և գնոյն տեսանել , այնպէս և մարգարէս գնոցդ աշխարհի խորհելով՝ և զամենայն բանս սաղմոսիս զայնմանէ կարգելով , յընթացս բանից իւրոց ի նոյն խորհուրդ յափշտակեալ գնոյն ստուերաբար նկարագրէ յայս բան . և իբրև եղեալ տեսանելով գնէ , քո են երկինք , և քո է երկիր եւն . որպէս թէ ասէր . քո են երկինք , յորմէ խոնարհեցար . քո է երկիր՝ ուր իջեր . և դու ինքն որ զաշխարհս բոլոր ստեղծեր գնոյն լրիւ իւրով նորոգեցեր . գիւրսիս այսինքն զսառուցեալս ի սիրոյ քո , և զհարաւ այսինքն զառապղեալս յախտից մեղաց՝ ի մի եկեղեցի ժողովեալ հաստատեցեր . և զսկզբնաւորութիւն եկեղեցւոյ քո հիմնեցեր մկրտեալդ ի յորդանան հանդէպ հերմոնի և թաբոր լերին . ըստ որում մին էր յարևելից յորդանանու , և միւսն յարևմտից ։

Այս ցնծութիւն թաբոր լերին և հերմոնի հրատարակեցաւ ի պայծառակերպութիւն նոն . որպէս ասացեն մեկնիչք և եկեղեցիք ազգաց քրիստոնէից . զոր և լուելեայն ինն յիշատակաց պետրոս առաքեալ . ըստ մեկնելոյ սարգսի շնորհալւոյ (ի թ . պետ . ա . 19 . Ճառ . թ .) ի մէջ բերելով զոմն այսպէս . * և ուստի ,, նիմք հաստատագոյն զբանն մարգարէական . . . . ,, թուի ինձ ասէ՝ եթէ զգաւթայն ասէ մարգարէ ,, կան բան . զոր հոգւոյն ակամբն ի հեռուստ տես ,, սանելով զհարաշարն տեսիլն զայն կատարեալ ի թա ,, բորական լերինն՝ կանխաձայնեաց ասելով , թաբոր ,, և հերմոն յանուն քո ցնծասցեն . տեսանեմ , որպէս ,, ակն յայսմանէ ոչ զտեսիլն՝ այլ զտեղին՝ ուր զտեսիլն ,, յայտնելոց էր ասաց . զի յերից իբրայն ամենայն ոք ,, հաւատասցէ Ճշմարտութեան ։ Ո այսոսիկ եդեալ մարգարէին ի ցոյց այնր թէ ամենայն ինչ կան ընդ ակնարկութեան նմ . ի բանից աստի գրեմք եզրակացուցեալ ։

ծիշ. Պռ. է բազուկ և որ է զբաղիչ. զբաղչէ ազ որ և բազիկ եղիցի չէ որ։

Լ՚ամենակարողութիւն այ կոչի զօրուն և բազուկ, ազ և ձեռն։ Կոչի զօրութիւն ի գործէն ըստ Հասարակ կարգի, այսպէս և ի վանէն. կոչի բազուկ ի գործելն ինչ ի վեր քան զկարգ բնութեան, կամ ի խորհուրդն զիշխանիս այնպիսի օրինակաւ՝ որ է արուեստքդ կարգ բնութեան. կոչի ազ ի յայգուելն զարմանալի եղանակաւ. կոչի և ձեռն ի նախախնամելն, և և երբեմն ի նահանջելն։ Լ՚այլ քանզի այս զանազանութիւն մտածի միայն ի կողմանէ գործոյն, այսինքն ի կողմանէ եղելոյն, և ոչ ի կողմանէ ամենակալութեանն այ. նոյն է առ ած ասել բազուկ և զօրութիւն, ազ և ձեռն. ուստի և երբեմն որ ըստ մեզ կոչելի է բազուկ՝ ազ ասի, կամ ձեռն, և կամ զօրութիւն. և որ ըստ մեզ կոչելի էր զօրութիւն՝ բազուկ ասի, կամ ազ և կամ ձեռն ևն. երբեմն ևս ընդ միմեանս յարելով. զորօրինակ զօրութիւն բազկի քո, կի՛ զօրութիւն ձեռին քոյ ևն։ Լայց որովհետև աստ որոշ որոշ դնէ զսոսա մարգարէն՝ կարեմք ըստ որոշ տարբերութեանց առնուել զիշխանութիւն սոցա. ըստ որոյ ասէ կիրակոս վարդապետ (՚ի մեկն. Հարիւր. եւագր. ՟ճ. 12.) թէ * աջն քոյ ձեռք ասի. բայց ձեռք նորա ,, ազ ոչ ասի ... աջն ձեռք է. բայց ձեռն ազ միայն ,, չէ, այլև ձախ. և ազ ոչ ասի ձախն ։ Լ՚որ յայս քան գրեթէ բազդատութիւն արարեալ մարգարէին՝ զգործս արարածոց և զնոր գործս արարչին. և տեսեալ թէ այ է միայն ինքնիշխան զօրութիւն գործել, աղաղակէ, ասէ։

Պռ. է բազուկ և որ է զբաղիչ։ Իւր բառս որ՝ եթէ առցի իբրև տրական փոխանակ բառիս որ, որպիսի է յերբ", յասոր", և յարաբ", յորս դնի տէր, միտ բանիւն լինի այս. ոչ այլևս ունիմ ընծայել ի բազուկ ամենակալ, և ոչ այլևս ունիմ ինքնիշխան զօրութիւն, այլ քեզ միայն, կամ քում ինքնութեդ։

Կամ եթէ առցի իբրև սեռական կամ իբրև ածական, որպիսի է յեօթ" և ի լատ", յեթեղով" և ի քաղդ", յորս իբր ածականաբար դնի, միտ բանին լինի այս.

թէպէտ և յարաբածս տեսանեմք բազում ինչ զարմանալի, բայց ոչ գոյ ի նոսա այնպիսի բազուկ և ոչ այնպիսի զօրուն, զորպիսի դու ունիս. և եթէ տեսցի և ի նոսա զօրութիւն ինչ մեծ, այն ոչ ի նոցա, այլ քո. զի քո միայն է տիրապէս այս ամենայն, և ի քէն տուեալ. զի զօրօրինակ ջերմացեալքն ի հրոյ թէպէտ և ունին յինքեանս զգալ ջերմ, բայց տկար. և եթէ սաստիկ և իցէ՝ այն ոչ ի նոցա, այլ հրոյն. իսկ ջերմութիւն հրոյն է նորա էական յատկութիւն, այսպէս է և ա և իցէ զօրութիւն երևեալ յարաբածս. զի ե՛ղաղրդութիւն ինչ յածային զօրէն, որ է ապէս է յածն։

Այս եդեալ մարգարէին՝ կամի հետևեցուցանել և ասել. եթէ քո է սէր բազուկ, և քո է զօրութիւն. ուրեմն բազուկ և զօրութիւն այլոց ոչ կարէ հաւասարիլ քումդ. ուստի և ոչ կարէ ընդդիմադառնալ քեզ և խափանել զոր կամիս ըստ խոստման քում կատարել. և ի հաստատութիւն այսր՝ յարէ զինի, և ասէ։

Օրաւոր ալ է, և բերյը եղէջէ յեռն է։ Այս բան եթէ բայբդ զրաւոր և բերյը եղէջէ իբր ներկայ առ ինն. որպէս տեսանի յերբ", սովին կամի հաստատել մարգարէն զնախասացեալսն. որպէս թէ եգեալ երբ. ասացի քո է բազուկ և քոյ է զօրութիւն. զի յամենայնի զօրէ ազ քո ի յաջողել և բարձրանալ ձեռն քոյ ի վանել։ Ապա եթէ այս բայբ յապառնին առցին. որպէս է յերբ" և ի լատ" սովին գրեթէ յորդոր լինի մարգարէն առ ՅՈՅ յաջողել և վանել. որպէս թէ ասէր. որովհետև քոյ է բազուկ և քո է զօրութիւն. յաջողեա ուրեմն ազով քով՝ զոր խոստացար բանիւդ. և բարձր եղիցի ձեռն քո. այսինքն եթէ ի յաջողել եղիցէ ինչ հակառակ, ամենակալ ձեռն քո վանելով զայն կատարեսցէ զգործ նախախնամութեդ, և այսու փառաւորեսցի։

Ատ" բազկաւ, նոյնպէս և ազով և ձեռամբ և զօրութեբ՝ իմանալ ասատ զոր խաչն. որ յայժամ ներգործէ ի մէզ յորժամ զօրութիւն նորա կատարի առ մէզ՝ ի փորձելն զմէզ և ի մաքրելն, ի տալն մէզ համբերել և լինել խաչակից քրի, ի քաջալերելն զը-

մեզ և 'ի վանեն զձենամիս մեր· ըստ որում այս ա-
մենայն խոստացեալ եղև մեզ 'ի քեզ այլևայլ բանիւք·
Օ այս ամենայն ասաց մարգարէն 'ի ցուցանել թէ
զոր ձենմարտութիւնք խոստացաւ ած, այսպիսին և չինել
ողորմութիւնք զաշխարհս, յաւուրս յանէլով զաւակ 'ի տա-
նէ դաւթի, զնոյն յաջողելոց և կարդալութիւնք իւրով-
որով տիրէ ամենայնի· և չիք ինչ՝ որ կարիցէ խափա-
նել զայն· զայս եդեալ յառաջ քերէ այժմ, թէ այն-
չափ հաստատուն է այն խոստումն, մինչ գրեհել ած
պարտաւորեալ է զինքն կատարել զնոյն վասն որոյ
ասէ·

ԺԲ· Յ[ա]րդարութիւն և չիքառնիս հասարակեալ է անո-
ւո· ողորմութիւն և ճշմարտութիւն փեսայէ առաքե-
լութեան·

Յարդարութիւն է գերազանց ինն կատարելութիւնք յոր-
դորիչ կամաց 'ի տալ իւրաքանչիւր ումեք զիւրն՝ կի՛
զիւր պատշաճն, կամ զիւր համարեալն· և զի ամե-
նայն որ ինչ է՝ այ է և ոչ այլոյ՝ ոչ կարէ տիրապե-
տել թէ ած 'ի ձեռն արդարութիւնք տայ իւրաքան-
չիւր ումեք զիւրն, այլ թէ տայ զիւր պատշաճն կամ
զիւր համարեալն·

Յարդ յայնժամ տայ ած մարդոյ զիւր պատշաճն, յոր-
ժամ՝ 'ի ձեռն ողորմութիւնք իւրոյ զայնպիսի ինչ չնոր-
հէ նմա· որով պարտաւորի զինքն տալ նմա զայն ինչ·
և այնու այն տալն իբրն ասի պատշաճել նմա արդա-
րութիւն· ըստ որոյ և ած 'ի տալն՝ տայ նմա զայն ար-
դարութիւն· զորօրինակ յորժամ՝ 'ի ձեռն ողորմութիւն
պարգևէ մարդոյ զչնորհս իւր՝ կեալ բարի վարուք՝
խոստանալով նմա տալ զվարձս, այն վարձք ասի պատ-
շաճեալ նմա, եթէ նա չնորհօքն այ կեցցէ բարւոք·
ուստի և ած զայն վարձ տայ նմա ոչ ողորմութիւն, այլ
արդարութիւն իբրև զպատշաճեալ ինչ·

Յոկ յայնժամ ասի տալ զիւր համարեալն, յորժամ
հիմնեալ լինի այն միայն 'ի խոստման· որպէս յոր-
ժամ ըստ ողորմութիւն իւրում ձշմարտութիւն խոստա-
նայ առնել ումեք զայս ինչ, հիմնեալն 'ի խոստման,
այսինքն խոստացեալն այն՝ համարեալ լինի նորա· և
ած 'ի տալն՝ տայ նմա զայն ոչ ողորմութիւն, այլ իրա-

ամբք, այսինքն ըստ պահանջելոյ դաշնադրութեան խոստմանն. վասն զի որ խոստանայ ինչ՝ պահանջէ իրաւունքն առնել զոր խոստացաւ։ Այլ արդ քանզի խոստացեալ էր ած նորոգութիւն առնել աշխարհի՝ ի ձեռն ողորմութեան, ունէր կատարել զայն ըստ արդարութեան և ըստ իրաւանց։ Այլ զի ցուցցէ մարգարէն թէ այն արդարութիւն այ և իրաւունք նորա՝ են անապարեալք՝ ասէ։

Յարդարութի՛ն յիւրաքանչիւր հաւատացեալ է աշխատութիւն՝ ելս ի սէր աստուածային, և ի հրամայութիւն իրաւ թագաւորի, ի գատելն իրաւ գատաւորս և ի հատուցանելն իրաւ իշխանաց։ Այս աշխատութիւն այս ինքնիշխանն տերութեան ոչ է ասէ այնպիսի որով կամիցի ած առնել ինչ առանց արդարութեան կամ առանց իրաւանց, այլ ամենևին արդարութեամբ և իրաւամբք. որպէս թէ այն աշխատ չինեալ իցէ յարդարութեան և յիրաւանց. և կամ հաստատեալ իցէ՝ ի վերայ արդարութեան և իրաւանց։ Այսպէս ցուցանէ ասելն՝ հաստատեալ է աշխատ յարդարութեան և յիրաւունս. որ նշան է թէ ասէր. ամենևին արդար էս և իրաւ, և չիք վրիպումն ինչ՝ ի տալդ իւրաքանչիւր ումեք զիւր պատշաճն կամ զիւր համարեանն։ Այլ զի ցուցցէ թէ այս արդարութեան և իրաւունքս ոչ ենթադրեն ինչ՝ ի նուազ, և ոչ հիմնին՝ ի գործս նուազս, այլ յողորմութիւն այ և՝ ի ձգմարտութեան նորա՝ յարել զկնի և ասէ։

Ողորմի՛ն և ձգմարտութիւն փնտռեն առաջի երեսաց տեառն։ Այսպէս խօսի մարգարէն. որպէս թէ ողորմութիւն և ձգմարտութիւն այ իբրև սպասաւորք տանին առաջի նորա զաթոռ տերութեան նորին՝ ի պատրաստել զայն, կամ թէ կարպետ լինին առաջի նորա՝ պատրաստել զձանապարհ. որպէս զի եկեալ նորա նստցի յաթոռն յայն. և զոր ցուցանեն երկոքինն այնոքիկ սպասաւորք, արասցէ զայն արդարութիւն և իրաւամբք. յոր միտ լեալ՝ և ի լսա՛ փոխանակ ասելոյ հաստատեալ՝ ասի պատրաստեալ։

Այդ այս բան եթէ ըստ ինքեան մտածեսցի, ցուցանէ թէ ած լետ ողորմելոյ և լետ ձգմարտութեանն ած

նաւելոյ զինն՝ արդարութիւն և իրաւամբք կատարել, կամ գտանել. ըստ լատ՛՝ ած յայտ առ յայտնի ցուցանել մեզ զողորմութիւնդ, յորժամ ինդրեմք զայն ձշմարտութիւնդ. զի որովհետև արդար ես և իրաւ, ի թաղեսցէ մեր ձշմարտութիւնդ զդուռն նորա առաքել նախ զողորմութիւնդ իւր, և ինքն զկնի նորին գայ։ Կամ ըստ վարդանայ, ցուցանել առ մարմնաւորս զողորմութիւն, և առ անմարմինսն զձշմարտութիւն։ Կամ ըստ Ծործորեցւոյն (՛ի մեկն. մատ. գլ. ի.) այս եղանակ խօսից ցուցանէ անպակասելի լինել ողորմութենէն ՚ի, և անտեսել՝ ձշմարտութենէ նորա։

Իսկ եթէ սոյն այս ընդ նախընթացս բանիցդ հասմատեսցի՝ տեսցին այսու կամի ասել. արդարութիւն և իրաւունք քո ած՝ որով տաս իւրաքանչիւր ումեք զիւր պատշաճեալն կամ զիւր համաբերեալն, պատրաստին յողորմութիւնէ և ՚ի ձշմարտութիւնէ քումմէ. կամ էնթադրեսցի զողորմութիւն քո և զձշմարտութիւն քո. իբր զի սոքա յառաջեն քան զնոսա՝ զի նոքա կամիս ցուցանել զողորմութիւն քո՝ և խոստանաս ձշմարտութիւն տալ զայս ինչ և զայն. և ՚ի դնիլ այսր ողորմութիւն՝ զոր ցուցանել կամիս, և ՚ի լինել այսր խոստման զոր ձշմարտութիւն առնես՝ արդարութիւն քո պահանջէ տալ, և իրաւունք քո ստիպէ կատարել։

Օ այս եղեալ մարգարէին՝ զօրութիւն ինն հեաւեւ ցուցանել զայն զոր դիտէ. որպէս ԹԻ ասէր. որովհետև խոստացար ձշմարտութիւն, և ասացեր. * աշխարհս ,, ողորմութիւն լինեսցի ‖. և երդուար դաւիթի յարուցանել ՚ի զաւակէ նորա ձարտարապետ այսր շինուածոյ, ուրեմն արդարութիւն և իրաւամբք ունիս կատարել զայս խոստումն քո. զի ամենևին արդար ես և իրաւ։ Օ այսոսիկ առաջի արարեալ մարգարէին՝ դառնայ հայի ՚ի ժողովուրդ իւր, և տեսեալ ԹԷ զայսպիսի տէր ունին նոքա, երանի և ասէ.

ԺՇ. Երանի ծողովրդեան, որ գիտեն զբղխնութիւնս տեառն. ՚ի լոյս երեսաց տեղ գնասցեն, և յանուն տեառն ցնծասցեն զբղխանապաղ, և յարդարութենէ տեառ բարձր եղիցին։

Զսոյն օրինակաւ խօսեցաւ ՚ի վերոյ զողորմութենէ և զձշմարտութենէ ԹԷ գնասցեն առաջի նորա՝ նովին

ոձիւ կարգէ և զայս բան ՚ի վերայ Ժողովրդեան տայ ասել ։

Այրանի Ժողովրդեան , որ գիտեն զբնութիւնս ոչ պէս ՚ի լոյս երեսաց չոչ փնացեն ։ Այսմ ասել . երանի խորհեցայց՝ որք գիտելով զայսպիսի օրհնութիւնս զբարին եղէ , կան ՚ի տաճարի քում յանդիման երեսաց քոց , և գնալով կամ կալով առաջի քո օրհնեն զքեզ և ցնծան յանուն քո , և արդարութեամբ քով բարձրանան ։

Այլ այս բան հայել մանաւանդ ՚ի նորս խորհել . յոր միտ կամ ասել . երանի Ժողովրդեան այնմիկ՝ որք ոչ եթէ սպառեն կատարման խոստման քում , այլ ՚ի նոյն վայելելով՝ իմանան զայսոսիկ օրհնութիւնս սաղմոսաց , որս եդի առաջի քո ։ Արդարև նորա ոչ ևս գնասցեն ՚ի ստուերի՝ որպէս հինն խորհէր , և ոչ ՚ի խաւարի՝ որպէս հեթանոսք . այլ ՚ի լոյս երեսաց քոց . այսինքն լուսով օրինաց քոց և լուսով շնորհաց քոց պայծառացեալ՝ նովին գնասցեն առաջի քո ընդ այն ճանապարհ՝ ընդ որ լոյս քո ցուցանէ գնալ . և ՚ի գնալն ոչ ևս սպասեսցեն՝ եթէ հասցէ՞ արդեօք փրկութիւնն քո , այլ առաջի իւրեանց ունելով՝ ցնծասցեն հանապազ յանուն քո , այսինքն ՚ի փառս քո՝ կամ կրելով յինքեանս զանուն քո . և յարդարութիւնդ քում բարձր եղիցին , այսինքն յարդարացուցանել քո զնոսա բարձրացուին արդարութեամբ և կատարելութիւն . կամ ՚ի հատուցանել քո նոցա ըստ վարձս արդարութեամբ՝ բարձրացուին յարքայութիւնդ երկնից ։

Այնմ խոսրով (՚ի մէկն . ժամագր . երես . 218 .) զայս բան առ լուսաւորչաւլս հոգւով վերածելով՝ զրե այսպէս . * երանի մարգարէն (զայսպիսիս) ա-
,, սելով . երանի Ժողովրդեան որ գիտեն զօրհնութիւն
,, քո տէր . ՚ի լոյս երեսաց քոց գնասցեն զօրհնա-
,, պաղ . այսինքն թէ լուսով երեսաց քոց տեսցեն
,, գնալ ուղիղ . և յանուն քո ցնծասցեն զօրհնա-
,, պաղ . զի արքայութիւն բերկրանք է և ասէին . զի
,, արդարքն զանձնայն օր յոյ երեսաց լուսոյն լուսա-
,, տրեալք , և ՚ի գնացս իւրեանց անմխիթարք և ան-
,, խաբք ՚ի չարէն լեալ՝ բերկրին միշտ և անուանքն

,, ՚այ ։ [Ինդ այն՝ զի նորա կոչին Հանապազ՝ ուրախա-
,, լիքք են ։] [Ա. Տայէլով ՚ի յաջորդ Հատուածն յա-
րէ զկնի , և ասէ . * յարդարութեձն քումբարձր եղիցի
,, ՚ցին . բարձրանան ասէ և աստ արդարութիձ քոյ-
,, ոյլ առաւել յարդար գտաստատանին քումբարձրա-
,, նան . յորժամ ըստ արդարութիձ իրաւանց քոց ըն-
,, վաստակս նոցա բարիս առաջի ամենայն հրեշտա-
,, կաց և մարդկան յարդանաք ցուցանես . և անեղծ
,, պահիցք զնոսա պահեաս ։ ՚Ցնս զայսմանէ և ՚ի սաղ-
՚ծ . 6 . 7 . մանաւանդ վասն լուսոյ երեսացն ՚այ ։ [Ա.
քանզի այսպիսեաց պարծանք և զօրութիձ ՚ած է , վա
այսորիկ յաւելու մարգարէն ասել ։

ժԵ . Պարծանս զօրութիձ ձերոց դու ես . և ՚ի կամս
բարձր եղեալ եղիցեմ ձեր ։

Ոչք գործեն զօրութիձք զնեծամեծս՝ պարծին ՚ի վե-
րայ նոցա . իսկ այս պարծանք կարէ հիմնիլ ձերիս .
մի՝ ՚ի ներգործութիձն հպարտութիձ կամ մտափառու-
թիձ . որպէս յորժամ ոք պարծի ՚ի վերայ գործոց ի-
րոց՝ համարելով թէ արարեալ է զայնս իւրով զօրու-
թիձ , կամ թէ և ոչ համարի այնպէս , բայց հաձելով
ընդ մեծի փառան՝ զայնպիսիս խօսի ։ [Ա.երկրորդ՝ ընդ
հակառակն ՚ի ներգործութիձն խոնարհութիձ , որպէս
յորժամ ոք ՚ի գործելն զայս ինչ կամ զայն՝ ձանա-
չելով թէ յիւրմէ ոչնչէ ունի յայն գործ , այլ միայն
յ՚ՙ՚ , ըստ այնմ ձանաչման խօսի ։ [Ա.երկրորդ՝ ՚ի ներ-
գործութիձն սիրոյ , որպէս յորժամ ոք ՚ի գործելն ինչ՝
շարժեալ ՚ի բարեկամական սիրոյն ՚ՙ՚ յ՚ած պարծի՝
քարոզելով՝ թէ զայսպիսի ինչ արար ՚ած . որով և
ցանկանայ փառաւորել զնա ։ [Ա.րդ յայս բան ՚ը երկ-
րորդին և ՚ը երրորդին խօսի մարգարէն յաւելն ։

Պարծանս զօրութիձ ձերոց դու ես ինդ ։ [Ա.յսինքն պար-
ծեցուցիչն զօրութիձց մերոց , կամ փառաւորիչն մեր
դու ես ։ Իսկ բառիս զօրութիձ՝ նշանակին աստ նախ
այնպիսի գործք որք արարեալ լինին զօրութիձք , որ-
պիսի են գործք երևելիք , կամ զօրաւոր յաղթութիձք .
և ըստ այսմ կամի ասել . ՚ի գործել մեր զգործս ե-
թէ ՚ը ՚ի մեզ , այլ ՚ի քեզ . ոտատ և
պարծանք այսպիսի գործոց մերոց դու ես . որ է ա

ոեալ. քանզի պարծիմք ի գործս մեր քանզի և մեծ իցէն այնք, և քեզ ընծայեմք զայն։

Երկրորդ՝ խնացեալ լինին զօրաւոր կարողութիք՝ ի գործել, որպէս զօրութիւն վանելոյ զինչս, զօրութիւն գործելոյ զպարմանալիս. զօրութիւն աներեւոյթ գնալոյ և աներեւոյթ կալոյ ։։. և յայս միտ կամի ասել. դու առնես՝ զի կարասցուք գործել զայս ինչ և զայն ինչ, կամ՝ յաջողես զզօրութիւնս մեր ի գործել և ի վանել, որով և մեք կարեմք պարծիլ, և ասել՝ ։։ած է որ յաջողէ ի մեզ զայս ամենայն։ Եւ այս ոչ եթէ վասն արժանաւորութիւն ինչ մերոյ, այլ վասն այնպիսւ հաճելոյ քո, և առ այս յարէ։

Եւ՝ ի կամս ս բարւոյ եղեալ ընդ ձեր։ Երկրորդ իմացեալ լինի նախ՝ զօրութիւն վանիչ այլոց։ ըստ այսմ կամի ասել. ոչինչ է զօրութիւն մեր ի վանել զինչս միս, և սակայն ի կամիդ՝ բարձրանայ յաղթութիւն։ Երկրորդ՝ իմացեալ լինի իշխանութիւն, և յայս միտ կամի ասել. այն իշխանութիւն կամ այն տէրութիւն զոր տուեալ ես մեզ՝ ոչինչ զօրի՝ եթէ կամք քո ոչ հաճեսցի յաջողել. իսկ ի կամս քո այսինքն ի կամիդ քո բարձրասցի և փառաւորեսցի։ Երրորդ՝ հոգեւոր առեալ՝ իմացեալ լինի հաւատն. որով յաղթեմք ամենայնի. և առ բարձրանայ գործով՝ որ իցէ համաձայն կամացն ։։ոյ։

Ո այսոսիկ ասելով մարգարէին՝ յայտ առնէ՝ թէ ։։ած հաճեալ է ընդ խոյսել։ ըստ որում էր եկեղեցի ։։ոյ, և ոչ է մերժեալ զնա. վասն որոյ և զոր խոստացեալ է՝ կատարելոց է. և առ հաստատութիւն այսր ի մէջ բերէ զօդնութիւն նորա ասելով.

ԺՇ. Եւ ինչ է օգնութիւն երկնի խոյսելի՝ ընտրութիւն մերոյ։

Ոչ ասէ երկուց տուեալ լինի օգնութիւն մարդոյ ի ձեռն. այլ իբր զօրութիւն կամ պաշտպանութիւն վասն մերժելոյ զայն, և մի ևս իբր բաւականութիւն՝ վասն գործելոյ զայնմ. և դարձեալ, մի՝ ի վանել զհակառակորդն կամ զմի և իցէ ձախողութիւն. և մի ևս՝ ի ժամանել ի մեծ ինչ բարի կամ ի գտանել զյաջողութիւն ինչ, ։։ոյ։ յաւաչելին կոչէ զնա որ խոյսելի.

խակ հայհոյով յերկերդդն՝ կոչէ Թագաւոր իսրայէլի
կամ Թագաւոր մեր։ Այլ Թէպէտ ըստ երկուցն եւս
միապէս կարէ համացեալ լինիլ այս՝ բայց այդ կրկնութեանդ
՚ի սոյն տայ ակնարկել յասելն ։

Վ ՏՆԷ ե օգնականէն սրբոյն իսրայէլի՝ Թագաւորին մերոյ ։
Այսինքն ՚ի Տեառնէ տուեալ լինիլ մեզ այնպիսի օգնական՝
որ և ասի լինել օգնութիւն որդւոյն իսրայէլի, և օգնու-
Թիւն Թագաւորին մերոյ. իբր Թէ նոյն որ է որդի իս-
րայէլի, եւս և Թագաւոր իսրայէլի՝ է օգնական մեր
՚ի վանել զմեզ և իցէ ձախողութիւնս, և ՚ի ժամանել յա-
ւէտ իցէ յաջողութիւնս. կամ օգնութիւն մեր է ՚ի Տեառնէ, որ
է որդի իսրայէլի և Թագաւոր մեր ։

Լսէլ զնոյն որ իսրայէլի վասն երկուց. մի՝ ՚ի կողմանէ
նէ՝ այլ. ըստ որում նա ինքն սրբէր զնոսա, և զսրբու-
Թիւն իւր ցուցանէր նոցա, և ՚ի պղծութենէ յետս նա-
Տանիլեր. յոր միտ տիրապետ քո ասի որդի իսրայէլի,
զի եղիցէ սրբութիւն նորոյն իսրայէլի, այսինքն սրբիչ
ամենայն մեղաց. և մի եւս՝ ՚ի կողմանէ իսրայէլացւոց,
ըստ որում սրբութիւն պատահեալ լինէր ՚ի նոցանէ, և
սրբութիւն իւր հաղորդէր ՚ի նոցունց առ այլ ազգս ։

Լսէլ և Թագաւոր մեր կամ Թագաւոր իսրայէլի նոյն-
պէս վասն երկուց. մի՝ ՚ի կողմանէ այ՝ ըստ որում
նա ինքն կամեցաւ կոչել Թագաւոր իսրայէլի, և զոր-
ծով իսկ Թագաւորէր ՚ի վերայ նոցա տիրապետս, և
իբրև Թագաւոր նոցա կառավարէր զնոսա. և մի եւս՝
՚ի կողմանէ իսրայէլացւոց. ըստ որում իւրեանց յա-
տուկ Թագաւոր խոստովանէին զնա, որոյ վասն և
պարծէին ՚ի նա ։

Այլ աստանօր շարադրութիւն ոյսր բանի մի Թագնեալ
է ՚ի մեզ. զի փոխանակ ասելոյ պեառն՝ որպէս դնէր
յերբ" և յայլ ամենայն Թարգ", եդեալ է ՚ի Տէ. ո-
րով և յաջորդ բառքն ոչ կարեն ուղիղ շարայարիլ
յայն՝ բայց եթէ ըստ նախակարգեալ մեկնութեանդ.
իսկ եթէ եդեալ լինէր Տեառն՝ բացայայտիլ լինէր որդի
իսրայէլի և Թագաւորին. որպէս Թէ ասէր. օգնու-
Թիւն մեր է որդի իսրայէլի և Թագաւորին մերոյ՝ այս-
ինքն Տեառն. կամ օգնութիւն մեր է Տեառ, որ է որդի իս-
րայէլի և Թագաւոր մեր. յոր միտ յերբ" բառս Թա-
գաւոր՝ դնի յուղղականն. զորմէ տես ՚ի համեմատու-

Թիմն ։ Այլևս զի մարթի է ասել, Թէ գուցէ փոխա-
նակ գրելոյ ի մէզ, որպես դնի ՚ի յն. * Օ ի տեղ է ։.
վերսկսաւ մտեալ իցէ. * ՚ի տեղի է ։. ապա Թէ ոչ՝
և զայլորդ բառադ սպառ է գրել կամ իմանալ այս-
պէս. * ՚ի տեղի է օգնութեի՝ ՚ի որոյ իսրայէլի՝ ՚ի Թա-
,, գաւորէն մերմէ ։ Այսպս եթէ հաստատուն կայցի
ոք զմէր ընթերցուած, հարկաւորի մերձեցուցանել
յիմաստ յայլորդ առնոյ այսպէս. ՚ի տեղի է ամենայն
յայլողութի մեսիային, որ է որոյ իսրայէլի և Թագա-
ւոր մեր, օրինակեալ ՚ի գաւիթ ընտրեալ յոյ՝ իբրև
՚ի նախահայր նորին մեսիային ։

Լ՚զդ՝ մարգարէն յետ սկսանելոյ կարգել զբան իւր
և առաջի դնելոյ զիսոստումն ոյ առ աղգս մարգկան
և առ գաւիթ մինչև ՚ի համարն 4. յաիշտահակեալ ՚ի
աքսորացումն ազգմունեի և ՀՀմարտուեն ոյ, և և
զօրութի և կարողութեան նորա, իսօեցաւ զնոցանե
մինչև ՚ի համարն 13. իբրև ՚ի հաստատութիւն խոս-
տացելոցն, և ասաւ սկսաւ խօսիլ յայսմհետ զերանու-
Թի աղգին՝ որում յայտնեալ է այս ամենայն, և որոյ
գտեալ է զօգնութիւն ՚ի տեղ ։ Օ այսոսիկ եղեալ
գառնայ յայն յորմէ սկսաւ, այսինքն ՚ի բանս խոստ-
մանցն ոյ, ՚ի մէջ մատուցանելոյ բազում ինչ վերա-
բերեալ յայն խոստմանսն. և նախ ասէ ։

ԺԵ. Յայնժամ խօսեցաւ պեղչեմ ընդ որբես ո, և ա-
սացէր. եթէ ղօթնութի ՚ի վերայ հղբրէն. և ընդէր
աբաբէց ղընթացանել ՚ի ձողվրդենէ իմմէ ։

Լ՚ազգում անգամ և բազում օրինակաւ խօսեցաւ ած
ընդ իսրայէլացիս ՚ի ձեռն մարգարէից իւրոց, որպէս
և յայտ է. բայց այս խօսիլ՝ զոր առաջի առնէ աստ
մարգարէն, հայի ՚ի ժամանակն յայն՝ յորում խօսե-
ցաւ ած ընդ նոսա ՚ի ձեռն սամուէլի, նաեմանայ, և
գագաթ վասն գաւթի՝ յորմէ յառնցանելոց էր փրկիչ
աշխարհի ։ Այսպս հայելով ասէ ։

Յայնժամ խօսեցաւ պեղչեմ ընդ որբես ո և ասացէր ։ Լ՚ազդ
յայնժամ՝ հայի յայն՝ զոր եթող մարգարէն ՚ի վերոյ՝
յասելն ՚ի բերանոց ոյ. * երդուաւ գաւթի ծառայի
իմոյ, (Թէ) յաւիտեան հաստատեցից զզաւակ քո, և
շինեցից ազգ յազգ զաթոռ քո ։ Լչ զի զայլ ինչ

և ասացեալ էր զդաւթայ՝ի ժամանակի անտի ընտրեաց նորա և օծութեամբ, զոյն և ահա բերէ՝ի միջ՝ յայնժամ խօսեցար ասէ տեսլեամբ ընդ որդիս քո [illegible]։ Իւր որդւովք նշանակին հաւատարիմ ծառայք նմա, այսինքն մարգարէք, մանաւանդ սամուէլ և նաթան և գադ, զի ընդ սոսա խօսեցաւ ած վասն դաւթի՝ի տեսլեան. (զորմէ կարես տեսանել ա. թագ. ժէ. 14. և ժէ. 1--13։ է. թագ. է. 5։ ա. մնաց. ժա. 1--3։ և ժէ. 3--15։) Իսկ թէ զինչ խօսեցաւ, առաջի դնէ մի ըստ միոջէ՝ի սկզբանէ անտի, և ասէ։

Գնէին ոչխարքն՝ի վերայ հոգւոյն. և էարձր արարէց զբնակչութիւն՝ի ծողովրդենէ իմմէ։ Հատագ հոգւոյ՝ դնի աստ փոխանակ դաւթի, զոր առեալ էր ած՝ի ժողովրդենէն իւրմէ. յոր միտ կամի ասել. օգնեցից դաւթի՝ զոր ետն զօրացուցի. և բարձրացուցից և զնա փառաւոր, ընտրեալ՝ի ժողովրդենէ իմմէ։

Ի կամել ժողովրդեանն կացուցանել իւրեանց թագաւոր՝ ած ոչ զօրացոյց զնա՝ զոր նոքա ընտրեցին, և ոչ ետ նմա զօգնութիւն ինչ, որպէս տեսանի՝ի սաւուղ. բայց զոր ինքն ընտրեաց՝ զօրացոյց, և եդ՝ի վերայ նորա զօգնութիւն. քանզի ասացեալ էր մովսէս առ իսրայէլացիս՝ թէ զոր ած ընտրեսցի՝ զնա կացուսջիք իշխան՝ի վերայ ձեր. և մի զոր դուք կամիք. (է. օրին. ժէ. 14--16։) Եւ վասն այսորիկ որովհետև ած ընտրեաց զդաւիթ՝ նա ինքն զօրացոյց զնա, և ետ նմա զօգնութիւն վանել զթշնամիսն իսրայէլի. և փառաւոր արար զնա բազում իրօք։

Այս ամենայն յայտ է թէ՝ի դէմս քրիստոսի ասացեալ էզև. զի վասն նորա խօսեցաւ ած տեսլեամբ ընդ մարգարէից իւրոց դնել՝ի նմա զօգնութիւն այսինքն զաննկնայն զօրութիւն և զիշխանութիւն, և և զհոգին որ ած ի վերայ նորա մարմնաւոր տեսլեամբ՝ ոչ իբր՝ի վերայ կարծի, այլ անօրինաբար իբր՝ի վերայ փառակոյտ լսամբ։ որոյ զօրութիւն վարեցաւ յանապատ իբրև ամենազօր՝ի վանել զթշնամին ազգի մարդկան։ Այս և ընտրեալ՝ ոչ ըստ օրօղական ընտրութեան, այլ ըստ գերազանցութեան և ըստ կանխատեսմանութեան և ըստ անդրանկութեան՝ի վերայ ամենայն արա-

բածոց ։ Ասկ ԼԵ զինքդ՝ ընտրեաց, յայտ առնէ զայն օրինակաւ ընտրութեանէ և օծութենէն դաւթի՝ ասելով.

ԺԶ. Գտի ղաւթի ծառայ իմ, եղուկ սրբով իմով օծի զնա։

Յերկակի ասի զնոյ գտանել զոք. մի՝ յորժամ փրկէ զնա յո՛ և իցէ վտանգէ. յոր միտ ասաց. գտի զնա, բայէլ. ԼԵ. (ովաեայ. ԼԲ. 10։) Յերկրորդ՝ յորժամ՝ ի գառնալ ուրուք առ նա՝ ընդունի զնա իբր զկորուսեալ. յոր միտ ասաց. * գտի զոչխարս իմ զկորուսեալս ։ (ղուկ. ԺԵ. 6։) Յերրորդ՝ յորժամ՝ ի բազմաց ընտրէ զմին, ոչ ԼԵ որոնելով զնա, զի ամենայն ինչ առաջի նորա է, այլ հաձելով ընդ նա քան ընդ այլս ։ Յե զի այսպէս սրաբ ընդ դաւթի յօծանելն զնա Թագաւոր, վասն որոյ ասէ ։

Գտի զդաւթի ծառայ իմ. եղուկ սրբով իմով օծի զնա։ Ի նմանութենէն դաւթի նոյնպէս և օծութենէն նորա կարդաւ գրի յառաջինն գիրս Թագաւորաց. (ԺԴ. 14. և ԺԶ. 1—13.) զի նախ գրէ, ԼԵ գուշակեաց զնմանէ առմանէլ յասելն. * խնդրեսցէ իւր տէր այր ըստ սրտի իւրում. և ապա նմա պատուիրանաւ իշխան ի վերայ ժողովրդեան իւրոյ ։ (ա. Թագ. ԺԶ. 14։) Յետ այսորիկ գրէ՝ ԼԵ խօսեցաւ ՅՀ առ սամուէլ և ասէ. * լից զեղջիւր քո իւղով, և ԱՒ, ես առաքեմ զքեզ առ յեսսէ մինչև ցբեԹղլհէմ. զի տեսի ես յորդւոցն նորա Թագաւորել ինձ ի Թագաւոր ։ (ա. Թագ. ԺԶ. 1։) Յե գնացեալ սամուէլ ի տունն յեսսեայ, և կոչեալ առաջի իւր զորդիս նորա՝ տեսեալ զեղբաւր զանդրանիկն ասէ. ահա սա է. * առաւ զջի իսկ ՅՀ օծեալ իւր ։ այլ ՅՀ ոչ հաձեցաւ ընդ նա. սոյնպէս եղև և ընդ եօթն որդիսն յեսսեայ։ Յոչ յայժամ դաւթի ի բայի և արածէր զխաշն. ետ քերել զնա. և իբրև եհաս զնա սամուէլ, ասացնա ՅՀ. * արի օծ զդաւթի, զի դա է բարի ։ Յե եառ սամուէլ զեղջիւրն իւղոյ, և եօծ զնա ի մէջ եղբարցդ իւրոց ։ (ա. Թագ. ԺԶ. 12։) Յե ասէ անդ ՅՀ գիրն. * Թէ խաղաց Հոգի ՅՀ ի վերայ դաւթի յօրէ յայնմանէ և առ յառաջ ։

Այսա ամենայն Հայելով ասէ. գտի զդաւթի, այսինքն

թէ՝ ի մէջ ազգին իսրայէլի, և՝ ի մէջ որդւոցն լեւ-
աեայ՝ հաճոյ գտի ինձ զդաւիթ զիմ հաւատարիմ ծա-
ռայ և կատարիչ կամացս։ Այր բառդ ծառայ՝ թէ-
պէտև կարէ հայիլ՝ի նախընթաց վիճակն դաւթի,
զի ծառայ բարի գոլով ընտրեցաւ, բայց աստ բանն
ցուցանէ հայիլ՝ի վիճակն՝ որ զկնի. որպ՛ես թէ ա-
սէր. զարքային դաւիթ որ է իմ ծառայ ընտրեցի յեղ-
բարց իւրոց։ Այս որ աստ ծառայ դնի՝ սովին ցուցա-
նի հաճոյ լինիլ նորա ոչ ըստ սրտի նորա. ուստի յայս
քան փոխանակ ծառային՝ այր ըստ սրտի դնի՝ի գործս
առաքելոց (ԺԳ. 22.) յասելն. * գտի զդաւիթ որ-
,, դի յեսսեայ՝ այր ըստ սրտի իմոյ ‖. Այսօսելով ասպա
և զօծմանէն՝ ասէ։

Եղև սրբով իմով օծել զնա։ Այս իւղ՝ զոր էր այն՝ որով
սովորութիւն էր առ իսրայէլի օծանել զնուիրեալն ոյ.
և յօրհնութէնն ոյ ունէր զօրութիւն ազդելոյ ինչ յօ-
ծեալն. ըստ նմանութէ ինչ այնր իւղոյ, զոր մեք վա-
րեմք յօծութէ Թագաւորի. որով և կոչի իւղ՝ օրհ, և
և իւղ՝ այ, յոյր սակս ասէ, իւղով՝ սրբով իմով։ Այս զի
իւրով հրամանաւ օծաւ դաւիթ՝ օծի ասէ, փոխանակ
ասելոյ՝ եւտու օծել։

Այս բանք յայտ է թէ խորհրդաբար հային՝ի քո,
զորմէ տես՝ի վերջ ետ համարոյ. ըստ որոյ ասէ նա-
բեկացին (՝ի բանն զէ՝ի վերայ մեռոնին.) * ոչ այլ
,, մեծ բարձրութիւն յարքայութէն Ձոխութէ ասէ մար-
,, գարէն՝ի դիմայ քո տէր՝ քան թէ գտի զդաւիթ
,, ծառայ իմ. և իւղով՝ սրբով իմով օծի զնա ‖։

Նոկ հոգևորապես իւղով՝ սրբով նշանակի շնորհք հոգ-
ւոյն՝ սրբոյ, ևս և նա ինքն հոգին՝ սրբ. որոյ իբր արտա-
քին նշան է նիւթական իւղն. և յայս իսկ յօծանիլ
դաւթի խաղաց՝ի վերայ նորա հոգին՝ սրբ՝ և շնորհօք
իւրովք էօծ զհոգի նորա։ Այս վասն այսպիսի նշան
գոլոյ այնր՝ զոյն զայս բան սաղմոսի նուագեմք յա-
լելուս տօնից գալստեան հոգւոյն՝ սրբոյ։ Այս արդ քան-
զի յետ օծանելոյն ոյ զդաւիթ՝ էառ զնա իւր, և զօ-
րացոյց, վասն որոյ յարէ։

ԺԵ. Զեռն իմ ընկալեսջիք ինձ. և բազում իմ ղօրացոյցէ ինձ։

Զեռամբն այդ որպէս այլուր ասացաք՝ բազում ինչ կարէ նշանակիլ, բայց աստ դնի փոխանակ յատուկ նախախնամութեանն և մեծանարդ պաշտպանութեանն, որով պաշտպանէ ած զծառայս իւր։ Իսկ բազկաւ հաստատ բահօրէն նշանակի ամենակարողութիւնն այդ՝ ի գործել զայնպիսի գործ՝ որ իցէ՝ ի վեր քան զկարգ բնութեանն. որպէս ասացաք՝ ի համարն. 12. բայց աստ դնի առանց այսր որոշման, սոսկ փոխանակ կարողութեան կամ ղօրութեանն այդ՝ ի ղօրացուցանել զայս ոք և զայն. յայսոսիկ հայելով ասէ։

Զեռն իմ ընկալեսջիք ինձ։ Կամ ասել. որովհետև ես ընտրեցի զդաւիթ, և ես օծի զնա, ձեռն իմ ընկալեցի զնա այսինքն յանկանիլ նորա՝ ի վտանգ՝ պաշտպանութեանն իմ՝ ի վեր առնուցու զնա. և՝ ի կառավարել նորա զժողովուրդ իմ, և՝ ի գործել նորա զինչ և իցէ գործս՝ խնամք իմ մի պակասեսցի՝ ի նմանէ. և ոչ այսչափ միայն, այլև արարից զի զօրասցի ընդդէմ թշնամեաց իւրոց. սմին իբրև յաւելուած ասէ։

Եւ բազուկ իմ զօրացոյցէ ինձ։ Այսինքն բազուկ զօրութեանն իմոյ զօրաւոր արասցէ զնա՝ ի պատերազմանս՝ զորս ունի նա մղել ընդդէմ ատելեաց իմոց. և ոչ ոք կարէցէ ընդդէմ նմա։ Այս առ այս յարէ։

ԶԵ. Ոչ մեղեսցէ նմա թշնամի. և որդի անօրինութեան ոչ յաւելուսցէ ինձ։

Ոչ մեղեսցէ նմա թշնամի։ Այսինքն ոչ ոք՝ ի թշնամեաց կարեցէ վնասել նմա՝ յաղթելով անձին նորա կամ վանելով զզօրութեանն նորա, կամ աւարելով զինչս նորա

և կամ ցրուելով զզօրս նորա. և մի և ոք իշխեսցի նեղել զնա. և առ այս յաւելուա ասել՝

Եթէ որդի անօրէնութեանն չիք։ Այս բան նախ հայի ի սուտս՝ որ փոխանակ լինելոյ որդի բարեհաճութեան՝ եղև որդի անօրէնութեան. և զի ի հալածել նորա զդաւիթ ոչ կարաց ըմբռնել զնա, և զբոլոր կամս իւր կատարել ի նա, վասն այսորիկ ասէ մի բարեչարեացն զնա։ Այրկնորդ՝ հայի յաքեաղաղմ՝ որ եղև անօրէն որդի. և ի վանեալն զհայր իւր ի Թագաւորութենէ, ոչ կարաց առնուլ զթագաւորութիւն նորա, և ոչ կարաց յարչարել զնա՝ արկանելով ի յուսահատութեան։ Այրկորդ՝ հայի յորդին անօրէնութեան ի սաքէլ յորդի բոզորայ. զի թէպէտև սա ամբարձ զձեռն իւր ընդդէմ նորա, բայց փոխանակ չարչարելոյ զնա՝ ինքն չարաչար կորեաւ. (ՁԲ. Թագ. ԺԸ. 1—22։)

Այսոքիկ եկն գլխաւոր ընտանեաց Թշնամիք դաւթի. իսկ հայելով յօտար Թշնամիս՝ ասէ՝

Տուէք առաջի նորա զնիզակս նորա. և պատէին նորա ի պարսպանն Տաղնեցից։ Կամի ասել. ի զուր ուշնին չարհնել ի վերայ դաւթի ծառայի իմոյ Թշնամիք նորա՝ եթէ փղշտացիք իցեն և եթէ ամնացիք, եթէ ասրբիք իցեն և եթէ այլ և իցէ ազգք. զի ես ինքնին հարից զնոսա առաջի նորա. և որք միանգամ առեալքն էն նորա՝ այսինքն առեցօղք դաւթի, որպիսի կին յերբուացիք՝ յաղթեսցին ի նմանէ, և խոյտառակեսցին. (ՁԲ. Թագ. Ե. 6—8։) տես և ի սաղ. ԺԷ. 7—13։

Այս բանք սկսեալ ի 18 Համարէ՝ որպէս և առաջնիքն հային ի քո իբրև ի Հշմարտութեն. ըստ որում նա ինքն ի մարգարէութեան եղեկիելի դաւիթ ա նուամբ յիշատակի, յասել՝ ես. * փրկեցից զնաչինս ,, իմ... Այս կացուցից ի վերայ նոցա հովիւ մի զձա ,, ոայ իմ զդաւիթ... և ես տէր եղեց նոցա յԱՀ. և ,, դաւիթ ծառայ իմ իշխան ի մէջ նոցա... և եղից ,, ընդ դաւիթ ուխտ խաղաղութեան ևն. Եզեկ. ԼԴ. 22—27։ տես և Լ. 23—26։ և ովսեայ. Բ. 5։ յորս յայտնի աւանդի Թէ հայրն երկնաւոր միայն զքո ես գիտ փրկիչ աշխարհի, զոր և Եսա. ՂԳ. զորմէ տես ի սաղ. խԷ. 8. և ձեռամբ իւրով ընկալաւ զնա յարու-

ցանել լով ՚ի մեռելոց ։ Այժմ ըստ լսելոյ " Հոգւոյն ՚ազդ անօրինաբար զօրացոյց զնա ։ Այլ ոչ կարաց մնասել նմա Թշնամի նորա սատանայ , և ոչ որդին անօրէնութեան յուզեայ ։ և ՚ի յաւուրն ՚ի վերայ նորա այլոց Թշնամեաց այսինքն հրէից՝ եհար զնոսա՝ մատնեալ ՚ի ձեռս հռովմայեցւոց ։ և զոր միանգամ հնարեցին առեցօղք նորա ընդդէմ նորին , տկարացան ՚ի նոսին , և ՚ի պարտութեի մատնեալ ՚ի նմանէ ՚յաճախ եղեն , Այսպէս՝ իբրև ՚ի Հնմարտութեի ։ զի այս ամենայն ըստ որում հայեին ՚ի դաւիթ՝ իբրև ՚ի ստուերի նկարին ։ իսկ ըստ որում հայեին ՚ի քս , իբրև յայն ինչ կատարեցին՝ որոյ ստուեր էր դաւիթ ։ Այնպէս և իմանալ և յայլ անձինս , որք օրինակք էին քսի ։ ըստ սմին և գուշակութիւնք նախահարց , յորս ընդ անուամբ այլոց իբր ընդ վարագուրաւ այլ ինչ ծածկեալ լինէր ։ որպէս ՚ի գուշակութենէն յակոբայ ընդ անուամբ յուդայի իմացեալ լինէր քս ։ Այդ այս զայնեայլ օրինակս բերէ գէորգ վարդապետ ։ (՚ի մեկն ։ եսայ ։ գլ ։ ՚ը ։) և հինգ ասելով ։ * յայսմանի օրինակաց յայտ է , Թէ ,, բանք (մարգարէից) ՚ի գէմն այլոց ասին ։ ։ ։ և յայլս ,, կատարին ։ ։ ։ (զի մարգարէք) ընդ ծանօթ և ընդ ,, ընտէր անուամբ Թագաւորանին զմարգարէութին ։ ։ որ առաւելեալ լինն ցուցանի ՚ի սաղմոս , մանաւանդ ՚ի սաղմոսի ասա ։ ուր շարունակելով մարգարէին ըզբան իւր՝ ՚ի մէջ բերէ զառաւել պանծալին մի զՀետ միոյ ։ և ասէ ։

իբ ։ Ա՛ղմտռուիէ եմ և ողորմուիէ եմ ընդ նմա ։ և յանուն իմ եղջիւր նորա ։

Այսոքն Հնմարտութեի իմացեալ լինի գործ Հնմարտութենն այ , այսինքն այն գործ , կամ այն իր՝ զոր ոճ Հնմարտութեի խոստացաւ ՚ցաւեի ։ և զայս պարտ է իմանալ ։ ըստ այմ Հնմարտութեի , զորմէ խօսեցաւ ՚ի համարն ։ ։ ։ Այդնպէս և ողորմութեի իմացեալ լինի գործ ողորմութենն այ , այսինքն այն գործ՝ կամ այն իր , զոր ողորմութեի արար ոճ ՚ի դաւիթ ։ և զայս ևս պարտ է իմանալ ըստ այմ ողորմութեան , զորմէ խօսեցաւ ՚ի նշանակել համարոտ ։ Թէպէտ անդ ՚ի համարն ։ ։ ։ բանն էր զՀնմարտութեի և զո-

ղորմութիւն այդ՝ ըստ որում էր չհաճ. իսկ աստ բանն է զգործոց այնը ձշմարտութիւնե և ողորմութիւն, ըստ որում կամեցաւ ած՝ զի այսոքիկ գործք ձշմարտութիւնե և ողորմութիւնե եղիցին ի նմա այսինքն ի գաւիթ.

վասն որոյ ասէ՝

Ձ՚շմարտութիւն իմ և ողորմութիւն իմ ընդ նմա։ Լ՚այսինքն զոր ինչ խոստացայ նմա ձշմարտութիւն, եղիցի նմա, և ընդ նմա. և խնամք ողորմութիւնե իմոյ ոչ երբեք պատեսցին ի նմանէ. կամ ըստ վարդանայ, ձշմարտութիւն ահն եղիցի ընդ նմա յանմեղութիւնն. և ողորմութիւն ահն զինի մեղանչելոյն։ Իսկ թէ զինչ հետևէր այսմ, յայտ առնէ ասելով՝

Եւ յանուն իմ բարձր եղիջէ եղջիւր նորա։ Որ եղջերաւ խնացեալ լինի իշխանութեան և զօրութեան. և ըստ այսմ կամի ասել. իշխանութիւնն նորա բարձրացի յանուն իմ, և զօրութիւն նորա ընդդէմ ձնշամեաց նորին փառաւորեսցի։ Իսկ այն յաւելուած՝ այսինքն է յանուն իմ, երբեմն կարէ խնացեալ լինիլ. մի՝ թէ յապաւինել նորա յիս, կամ՝ ի կոչել նորա զանուն իմ յօգնութիւն՝ բարձրացի։ Նշիկորդ՝ թէ զօրութիւն անուան իմոյ բարձրացի, որ է ասել. ես բարձրացուցից։ Նշերորդ՝ թէ ի բարձրանալ եղջեր նորա՝ բարձրացի անուն իմ և փառաւորեսցի։

Լ՚այ բան հայելով ի քո յայտ առնէ՝ թէ ձշմարիտ խոստումն այդ արարեալ առ Հարս՝ կատարեցաւ ի քո, որ էր նա ինքն ձշմարտութիւնն, որով և յամենայն գործս և ի բանս փայլեալ երևեցաւ ձշմարտութիւն։ Այնպէս և ողորմութիւնն այդ՝ որով կամեցար փրկել զաղգ մարդկան եղև ընդ քեզ, զի կատարեցաւ ի ձեռն քոյ. որով և եղջիւր նորա այսինքն իշխանութեան նորա, կամ զօրութեն նորա, և կամ խորհրդաբար խոսելով՝ խաչ նորա բարձրացաւ փառաք։ Լ՚այլ թէ ցոր վայր տարածէր իշխանութեն նորին, յայտ առնէ մարգարէն յաջորդ բանիսն, ի մէջ բերելով զօրինակ տարածութեն իշխանութեան դաւթի և ասէ՝

ին. Լցէջ ի ծովս ղչեան նոքա, և ի վերոյ գեղոյ ղալ նոքա։

Այսպէս է թէ գաւիթ ի տիրէն ի վերայ փղշտացւոց՝ տիրեաց և ծովու նոցա՝ ի տիւրոսէ սկսեալ, և ի տիւրել ի վերայ եդովմայեցւոց և ամմնացւոց և մովաբացւոց և ասորւոց, տիրեաց և ի վերայ գետոց նոցա. (Բ. Թագ. Ը. 1 14. ա. մնաց. ԺԸ, 6 13.) մանաւանդ թէ որպէս վհատատեն բազումք ի տիրել ի վերոյ արաբացւոց և ամաղեկացւոց՝ տիրեաց և մասին ինչ կարմիր ծովու՝ ևս և հեռապէս ծոցոյն պարսից. թող զորս էարկ ընդ տիրութիւնէ իւրով որդի նորա սողոմոն։ Այսպոսիկ Հայերով ասէ։

Լցէջ ի ծովս ղչեան նոքա, և ի վերոյ գեղոյ ղալ նոքա։ Իւր ձեռամբ և աջով նշանակի յաղթանակող իշխանութիւն, և ըստ այսմ կամի ասել. տարածեցից զիշխանութիւնն գաւիթ ի վերոյ ծովու և գետոց։ Իւր ծովով իմացեալ լինին ծովեզերք, և կղզիք ծովու։ Իսկ գետովք իմացեալ լինին նաև ցամաքք։ զի որովհետև գետք ի ցամաքի են՝ ի տարածել իշխանութիւն ցամաքի՝ տարածի և ի վերոյ գետոց. մանաւանդ թէ ոչ տարածի իշխանութիւն ի վերոյ գետոց՝ եթէ ոչ տարածիցի ի վերոյ ցամաքի՝ յորում ընթանան։

Լ. Այս տարածումն իշխանութենն գաւթի էր օրինակ տարածելոյ իշխանութենն քրիստոսի ընդ ամենայն տեղիս ի վերոյ ամենեցուն ի ծովու և ի գետս. ուր ծովով նշանակին այն ամենայն տեղիք՝ որք են ի ծովէ մինչև ի ծով. այնպէս և գետովք իմացեալ լինին այն ամենայն տեղիք, ուր կան գետք և ջուրք։ Լաւ զի ի վերոյ ամենայնի այսոցիկ տարածեցաւ ձեռն քրիստոսի, վասն այսորիկ ասաց մարգարէն ի սաղ. հա. 8. * տիրեսցէ նա ի ծովէ մինչև ի ծով. ի գետոց ,, մինչև ի ծագս աշխարհի ||։

Լսորհեաբար ծովով նշանակին հեթանոսք՝ որք յաւազ քան զքո տարածեալ էին հանգոյն ծովու, և կային յաղի և ի դառն կռապաշտութեան. և այլաբանօրէն հին օրինէնն տուեալ ձեռամբն մովսէսի որ արկաւ ի ջուր. և բարոյապէս միտք մարդկան։ Իսկ գետովք իմացեալ լինին հրէայք. որք թէպէտ և

սակաւ է՛ն քան զՀեթանոսս , բայց կայեն ՚ի պաշտա-
մանն Ձչմարտին ՚ոյ՝ իբրև ՚ի քաղցր ջուրս . և պլաբա-
նօքին նոր օրէնքն տարածեալ քարոզութ՚ե աւետա-
րանին աշով միածնին . և բարեյաջոյն՝ խորհուրդք ե-
լեալք ՚ի մտաց ։

՚Ի վերոյ ամենայնի այսոցիկ տարածեցաւ իշխանու-
թ՚ենն քո՛ն , ոչ իբրև նորոգ տիրելով , որպէս եղև դա-
թ՚ին , այլ իբրև զիւր ժառանգութ՚ե՛ն ունելով . և այս
ոչ է՛թէ ըստ ՚ածութ՚ե՛ն՝ զի ըստ այմ արարօղ ևս էր
ամենայնի , այլ ըստ մարդկութ՚ե՛ն՝ կամ ըստ որում
էր մարդ . և զի նաև ըստ որում մարդ՝ էր բնական
որդի ՚ոյ և ժառանգ հօրն երկնաւորի ըստ ամենայն
իշխանութ՚ե՛ն և տէրութ՚ե՛ն որ ինչ յերկինս և որ ինչ
յերկրի ,յայս ակնարկելով մարգարէին զարմանալիս
խօսի ՚ի յաղօրդ Համարտդ ՚ի մէջ բերելով զորդիութ՚ե՛ն
նորա ըստ անդրանկութ՚ե՛ն . և ասէ ։

իէ. Ձ՚ո՞ երբեսցէ առ իս՝ հայր իմ ես դու . ած ընդու-
նելի էրէութ՚ե՛ն իմոյ ։

իէ. Ձ՚ո՞ անդրանիկ արարից զնա , և բարձր քան զպետնայն
թագաւորս երկրի ։

Ա՚յս բանք նիւթապէս հայեին ՚ի դաւիթ , և ցուցա-
նեն թէ այնպիսի գթով և սիրով փայփայեալ եղեւ
նա յոյ՝ մինչև համարձակութ՚ե՛ կարել նմա ասել առ
ած . դու ես հայր իմ , և ած ընդունօղ անձին իմոյ՝
փրկելովդ զիս յամենայն վտանգէ . նա զի և ած ա-
րար զնա անդրանիկ ՚ի մէջ ամենայն սիրելեաց իւրոց
իբրև առաջին սիրելի , և և առաջին ՚ի թագաւորս
՚ի ցեղին յուդայ , և փառաւոր քան զամենայն թա-
գաւորս երկրի . զորմէ տես ա . մնաց . ժէ . 17 ։ Լուկ
տեսականապէս , այսինքն ըստ յատուկ նշանակութ՚ե՛ն
այս բանիք հայեին ՚ի խոստացեալ գաւակն յայն՝ որ ծնա-
նելոց էր ՚ի տանէ դաւթի , այն է յիս քն . զի նա միայն
իբրև բնական որդի ՚ոյ ուներ կոչել զած՚ հայր իւր .
յայս հայելով ասէ ։

Ձ՚ո՞ երբեսցէ առ իս՝ հայր իմ ես դու . ած ընդունօղ էրէ-
նելի իմոյ ։ Այսմ ասել . որովհետև ՚ի մէջ մարդկան
նա միայն է , այսինքն քն միայն է Ձչմարիտ իմ բնա-

կան որդի՛ նա միայն ձշմարտապէս և իրապէս ասաց զե առ իս . Հայր իմ ես դու . ըստ որում և ասաց . * Յովհաննէ՛ զքե՛ն Հայր . . . այո՛ Հայր ևն ՝ . (մատ . ժա . 25) Նո՛ւ ևս յասե՛ն . * Հայր իմ երկնաւոր ՝ . (մատ . ժե . 13) * առաջի՛ն հօր իմոյ ՝ . (մատ ՝ ե . 32) * զերեսս հօր իմոյ ՝ . (մատ . ժը . 10) * ամենայն ինչ տուաւ ինձ ի՛ հօրէ իմմէ ՝ . (ղուկ . ե . 22) * Հայր իմ ուխտեաց ինձ ՝ . (ղուկ . իբ . 29) * Հայր իմ մինչև ցայժմ գործե՛ ՝ . (յովհ . ե . 17) * Հայր պատաւորեա՛ զորդի՛ քո ՝ . (յովհ . ժբ . 28) Նո՛ւ թէ՛ . * ելանե՛մ ես առ Հայր իմ և առ Հայր ձեր ՝ . (յովհ . ե . 17) Նո՛ւ յայլ բազումս տե՛ղիս ՝ զոյ աւետարանին , յորս քո՛ Հայր իւր կոչէ զնա՛ ՝ Նո՛ւ ի՛ պարտիզի յաղօթէն անդ որոշ դիմե՛ք խօսելով ասէ . * Հայր իմ , եթէ՛ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն ՝ . (մատ . իզ . 39)

Նո՛ւ յիրաւի՛ որպէս տեսանե՛մք ի՛ նզ գիրս . միայն քո՛ այսպիսի եզական բանիւ կարգաց առ նա՛ , յասե՛ն Հայր իմ . և ոչ այլ ոք բնաւ ի՛ մարգարէից . բայց եթէ յոհանէսի յասե՛ն . * դու տէր Տէր մեր ՝ . (եսայ . կէ . 16) և թէ . * Հայր մեր դու ես ՝ . (եսայ . կէ . 8) Նո՛ւ ոչ ուրեք երբէք Հայր իմ՝ Նո՛ւ այս միայն քո՛ր որդւոյն ՝ ոյ էր սեպհական ։

Նո՛ւ քանզի՛ քո՛ տէրն մեր միանդամայն և ձշմարիտ մարդ էր յասե՛լու և ասե՛լ նա՛ իմ ես դու ։ Նո՛ւ զի՛ ի մասնի՛լ նորա՛ ի՛ մահ և ի՛ թաղի՛ն՝ յարոյց զնա՛ Հայր ի՛ մե՛ռելոց , ընդունե՛լով զնա՛ ի՛ միջոյ նոցա , վասն այն յասե՛լու ևս ասե՛լ . նա՛ ընդունող փրկութե՛ն իմոյ , այսինքն ընդունող իմ՝ ի՛ ձեռն այնր փրկութե՛ն՝ որով ազատ կացուցեր զնս յապականութե՛ն մահու , և յարուցեր զնս ի՛ մե՛ռելոց ։

Նո՛ւ զի՛ այս վերագրի՛ ի բան պաշտպանութե՛ն՝ յերբ՞ դնի՛ Տուր , այսինքն զորութե՛ն կամ վի՛մ փրկութեան իմոյ , որ է՝ ասե՛լ , ապահո՛վն ընդունող փրկութեանս ։ Նո՛ւ որպէս տեսանի , բառս էլուն՝ առե՛ալ լինի նրա՛ւորաբար . զի՛ Հայի՛ ի՛ փրկե՛ն քո՛ի յապականութե՛ն մե՛ռելոցն ։ Նո՛ւ եթէ առցի՛ն ներգործաբար՝ յայլ ինի՛ փոխի՛ միտ բանին , որով կամի՛ ասե՛լ . ընդունող ես այնր փրկութե՛ն իմոյ՝ զոր ես առնե՛լոց եմ ազգի՛ մարդ-

կան . կամ այլազգ ևս , այսինքն է՝ ընդունող երաշխաւորութեամբ , որով կամեցայ ես փրկել զազգ մարդկան : Լ՚որդ մարգարէն առաջի եդեալ զնշմարիտ և զանեան որդիութեին քոյ՝ առաջի առնէ այժմ և զանդրանկութեան նորա խօսելով ի դիմաց հօր այսպէս ։

Լա՚ս անդրանիկ աբարէչ պիտ . և բարբ չան պահեայն ինձ . ասէ Երէքն : Լ՚ընդդրանիկ ասի առաջին ծնեալ որդին , յորում նշմարին այլևայլ յատկութիւնք , նախ յատկութեի ծննդեան . եթէ առանձինն առեալ և եթէ հայելով ի ծնեալսն զկին . երկրորդ՝ յատկութեի կարգ . երրորդ՝ յատկութեին ազնուութեի որ կարէ լինել և ըստ ընտրութեի . չորրորդ՝ յատկութեի ժառանգութեի , և հինգերորդ յատկութեին սիրելութեի . Լ՚որդ ի՛նչ գիրս բառս անդրանիկ նախ ի գործածէի ըստ յատկութեի ծննդեան , երբեմն առանձինն առեալ . յոր միա քո ասի անդրանիկ ձայ կուսին , որպէս գրի աւետարանին . * ծնաւ զորդին իւր զանդրանիկ ։ (ղուկ . բ . 7 .) որով նշանակի նախկին ծնեալն միայն . և ըստ այսմ բառս անդրանիկ դնի փոխանակ միածնի . յոր միա ասէ կիրակոս վարդապետ . (ի մէկն . հարիւր . եւագրի . ջ . 18 .) * անդրանիկ ,, է այն՝ որ յառաջ քան զնա ոչ ոք լինի , և ոչ յետոյ ,, այլք եղեն նման նմա ։ Լ՚երբեմն հայելով ի ծնեալսն զկին . և ըստ այսմ եղիցէ որդի յետասպ անդրանիկ ասի ՚ի մէջ եղբարց իւրոց (ա . Թագ . ժէ . 10 .) Լ՚երկրորդ՝ ըստ յատկութեի կարգի . և ըստ այսմ յակոբ նահապետ՝ անդրանիկ կացոյց զորդին յոսէփ . պայ զերբեմ զկրտսեր , զի Թէպետ և մնանակ էր անդրանիկն , բայց նա եփրեմայ էտ զայն . (ծնն . խը . 13 -- 21 .) Լ՚սա որդի ասէ ած ՚ի ձեռն երեմեայ . լա . 9 . * եփրեմ անդրանիկ իմ է ։ և այս յայտ է Թէ ըստ յատկութեի կարգի ։

Լ՚երրորդ՝ ըստ յատկութեի ազնուութեի . ըստ որոյ յուդայ որդի յակոբայ ժառանգեաց զանդրանկութիւն առաքելի . (ծնն . խԹ . 8 .)

Լ՚որրորդ՝ ըստ յատկութեի ժառանգութեի՝ միանգամայն և ազնուութեի . յոր միա յակոբ նահապետ որ էր կրտսեր , եղև անդրանիկ ժառանգ . իսկ եսաւ

որ էր անդրանիկ՝ եղև կրասեր. (ծննն. իե. 31–34.)

Հինգերորդ՝ ըստ յառաջնութեանէ սիրելութեան՝ միանդամայն և ժառանգութեանէ, և ընտրութեանէ. յոր միտ զաղջն իսրայէլն կոչէ ասծ անդրանիկ իմ յասելն. * որդի անդրանիկ իմ իսրայէլ ‖. (ելից. դ. 22.)

Հայեսմ ամենայնի յառաջնութիւն կարէ մտածել կրկնակի. մի՝ ըստ ինքեան իբր այն թէ յառաջագոյն է՝ առանց խորհելոյ, կայցէն այլք թէ ոչ. և մի և՝ բաղդատութիւ, իբր թէ յառաջ իցէ քան զայլս՝ որք կան, կամ որք զկնի գան։ Լիդ քա տէրն մեր թէպետ կարէ ըստ այլևայլ բանի կոչել անդրանիկ, բայց աստ դնի ըստ յառաջնութեանէ ծննդեան՝ ըստ ինքեան, և առանձինն առեալ. և ըստ յառաջնութեան կարդի՝ ըստ բաղդատութեանէ. և ըստ յառաջնութեանէ ժառանգութեանէ՝ ըստ ամենայնի՝ յասելն։

Իսս անդրանիկ արբէր ինձ։ Այս անդրանկութեանէ ընծայի որդւոյն ոչ բանիւ ասծութեանէ, և բանիւ մարդկութեանէ։ Զանիւ ասծութենէն ասի անդրանիկ ըստ յաւիտենական ծննդեան՝ ըստ որում ծնեալ եղև 'ի յաւիտենից յառաջ քան զլինել արարածոց. յոր միտ ասէ պօղոս, թէ նա * է պատկեր անեղութեան ոչ՝ անդրանիկ ,, ամենայն արարածոց . . . (և թէ) նա է յառաջ քան ,, զամենայն. և ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ ‖. (կողոս. ա. 15.) Հայս միտ առեալ զանդրանկութեանէն մերոյ՝ յասելն աստ. * ես անդրանիկ ,, արարից զնս ‖. յառաջնութեանէ անդրանկութեանէն մտածի ըստ ինքեան. և բառդ աբբէր՝ դնի փոխանակ յայտարարութեանէ. որպէս թէ եդեալ էր. ես արարից՝ զի յայտնի ցուցցի՝ և ծանիցի՝ թէ նա է իմ Ձմարիտ անդրանիկ որդի։

Լոկ բանիւ մարդկութեանէ ասի անդրանիկ ըստ չորից. մի՝ ըստ կարգի նախասահմանութեանէ. իբր զի նա՝ որ ըստ ասծութենէն էր բնական որդի ոչ, ըստ մարդկութեանն ևս սահմանեցաւ՝ զի իցէ այնպիսի այսինքն բնական որդի ոչ՝ իբրև անդրանիկ քան զամենեսին զնոսա՝ որք սահմանեալ եղեն լինել որդեգրական որդի ոչ։

Կամ թէ յիրաւի ինքն ըստ մարդկութեան կամ ըստ որում մարդ սահմանեցաւ որդի ոչ, վկայէ պօղոս

յասէլն. (Հռովմ. ա. յ.) * յառաջն խոստացաւ ած
,, վասն որդւոյ իւրոյ եղելոյ ի զառակէ դաւթի բաւ
,, մարթիոց սահմանելոյ որդւոյն ալ՝ ասելովքն սահ-
մանելոյ որդի ալ՝ Յս թէ ի սահմանիլ նորա որդի
ալ իբրև անդրանիկ նուաւա սահմանեցան և այլք որ-
դեգրական որդի, վկայէ նոյն առաքեալն գրելեմ յա-
մենայն թուղթս իւր յասէլն. * օրհնեալ է ած հայր
,, ած մերոյ յիսի քրիստ որ օրհնեաց զմեզ ամենայն հո-
,, գևոր օրհնութիւ յերկնաւորս ի քս, որպես ընտ-
,, րեաց զմեզ նուաւա յառաջ քան զկիմեալն աշխար-
,, հի ... յառաջադոյն սահմանեաց զմեզ յորդեգրու-
,, թիւ ի ձեռն յիսի քրիստի՝ (եփես. ա. ե.)

Լ՚որդ քանզի զոր սահմանեաց ած ի յաւիտենից, կա-
տարելոց էր ի լրման ժամանակաց, վասն այսորիկ
ասէ, ես անդրանիկ արարիչ գնա. այսինքն ես որ ի
յաւիտենից սահմանեցի զնա անդրանիկ որդի՝ արա-
րիչ, և կատարեցից. որ է ասել. արարիչ զի որդի
իմ լինիցի որդի մարդոյ, և որդի մարդոյ լինելով՝ իցէ
նոյն իմ բնական որդի՝ ժառանգելով զնոյն անուն.
բայց անդրանիկ որդի՝ բաղդատութիւ նախասահմա-
նելոց յորդեգրական որդիութիւն. յոր միտ ասէ առա-
քեալն. (յեբ. ա. ե. * լաւ ևս քան զնոսա անուն
,, ժառանգեաց. քանզի ցի երբէք ասաց ի հրեշտա-
,, կաց՝ որդի իմ ես դու, ես այսօր ծնուդ ջեզ. և
,, դարձեալ թէ ես եղեց նմա ի հայր, և նա եղիցի
,, ինձ յորդի. այլ յորժամ միւսանգամ մուծցէ զան-
,, դրանիկն յաշխարհ՝ ասէ. երկիրպագիցեն նմա ա-
,, մենայն հրեշտակք ալ՝ (Այս անդրանկութիւն վե-
րածէ լամբ՚՚ և զայն, թէ զիարդ * անդրանիկ եղև
,, (քս) նորոյ արարածոյս, զի ինքն նախ առաջին
,, ծնեալ ի հոգւոյն՝ զամենեսին ծնաւ հոգևորս ալ՝
(Յորոյ վերայ ըս կարգի և խօսի հնորհալին (ի մեկն.
մնաս. գլ. ա.) այսպէս. * իսկ զինչ զանդրանիկին ա-
ռել խնայի. ոչ իբրև զառաջին գոլով՝ վերջին ծնե-
,, լոց ըստ հաւատարկաց սովորութեան մարդկան. զի
,, զայս լուծանել միածինն անուն. այլ յաղագս ի
,, հոգւոյն ծոյ և անապական ծնունդեանն. զի այլ ոք
,, ոչ ծնաւ այսպէս. որով եղև անդրանիկ բազում
,, եղբարց ըստ պօղոսի. որք ոչ յարենէն և ոչ ի կա-

,, մաց առն՝ այլ յիւր ծնան առաջանաւն. զի որպէս
,, նա ի հոգւոյն և ի կուսէ ըստ մարմնոյ ծնաւնդն
,, եղև, և մեզ ի հոգւոյն և ի ջրոյ հոգևբարական
,, ծնաւնդն եղիցի. որով լինիմք եղբարք կրսերք ան-
,, դրանկանն ամենայն սրբարածոց ||։

Յերկրորդ՝ քո ասի անդրանիկ ըստ կարգի յարութե-
ան. իբր զի ի կարգի մեռելոց նա եղև առաջինն՝ որ իբ-
րև թէ ծնաւ յանմահական կեանս ի յաւուրն ինքնիշ-
խան զօրութե. յոր միտ ասէ առաքեալն. (կողոս.
ա. 18.) * նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ՝ որ է
,, սկիզբն անդրանիկ ի մեռելոց ||. որպէս և յովհան.
նէս կոչէ զնա (ի յայտ. ա. 5.) * անդրանիկ մեռե-
,, լոց ||. որոյ աղագաւ կոչի. * և առաջինն պտուղ
,, ննջեցելոց ||. (ա. կորն. ժԵ. 20.) Յե յայս միտ
յասելն աստ. ես անդրանիկ արարիչ զնա՝ բայդ պա-
ւէս դնի փոխանակ յարուցանելոյ. որպէս թէ եղեալ
եր. ես յարուցից զնա, և այնու անդրանիկ արարիչ
զնա ի մէջ յարուցեալոցն ի մեռելոց առ հասարակ։
Յե եթէ յարեան ևս ոմանք յառաջ քան զքո՝ յարու-
թե նոցա չէր ինքնիշխան զօրութե, այլ յարժանեաց
յարութենն քոի իբր անդրանկան։

Յերրորդ՝ քո ասի անդրանիկ ըստ ժառանգութեան,
իբր զի հայրն ետ նմա ըստ որում էր մարդ՝ զամե-
նայն ինչ իբրև իւրում անդրանկան. և այս՝ ըստ ա-
մենայն իշխանութե և տէրութե, ըստ ամենայն զո-
րութե և կարողութե, և և ըստ ամենայն պարգե-
ւաց և կատարելութե. վասն որոյ ասէ առաքեալն
(կբ" ա. 2.) * եդ (զնա) ժառանգ ամենայնի ||։

Յորրորդ՝ քո ասի անդրանիկ ըստ գերագոյն լինելոյ
քան զամենեսեան՝ յո քան զամենայն ոգւս, քան զա-
մենայն մարգարէս, քան զամենայն զօրաւորս, քան
զամենայն Թագաւորս. ես. յոր միտ նաբէ կացին դրէ
(ի բանն լիք. ի գաւառութե.) * անդրանիկ ըստ
,, սաղմոսողին քան զամենայն Թագաւորս երկրի ||։
Յե այս հայի յաւէտ իմն յարտաքին անհամեմատ
բարձրութե նորին. զորմէ առանձինն խօսելով՝ ասէ
մարգարէն։

Յե՞ բարձր չեն զամենայն Թագաւորս երկրի։ Յայս բարձ-
րութե ոչ մտածի ըստ այսչափ և ըստ այնչափ գոլոյ,

Յ[illegible]

այլ ըստ ամենայնի ի վերայ ամենայնի. և առ ի ցուցանել զայս՝ ի մէջ բերէ զսյնսոսիկ՝ որք գերագոյն են ի վերայ երկրի այնինքն են Թագաւորք. որով կամ ասել. կացուցից զնա գերագոյն քան զամենայն, և և քան զնոսա՝ որք գերագոյն են ի վերայ երկրի, որպիսի են Թագաւորք. յոր միտ լեր՝՝ դնի ելից այսինքն բարձրեալ՝ որ ի մէջ բերէ զանհամեմատ բարձրութիւն՝ որ և յաւէտ այլ ընծայի՝ քան այլոց։

Եւ յայս միտ որդին այ՝ ըստ որումմարդ՝ ասի և ի տէր տերանց և Թագաւոր Թագաւորաց (ա. տիմ. է. 15։ յայտ. ժէ. 14. և ժԹ. 16։) և այս ոչ եթէ ցորչափ կան Թագաւորք ի վերայ երկրի. ապա Թէ ոչ՝ յետ նոցա ոչ և նա կոչիւր այնպիսի, այլ Թէ արդեաք Թագաւորութիւնն մնաճեսցի, յամենայնի նա միայն է բարձրեալ. և զի այս բարձրութիւնն ինայ յատեանս յատեանէ, զնոյն և յիշէ, դարձուցանելով զասն իւր ուղղակի ի գէմն դաւթի՝ յատէն։

ԼԷ. Յաւետեան պահեցէ նմա ղողրմանէ էմ. և ոչխ էմ հաստատեալ ընդ նմա։

Վերանուանք նա, զնա, նորա, և նմա, որք բազում անգամ կրկնին յայսոսիկ բանիդ, յառաջինն համարսն սկսեալ ի 18ի՝ մինչև ցառա, ըստ նիւթականին հային ի դաւիթ՝ իբրև ի տառէր. իսկ ըստ տեսականին հային ի քո իբրև ի Հիմարտուածին. այլ զի բանք մարգարէից ըստ մի և ըստ նոյն բառի կարեն յայլևայլ դէմս վերածիլ, ասասնօրն նոյն գերանուանք ուղղակի վերածին ի դաւիթ, իսկ խորհրդաբար ի քո. որպէս ունիմք յիշել ի վերջ յետագայ համառօտին։ Իսկ պատճառ ի դաւիթ վերածելոյ ասա՝ է նոյն իսկ նշանակութիւնն իրին. քանզի ոճ իրօք նմին խոստացաւ զողորմութիւնն իւր, և ընդ նմա եդ զուխտ իւր վա այնր՝ որոյ էր առաւէր. վա որոյ ասէ։

Յաւետեան պահեցէ նմա ղողրմանէ էմ. և ոչխ էմ հաստատեալ ընդ նմա։ Ողորմութիւնք իմացեալ լինի ասա այն՝ զոր յիշեաց ի համարն ։. և ։. այսինքն է գործ ո ղորմութիւնն այ. որով կամեցաւ յարուցանել Թագաւոր ի տանէ դաւթի՝ առ ի փրկելոյ զաշխարհս. զոյս ողորմութիւնն իմ ասէ զոր խոստացայ դաւթի,

պահեմ նմա յաւիտեան, և ոչ աղաւաղեմ. զոր և ի լուսոյ ժամանակաց կատարելոց եմ. քանզի ուխտ եդի ընդ նմա. և այն ուխտ իմ ամենևին հաւատարիմ է և անտեսանելի։ Օ այս եգեալ յայտ առնեմ այժմ՝ թէ զինչ ունէր կատարել զուխտն զայն. վասն որոյ ասէ.

ՍԱՍՏԱՓԵՑԷ յաւիտեան յաւիտենից զքաւեալ նորա. Եւ զնեռս նորա որպէս զաւուրս երկնից։

